

Ս. ԳԱՄԴԱԿՅԱՆ



ՄՓՅՈՒՊԻԱՆՅ

ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐՆ

ԱՅՍՕՐ

9(47.925)

Գ - 22

Օ. ԳՈՍԳԱՐՅԱՆ

Միջուկը բառային
ԳՄԴԹՕՋԱԽՆԵՐԵ
ԱՅՍՕՐ

Մշակութային
Կալեքի
ուսումնական

264



Հայաստանի ստեղծական երևույթների
Երևան . 1962

Օգտագործելով սփյուռքահայ մամուլում հրատարակված, ինչպես նաև արտասահմանյան հայ գաղութները կատարած իր այցելության ժամանակ հավաքած նյութերը, հեղինակը տալիս է սփյուռքահայերի մշակութային կազմակերպությունների, պարբերական մամուլի, կրթական հաստատությունների մասին հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ: Գրքում միաժամանակ համառոտակի շարադրվում է հայ գաղութների առաջացման պատմությունը:

ГАСПАРЯН СЕРГЕЙ ТИГРАНОВИЧ
АРМЯНСКИЕ ЗАРУБЕЖНЫЕ КОЛОНИИ СЕГОДНЯ
(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1962

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Արտասահմանի տարրեր երկրներում այժմ ապրում են ավելի քան մեկ միլիոն երկու հարյուր հազար հայեր¹: Այստեղից էլ հետևում է, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի արտասահմանի հայ գաղութների առաջացման ու զարգացման, դրանց ժամանակակից տնտեսական ու քաղաքական վիճակի ուսումնասիրությունը:

Հայ գաղութները դարավոր պատմություն ունեն: Նրանց առաջացումը սերտորեն կապված է մեր ժողովրդի պատմական ճակատագրի հետ: Հանրահայտ ճշմարտություն է, որ հայ ժողովուրդը համաշխարհային նշանակություն ունեցող կուլտուրական արժեքներ է ստեղծել ոչ միայն իր մայր հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս, աշխարհի գրեթե բոլոր երկրներում:

Սովետական Հայաստանի մի շարք պետական և հասարակական կազմակերպություններ իրենց գործունեության բնույթով կապված են արտասահմանի հայ գաղութների հետ (Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերություն, Ռադիոյի և հեռուստաաեսություն պետական կոմիտեի, Գիտությունների ակադեմիա,

¹ Ըստ երկրների՝ տե՛ս 246 էջ:

Մատենադարան, Կուլտուրայի մինիստրություն, Գրողների միություն, մամուլի օրգաններ և այլն): Այս կազմակերպությունները մեծ աշխատանք են կատարել ու կատարում են արտասահմանի հայերի հետ կապերն ընդլայնելու, հայ գաղութների անցյալն ու ներկան ուսումնասիրելու ուղղությամբ:

Հայաստանի Կոմունիստական պարտիան և կառավարությունը միշտ էլ հոգատար վերաբերմունք են ցուցաբերել փյուռքահայության նկատմամբ: Արդեն սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին, երբ մեր երկիրը նոր միայն սկսել էր բուժել ներքին ու արտաքին թշնամիների հասցրած ծանր վերքերը, երբ ամենուրեք իշխում էր սովն ու աղքատությունը, հայ ժողովուրդը, նրա կառավարությունը և դրա արական օգնության ձեռք մեկնեցին աշխարհով մեկ ցրված իրենց գաղութահայ եղբայրներին: Ահա թե ի՞նչ էր գրում այն ժամանակ ականավոր ուսուցիչներ ու պետական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը. «Թող գոռան ու սարսափեն շահակցականները, թող շարունակեն հորինել իրենց ստերը: Մենք ու գաղութահայ աշխատավորներն իրար հետ կապված ենք և ավելի ևս պիտի սեղմենք մեր շարքերը»¹:

Այդ օրերին առաջնահերթ խնդիր էր Թուրքիայից և այլ վայրերից Հայաստան եկած տասնյակ հազարավոր գաղթականների տեղավորումը, նրանց համար կյանքի անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Թուրքիայից գաղթած սովահար ու տարաբախտ հոծ մասսաների մուտքը Սովետական Հայաստան՝ պատմական նոր իմաստ ու նշանակություն ունեւ: Դա նշանակում էր, որ ավարտվում է պատմական մի պրոցես, այսինքն՝ հայ ժողովրդի դարավոր գաղթականության պրոցեսը և սկսում է մի այլ, առավել նշանակալի երևույթ՝ հայ ժողովրդի՝ աշխարհում ցրված բեկորների վերադարձը դեպի Սովետական Հայաստան, որտեղ վերականգնվել էր նրա դարերով կորցրած պետականությունը, մի պետականություն, որ զարգանում էր նոր, սո-

¹ Ալ. Մյասնիկյան, Կուսակցությունները գաղութահայության մեջ. Թիֆլիս, 1924 թ., էջ 7:

վետական սոցիալիստական կարգերի, ժողովրդական մասսաների սոցիալական ու ազգային ազատագրության պայմաններում: Որպես պատմական օրինաչափ երևույթ, հայ ժողովրդի վերամիավորման, համախմբման պրոցեսը նրա պատմության այս նորագույն շրջանում տեական բնույթ է կրել և այժմ էլ շարունակվում է: Հայտնի է, որ Հայրենական Մեծ պատերազմին նախորդած շրջանում մի քանի անգամ տեղի է ունեցել արտասահմանի հայության մեծ խմբերի հայրենադարձություն: Հայրենական պատերազմի հաղթանակից հետո, երբ մեր երկիրը նոր միայն սկսել էր պատերազմի հասցրած ծանր վերքերի բուժումը, երբ սովետական ժողովուրդը նյութական մեծ զոհողությունների գնով վերականգնում էր պատերազմի տարիներին ավերված քաղաքները, գյուղերն ու ավանները, պործարանները, ֆաբրիկաներն ու կուլտուրական հաստատությունները, Սովետական կառավարության որոշմամբ մոտ 100 հազար հայեր վերադարձան իրենց հայրենիքը: «Հայերի գաղթականական շարժումների պատմության մեջ առաջին անգամ սկսվում է պետական լայն մասշտաբներով կազմակերպված հայրենադարձություն դեպի Հայկական ՍՍՌ, 1921—1940 թթ. ժամանակամիջոցում արտասահմանյան երկրներից դեպի Հայկական ՍՍՌ հայրենադարձվեց 75 հազար հայ: Հայրենիք վերադառնալու շարժումն առանձնապես ուժեղանում է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1946—1948 թթ. մասսայական հայրենադարձություն է կատարվում Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրանից, Հունաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից և այլ երկրներից: Հետպատերազմյան տարիներին հայրենադարձվել է մոտ 100 հազար հայ»¹:

Հայաստանի Կոմունիստական պարտիայի XXII համագումարում տված իր զեկուցման մեջ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Յա. Զարբյանն ասաց, որ որոշված է 1962 թվականից սկսած կազմակերպել արտասահմանյան տարբեր երկրներից հայրենիք վերադառնալու ցանկություն հայտնած

¹ Հայկական ՍՍՌ Ատլաս, Երևան—Մոսկվա, 1961 թ., էջ 59:

Հայերի հայրենազարծուից: «Բախտի փմահանույժով աշխարհի շատ երկրներում սփռված մեր հարյուր հազարավոր հայրենակիցների հանդեպ մենք մեր պարտքն ենք համարում օգնել նրանց վերադառնալու իրենց միակ Հայրենիք՝ Սովետական Հայաստան, բոլոր պայմանները ստեղծել նրանց նորմալ կյանքի և ստեղծագործական աշխատանքի համար»¹: Արտասահմանի հարյուր հազարավոր հայեր խոր գոհունակությամբ ընդունեցին այս հայտարարությունը:

Համագումարի հեղինակավոր ամբիոնից խոսվեց սփյուռքահայության հետ կուլտուրական կապերի հետադա ամրապնդման և ընդլայնման մասին:

«Մեր խնդիրն է, — ասաց Յա. Զարոբյանը, — ընդլայնել ու բարելավել մեր կապերը արտասահմանյան հայերի ու նրանց առաջադիմական կազմակերպությունների հետ, ավելի հաճախ կազմակերպել սովետահայ զիտություն և արվեստի դործիչների, գեղարվեստական ու սպորտային կոլեկտիվների ուղևորություններ արտասահմանյան հայկական գաղութները: Իրա հետ միասին հարկավոր է ավելի հաճախ Սովետական Հայաստան հրավիրել արտասահմանյան առաջադեմ հայերին ու ավելի լայնորեն ընդունել տուրիստական խմբեր: Այս ամենը պետք է նպաստի կապերի ընդլայնմանը, որպեսզի մեր հայրենակիցներն ավելի ստույգ և ավելի լավ ճանաչեն Սովետական Հայաստանի կյանքը»²:

Զեկուցման մեջ կարևոր խոսք ասվեց այն մասին, որ արդի պայմաններում մեծ նշանակություն ունի սփյուռքահայ հայրենասեր ուժերի համախմբումը, արտասահմանյան բոլոր առաջադեմ կազմակերպությունների հետ մեր համագործակցությունը: Դա բխում է Սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությունից, աշխարհի բոլոր ժողովուրդների հետ բարեկամության և խաղաղ համագործակ-

¹ Յա. Զարոբյան, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի Կոմպարտիայի XXII համագումարին, Հայպետհրատ, 1961 թ., էջ 120—121:

² Նույն տեղում, էջ 122—123:

ցություն քաղաքականությունից: Ամբողջ սփյուռքում խոր գոհունակությամբ ընկալվեց այն լուրը, որ Սովետական Միության Մինիստրների Սովետի նախագահ Ն. Ս. Խրուշչովը Հայաստանում գտնված ժամանակ ընդունեց Սովետական Հայաստանի 40-ամյակի տոնակատարության առթիվ Հայաստան ժամանած սփյուռքահայության ներկայացուցիչներին և զրույց ունեցավ նրանց հետաքրքրող հարցերի շուրջը: «Սովետական Սոցիալիստական Հայաստանը, — ասաց ընկեր Խրուշչովը 1961 թվականի մայիսի 6-ին, — մագնիսի պես իրեն է ձգում հայ ժողովրդի լավագույն դուստրերին ու որդիներին»¹:

Սովետական Հայաստանը հսկայական բարոյական ակդեցություն է ունեցել և ունի արտասահմանի գաղութահայ կյանքի վրա, հայրենակարոտ սփյուռքահայությունը իր հայացքը միշտ հառած է պահում մայր հայրենիքին, ողբշնչվում է նրանոր կյանքով, նրա նվաճումներով և իր ապագան կապված է համարում նրա վառ ապագային:

Այժմ, երբ հայ պետականությունը ապրում է իր բուռն պարզացման ու հասունության շրջանը, երբ Հայաստանում ստեղծվում են գրեթե բոլոր այն նյութական ու հոգևոր արժեքները, որոնց կարիքը զգում է մեր ժամանակի մարդը, նոր, ավելի լայն հեռանկարներ են բացվում սփյուռքի հայերի հետ մեր կապերը ավելի սերտ դարձնելու, Հայաստանում ստեղծվող հոգևոր անսպառ արժեքներով սնելու ու ապրեցնելու սփյուռքահայությունը, դառնալու նրա ձուլման պրոցեսը կասեցնող հզոր պատենշ: Ինչպես տեսանք, Հայաստանի Կոմունիստական պարտիան և կառավարությունն ամեն կերպ խրախուսում են սփյուռքահայության հետ կուլտուրական կապերի ընդլայնման ուղղությամբ կատարվող աշխատանքը:

Այստեղից հետևում է, որ այժմ մենք կարիք ունենք այնպիսի ուսումնասիրությունների, որոնք սովետահայ ընթերցու-

¹ Յա. Զարոբյան, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի Կոմպարտիայի XXII համագումարին, Հայպետհրատ, 1961 թ., էջ 120:

դին բազմակողմանի տեղեկություններ տալին աշխարհի գրե-
ֆե բոլոր երկրներում ցրված հայերի կուլտուրական ու հասա-
րակական կազմակերպությունների, սփյուռքահայ մամուլի,
ինչպես նաև գրողների, բանաստեղծների, հրապարակախոս-
ների, կոմպոզիտորների, երաժիշտ կատարողների, նկարիչ-
ների, դերասանների մասին: Ցավոք սրտի պետք է ասել, որ
հրապարակի վրա այդպիսի աշխատություններ չկան: Ծիշտ
է, ուսպուրլիկայի պարբերական մամուլը հողվածներ է հրա-
պարակում արտասահմանի հայերի կյանքի տարբեր բնագա-
վառների մասին, սակայն դրանք հեռու են մեր պահանջները
բավարարելուց:

Մինչև այժմ չի գրված հայ գաղթաշխարհի մարքսիստա-
կան պատմությունը: Իհարկե, հայ պատմաբանները իրենց աշ-
խատությունների մեջ այս կամ այն առիթով շոշափել են հայ
գաղութների պատմության առանձին հարցեր, սակայն դրանք
հեռու են ամբողջական և լրիվ պատմություն լինելուց: Այս
իրողությունը հաստատում է Ա. Կարինյանը: Նա գրում է
«Հայկական գաղութների մասին մենք չունենք որևէ պատմա-
կան հետազոտություն: Կան բաղմազան հողվածներ և պատ-
մական էքսկուրսիաներ, որոնք գրված են մեր մամուլի էջե-
րում: Կարևոր նշականություն ունեն եվրոպական ճանապար-
հորդների ուղեգրությունները և ապա հայ առանձին պատմա-
բանների ջանքերով կազմված պատմական-նկարագրական
հետազոտությունները»¹:

Գաղութների պատմության ուսումնասիրության ասպարե-
զում շնորհակալ աշխատանք է կատարել սփյուռքահայ ան-
վանի գիտնական, վերջերս վախճանված Ա. Ալպոյաճյանը,
որի «Պատմություն հայ գաղթականության»² խորագիրը կրող
երեքհատորանոց ուսումնասիրությունն արդեն հրապարակի
վրա է:

1 Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության,
հատոր 1, էջ 48:

² Ա. հատոր, Կահիրե, 1941 թ., Բ հատոր, Կահիրե, 1955 թ., Գ հա-
տոր, Կահիրե, 1961 թ.:

Այս աշխատությունն ընդգրկում է հայ գաղթականության
պատմությունը մեր թվագրությունից առաջ VI դարից մինչև
մ. թ. XX դարի սկզբին ընկած ժամանակաշրջանը: Բացի Ա. Ալ-
պոյաճյանի ուսումնասիրությունից, տարբեր ժամանակներում,
ինչպես մեզ մոտ, այնպես էլ արտասահմանում, հայկական
առանձին գաղութների պատմության վերաբերյալ լույս են
տեսել մենագրություններ: Ուրախալի է ընդգծել, որ վերջին
տարիների ընթացքում Հայաստանի մի շարք գիտնականներ
ուսումնասիրում են նաև գաղութահայության պատմության
հետ առնչվող հարցերը: Բայց այդ ուսումնասիրությունները
դեռ ստեղծվելու պրոցեսում են գտնվում: Արտասահմանի
հայ գաղութների ներկա վիճակի մասին տեղեկությունները
ցրված են մամուլի էջերում և դանազան տարեգրերում: Եղած
տեղեկությունները մեզ չեն կարող բավարարել մի քանի
պատճառներով: Դրանք միշտ չէ որ վավերական են: Իրենց
վրա հաճախ կրում են պահպանողական մտայնության կնիք:
Նյութերի հեղինակների հետաքրքրության շրջանակները
չովորաբար նեղ են և ամբողջական գտնադար չեն տալիս
ավելի գաղութի կյանքի բոլոր կողմերի մասին: Գաղութների
պատմականությունը, ներքին պայքարն ու հակամարտու-
թյունները զանազան պարտիաների ու խմբավորումների մի-
ջև անխուսափելիորեն իրենց կնիքն են դնում այդ նյութերի
վրա, որոնք հաճախ հեռու են գիտական նշանակություն
ունենալուց:

Ներկա աշխատությունը ամփոփ տեղեկություններ է պա-
րունակում արտասահմանի հայ գաղութների հասարակական
կյանքի, մշակութային կազմակերպությունների, պարբերա-
կան մամուլի, կրթական հաստատությունների և այլ հիմնարկ-
ների մասին: Գաղութների առաջացման ու զարգացման վե-
րաբերյալ նյութերը տրվում են միայն որպես ֆոն, ժամանա-
կակից վիճակի մասին ավելի ամբողջական գաղափար տալու
համար:

Մենք աշխատել ենք գաղութների ժամանակակից վիճակի
մասին սփյուռքահայ մամուլում հրապարակված նյութերը

համագրել, ստուգել դրանք, երբ հնարավոր է, պաշտոնական տվյալներով: Նյութերի մի մասը մենք հավաքել ենք գաղութներ կատարած այցելության ժամանակ: Հայ գաղութների մասին նյութերը դասավորել ենք ըստ մայր ցամաքների և ըստ առանձին երկրների՝ այբբենական կարգով:

Արտասահմանի հայ գաղութների կյանքը իր բոլոր ասպարեզներով կարոտ է լուրջ և երկարատև ուսումնասիրության:



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՑԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Հայերի առաջին խմբերը Ամերիկայի Միացյալ Նահանգներում բնակություն են հաստատել 18-րդ դարի վերջերին: Հայ գաղթօջախը ԱՄՆ-ում սկսում է սովորաբար անցյալ դարի 70-ական թվականներին, երբ բավական թվով հայեր բնակություն են հաստատում Կալիֆոռնիայի նահանգում: Եռտուվ վրա են հասնում 1895—1896 թվականների ողբերգական իրադարձությունները: Սուլթան Համիդի կազմակերպած արյունալի ջարդերը պատճառ են դառնում նոր գաղթի: Այդ ժամանակաշրջանում Քուրդիստանից և Արևմտյան Հայաստանից տեղահանված հայերի մի մասը բնակություն է հաստատում Ամերիկայում: Արդեն 1920 թվականին ամերիկահայ գաղթօջախը իր կազմում հաշվում էր 100 հազար մարդ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում հայերի մուտքը Ամերիկա շարունակվում է, գլխավորապես 1915—1916 թվականների հայկական կոտորածներից հետո Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի երկրներում ապաստան գտած հայերի հաշվին: Ներկայումս ԱՄՆ-ում ապրող հայերի ընդհանուր թվի մասին ստույգ տեղեկություններ չկան, բայց հայկական էմիգրում սովորաբար հիշատակվում է 210—250 հազար մարդ¹:

¹ «Ժամանակ», փետրվարի 22, 1960 թ.:

Ըստ առանձին քաղաքների և բնակավայրերի, հայ բնակչությանը բաշխվում է մտավորապես հետևյալ կերպ ¹:

Նյու-Յորք և շրջակայք— մոտ 40.000

Ֆիլադելֆիա— 8000

Վաշինգտոն և Ռիչմոնդ— 3000

Կենտուկկի նահանգի զանազան քաղաքներ— 4000

Պրովիդենս և Փուֆալկեր քաղաքներում— 12000

Բոստոն, Ուոթերթաուն և շրջակայք— 20.000

Հելվեթիլ, Լորենս և Լովել քաղաքներում— 5000

Ուատր, Սփրինգֆիլդ և շրջակայք— 3000

Կլիվլենդ, էքսթեն և Օհայո— 4000

Դիտրոյտ և Միչիգան նահանգի քաղաքներում— 30.000

Չիկագո և շրջակայք— 4000

Ռեյսեն և շրջակայք— 2500

Միսիսիպիի հովիտ— 3000

Լոս-Անժելոս— 25.000

Ֆրեզնո և շրջակայք— 30.000

Սան-Ֆրանցիսկո, Օկլենդ և շրջակայք— 6000

Կալիֆոռնիա նահանգի մյուս քաղաքներ— 7000

Մնացած վայրերում— 5000

Ամերիկահայ գաղութի պատմությունը, նրա սկզբնավորման առաջին օրերից մինչև այժմ, հայ ժողովրդի՝ աշխարհում ցրված բեկորներից մեկի իսկական ողիսականն է, լի տառապանքներով ու զրկանքներով, նոր աշխարհում կյանքի ասպարեզ մտնելու, օջախ ստեղծելու, գոյատևելու համար մղած պայքարի մի հարուստ պատմություն:

Ենթարկվելով կապիտալիստական Ամերիկայի տնտեսական ու քաղաքական կյանքի զարգացման օրենքներին, բաժանելով երկրի ամբողջ բնակչության ճակատագիրը, հայերը տառապել են գործադրկությունից, վաճառել իրենց աշխատուժը, լրացրել ամերիկյան պրոլետարիատի շարքերը: Կապիտալիստական հակասությունների այդ երկրում հայերի մի

մասին հաջողվել է մտնել մեծ բիզնեսի ոլորտը, կապիտալ ստեղծել ու հարստանալ:

Հանրահայտ ճշմարտություն է, որ նոր և նորագույն պատմության ընթացքում տեղի ունեցած պատերազմներում Ամերիկայի Միացյալ Նահանգների բուրժուազիան մեծ հարստություն էր դիզում մյուս ժողովուրդների հաշվին: Պատերազմը միշտ լավագույն բիզնեսի աղբյուր է եղել նրա համար: Հետաքրքրական է նշել, որ այս երևույթը նույն ձևով է տեղի ունենում նաև Ամերիկայի հայկական շրջաններում: Լ. Մանգասարյանը գրում է. «Համաշխարհային առաջին պատերազմը մեր հայրենակիցներուն վիճակը առավել բարվորած է, պատերազմի լիառատ վաստակով:

Մասնավորապես Ֆրեզնոյի հայ այգեպանները շափազանցված խանդավառությամբ ու ազահորեն շուտով միլիոնատեր դառնալու մտքով, մեծ գին վճարելով՝ քառապատկած, «մանք տասնապատկած են իրենց այգիներու տարածությունը, հսկայական պարտքեր ընելով, խորհելով, որ խաղողի ու շամիչի գիները պիտի պահվեն պատերազմի տարիներու շափով» ¹: Բայց շուտով վրա հասան 1929—1933 թվականների համաշխարհային ճգնաժամի տարիները: Ամերիկյան կապիտալիզմը ծանր ցնցումներ ապրեց: Բնական է, որ հայ բնակչության բոլոր խավերը չէին կարող խուսափել ճգնաժամի բերած տնտեսական ավերածություններից:

«1923—31 թվականներուն Միացյալ Նահանգաց առևտուրը սարսափելի անկում կրեց, որուն զոհ գացին միլիոնավոր մեծ ու փոքր առևտրականներ: Առևտրական հրապարակի փլուզումով, խաղողի ու շամիչի գիները ևս մինչև հատակը անկում կրեցին, պատճառ դառնալով հայ այգեպաններուն յինսուն առ հարյուրին սնանկության» ²:

Այս իրողությունը իր հաստատումն է գտնում Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Կալիֆոռնիայի շրջանի գործունեության մասին Գր. Սարաֆյանի պատրաստած ժողովա-

¹ Տրված է ըստ Օգ. Սարյանի տեղեկությունների:

¹ «Լույս Փարիզի», 20 դեկտեմբերի, 1953 թ.:

² Նույն տեղում:

ծուի մեջ: «Գալիֆոունիո հայ գաղութը Ամերիկայի մեջ նախանձելի դիրք մը ունի, ըլլալով մեծ մասամբ ընտանիքի տեր, հողի հետ կապված, և անկախ ապրուստի մը տիրացած: Բայց այդեպաններու տնտեսական տաղնապի տասնհինգ տարիներու ընթացքին (1922—1937) շամիլի և երկրագործական արտադրութուններու զներուն անկումը և ընդհանրապես Ամերիկայի մեջ գործերուն թույլ վիճակը հիմն խախտեց Գալիֆոունիո հայութեան տնտեսական կյանքը և անոր հետ կապակցված բոլոր բարի ծրագիրները: Ահա այս իսկ պատճառով շատերն իրենց կալվածները կորսնցնելով, ցրվեցան ուրիշ քաղաքներու մեջ և նահանգին այլ և այլ վայրերը, իրենց ւրվան ապրուստը ձեռք բերելու, զեթ գործ մը ճարելու համար:

Անոնք, որ իրենց այգիները կրցան կորուստե ազատել, մնացին հողին վրա, շարունակեցին իրենց գործը, իսկ ուրիշներ Լոս Անճելոսի, Սան-Ֆրանցիսկոյի և Օքլենտի պէս մեծ քաղաքներու մեջ ցանցնված՝ առևտրով, արհեստով և գործավարութեամբ շանացին սլահել իրենց ֆիզիկական գոյութունը»¹:

Մեր բերած փաստերը վերաբերում էին միայն Կալիֆոունիայի նահանգին: Սակայն կարելի է ասել, որ դրանք ընդհանուր են ամբողջ Ամերիկայի համար: Հետաքրքրական է նշել, որ այս կարգի հարցերը որևէ լուսաբանում չեն գտնում դաշնակցական գրականութեան ու պարբերական մամուլի էջերում: 1959 թվականի ընթացքում դաշնակցական «Ազդակ» և «Հուսարեր» թերթերը այս կամ այն առիթով մի քանի հոդվածներ նվիրեցին ամերիկահայ գաղութին: Բայց դրանք մեծ մասամբ ներքուստ բնույթի հոդվածներ էին, որոնցում նրանք գովերգում էին ամերիկահայերի առատաձեռնութունը: Մրանք նպատակադրված հոդվածներ էին, աչքի առաջ ունենալով դաշնակցական զանազան միութունների կողմից ամերիկահայերի մեջ կազմակերպվող պարբերական հանգանակութունները: Սակայն երբեմն նույնիսկ դաշնակցական մա-

մուլն էլ ստիպված է խոստովանել, որ Ամերիկան այն «գրախտը» չէ, որի մասին առասպելներ են հյուսում «ամերիկյան ապրելակերպի» ջատագովները: Ահա դաշնակցական «Արևելք» թերթում հրատարակված մի նամակ, որի հեղինակը Ամերիկա էր եկել երջանկություն որոնելու: Այդ նամակի հեղինակը ոմն Հ. Զալլաքյանն է, որը գրում է Ֆրանսիայի դաշնակցական «Շառաջ» թերթին, որպեսզի զգուշացնի Ֆրանսիայից Ամերիկա զնացողներին.

«Եթե հոս եկողը քառասուն տարիքը հասցուցած է,— գրում է նամակի հեղինակը,— գործ չի կրնար գտնել: Վարձերը շատ սուղ են, երեք սենյականոց տունի մը համար, եթե սեվարնակ թաղի մը մեջ է, ամսական 70 տոլար վարձք կպահանջվի: Եթե ճերմակներու բնակության վայրի մեջ կգտնվի, 125 տոլար ամսական վարձք պետք է վճարե: Գնելու համար երեք սենյականոց հարկարժին մը (խոհանոցով, բաղնիքով, ճաշասրահով և հյուրանոցով) կարժե 15—17 հազար տոլար, 4—5 հազարը կանխիկ վճարով, ամսական երեսուն տոլար կվճարե, 15-ը՝ տոկոսին, 15-ը մայր պարտքին կերթա: Նման տան մը տարեկան տուրքն է 250 և 300 տոլար: Բարոյական և ազգօգուտ պարտականություն է այս ցավոտ խնդիրը հայտարարել մամուլով: Վերջերս Մարսելին եկավ Մ. ընտանիքը, ուի ամիս է անգործ է, ետ դառնալ կուղե, դրամ չունի... Ավելցնեմ, որ հոս մեկը որ հիվանդ է ու ապահովություն չունի՝ միլիոն ունենա չի դիմանար: Հոս մեկը, որ զավակ մը պիտի ունենա, հինգ հարյուրեն վեց հարյուր տոլար ծախք պետք է ընե, հինգ օր միայն հիվանդանոց կմնա: Իսկ ննջեցյալի մը համար՝ հազար տոլար հողի և թաղումի համար: Կտեսնեք թե մեկ երկրեն մյուսը ինչքան կտարբերին պայմանները... չեմ ցանկար, որ որևէ հայ ներկա պայմաններով հոս գա և դժբախտ ըլլա»¹:

Մեր բերած փաստերից բնավ չպետք է եզրակացնել, որ հայերի տնտեսական վիճակը Ամերիկայում ամբողջութեամբ վերցրած ավելի վատ է, քան ասնք, Մերձավոր Արևելքի կամ

¹ «Գործապատում Հ. Բ. Ը. Միութեան Գալիֆոունիո շրջանակի»: Ֆրեզո 1954 թ., էջ 5:


¹ «Արևելք», 30 հուլիսի, 1959 թ.:

նույնիսկ Արևմտյան Եվրոպայի երկրներում: Խոսքն այն մասին է, որ հայ բնակչության զանազան խավերի կենսապայմանները խիստ տարբեր են: Հայ հարուստ վերնախավը՝ կապիտալիստները, խոշոր առևտրականները, ձեռնարկատերերն ու ֆերմերները վայելում են կապիտալիստական Ամերիկայի բոլոր բարիքները: Հայ բանվորն ու մանր ծառայողը, սակավահոգ ֆերմերն ու միջոցներից զուրկ մտավորականը իրենց ուսերի վրա կրում են տնտեսական կյանքի բոլոր դժվարությունները, օրհասական պայքար են մղում իրենց երեխաների ապրուստի և ուսման միջոցները հայթայթելու համար:

250 հազար հայությունը սփյուռքահայերի ընդհանուր թվում պատկանելի տեղ է զբաղում: Եթե զրան գումարենք Հարավային Ամերիկայի երկրներում (Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ) ապրող ավելի քան 60 հազար հայերին, ապա կստացվի, որ սփյուռքահայության մոտ մեկ քառորդը ապրում է Ամերիկյան մայր ցամաքում: Սակայն 180 միլիոն բնակչություն ունեցող Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ուր ազգային փոքրամասնությունների թիվը, առանձին-առանձին վերցրած, երբեմն միլիոնների է հասնում (իտալացիներ, հրեաներ), հայերը էթնիկական լուրջ էլեմենտ չեն ներկայացնում: Պետք է ընդգծել նաև նրանց խիստ ցրվածությունը այդ մեծ երկրի ամենատարբեր նահանգներում ու քաղաքներում: Դա իշ հերթին կանխորոշում է նրանց զբաղմունքների խայտաբղետությունը: Կարելի է խոսել առանձին նահանգներում ապրող հայերի առավել աչքի ընկնող զբաղմունքների մասին: Բայց երբ խոսքը ամբողջ երկրի մասին է, ապա պետք է ասել, որ հայերն այստեղ զբաղվում են ամեն ինչով: Նրանց մեջ կարելի է տեսնել բանվորներ, ֆերմերներ, պետական ու առևտրական գրասենյակների ծառայողներ, խոշոր ձեռնարկատերեր, առևտրականներ, առողջապահության, լուսավորության, արվեստի, գրականության, գիտության և երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքի այլ և այլ բնագավառներում աշխատողներ: Չնայած Ամերիկայում հայերը մեծ թիվ չեն կազմում, այնուամենայնիվ պետք է նկատել, որ նրանք ամերիկյան հասարակության ամենատարբեր խավերում բավա-

կանաչափ ճանաչված են: Դա բացատրվում է ոչ միայն նրանցից շատերի գրաված դիրքով, այլև հայ ժողովրդի ճակատագրով: Այն ժամանակվանից, երբ Թուրքիայում և Արևմուտյան Հայաստանում սկսվել են ծավալվել հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները, երբ արևմտյան դիվանագիտությունը իր էգոիստական նպատակները հետապնդելու նպատակով «զբաղվում էր» հայկական կոտորածների և այսպես կոչված «հայկական հարցով», հայերը արտասահմանյան, այդ թվում և Արևմտյան Եվրոպայի և ամերիկյան երկրներում որոշակի մասսայականություն են ձեռք բերել: Ավելի վաղ շրջանում Գլադստոնի, իսկ այնուհետև պրեզիդենտ Վիլսոնի և արևմտյան մյուս դիվանագետների սին խոստումներն ու զեկլարացիաները շուրջորեն ռեկլամվել են կապիտալիստական մամուլի էջերում, դիվանագիտական զանազան մեծ ու փոքր ժողովներում ու կոնֆերանսներում: Ոչ նվազ կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ ամերիկյան պաշտոնական շրջանները որոշակի նշանակություն են տալիս արտասահմանի մյուս երկրներում, հատկապես Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում ապրող հայերի շրջանում իրենց ազդեցությունը ուժեղացնելուն: Ամերիկյան իմպերիալիստական շրջանների այս ձգտումներին սիրահոժար ընդառաջում են դաշնակները, առաջարկելով նրանց իրենց հետախուզական և այլ կարգի ծառայությունները, ստանալով դրա դիմաց նյութական փոխհատուցում և իրենց քաղաքական նպատակների իրականացման համար այլ կարգի աջակցություն:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում ամերիկահայ գաղութը ապրում էր յուրահատուկ պայմաններում: Գուցե ամերիկահայերը իրենց վրա ավելի ծանր զգացին «սառը պատերազմի» բոլոր անխուսափելի հետևանքները, քան սփյուռքահայ որևէ այլ գաղութ: Երբ ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը, Ամերիկայում ապրող հայերը շատ պայծառ ու լավատես հայացքով էին նայում աշխարհին: Նրանց հիշողության մեջ դեռ թարմ էր դաշնակից պիտությունների համագործակցությունը: Նրանք հույս ունեին, որ հետպատերազմյան շրջանում այդ



համագործակցութիւնը կշարունակվի, որ մասնավորապէս ԱՄՆ-ի և Սովետական Միութեան միջև ստեղծված հարաբերութիւնները կշարունակվեն բարեկամութեան ոգով: Դա թույլ կտար նրանց ավելի զարգացնելու առաջադիմական կազմակերպութիւնների կոլտուրական գործունեութիւնը և, որ զբոսաշրջութեան է, կոլտուրական կապեր հաստատել Սովետական Հայաստանի հետ, առանց «կոմունիզմին համակրելու» մեջ մեղադրվելու ռիսկին ենթարկվելու:

Սովետական Հայաստանի հետ կոլտուրական կապերի հաստատումը ամերիկահայ գաղութի համար հատուկ կարևորութիւն ունի, այն իմաստով, որ այստեղ էլ, ինչպէս Ֆրանսիայում, արագ տեմպերով հայերը ձուլվում են: Մակայն Ամերիկայի հայ աշխատավորներին ծանր հիասթափութիւն էր սպասում: Շուտով փշեցին «սառը պատերազմի» քամիները: Մի կողմից՝ առաջադիմական կազմակերպութիւնների գործունեութեան ասպարեզը խիստ սահմանափակվեց, մյուս կողմից՝ զաշնակցութեան համար քաղաքական դավերի ու ինտրիգների լայն ասպարեզ ստեղծվեց: Այսպէս կոչված «հակամերիկյան գործունեութիւն հետազոտող հանձնաժողովը» իր ձեռքը երկարեց մինչև հայկական առաջադիմական կազմակերպութիւնները: Այսպիսի պայմաններում, օրինակ, Ամերիկահայ Առաջադիմական Միութիւնը մտցվեց սև ցուցակի մեջ: Հասկանալի է, որ հայութեան շափավոր ու զգուշ շրջանների վրա դա նույնպէս բացասական ազդեցութիւն գործեց, քանի որ զանազան պատճառներով (քաղաքական ռեպուտացիա, տնտեսական շահերի ապահովում և այլն) նրանց մի զգալի մասը հեռացավ մշակութային և հասարակական ակտիվ գործունեութիւնից: Խոսելով այդ շրջանի մասին, ամերիկահայ հասարակական գործիչ և հրատարակագիր Լեոն Մարտիրոսյանը գրում է. «Աննախընթաց խանդավառութեան շրջան մըն էր, որ կբոլորվեր. շրջան մը, որ կարճատև եղավ, ինչպէս երջանիկ երազ մը: Շուտով սկսավ սառը պատերազմը... Ազգային Խորհուրդին զուրս եկան ռամկավար Ազատականները, եկեղեցականները. պայուսակը վերցնողը փախավ ու կծկվեցավ անկյուն մը. մնացին միայն Առաջադիմականներն ու հնչակ-

յանները, որոնք Ազգային Խորհուրդի անունով առաջ տարին Հայաստանի տոնակատարութիւններն ու ցուցադրեցին մի քանի խոսուն շարժանկարներ»¹:

Վերը շարադրվածից բնավ չի հետևում, թե գաղութում կոլտուրական կյանքը դադարեց: Չնայած ստեղծված աննպաստ պայմաններին, ամերիկահայ գաղութի մշակութային, կրթական, բարեգործական, հայրենակցական կազմակերպութիւններն ու միութիւնները, մամուլը շարունակեցին իրենց գործունեութիւնը, օգտագործելով դրա համար բոլոր հնարավորութիւնները:

Ամերիկահայութիւնը խոր գոհունակութեամբ ընդունեց սովետա-ամերիկյան հարաբերութիւնների 1959 թվականի վերջերին տեղի ունեցած որոշակի բարելավումը, որը մեծապէս նպաստեց միջազգային լարվածութեան թուլացմանը: Ամբողջ ամերիկյան ժողովրդի հետ միասին հայ գաղութը ողջունեց Սովետական Միութեան Միջինատրների Սովետի նախագահ Ն. Ս. Խրուշչովի պատմական այցը Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Դա ամերիկահայերի կյանքում մեծագույն իրազարժութիւն էր: Արդեն նշեցինք, որ սփռուրահայութիւնը, հատկապէս ամերիկահայութիւնը շատ էր տուժել «սառը պատերազմի» արհավիրքներից: Այդ բոլորից հետո ամերիկյան հողի վրա հանդիպում էին աշխարհի երկու խոշորագույն երկրների ղեկավարները՝ քննարկելու համար ամբողջ մարդկութեանը հուզող միջազգային հրատապ հարցերը: Ամերիկայում լույս տեսնող բոլոր ուղութիւնների հայկական թերթերը, բացի զաշնակցական մամուլից, որը որևէ շափով չի արտահայտում ամերիկահայութեան հասարակական կարծիքը, լայնորեն արձագանքեցին այդ խոշորագույն իրադարձութեանը: Հայտնի է, թե ընդամենը 13 օր տևած այդ ուղևորութեան ընթացքում ամերիկյան հասարակութեան բոլոր խավերի վրա ինչպիսի խոր, անջնջելի տպավորութիւն թողեցին Սովետական գաղութային ղեկավարի ելույթները մարդկութեանը հուզող միջազգային պրոբլեմների մասին: Այդ ուղևորութիւնը

¹ Լեոն Մարտիրոսյան, Կյանքի մը Ալպոմը, Բեյրութ, 1959 թ., էջ 419.

միլիոնավոր ամերիկացիների ստիպեց նոր աչքերով նայել սովետա-ամերիկյան հարաբերություններին, խաղաղության ու պատերազմի հարցերին: Այդ տեսակետից բնորոշ է «Պայքար» թերթում հրատարակված «Խրուշչովի այցելությունը» վերնագրով առաջնորդող հոդվածի հետևյալ մասը.

«Առաջին օրերու վերապահ, նույնիսկ թշնամական դիրքավորումը կարգ մը պաշտոնյաներու և հասարակության՝ հետըհետե հալեցավ և զայն փոխարինեց ավելի ջերմ ու հաղորդական վերաբերում մը: Ծիշտ է, դեռ բացահայտ էր երկուլը որևէ դրական կարծիք հայտնելու,— երբ թղթակիցներ ծանոթ դեմքերու կհարցնեին իրենց կրած տպավորությունները Խրուշչովին: Տակավին շատերուն մեջ կտիրապետեր վախը, մնացած մագկարթիական շրջանի սարսափեն,— և կխուսափեին ըսելու նպաստավոր խոսք մը կամ բռն մը, որ կրնար իրենց դեմ հավատաքննության խարազանի վերածվի, եթե վերադառնար զրպարտելով ու հալածելով հարվածելու հակասովետ խաչակրությունը: Սակայն արագորեն բարեփոխվեցավ մթնոլորտը: Կազմակերպված բողոքի ու սուգի ցույցեր ձախողեցան ժողովրդային խավերը զրգռելու և գրավելու իրենց ամոթալի փորձերուն մեջ: Հասարակությունը ամեն տեղ արտահայտեց խաղաղության իր հզոր տենչանքը և եռանդով կամ բարյացակամությամբ ողջունեց վարչապետ Խրուշչովի այցելությունը Ամերիկա՝ որպես միջոց մը պատերազմի դժոխային արհաժիրքների խուսափելու:

Զգացումի ու վարմունքի այդ փոփոխության մեջ նշանակալի բաժին մը ունեցավ ինքը վարչապետ Խրուշչով:

Ամերիկյան ժողովուրդը խառնվածքով վեհանձն է, արդարամիտ ու կսիրե ձեռներեց ոգին, մտքի կորույր և անկեղծությունը՝ նույնիսկ հակաակորդներու մեջ: Վարչապետ Խրուշչովը անոնք գտան օժտված բացառիկ կարողություններով, սրամիտ, պատրաստաբան, հանդուգն՝ իր համոզումներով, որ կրնար կատակին երգիծանքով և ամբաստանող հարցումին նետել հատու մեղադրանք մը»¹:

Ընկ. Ն. Ս. Խրուշչովի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած ուղևորությունը ամենալայն արձագանքներ ունեցավ նաև Մերձավոր ու Միջին Արևելքում, Արևմտյան Եվրոպայում և աշխարհի մյուս շրջաններում ապրող հայերի մեջ: Արտահայտելով հայ աշխատավորական մասսաների տրամադրությունները, «Մեր նշանաբանն է Հառաջ» թերթը դրել է. «Աշխարհի բոլոր խաղաղատենչ մարդիկը, առանց ցեղային կամ դադափարական խտրության, ի սրտե ողջունեցին վարչապետ Նիկիտա Խրուշչովի այցելությունը Միացյալ Նահանգներ, անոր մեջ տեսնելով մեծ նպաստ մը միջազգային լարվածության մեղմացման և համաշխարհային խաղաղության ամրապնդման: Երկրպագի բոլոր ժողովուրդները և առաջին հերթին նույն ինքն Ամերիկայի ժողովուրդը Խրուշչով—էյզենհաուեր փոխ-այցելությունները նկատեցին մեծ քայլ մը դեպի վախճանը ցուրտ պատերազմին, որ տասնյակ տարիներ է վեր մարդկությունը կպահե անդունդի եզրին»:

Արտասահմանի հայ մամուլը այդ ուղևորությունը որակեց որպես «դարուս դեպք»:

Հետագա շրջանի միջազգային իրադարձությունները լավ հայտնի են և մենք դրանց վրա մանրամասն կանգ չենք առնի: Նշենք միայն, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմատենչ շրջանների կազմակերպած աննախադեպ պրովոկացիան՝ ամերիկյան Ու—2 ինքնաթիռի ներխուժումը Սովետական Միության օդային տարածությունը և բարձր ոլորտի Փարիզի խորհրդակցության ձախողումը դարձյալ մթագնեցին միջազգային կյանքի հորիզոնը: Ինքնին հասկանալի է, որ այս իրադարձություններն իրենց արձագանքներն ունեցան ամերիկահայ զաղութի ներսում, աշխուժացնելով դաշնակցական թափափուկների հակասովետական գործունեությունը:



ԱՄՆ-ում գործում են քաղաքական տարբեր ուղղությունների պատկանող մի շարք կազմակերպություններ, որոնց համառոտ բնութագրությունը տալիս ենք ստորև:

¹ «Պայքար», 1 հոկտեմբերի, 1959 թ. 6

1. Ամերիկահայ Ազգային Խորհուրդ.— Այս կազմակերպությունը ստեղծվել է 1943 թվականին: Նրա կազմի մեջ մտնում են Ամերիկահայ Առաջադիմական Միությունը, Հնչակյան պարտիայի Ամերիկայի շրջանի ներկայացուցիչները, ինչպես նաև Միջհայրենակցական Միության ներկայացուցիչները: Ռամկավարները Ազգային Խորհրդին անդամակցել են 1943—1950 թվականներին: Զբաղվում է մշակութային գործունեությամբ, իր մասնակցությունն ու աջակցությունը բերելով առաջադիմական շրջանների կողմից կազմակերպվող միջոցառումներին:

Ամեն տարի, Հայաստանում Սովետական կարգերի հաստատման տարեդարձի օրերին, Ազգային Խորհուրդը իր ակաիվ մասնակցությունն է ունենում հորեկանական հանդեսներ ու երեկոներ կազմակերպելու գործում: Այդպիսի միջոցառումներ են անցկացվում ԱՄՆ-ի ավելի քան 25 քաղաքներում: Ամեն տարի Ամերիկայում կազմակերպվում է կանանց միջազգային ցուցահանդես, որին մասնակցում է նաև Ազգային Խորհուրդը, հատուկ տաղավարով և զեղարվեստական հայտագրով:

2. Ամերիկահայ Առաջադիմական Միություն.— Գաղութի մշակութային մասսայական կազմակերպություններից մեկն է: Միությունը անդամակցում է ավելի քան 1000 մարդ: Բացի դրանից, ունի մեծ թվով համակիրներ: Միությունը ունի իր մասնաճյուղերը Ամերիկայի մի շարք քաղաքներում: Ամեն տարի տեղի է ունենում Միության համագումար, որին մասնակցում են բոլոր մասնաճյուղերի ներկայացուցիչները: Այդ համագումարներում քննարկվում են ամերիկահայ գաղթօջախին հուզող հարցերը (մշակութային կապեր Սովետական Հայաստանի հետ, Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը նվիրված տոնակատարություններ, համագործակցություն գաղութի մյուս առաջադիմական կազմակերպությունների հետ, պայքար դաշնակցության դեմ և այլն): Ահա թե ի՛նչպես է բնորոշում Միության դիրքը վարչության նախագահ Օզսեն Սարյանը. «... Մայր Հայրենիքը այս նախանձելի դիրքին հասած է շնորհիվ իր ձեռք բերած ազատության, որ ունեցավ ռուս մեծ ժողովրդի և եղբայրական հանրապե-

տություններու օգնությամբ: Հպարտ ենք մայր հայրենիքով, միշտ բարեկամ եղած ենք անոր և պիտի շարունակենք մեր սերն ու անվերապահ դիրքը: Ուրախ ենք, որ համայն գաղութահայությունը, բացի դաշնակցութենեն, կհրճվի Հայաստանով ու անոր հավերժությունն ու բարգավաճումը կցանկախագաղության և ժողովուրդներու բարեկամության մեջ»¹:

3. Հնչակյան պարտիայի ամերիկյան մասնաճյուղ.— Հրնչակյանները, ինչպես վերը նշեցինք, ներկայացված են Ամերիկահայ Ազգային Խորհրդի կազմում, մասնակցում են այդ կազմակերպության, Առաջադիմական Միության և ռամկավարական կազմակերպությունների կողմից անցկացվող միջոցառումներին: Սպինգվեր, Ուատը և Պրովիդենս քաղաքներում ունեն իրենց փոքր ակումբները, որտեղ զանազան առիթներով կազմակերպում են հանդեսներ ու երեկոներ:

4. Արտասահմանի հայ գաղութներում այժմ գործում են շուրջ 100 հայրենակցական միություններ: Դրանց զգալի մասը գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այդ կարգի առաջին կազմակերպությունները ստեղծվեցին անցյալ դարի 90-ական թվականներին, իսկ ավելի մեծ շափերով՝ առաջին համաշխարհային պատերազմից հետո: Հայրենակցական Միություններն իրենց մեջ միավորում են Արևմտյան Հայաստանի նույն քաղաքի, նույն շրջանի կամ գավառի բնակիչներին, ունեն իրենց ծրագիրն ու կանոնադրությունը: Հայրենակցական Միությունները անպարտիական կազմակերպություններ են: Դրանց անդամները կարող են հարել տարբեր քաղաքական հոսանքների: Չկա նաև դավանանքի խտրություն: Չնայած դրան, դաշնակները մի շարք դեպքերում փորձեր են կատարել և այժմ էլ կատարում են որոշ հայրենակցական միություններ դարձնել սփյուռքի հայության մեջ իրենց տիրապետությունը հաստատելու գործիք: Հայրենակցական Միությունների գործունեությունը հար և նման է արտասահմանի գաղութների մշակութային մյուս կազմակերպությունների գործունեությանը, այսինքն՝ կրթական գործի կազմակերպում,

¹ «Երասեր», 18 հուլիսի, 1957 թ.:

զանազան հանդեսների և տոնակատարությունների կազմակերպում, գաղութի աղքատ մարդկանց նյութական օժանդակություն և այլն: «Լրաբեր» թերթի տվյալներով 1959 թվականին Հայրենակցական կազմակերպությունների դրամական ընդհանուր միջոցները կազմել են մոտ մեկ միլիոն դոլար:

Հայրենակցական Միությունները շնորհակալ աշխատանք են կատարում Սովետական Հայաստանի հետ կուլտուրական կապերը ամրապնդելու, իրենց միության անդամներին Սովետական Հայաստանի նվաճումներին ծանոթացնելու գործում: 1946—1947 թվականներին այդ միությունները արտասահմանի հայ առաջադիմական մշակակերպությունների կողքին իրենց մասնակցությունը բերեցին հայրենադարձությունը հաջող կազմակերպելու գործին:

Հայրենակցական Միությունների գործունեության ծավալման, նրանց կենսունակության պահպանման համար մեծ նշանակություն ունեցավ Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում ժամանակին ավերված քաղաքների ու այլ բնակավայրերի անուններով Սովետական Հայաստանում նոր գյուղերի ու ավանների կառուցումը:

1925 թվականի նոյեմբերի 29-ին, Հայաստանում Սովետական կարգերի հաստատման օրը, Երևանի մոտ դրվեց նոր Արաբկիր ավանի անդրանիկ շենքի հիմնաքարը: Հետագայում ծնունդ առան նոր Արեշը, նոր Կիլիկիան, նոր Զեյթունը, նոր Մարաշը, նոր Հաճընը և այլ ավաններ:

Տարբեր քաղաքներում ու վայրերում գործող Հայրենակցական Միությունների գործունեությունը ավելի արդյունավետ և ավելի բազմակողմանի դարձնելու նպատակով 1947 թվականին Նյու-Յորքում հրավիրվեց ներկայացուցչական ժողով, որտեղ կազմվեց ամերիկահայ Միջհայրենակցական Միությունը: Որոշ Հայրենակցական Միություններ Հյուսիսային և Հարավային Ամերիկայում ու այլ երկրներում ունեն իրենց տպագիր օրգանները («Հաճըն», «Մարաշ», «Մալաթիա» և այլն):

Պետք է նկատել, որ որոշ Հայրենակցական Միություններ վերջին տարիներին թուլացրել են իրենց աշխատանքները: Մի

կողմից դա բացատրվում է տվյալ երկրի ներքին ու միջազգային կացությամբ, մյուս կողմից՝ Հայրենակցական Միությունների ղեկավարների և դրանց անդամների մի մասի պասսիվ գործունեությամբ:

Հայրենակցական Միությունների գործունեության մասին ընդարձակ հոդված է հրատարակված «Երիտասարդ Հայաստան» թերթում, որի հեղինակ Ռսկան Հովհաննիսյանը գրվածքում այդ միությունների նշանակությունը սփյուռքում, գրքում է. «Հայրենակցականները, քաջալերվելով Ս. Հայաստանի հաստատումեն՝ մայր հողի մեծ մասին վրա իրենց ջանքերը կենդրոնացուցին նոր ավաններ կառուցելու մեր վերածնած հայրենիքին մեջ, ուր կարելի պիտի ըլլար իրենց բեկորները ժամանակի ընթացքին փոխադրել և այնտեղ բնակեցնել, որպես ապահով ու հարազատ ազգային օջախ մը: Այսպիսով, հայրենակցականները գործեցին որպես վերաշինաց մարմիններ: Ահավասիկ ցարդ իրենց հիմնադրած ավաններն ումանք դարձած են քաղաքատիպ ոստաններ, արդյունաբերական ու մշակութային կենդրոններով՝ շնորհիվ Հայաստանի կառավարության բարեհաճ թույլտվության և ծրագրային հատկացումների»¹:

5. Վարդանանց ասպետների միություն.— Այս կազմակերպությունը միատարր չէ: Այն պահպանողական և չափավոր տարրերի մի խառնուրդ է: Նրա անդամներն իրենց հայտարարում են հայ եկեղեցու միասնության կողմնակիցներ, առերես հանդես են գալիս որպես Սովետական Հայաստանի բարեկամներ, սակայն միության մեջ գերակշռում են պահպանողական տարրերը, որի պատճառով հռանդուն հայրենասիրական գործունեություն չեն ծավալում:

6. Հայագիտական համագրային ընկերություն.— Այս կազմակերպությունը ստեղծվել է 1955 թվականին և գործում է Հարվարդի համալսարանին կից: «Հայագիտական ընկերությունը կազմվեցավ 1955-ին, նպատակ ունենալով հայ մշակույթը, պատմությունը և լեզուն ուսուցանել ամերիկյան

¹ «Երիտասարդ Հայաստան», 5-հունվարի, 1960 թ.:

բարձր կրթական հաստատությունց մեջ և հայագիտական ամբիոն մը հաստատել Հարվըրդ համալսարանին մեջ»¹։

Ընկերությունն ունի վարչական կազմ, որն ընտրվում է ընդհանուր ժողովում։ Վարչության ատենապետն է Մանուկ Էնկը։ Վարչության մեջ զանազան պաշտոններ ունեն Մարք Խալեկյանը, Գրիգոր Աղամյանը, Հակոբ Եթմեքճյանը, Մարգին Մարգինյանը, Հայկ Տեր-Մանվելյանը, Սարգիս Զարգարյանը և ուրիշներ։

Դաշնակները վերահսկում են այսպես կոչված «Համազգային մշակութային Միություն»-ը, և Հայ Օգնության Կոմիտեի ու Դաշնակցական երիտասարդաց միության գործունեությունը։

Վալելիելով ամերիկյան ռեակցիոն շրջանների հովանավորությունը և ստանալով նաև դրամական աջակցություն, դաշնակները Ամերիկայում հանդես են գալիս որպես «սառը պատերազմի» մոլի ջատագովներ, Սովետական Միության կատաղի թշնամիներ։ Վերջին ժամանակներս, հայ եկեղեցում ստեղծված պառակտումից հետո դաշնակներն ակտիվացրել են իրենց գործունեությունը այդ ուղղությամբ։ Դեռևս 1933 թվականին էջմիածնին ենթակա եկեղեցիներից 15-ը անջատվեցին։ Նույն թվականին դաշնակցական տեղաբնակները սպանեցին Ամերիկյան թեմի այն ժամանակվա առաջնորդ արքեպիսկոպոս Եղիշե Գուրյանին, որը առանց որևէ հիմքի նրանց կողմից ամբաստանվում էր կոմունիզմին համակրելու մեջ։ 1958 թվականին դաշնակներն այդ «անջատյալ» եկեղեցիները միացրին Կիլիկյան կաթողիկոսությանը։ Օգտվելով «սառը պատերազմի» ստեղծած ծանր մթնոլորտից, դաշնակները ամերիկահայ գաղութի ոչ միայն առաջադիմական տարրերին, այլև եկեղեցու սպասավորներին մեղադրում են կոմունիստական գաղափարախոսության մեջ, ամերիկյան իշխանությունների առաջ նրանց ներկայացնելով որպես կասկածելի ու վտանգավոր մարդիկ։

Կրթական գործը ամերիկահայ գաղութում։ Զուլման վտան-

գը դամոկլյան սրի պես կախվել է ամերիկահայ գաղութի գրվխին։ Գրեթե ամեն օր այդ մասին են գրում քաղաքական բուրձր ուղղությունների պատկանող թերթերն ու ամսագրերը, հաճախ նաև մյուս գաղութների թերթերը. այդ մասին խոսում են գրողներն ու հրապարակախոսները, մշակութային միությունների ղեկավարներն ու շարքային քաղաքացիները՝ իրենց հրապարակային ելույթներում։ Եվ դա հասկանալի է, կապիտալիստական Ամերիկայի մեծ քաղաքները ազգային փոքրամասնությունների լեզվի ու կուլտուրայի իսկական խառնարաններ են։ Թերթերը գրում են, որ հայ նոր սերունդը հայերեն գրեթե չի խոսում։ Երիտասարդությունը հաճախ անտարբեր վերաբերմունք է ցուցաբերում հայկական կազմակերպությունների կողմից անցկացվող կուլտուրական միջոցառումներին։ Ընտանիքներում զերիշխում է անգլերենը, քանի որ ծնողները սովորաբար անգլերեն են խոսում։ «Մնողներն մեծ մասը՝ ըլլա հայր կամ մայր, հայ են,— գրում է «Լրաբեր» թերթը,— և որոնք լավ հայերեն գիտեն, և սակայն տուններուն մեջ անգլերեն կխոսին։ Այս վարակիչ ախտը դժբախտաբար տարածված է 80 առ 100 տուններն ներս, երբեմն կտեսնենք նույնիսկ մեծ մայրիկներ, որոնք 40—50 տարի առաջ այս երկիրը հաստատված են, և այսբան տարիներն ի վեր՝ հազիվ հազ կտրտված անգլերեն մը սորված են, որոնք միայն իրենք և հասկանան իրենց խոսածը, և սակայն ցույց տալու համար թե՛ իրենք ալ բան մը գիտեն, իրենց թոռներուն հետ անգլերեն կը խոսին»¹։

Պատմելով Լոս-Անժելոսում կատարած իր ուղևորության ժամանակ ստացած տպավորությունների մասին, Ն. Սաաթճյանը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հայ երիտասարդության կյանքից։ Նրա վկայությամբ հաճախ հայկական հավաքույթներում «երիտասարդ մը չես տեսներ»։ Կիրակնօրյա դպրոցներում հայերենի ուսուցումը անգլերեն է տարվում։ Նույնիսկ «եկեղեցական աղոթքները կկարդան դպիրներ ու դպրուհիներ անգլերենով գրված հայերեն բառերով և կեր-

¹ «Պայքար», 16 օգոստոսի, 1958 թ.։

¹ «Լրաբեր», 25 օգոստոսի, 1959 թ.։

գեն այն այնքան ներդաշնակ և քառաձայն, առանց բառ մը հասկնալու... Հայերենը մոռցված է երեսներեն սկսյալ մինչև 20 տարեկաններու երկսեռ աշխարհին մեջ, իսկ անկե վերջ 20—30 քիչ մը հասկցող և պատասխանելու շղիջանող խումբի մը կը հանդիպինք, ասոր համար է, որ հանդեսներու շին մասնակցիր: 30—40 տարեկանեն հարյուրեն հիսուն հայերեն հասկցող և պատասխանողներ կան ու անկե վերն է, որ կգիմավորենք հայերը՝ որոնք ազգային ավանդութուններուն հանդեպ ունին գուրգուրանք, գիտեն Սահակը, Մեսրոպը, Շնորհալին, մեր Գողգոթաները, մեր Հարությունները, մեր հայրենիքը և անոր անօրինակ բարգավաճումը տարվե տարի»¹:

Զույման մասին ավելի հստակ գաղափար տալու համար բերենք մի հատված «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթի 1959 թվականի օգոստոսի 8-ի խմբագրական հոդվածից: «... Հայերեն կարդացողներու սերունդը ամեն տարի կպակսի,— գրում է շաբաթաթերթը:— Անկարելի է այս իրողությունը հերքել կամ ուրանալ: Թե հայերեն լեզուն կորսվելու վրա է հայ գաղութներու մեջ՝ երևակայության խնդիր չէ, ապա սառն ու տխուր իրողության հարց: Այսպես է Ամերիկայի մեջ, որքան Հյուսիսային, նույնքան և Հարավային: Նույնպես՝ Ֆրանսիայի մեջ...: Սա վերջին տարիներուն չենք գտնված և ոչ մեկ համաժողովի մը մեջ ուր անդերենն զատ ուրիշ լեզու խոսված է՝ ոչ միայն հայերենի անվարժ երիտասարդներն, հապա՝ հայերեն գիտցող շափահասներն»:

Այսպիսի պայմաններում դպրոցը խիստ կարևոր նշանակություն է ստանում: Սակայն ամերիկահայ գաղութում մշտական գործող հայկական դպրոցներ չկան: Երեսներեն հաճախում են ամերիկյան դպրոցներ և միայն շաբաթը մեկ կամ երկու անգամ լրացուցիչ հաճախում են այսպես կոչված կիրակնօրյա դպրոցները, որոնց պարապմունքները տեղի են ունենում եկեղեցիներին կից սրահներում: Այս դպրոցները շափահասաց քիչ արդյունք են տալիս: Չկան որակյալ դասա-

¹ «Ջարթոնք», 22 ապրիլի, 1958 թ.:

տուններ, չկան դասադրքեր ու դպրոցական շենքեր: Երեսներեն դպրոց հաճախելուն խանգարում է ամերիկյան հայաբնակ քաղաքների մեծությունը: Դպրոցի դասերին հաճախելու համար պետք է գնալ եկեղեցի, որը հաճախ տեղավորվում է քաղաքի հակառակ ծայրամասում:

Ամերիկյան իշխանությունները ոչ միայն չեն խրախուսում ազգային փոքրամասնությունների դպրոցների բացումը, այլև զանազան արգելքներ են հարուցում:

Կիրակնօրյա դպրոցներում սովորողների ընդհանուր թիվը, ըստ առանձին քաղաքների, շափահասաց համեստ է: Երբեմն այդպիսի դպրոցում սովորում են 10—50 երեսներ: Այսպես, օրինակ, Պրովիդենս քաղաքի դպրոցի մասին իմանում ենք, որ «1958—1959 տարեշրջանի հայ դպրոցի աշակերտության թիվը կրկնապատկված է: Ունեցանք հիսունի մոտ երկսեռ աշակերտություն մը, որոնք բաժնված են երեք դասարաններու»¹:

Հայ ուսուցիչը Ամերիկայում արհամարհված պրոֆեսիայի տեր մարդ է: Նա մշտապես նյութական ծանր զրկանքներ է կրում, իսկ ուսումնական գործը կազմակերպելու համար նրանից սովորաբար մեծ ջանքեր են պահանջվում: Այդ տեսակետից հետաքրքրական է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության օրգան «Հուշարար» կիսամյա թերթի վկայությունը: «Ի՞նչ է իրական պատկերը ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԳՊՐՈՑ-ին,— գրում է «Հուշարար»-ը:— Այդ անունով կներկայանան փունջ մը հայ մանչուկներ ու աղջիկներ, որոնք շաբաթը մեկ կամ երկու պահ կմեկտեղվին հայ եկեղեցիներու սրահներուն մեջ կամ օտար կրթական հյուրընկալ հարկերու տակ, համեստ քայց նվիրյալ ուսուցչուհիներու հսկողության ներքո, իրավ հայ վարժարաններու սովորված պատկերը պարզելով այցելուին նայվածքին առջև: Չկան դասարանային կանոնավոր բաժանումներ, քայցի մեկ-երկու քաղաքներն, այլ կան անհատ աշակերտներ, որոնք ուղղակի կապված են դասատուին: Հայ իրականության մեջ ուսուցչությունը կամավոր ու դիտա-

¹ «Լրաբեր», 25 օգոստոսի, 1959 թ.:

կից նահատակութիւնն եղած է: Այսօր ալ, ինչպես երեկ, հայ ուսուցիչը մեր համայնքին ամենեն կարևոր՝ սակայն ամենեն շատ արհամարհված անդամն է. անիկա ամենեն շատ փնտոված՝ սակայն ամենեն շատ անիրավված ու քիչ գնահատված պաշտոնյան է հայ կյանքին մեջ: Տարօրինակ արարած մըն է ան, հայ ուսուցիչը, որ հակառակ իր նյութական անկրելի զրկանքներուն ու դպրոցական վերին մարմիններու քմայքներուն՝ կշարունակե իր ասպարեզին ծառայել հավատքով ու նվիրումով: Վարժապետ... արհամարհանքով արտաւանված բառ մըն է, որ զայն գործածողին միտքին կեներկայանա «խեղճ», «անճարակ» և «անգործնական» մարդ մը, քանի որ նյութական հարստութիւն չունի ան...»¹:

Նույն իրողութիւնը հաստատում է «Նոր օր» թերթը, որը գրում է. «Մեր ժողովուրդը տակավին ուսուցիչներուն վրա կնայի իբրև անկարևոր, երկրորդական տարրի մը: Շատ անգամներ հայ ուսուցչութիւնը կենդանի մարտիրոսութիւն համազոր հանգամանք մը ստացած է... հայ ուսուցիչները միշտ ալ զրկանքով ու տաժանքով իրենց նվիրական պարտականութիւնը ի կատար ածած են, մնալով պատենշին վրա անհողդող ու աննկուն...»²:

Ամերիկահայ զանազան կազմակերպութիւններ կրթական գործի բարելավման նպատակով ծրագրեր ու առաջարկութիւններ շատ են արել, սակայն դրանք առայժմ մնում են թղթի վրա: Որոշ թերթեր քննադատական դիտողութիւններ հրատարակեցին այն մասին, որ ամերիկահայ գաղութի ղեկավարները ավելի մեծ ուշադրութիւն են նվիրում եկեղեցիներ կառուցելու վրա, քան դպրոցական գործը բարելավելուն: Այսպես, օրինակ, Ֆիլադելֆիայում հրատարակվող «Կոունկ» թերթը գրում է, որ հայ դպրոցը արժանի բարձրութիւն վրա ղենելու համար «Զայն ամենեն առաջ պետք է փրկել հայ եկեղեցիին ամենեն հետին կազմակերպութիւնն ըլլալու իր ներկա խղճալի դիրքն: Ցավով դիտել տրված է մեզի, և մենք փոր-

ձառութիւն մը ալ գիտենք, թե հաճախ ՀԱՅ ԴՊՐՈՅԻ ձեռնարկները ստորագրած են եկեղեցւոյ մյուս կազմակերպութիւնց ձեռնարկներէն և նույնիսկ վերջին պահուն հետաձգված... ՀԱՅ ԴՊՐՈՅԸ պետք է ձերբազատվի իր այս ստորին վիճակէն: Մե՛ղք հայ լեզվիկն»¹:

Բնորոշ է այդ տեսակետից Հ. Ավագյանի «Հայ մշակույթը և Միացյալ Նահանգները» հոդվածը, որտեղ հեղինակը մասնավորապես գրում է. «Ոմանք կկարծեն թե մեր եկեղեցիով կրնանք հայութիւնը պահել այս հյուրընկալ ափերուն վրա, ուր հավերժահարսներու ձայնը այնքան զգլխիչ է, սակայն թող ներվի մեզ ըսել թե, ասիկա ալ ուրիշ ինքնախաբեկութիւն մըն է, քանի որ այս դարին ջատագույնները կմոռնան թե քրիստոնյա երկրի մը մեջ է որ կապրինք: Հայը կրցած էր դարերով մնալ պարսկական կամ թուրք լուծին տակ, քանի որ այդ երկու երկրներն ալ պաշտոնապես տարբեր կրոնք ունին ու կհալածեին մերը կամ կարհամարհէին զայն, և զիրքն ու թատրոնն ու թերթերը այնքան տարածված չէին տակավին, ձայնափյունն ու պատկերասփյունը գոյութիւն չունեին և մենք կրցած էինք ունենալ մանավանդ, զեթ վերջին հարյուր տարվան ընթացքին, մեր առանձին դպրոցները, ուր տղաքը կմնային ոչ թե շաբաթական կամ օրական մեկ երկու ժամ, այլ ամբողջ օրը և կթրծվէին հայ ոգով: Պետք չէ մոռնալ նաև թե մերինները այդ երկիրներուն մեջ ավելի արթուն ու դարգացյալ ու առաջադեմ էին քան թուրքը կամ պարսիկը, որով հոն ավելի բարձր քաղաքակրթութիւն կեներկայացնէինք, սակայն այստեղ նույնը չէ պարագան՝ որով ձուլումը անխուսափելի կդառնա ի վերջո: Անշուշտ հարկ է ջանալ հետաձգել այդ տխուր թվականը և ատոր համար միջոցներ դառնելու ենք. այդ է ներկայիս մեր ավագ պարտականութիւնը»²:

Ամերիկահայ գաղութում կրթական գործի վիճակի մասին ավելի հստակ գաղափար կազմելու համար անհրաժեշտ ենք համարում հիշատակել ամերիկահայ դպրոցների կրթական

¹ «Հուշարար», 15 նոյեմբերի, 1958 թ.:

² «Նոր օր», 21 հոկտեմբերի, 1959 թ.:

¹ «Կոունկ», 17 հուլիսի, 1958 թ.:

² «Հայաստանի կոչնակ», 2 հունվարի, 1960 թ.:

տեսուչ Արտաշես Մկրտչյանի հաշվետվությունը, որ հրատարակված է մամուլում: Հաշվետվության մեջ տրվող տեղեկությունները վերաբերում են 1959—1960 ուսումնական տարվան: Կրթական տեսուչը հաղորդում է, որ աշակերտների ընդհանուր թիվը կազմում է 1450 մարդ: Անցյալ տարիների համեմատությամբ արձանագրված է աշակերտների ընդհանուր թվի որոշ ավելացում: «Երկրորդ ուրախալի պարագան այն է, որ հիմա ավելի մեծ թվով շափահաս ուսանողներ ունինք մեր դպրոցներում մեջ, քան անցյալ տարիներու ընթացքին: Անտարակույս շատ ոգևորիչ է այս երևույթը, որովհետև անոնց թվի հավելումով մենք վաղը պիտի ունենանք ավելի մեծ թվով հայերեն գիտցող հայրեր ու մայրեր, որոնք հայերեն պիտի խոսին իրենց զավակներուն հետ, և այսպիսով մասամբ մը պիտի դուրանա ուսուցիչներուն շատ դժվարին գործը ու ավելի արդյունաբեր պիտի դառնան տարված աշխատանքները»¹:

Կրթական գործում եղած դժվարություններից նշվում է նաև բավարար պատրաստություն ունեցող ուսուցիչների պակասը: Անլուծելի է մնում դասադրքերի խնդիրը: Այնուհետև նշվում է, որ «շատ մը տեղեր դասարանները կմնան անշուր, անհարմար և տեղի տեսակետով անբավարար: Մանուկի ուշադրությունեն չի վրիպիր ամերիկյան և հայկական վարժարաններու միջև գոյություն ունեցող հսկա տարբերությունը: Ամեն աշխատանք կթափվի անոնց վիճակը բարելավելու համար, սակայն ներկա պայմաններու տակ ինչ որ ալ ընենք այդ ուղղությամբ, մեր դպրոցներուն հաղիվ քանի մը հատը միայն կարելի է գեթ նվազ շահով հասցնել գոհացուցիչ վիճակի»:

Ընդհանրապես ամերիկահայերի մեջ տիրապետում է այն մտայնությունը, որ ձուլման պրոցեսը հնարավոր չէ կասեցնել: Հնարավոր է միայն ինչ-որ շափով դանդաղեցնել այն: Մենք արդեն խոսեցինք կրթական գործի անմխիթար վիճակի մասին: Ավելի լավ վիճակի մեջ չի գտնվում մամուլի տարածումը: Երիտասարդությունը, ինչպես ասացինք, չնչին բացառությամբ, հայերեն չի կարդում: Այս վիճակը փարատելու համար

¹ «Լրաբեր», 26 հունվարի, 1960 թ.:

հայկական մի քանի թերթեր մեկ էջի նյութերը հրատարակում են անգլերեն լեզվով, որպեսզի երիտասարդությունը հնարավորություն ունենա կարդալու և տեղյակ լինելու հայկական շրջաններում տեղի ունեցող իրադարձություններին:

Ամերիկահայ երիտասարդությունը, ավերելով ու շփվելով ամերիկյան հասարակության ամենատարբեր խավերի հետ, իր վրա անխուսափելիորեն կրում է կասիտալիստական Ամերիկայի ապականիչ բարբերի ազդեցությունը: Առատորեն արտադրվող բուլվարային գրականությունը, էրոտիկ պատմություններով ու արկածներով լի կինոֆիլմերը, անհագուրդ ձգտումը գեպի բիզնեսը, քաղքենիական կյանքն առանց մեծ նպատակների ու իդեալների, վերին աստիճանի բացասական ազդեցություն են գործում նաև հայ երիտասարդության նորմալ դաստիարակության վրա: Եվ պատահական չէ, որ ամերիկահայ թերթերը ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում երիտասարդության դաստիարակության հարցերին:

«Երբ երկրի մը մեջ օժիտները զգալիորեն կշատնան,— գրում է «Նոր օր» թերթը,— ամուսնալուծումները կբանդեն ընտանեկան հարկերը և երիտասարդությունը մերկացած պատասխանատվության զգացում՝ կապրի սունձարձակ և անձնատուր իր անասնական բնազդներուն, հարկ է անհապաղ հնչեցնել ահազանգը թե՛ տուն և դպրոց ողբալիորեն թերացած են իրենց բարձր կոչումին մեջ: Անօգուտ է մեղադրել նոր սերունդը, անհրաժեշտ է շիտակ ուղղություն տալ անոնց և ստեղծել մաքուր միջավայր մը, ուր անոնք կարենան ուռճացնել իրենց հոգեկան առաքինությունները և դառնալ օգտակար քաղաքացիներ»¹:

Մամուլ: 1. «Լրաբեր». Ամերիկահայ Առաջադիմական Միության օրգանն է, երկօրյա թերթ, լույս է տեսնում նյութառաջը: Թերթի շտաբը էջը լույս է տեսնում անգլերեն:

Շարունակելով մինչ այդ ԱՄՆ-ում լույս տեսած «Նոր Աշխարհ» և «Բանվոր» թերթերի տրադիցիաները, «Լրաբեր»-ը

¹ «Նոր օր», 13 սեպտեմբերի, 1960 թ.:

գարձավ ամերիկահայ գաղութի դեմոկրատական հատվածի սիրված թերթը:

Ահա արդեն 2 տարի է, ինչ ամերիկահայ առաջադիմական շրջանների օրգանը մեծ ու շնորհակալ աշխատանք է կատարում ամերիկահայ գաղութում, անգաղթում պրոպագանդում է Սովետական Միության և մասնավորապես Սովետական Հայաստանի նվաճումները, սատարում է ամերիկահայ մշակութային կյանքին, հետևողականորեն հանդես է գալիս հանուն խաղաղության, հանուն սովետական ու ամերիկյան ժողովուրդների բարեկամության: Սովետական Հայաստանում «Լրարեր» թերթը արդարացիորեն նվաճել է սփյուռքի դեմոկրատական լավագույն թերթերից մեկի համբավը:

2. «Երիտասարդ Հայաստան». լույս է տեսնում շաբաթը երկու անգամ, Նյու-Յորքում: Հնչակյան պարտիայի ամերիկյան շրջանի օրգանն է:

3. «Պայքար». օրաթերթ, լույս է տեսնում Բոստոնում: Ռամկավար-ազատական կուսակցության օրգանն է:

4. «Նոր օր». լույս է տեսնում շաբաթը երկու անգամ, Ֆրեզնոյում: Ռամկավար-Ազատական կուսակցության օրգանն է:

5. «Կոունկ». շաբաթաթերթ, լույս է տեսնում Ֆիլադելֆիայում: Զափավոր շրջանների թերթն է. հանդես է գալիս «անկախ» դիրքերից, բայց հարում է ռամկավարներին: Ունի նաև անդլերեն էջ:

6. «Նոր Աշխարհ». ազգային-եկեղեցական-գրական շաբաթաթերթ, լույս է տեսնում Բրուկլինում (Մասաչուսեթս նահանգ): Քաղաքի հայկական շափավոր շրջանների թերթն է, սրբ ձգտում է հեռու մնալ քաղաքական պայքարից, եկեղեցական (երբեմն նաև մշակութային բնույթի) հարցերում հանդես է գալիս դաշնակների դեմ: Նյութերի մի մասը լույս է տեսնում անգլերեն:

7. Դաշնակները լույս են բնծայում «Հայրենիք» օրաթերթն ու համանուն ամսագիրը Բոստոնում, իսկ «Ասպարեզ» շաբաթաթերթը՝ Ֆրեզնոյում:

8. «Հուշարար-Միություն». պաշտոնաթերթ Հայկական Բա-

րեգործական Ընդհանուր Միության Ամերիկայի կենտրոնական հանձնաժողովի. լույս է տեսնում Նյու-Յորքում որպես կիսամյա հանդես: Հրատարակվում է նաև անգլերեն:

9. «Հայաստանի կոչնակ». ազգային, քաղաքական, տրնտեսական, գրական-գեղարվեստական, կրոնա-բարոյական հանդես: Լույս է տեսնում Նյու-Յորքում: Այս պարբերաթերթը ԱՄՆ-ի հայ ավետարանական շրջանների օրգանն է:

10. «Միբանի գոտի». արվեստի և գրականության եռամսյա հանդես: Լույս է տեսնում Բոստոնում 1957 թվականից: Հանդեսը հրատարակում են առաջադիմական շրջաններն ու զրանց հարող գրողները, բանաստեղծներն ու արվեստագետները:

11. «Նոր Մալաթիա». եռամսյա պարբերաթերթ: Հրատարակում է նույն անունը կրող հայրենակցական միության կրթասիրաց ընկերությունը: Լույս է տեսնում Ֆիլադելֆիայում:

12. «Նոր Սերաստիա». տեղեկատու պաշտոնաթերթ Համահայաստանյան վերաշինաց Միության: Լույս է տեսնում Նյու-Յորքում:

13. «Արժվի Վասպուրական». հրատարակում է Վասպուրական Հայրենակցական Միությունը:

14. «Հայաստանյայց եկեղեցի». հրատարակում է Նյու-Յորքի հայոց առաջնորդարանը:

Բացի մամուլից, Ամերիկայի մի շարք քաղաքներում (Նյու-Յորք, Ֆիլադելֆիա, Պրովիդենս, Լոս-Անժելոս, Բոստոն, Ֆրեզնո) երբեմն հայերեն լեզվով ռադիոհաղորդումներ են տրվում, մեծ մասամբ հայկական երաժշտություն: Հայերեն լեզվով ռադիոհաղորդումներ են տալիս նաև դաշնակները: Սյդ հաղորդումները «Ամերիկայի ձայն» ռադիոհաղորդումների ծրագրի մի մասն են:

Ամերիկահայ շատ գրողների ու արվեստագետների անունները հայտնի են Սովետական Հայաստանում և սփյուռքում:

Ամերիկահայ արվեստի ու գրականության մասին խոսելիս, մենք նախ և առաջ նկատի ունենք նրանց, որոնց ստեղծագործությունները բովանդակությամբ ու լեզվով հայկական

են, կապված են հայ ժողովրդի անցյալի ու ներկայի հետ, իրենց բնությով ազգային են: Մի շարք ստեղծագործողներ, որոնց անունները հայաստանի են համաշխարհային հասարակա- նությանը, միայն ծագումով են հայ:

Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն

ՀԲԸՄ-ը սփյուռքում ֆինանսապես ամենաուժեղ կազմա- կերպությունն է: Այն հիմնադրվել է 1906 թվականին, Կա- հիրեում, Պողոս Նուպար փաշայի և մի խումբ ազգային գոր- ծիչների նախաձեռնությամբ: Հիմնադրման առթիվ առաջին ատենագրության մեջ ասված է. «Այսօր, 15 ապրիլ, 1906, Ս. Ջատկի առաջին օրը, ստորագրվել համախմբվել ի Գա- հիրե, Նորին Վսեմ. Պողոս փաշայի ապարանքը, կազմեցինք ընկերություն մը «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» անվամբ, ըստ տրամադրության և պայմանադ վերոգրվալ պայմանագրին որ կը կրե այսօրվա թվականն ու մեր ստորագրությունը: Ընկերության վարչական առաջին ժո- ղովը բաղկացած է կանոնադրիս 10-րդ հոդվածին մեջ նշա- նակված 10 անդամներեն և այսօրվրեն Ընկերությունս կազ- մակերպվալ հռչակված է:

Ի Գահիրե, 15 ապրիլի, 1906»¹:

ՀԲԸՄ-ի անդրանիկ կոչի մեջ շարադրված էին այդ կազ- մակերպության նպատակներն ու խնդիրները: «Հայ ազգը ան- հրաժեշտ պետք ունի կազմակերպվալ մնայուն մարմնո մը,— ասված է այդ փաստաթղթում,— որ միշտ պատրաստ գտնվի օգնելու Հայաստանի հայ ժողովրդյան՝ առանց կրոնի խտրու- թյան, և ուրախ ենք ներկա հայտարարութեամբ ծանուցանե- լու թե՛ այս տեսակ մի մարմին հիմնված է ի Գահիրե, «ՀԱՅ- ԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒՅՈՒՆ» անվամբ, որու նպատակն է՝ ըստ տրամադրության ներկայիս կցորդվալ կանոնադրի՝ մեր Հայաստանի եղբարց անմիջական օգնու-

¹ «Ոսկեծառան Հայ Բարեգործական Ընդհանուր Միության», Փարիզ, 1931 թ., էջ 14:

թյան հասնիլ, ամեն անգամ որ պետք մը գոյանա, և միան- գամայն նպաստել անոնց տնտեսական և կրթական ընդհա- նուր վիճակի բարելավման... Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը մի գործնական ապացույց թող լինի որ աշխարհի մեջ ցրվալ հայերը կարող են միաբանիլ ազգային բարօրու- թյան առաջնորդող նպատակի համար»¹:

Ըստ Բարեգործականի կողմից հրատարակված պաշտոնա- կան հաշվետվության, 1906—1957 թվականների ընթացքում Միությունը տարբեր նպատակներով կատարել է հետևյալ հատկացումները.

1. Մշակույթ— 4,5 միլիոն դոլար.
2. Ներգաղթ և Հայաստանի վերաշինություն— 2,5 միլիոն դոլար.
3. Որբերի խնամում— 1,8 միլիոն դոլար.
4. Առողջապահություն— 500 հազար դոլար.
5. Երիտասարդական շարժում— 200 հազար դոլար.
6. Զանազան— 500 հազար դոլար:

Այսպիսով, ընդհանուր ծախսը կազմում է 10 միլիոն դոլար: Այժմ Բարեգործականի դրամադրուխը կազմում է ավելի քան 9 միլիոն դոլար:

Ամբողջական պատկեր տալու համար անհրաժեշտ է մի քանի լրացուցիչ տեղեկություններ տալ նրա անմիջական տնօրինության տակ գտնվող, ինչպես նաև այս կամ այն շա- փով նրա ազդեցության ոլորտում գտնվող կրթական և մշա- կութային հաստատությունների մասին:

Միության սեփական վարժարաններն են.

1. Մելքոնյան կրթական հաստատությունը (Կիպրոս).
2. Հովակիմյան—Մանուկյան արական երկրորդական վար- ժարանը (Բեյրութ).
3. Գարուհի Հակոբյան իգական երկրորդական վարժարանը (Բեյրութ).
4. Լազար Նաճարյան կենտրոնական վարժարանը (Հալեպ).
5. Նուպար երկսեռ դպրոցը (Թեհրան).

¹ «Ոսկեծառան Հայ Բարեգործական Ընդհանուր Միության», Փարիզ, 1931 թ., էջ 18:

6. Անթիլիասի նախակրթարանը (Լիբանան).
7. Աճարլաքի Արմենյան վարժարանը (Հալեպ).
8. Շեյխ Մախսուրի Արմենյան վարժարանը (Հալեպ).
9. Տերպետի Կիլիկյան վարժարանը (Սիրիա):

Աշակերտների ընդհանուր թիվը այս բոլոր դպրոցներում միասին վերցրած կազմում է 1677 մարդ: Մնացած երկրներում այսպես կոչված հովանավորյալ և նպաստյալ վարժարանների ընդհանուր թիվը կազմում է 84 (այդ թվում և կիրակնօրյա դպրոցներ), բացի դրանից, կրթական տալարեզում Միությունը կիրառում է կրթաթոշակների սխեմե՝ այսինքն զանազան դպրոցների որոշ խիստ սահմանափակ թվով երեխաների կրթության համար թոշակներ է նշանակում:

Մշակութային և հասարակական հիմնարկներից ու կազմակերպություններից Միության հետ կապված են Մարի Նուպար Ուսանողական տունը և Նուպարյան Մատենադարանը (Ֆրանսիա), Ամերիկայի, Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Հունաստանի «Երիտասարդական ընկերակցությունները», տարբեր երկրներում գտնվող մի քանի «խնամատիրական» հիմնարկներ, գլխավորապես «դարմանատուներ» (հիվանդանոցներ)¹:

Այժմ ՀԲԸՄ-ը իր շարքերում հաշվում է 20 հազար անդամ: Նա բազմաթիվ մասնաճյուղեր ունի արտասահմանի գրեթե բոլոր հայկական գաղութներում: Վարչական տեսակետից կազմակերպությունը ղեկավարվում է հետևյալ կերպ.

Կենտրոնական վարչությունը գտնվում է Նյու-Յորքում: Այստեղ էլ գործում է Ամերիկայի կենտրոնական հանձնաժողովը 120 մասնաճյուղերով: Եվրոպայի կենտրոնական հանձնաժողովն ունի 25 մասնաճյուղ, Եգիպտոսի կենտրոնական հանձնաժողովը՝ 65 մասնաճյուղ, ներառյալ Հորդանանի, Սուդանի, Եթովպիայի, Իրանի մասնաճյուղերը: Բարեգործականի եգիպտական կենտրոնը ղեկավարում է նաև Սիրիայի 25 և Լիբանանի 32 մասնաճյուղերի գործունեությունը, այս-

պես կոչված շրջանային հանձնաժողովների միջոցով: Այս կազմակերպությանը Ամերիկայում անդամակցում է մոտ 4 հազար մարդ: ՀԲԸՄ մասնաճյուղը կապված է գաղութի եկեղեցական շրջանների հետ և իր մշակութային միջոցառումները հաճախ անց է կացնում Ամերիկայի հայ եկեղեցու Արևելյան թեմի (Նյու-Յորք) և Արևմտյան թեմի (Լոս-Անժելոս) առաջնորդների հետ միասին: Մասնաճյուղը վերահսկում է կտակային գումարները, նվիրատվությունները, կազմակերպում է հանգանակություններ կիրակնօրյա դպրոցների և ակումբների ծախսերը հոգալու համար: Իր բաժանմունքներն ունի գրեթե բոլոր հայաշատ վայրերում: Իր գործունեությամբ հաշվետու է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական Վարչությանը, որը գտնվում է Նյու-Յորքում: 1908 թվականից մինչև 1922 թվականը Միության Կենտրոնական Վարչությունը գտնվում էր Կահիրեում, 1922—1939 թվականներին՝ Փարիզում, 1939 թվականից մինչև այսօր՝ Նյու-Յորքում: Հիմնադրման օրվանից մինչև այժմ ՀԲԸՄ-ի նախագահներ են ընտրվել Պողոս Նուպար փաշան (1906—1930), Գալուստ Կյուլպենիյանը (1930—1932), Զարեհ պեյ Նուպարը (1932—1940), ղոկտոր Պողոս Քոլոյանը (1940—1942), Արշակ Կարազոզյանը (1942—1953) և այժմյան նախագահ Ալեք Մանուկյանը՝ 1954 թվականից:

Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունում ազդեցիկ դիրք են զբաղում ուսմավարները: Հասկանալի է, որ դա մեծապես նպաստում է Ռամկավար-Աղատական կուսակցության ազդեցության տարածմանն ու ուժեղացմանը արտասահմանի հայ գաղութներում:

Բարեգործականի փոխհարաբերությունները արտասահմանի մյուս հայ կազմակերպությունների, խմբավորումների ու հոսանքների հետ, բացի դաշնակցությունից, ընդհանրապես նորմալ են: Ինչ վերաբերում է դաշնակներին, ապա նրանք տարիներ շարունակ իրենց թերթերի էջերում, զրբերում, հրապարակային ելույթներում հանդես են գալիս Բարեգործականի դեմ, փորձելով միջոցներ կորզել նրանից իրենց քայքայիչ հակաժողովրդական դավերի ու մութ նպատակների իրագործ-

¹ Տե՛ս «Ընդհանուր տեղեկագրեր և հաշվեկշիռներ» 1955, 1956 և 1957 տարիշրջաններու, Փարիզ, 1959 թ.:

ման համար: Գաշնակների կողմից Կիլիկյան կաթողիկոսությունը դավթելուց հետո Բարեգործականը դադարեցրել է օգնությունը Կիլիկյան աթոռին:

Հայ Բարեգործական Ընդհանուր Միության և դաշնակցական պարտիայի միջև ստեղծված փոխհարաբերությունների մասին ավելի լրիվ գաղափար տալու համար անհրաժեշտ ենք համարում մի քանի մեջբերումներ կատարել մամուլի էջերից: Գաշնակցական մամուլը կուպիա հարձակումներ է կատարում հատկապես ՀԲԸՄ ղեկավարների, մասնավորապես Միության նախագահ Ալեք Մանուկյանի դեմ, մեղադրելով նրանց «մեկատիրության» և «հատվածականության» մեջ: Այդ հարձակումներն ավելի ուժեղացան այն քանից հետո, երբ ինչպես ասացինք, 1955 թվականին հայ եկեղեցում առաջացած պառակտումից հետո ՀԲԸՄ-ը դադարեցրեց օգնությունը Անթիլիասի կաթողիկոսությանը: Այդ առիթով դաշնակցական մամուլը վայնասուն բարձրացրեց՝ մեղադրելով Հայ Բարեգործական Միության ղեկավարությունը:

Պատասխանելով «Հայրենիք» թերթին, ուսմկավարների օրդան «Պայքար» թերթը գրել է. «Գաշնակցական պետեր, խաթարված, եղկելի իրենց դատողության մեջ, կկարծեն, թե իրենք անկապտելի իրավունք ունենին հերձվածի վերածելու Անթիլիասը, որ ետրեն Եպիսկոպոս կրնա «աղատատենը» շաղփաղփումով մայիսի 28-ի (դաշնակների կողմից իշխանությունը դավթելու օրը— Ս. Գ.) արևաշող արշալույսը ներբողել և Անթիլիասը գաղութահայ կրոնական կեդրոնը հռչակել, որ հայ Օգն. Միությունը (դաշնակցական կաղմակերպություն է— Ս. Գ.) և դաշնակցական գույնզգույն խաչեր աղատ են ուրանալու էջմիածինը և ողիով ու դրամով պաշտպան կանգնելու Զարհ՝ ապօրինին: Եվ տակավին քրեական, արկածախնդիր վաճառումով մը իրենք կրնան նախագահ Շամունը հրավիրել Անթիլիաս, որ հայ եկեղեցիի բեմ ճանաչված այդ վայրեն քաղաքական բուռն ճառ մը խոսի Եղիպտոսի ու Սուրիո իշխանությանց դեմ,— արհամարհելով հոն հյուրընկալվող հարյուր հազարավոր հայերու ապահովությունը»¹:

¹ «Պայքար», 19 օգոստոսի, 1958 թ.:

Գաշնակցությունը թշնամաբար ընդունեց ՀԲԸՄ նախագահ Ալեք Մանուկյանի՝ այդ կաղմակերպության 44-րդ ընդհանուր ժողովին հղած ուղերձի այն մասը, որտեղ նշում է Բարեգործականի դիրքը Սովետական Հայաստանի և էջմիածնի նկատմամբ: Ընդգծելով հայ եկեղեցու նշանակությունը սփյուռքում, Ա. Մանուկյանը հայտարարեց, որ ՀԲԸՄ-ը հավատացած է, թե «մեր հայրենիքը՝ վերականգնած, մեծագույն ներշնչարանն է մեր հայկականությունը պահելու: Պարագանների բերումով անոր ունեցած վարչաձևին մասին որքան ալ տարբեր ըլլան մեր ըմբռնումները, կողերովինք այն փառապանծ իրականությամբ, թե մեր ժողովրդին սովոր մեծամասնությունը այսօր տերն է իր հայրենի երկրին, որուն համար դարերով լացեր, աղոթներ, զոհվել ենք, ու հայածանքի, կոտորածի տեսական սարսափներեն զերծ՝ լծված է նյութական թե իմացական ստեղծագործ աշխատանքի»²:

1959 թվականի վերջերին Կիլիկյան կաթողիկոսությունը դաշնակների հրահանգով հրապարակեց այդ կրքոնական հիմնարկի գրագրությունը ՀԲԸՄ հետ, որից երևում է, որ Կիլիկյան կաթողիկոսությունը մտադիր է «դատ բացելու» Բարեգործականի դեմ իրենց հասանելիք գումարները ստանալու նպատակով: Նույն ժամանակ ՀԲԸՄ և Կիպրոսի Մեթոնյան հաստատությունը տնօրենի միջև ծագած կոնֆլիկտի հետևանքով վերջինս հեռացավ պաշտոնից (Մեթոնյան կրթական հաստատությունը պահում է Բարեգործականի միջոցներով) և միացավ դաշնակներին: Օգտվելով առիթից, դաշնակները սկսեցին նոր հարձակումներ կատարել ՀԲԸՄ դեմ: Այդ գործում 1959 թ. հոկտեմբերին «աչքի ընկալ» հատկապես դաշնակների Բեյրութի օրդանը, որը «միկոզիայից մեր թղթակցին կողմն հրատարակության համար զրկված նամակներին» միջոցով մի քանի հողված հրապարակեց, հայտարարելով, որ «ժեր աղվեսներ գրաված են Բարեգործականի վարչական ղեկը», որ «Բարեգործականի աթոռներուն վրա մեծերը պարտավոր են անդրադառնալ պարզվող ողբերգության»²:

¹ «Արև», 26 փետրվարի, 1958 թ.:

² «Ազգակ», 19 հոկտեմբերի, 1959 թ.:

Դաշնակների պարտիան իր քաղաքական նպատակների համար փորձում է Բարեգործական Միությունից միջոցներ կորզել ոչ միայն եկեղեցու, այլև իր վերահսկողության տակ գտնվող դպրոցների և դաշնակցական մյուս կազմակերպությունների միջոցով, բայց հաջողություն չի ունենում:

ՀԲԸՄ գործունեության մասին երբեմն դժգոհում են հընչակյան շրջանները: Այդ տեսակետից բնորոշ է հնչակյան օրգան «Երիտասարդ Հայաստան» թերթում 1959 թվականի վերջերին հրատարակված հոդվածը, որի հեղինակն է թերթի խմբագիր Սիրվարդը: «Խտրական ոգին վնասակար է» վերնագիրը կրող այս հոդվածում հեղինակը դժգոհում է այն բանից, որ ՀԲԸՄ ղեկավարությունը նյութապես չի օգնում այն դպրոցական հաստատություններին, որոնք չին գտնվում Բարեգործականի վերահսկողության տակ: Հեղինակը վկայակոչում էր այն փաստը, որ Բեյրութի Սահակյան վարժարանը (որը գտնվում է հնչակյանների վերահսկողության տակ — Ս. Գ.), չի ստացել իրեն խոստացված նյութական օժանդակությունը: ՀԲԸՄ ղեկավարները, գրում էր հեղինակը, «կրաղձան Սահակյաններուն նման բոլոր դպրոցները գոցվին, որպեսզի Միության վարժարանները օգտվին... Խտրական ոգին է, որ Միությունը համահայկական ըլլալի հեռու կրպահե»¹:


1946—1947 թվականների հայրենադարձության ժամանակ ՀԲԸՄ նախաձեռնությամբ ամերիկահայության միջոցներից հավաքվեց մոտ մեկ և կես միլիոն դոլար: Այդ գումարը փոխանցվեց Սովետական Հայաստան և տրամադրվեց հայրենադարձության հետ կապված ծախսերի մի փոքր մասի վճարման համար: ՀԲԸՄ իր իրավասության տակ եղած գումարներից հայրենադարձության համար գումարներ չտրամադրեց, պատճառաբանելով, որ այդ գումարները արդեն բաշխված են, կամ ենթակա են բաշխման ըստ նպատակների:

ՀԲԸՄ իր բնույթով բուրժուական ֆիլանտրոպիկ կազմակերպություն է, որի ամբողջ գործունեությունը գտնվում է հայ

հարուստ վերնախավի վերահսկողության տակ: Սակայն սփյուռքի առանձնահատուկ պայմաններում այդ կազմակերպությունը օբյեկտիվորեն դրական դեր է կատարում, քանի որ նրա կողմից տրամադրված միջոցներով, ինչպես տեսանք, իրենց գոյությունն են պահպանում հայկական դպրոցներ, հիվանդանոցներ և կուլտուրական այլ հաստատություններ:



¹ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 22 դեկտեմբերի, 1959 թ.:



ԱՐԳԵՆՏԻՆԱ

Արգենտինայում է գտնվում Հատինական Ամերիկայի ամենամեծ հայկական գաղութը: 1959 թ. տվյալներով այս երկրում ապրում է ավելի քան 40 հազար հայ, որից 30 հազարը Բուենոս-Այրեսում, իսկ մնացած 10 հազարը Կորդոպայում, Ռոսարիոյում, Մարդել Պլատում, Տուկումանում, Մենդոսում և այլ վայրերում: Գաղութի առաջացման պատմությունը, ժամանակագրական տեսակետից, զրեթե նույնն է, ինչ որ Ուրուգվայում և Բրազիլիայում: Արգենտինայի հայ բնակիչները այս երկիրն են եկել անցյալ դարի 80-ական թվականներին, սակայն գաղութը աճել է առաջին համաշխարհային պատերազմից հետո: 1960 թվականի ապրիլին «Խիթան» թերթը դիմեց Արգենտինայից Փարիզ ժամանած Վահե Պահատուրյանին, խնդրելով որոշ տեղեկություններ հաղորդել արգենտինահայ գաղթավայրի մասին: «Առաջին մեծ պատերազմն առաջ,— ասել է նա,— Արժանթինի մեջ հաստատված հայերուն թիվը եղած է 100—150 հոգի: Կլիկիո աղետալի պարպումն հետո գլխավորաբար այդ շրջանի հայությունը ապաստանած է Արժանթին, այդ իսկ պատճառով Բ. Այրեսի հայությունն մեծամասնությունը այնթապցիներ, հաճրնցիներ և մարաշցիներ են: Այսօր Արժանթինի հայության ընդհանուր թիվը կզնահատվի 35-են 40 հազար»¹: Գատնելով արտասահ-

¹ «Խիթան», 30 ապրիլի, 1960 թ.:

մանի հայ մամուլի հաղորդագրություններից, Արգենտինայի գաղութը այժմ էլ շարունակում է աճել ի հաշիվ նվրոպայի և Ասիայի հայ գաղութներից այստեղ փոխադրվողների: Հայերն աշխատում են Արգենտինայի արդյունաբերական ձեռնարկություններում, պետական զանազան հիմնարկներում, զբաղվում են առևտրով: Որոշ թվով հայեր հասել են տնտեսական բարձր դիրքերի, արդյունաբերական ձեռնարկությունների, խոշոր խանութների և առևտրական ընկերությունների տերեր են:

Արգենտինայի և Բրազիլիայի հայ գաղութների տնտեսական վիճակի մասին գրած իր երկու հոդվածներում, որոնք հրատարակվել են «Զարթոնք» թերթում, Տ. Գնդունին փորձում է ապացուցել, որ «Հարավ-ամերիկյան երկրներուն «տնտեսական դժվարությունները», որոնց մասին այսօր կխոսի միջազգային լրագրությունը՝ մեր ազգակիցներուն համար չեն»¹: Տ. Գնդունու այս հաստատումները հերքվում են Բուենոս-Այրեսից ստացված մի այլ հաղորդագրությամբ, որը հրատարակվել է «Ազգակ» թերթում: Այդ հաղորդագրության մեջ կարդում ենք. «Աչքի եկավ մեր Ավետյաց երկիրը: Ամիսը չորս հարյուր փեսոյով փառավոր կապրեինք: Ամեն կողմն հրավեր, սեղաններ... հիմա բոլոր ասոնք պատմության անցած են: Այստեղ բնակարանի տաղնապը ամենեն սոսկալին է, ապրուստի սղությունը վերջին քանի մը ամսվա ընթացքին եռապատկված է, իսկ մյուս կողմն անգործությունը առած քալած է: Պաշտոնյա, աշխատավոր շատ դժվարին դիրքի մեջ կը գտնվին»:

Հեռաձայնը, կապը, երթևեկը արդեն բարձրացած են, և ահա էլ նկատականության սակագինը հանկարծ երեք անգամ բարձրացում կրեց: ... Այստեղ գողություններ ալ շատնալ սկսան, ամենեն լավ ինքնաշարժները կգողվին... Հոս ալ ամեն կողմ կան նոր շինություններ, որոնք շավարտված արդեն ծախված են, սակայն վարձքերը տարապայման կերպով սուղ են»²: Տ. Գնդունին ըստ երևույթին դատում է միայն այն

¹ «Զարթոնք», 21 նոյեմբերի, 1959 թ.:

² «Ազգակ», 15 հունիսի, 1959 թ.:

փաստից, որ, ինչպես ինքն է ասում, «Այս երկու երկրներու մեջ ալ միլիոնատեր հայերու թիվը այս պահուստ կարևոր ցանկ մը կենրկայացնեն»¹: Հայ հարուստներ արգենտինահայ գաղութում, ինչպես մյուս գաղութներում, անշուշտ կան, սակայն մոլորություն կլինեք գաղութի ընդհանուր տնտեսական վիճակի մասին խոսելիս ելակետ ունենալ տնտեսապես ապահով մի բուռ մարդկանց:

Հայերի ձուլման պրոցեսը Արգենտինայում շափաղանց ուժեղ է: Չնայած գաղութում գոյություն ունեցող պատկառելի թվով մշակութային և այլ կազմակերպություններին, հայ երիտասարդությունը հայերեն գրեթե չի խոսում: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 40 հազար մարդ ունեցող այս գաղութում կան մոտ 13 փոքր վարժարաններ, բայց դրանցում սովորում են ընդամենը 700 երեխաներ: Ոչ միայն դպրոցական շենքերի կառուցումը, կրթական գործի կազմակերպումը, հատկապես ուսուցիչների հայթայթումը, այլև դպրոցների համար երեխաներ գտնելը լուրջ պրոբլեմ է, քանի որ ծնողների մեծ մասը հրեխաներին տալիս է արգենտինյան դպրոցներ:

Ինչպես վերը նշեցինք, Արգենտինայում գործում են մեծ թվով զանազան տիպի և զանազան ուղղությունների միություններ: Այդ տեսակետից Արգենտինայի հայ գաղութը բնորոշ է գաղութահայ կյանքի հասարակական-քաղաքական և կուլտուր-լուսավորական աշխատանքների կազմակերպման առումով: Ամենուրեք ստեղծվում են մանր, հաճախ միայն թղթի վրա գոյություն ունեցող միություններ: Դրանք բուսնում են այնպես, ինչպես սունկը անձրևից հետո: Իսկ որտեղ կա միություն, այնտեղ կա նաև վարչություն, ատենապետ, ատենադպիր, գանձապահ, օժանդակ հանձնախումբ կամ հանձնախմբեր: Ու այսպես գաղութը կոտորակվում է, ներսում ունենալով տասնյակ միություններ, վարչություններ, խորհուրդներ: Հետաքրքրականն այն է, որ դրանք հաճախ ստեղծվում են նույն դիրքավորում ունեցող կազմակերպության ներսում:

¹ «Հարթոնք», 21 հոկտեմբերի, 1959 թ.:

Ավելորդ է ասել, թե դրանք ինչպես են իրար խանգարում, զլատում գաղութի կենսական ուժերը, տեղի տալիս զանազան հակամարտությունների, գաղութում ավելի երևելի դիրք գրավելու համար անսկզբունք պայքարի: Միությունների քանակի տեսակետից, եթե աչքի առաջ ունենանք նաև գաղութի բնակչության թիվը, արգենտինահայ գաղութը ռեկորդային դիրք ունի: Այստեղ ստեղծված է մոտ 40 միություն:

Սա անշուշտ չի նշանակում, թե բոլոր միությունները նույն ազդեցությունը, կամ աշխատանքի նույն բովանդակություն ունեն: Ինչպես այլ երկրներում, այնպես էլ Արգենտինայում կան առաջատար կազմակերպություններ, որոնց ղեկավարության տակ աշխատում են կամ որոնց հարում են մի քանի այլ երիտասարդական, սպորտային, կանանց կամ հայրենակցական կազմակերպություններ: Ստորև տալիս ենք մի քանի միությունների համառոտ բնութագրությունը:

1. Հայ կենտրոն: Դա հայ եկեղեցու վարչական խորհուրդն է, որ ղեկավարում է կենտրոնին հարող դպրոցական, երիտասարդական, կանանց կազմակերպությունների աշխատանքը: Սա բազմատարր կազմակերպություն է, որի մեջ, բացի հայրենասիրական ուժերից, կան պահպանողական կամ շեղոք տարրեր: Հայ կենտրոնի շուրջը համախմբված է մոտավորապես 4000 մարդ: Հանդիսանալով հայ եկեղեցու Հարավային Ամերիկայի թեմի կենտրոնը, այս կազմակերպությունը իր ազդեցությունը տարածում է Բրազիլիայի և Ուրուգվայի հայ գաղութներում, որտեղ նա ունի իր ֆիլիալները: Հայ կենտրոնը ունի իր սրահը և վարչական այլ շենքեր: Զբաղվելով կուլտուր-լուսավորական աշխատանքներով, Հայ կենտրոնը և նրա բաժանմունքները ձգտում են հեռու մնալ քաղաքականությունից, մի կողմից նպատակ ունենալով չլիսնել տարբեր ուղղությունների պատկանող մարդկանց, իսկ մյուս կողմից երկրի իշխանությունների հետ լույս հարաբերություններ պահպանել: Բացի դրանից, Հայ կենտրոնի ղեկավարությունը ձգտում է գաղութահայ կյանքը պահել պահպանողական հունի մեջ:

1959 թվականին Հարավային Ամերիկայի հայոց թեմի ա-

աշնորդական պատվիրակ Բարկեն Լախակոպոս Ապատյանը այցելեց Սան-Պաուլո: Գաղութի հայերի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ազգային վարչության տեսնապետ Անտրե Զեֆերյանը իր ելույթում խնդրում է Սան-Պաուլոյի հայերին, որ «հայրենիքի այդ սիրո արտահայտությունը մեզ շղարձեն աղմկիչ ու հավակնոտ մոլեռանդ ամբոխ մը, այս օտար, բայց հյուրընկալ հողերուն վրա, պատճառ դառնալու որ ըլլանք կասկածելի տարրեր և տեղացիներու մասնավոր ուշադրության առարկա դառնանք»¹:

Այս վարքագիծը բնորոշ է ընդհանրապես չափավոր շրջաններին:

Ազգային կենտրոնը ղեկավարում է զպրոցների աշխատանքը, որոնք, ինչպես ասացինք, գտնվում են անմխիթար վիճակում: Բուենոս-Այրեսում, արվարձաններում և Կորդոպա քաղաքում այժմ կա 13 վարժարան, որտեղ սովորողների թիվը շատ սահմանափակ է: 1959 թվականի վերջերին Բուենոս-Այրեսի գաղութում սկսվել է հանգանակություն, որի նպատակն է երկրորդական վարժարանի շենք կառուցել: Արգենտինայի հայ գաղութի ամենամեծ զպրոցը Արսլանյան վարժարանն է, որտեղ սովորում է մոտ 250 աշակերտ: Բացի դրանից, Բուենոս-Այրեսի արվարձաններում գործում են փոքր վարժարաններ, այդ թվում Ֆլորեսի Արծրունյան վարժարանը (100 աշակերտ), Բաֆֆու անվան վարժարանը (60 աշակերտ), Վիսենթե Լորեսի Գույումչյան վարժարանը (75 աշակերտ), Վալենթին Ալսենայի Խրիմյան վարժարանը (60 աշակերտ), Մամիկոնյան վարժարանը (30 աշակերտ), Խաչիկյան վարժարանը (30 աշակերտ), Պոքոյի վարժարանը (20 աշակերտ), Լանուսի Կիլիկյան—Լուսինյան վարժարանը (20 աշակերտ), Սոլտաթիի Սահակյան վարժարանը (30 աշակերտ) և Լինյերսի վարժարանը (30 աշակերտ): Բացի դրանից, Բուենոս-Այրեսում Մխիթարյաններն ունեն մեկ զպրոց, որտեղ սովորում են 100-ից ավելի երեխաներ:

Անդրադառնալով կրթական գործի վիճակին, «Շարժում»

թերթը գրում է. «Հայ վարժարաններուն կհաճախեն հազիվ 700 աշակերտներ, ինչ որ շատ քիչ է, բաղդատմամբ մեր գաղութին թվին... Յավը միշտ նույնն է, և մինչև այսօր, որքան ալ ճիգեր թափվեցան ու գրվեցան, բայց դժբախտաբար որոշ դարձան մը չի կրցանք տալ... մեզի աշակերտ ու ուսուցիչ պետք են, մեզի դրամ պետք է... Անցյալ տարեշրջանին Լինյերսի նուպարյան վարժարանը փակ մնաց ուսուցիչներու պակասեն... Այս տարի ալ կիմանանք, թե Սահակյան և Մեսրոպյան վարժարանները վարժուհի չունին»¹:

Այս իրողությունը հաստատում է նաև մի այլ թերթ, նշելով, որ հին ուսուցիչների «լքած աթոռները կմնան թափուր, լավագույն պարագային կը դրավվին ասպարեզին համար անպատրաստ և կամ՝ ուրիշ մարզերուն մեջ ձախողած անձներով»:

Հայ կենտրոնի շրջաններում գործում են Հայաստանյազ եկեղեցու երիտասարդական կազմակերպությունը, հայ եկեղեցապետ Ծիկնանց միությունը և մի քանի այլ օժանդակ կազմակերպություններ:

Հայ կենտրոնը նույն խորագրով հրատարակում է շաբաթաթերթ, երբեմն նաև տարեգրքեր:

2. Հայ մշակութային միություն: Այս կազմակերպությունը շնորհակալ աշխատանք է կատարում Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական նվաճումները պրոպագանդելու, հայ երիտասարդության կապերը հայրենիքի հետ ամրապնդելու գործում: Միությունն ունի իր մասնաճյուղերը Բուենոս-Այրեսի հայաշատ թաղերում և մյուս վայրերում: Նրա նախաձեռնությամբ կազմակերպվում են երիտասարդական ֆեստիվալներ, երեկոներ, սպորտային միջոցառումներ և այլն:

Հայ մշակութային միությանը հարող շրջանները մինչև 1959 թվականի վերջերը հրատարակում էին «Հայ մամուլ» առաջադիմական թերթը: Արգենտինյան իշխանությունները մի քանի անգամ արգելել են «Հայ մամուլ»-ի հրատարակությունը: Դեռևս 1956 թվականին «Սովետական Հայաստան»

¹ «Հայ կեդրոն», № 9, 1959 թ.:

¹ «Շարժում», 15 մարտի, 1958 թ.:

ամսագիրը հաղորդում էր, որ «հինգ տարի խափանումից հետո, 1955 թվականի նոյեմբերին Բուենոս-Այրեսում սկսեց վերահրատարակվել «Հայ մամուլ» եռօրյա թերթը: «Գաղարը,— գրում էր ամսագիրը,— որ պարտադրվեց «Հայ մամուլ»-ին, հետևանք էր ազատատենչ բոլոր տարրերի համար հեղձուցիչ դարձած մթնոլորտի: Առաջադիմական գաղափարների և շարժումների նկատմամբ անհանդուրժողությունն ու կամայականությունը այդ մթնոլորտի բնորոշ հատկանիշներն են: Ահա թե ինչու խափանվել էր «Հայ մամուլ» թերթը, բռնագրավվել էր թերթի տպարանն իր բոլոր սարքավորումներով: Հրապարակի վրա մնացել էին ուլքեր ընդունակ էին դավադրությունների աիդումում լողալու, ուլքեր ընդունակ էին շանտաժի դիմելու իրենց ազգակիցների դեմ»¹:

1959 թվականի սկզբներին արգենտինյան իշխանությունները դարձյալ արգելեցին թերթի հրատարակությունը: Նույն թվականի սեպտեմբերին թերթի խմբագրությանը հաջողվեց հրատարակությունը շարունակելու իրավունք ստանալ: Սակայն շուտով նորից փակվեց: 1958 թվականին թերթի խմբագիր Գ. Գլոնջյանը այցելեց Սովետական Հայաստան: Գա հնարավորություն տվեց թերթի խմբագրությանը մի շարք թարմ ու հետաքրքիր նյութեր հրապարակել Սովետական Հայաստանի կյանքի մասին: «Հայ մամուլի» էջերում արձագանք էին գտնում սփյուռքահայությանը հուզող հարցերը: Թերթը մերկացնում էր Արգենտինայի հայ գաղութում գործող դաշնակցական տարրերի հակաժողովրդական գործունեությունը:

1960 թվականի մայիսից գաղութի առաջադիմական շրջանների ջանքերով սկսեց լույս տեսնել «Հայ կյանք» շաբաթաթերթը, որն իբ ուղղությամբ «Հայ մամուլի» շարունակությունն է: Առաջին համարը «հանձնելով Հարավային Ամերիկայի հայ ընթերցողների դատողություններուն և հայրենասիրական տրամադրություններուն», թերթը գրում է, որ դրանք «պատրաստված են քառասուն տարիներու ընթացքին, մեր ազգային կյանքին մեջ ստեղծված մեծ պատահարով, հայ

պետության գոյառությունը և հայոց մայր հայրենիքի վերելքներով»¹: Սակայն այս պարբերաթերթի գոյությունը կարճ տևեց: 1961 թվականին սկսվեց «Սևան» ազգային-հասարակական, գրական շաբաթաթերթի հրատարակությունը: Թերթի առաջին համարի առաջնորդող հոդվածը գաղափար է տալիս նրա ուղղության մասին: «Սևան»-ի հրապարակագրային ճանապարհը լուսավորող փարոսը,— ընդգծվում է առաջնորդողում,— պիտի ըլլա հայ ստեղծագործ ժողովրդի պատմության ընծայած դասերը և պանծալի Մայր Հայրենիքի խանդավառ իրականությունը: Արդի Հայաստանի հանդեպ անշեղ և անխարդախ սերն ու նվիրումն է որ կառաջնորդե, կմարմնավորե ու կզարգացնե հայ ժողովրդի ազգասեր ոգին: Մայր Հայրենիքի հետ մշակութային սերտ կապի զարգացումը մեկն է, եթե ոչ միակը, այն դարավոր ազդակներեն, որ կամրացնե սփյուռքահայ ժողովրդի դիմադրական պայքարի ոգին խորթ ու անհարազատ մտայնությանց դեմ և կարգիլե անոնց արադափափանց արշավը հայկական հավաքականություններն ներս... եղբայրական ողջունյ մը ալ կուղղենք հայ առաջադեմ մամուլի բոլոր օրգաններուն, խմբագիր և աշխատակիցներուն աշխարհի ո՛ր մասին վրա ալ որ գտնվին անոնք»²:

3. Արգենտինյան ռեսպուբլիկայի հայ երիտասարդական ֆեդերացիա: Այս միությունը նույնպես միավորում է հայրենասեր երիտասարդությանը և գաղութում մեծ հեղինակություն ունի: Մի քանի տարի առաջ միությունը հրատարակում էր «Երևան» ամսաթերթը, բայց այժմ լույս չի տեսնում:

Հնչակյանները Բուենոս-Այրեսում հրատարակում են «Շարժում» թերթը:

Ռամկավարական շրջանները գործում են «Հայ կենտրոնի» շրջանակներում, ինչպես նաև ՀԲԸՄ Արգենտինայի մասնաճյուղի միջոցով: Մինչև 1959 թվականի վերջերը ռամկավարները Արգենտինայում տպագիր օրգան չունեին: Միայն 1960 թվականի փետրվարին Բուենոս-Այրեսում սկսեց լույս տես-

¹ «Սովետական Հայաստան», ամսագիր, 1956 թ., № 4, էջ 41:

¹ «Հայ կյանք», 11 մայիսի, 1960 թ.:

² «Սևան», 22 մարտի, 1961 թ.:

ամսագիրը հաղորդում էր, որ «հինգ տարի խափանումից հետո, 1955 թվականի նոյեմբերին Բուենոս-Այրեսում սկսեց վերահրատարակվել «Հայ մամուլ» եռօրյա թերթը: «Գաղարը,— գրում էր ամսագիրը,— որ պարտագրվեց «Հայ մամուլ»-ին, հետևանք էր ազատատենչ բոլոր տարրերի համար հեղձուցիչ դարձած միջնորդի: Առաջադիմական գաղափարների և շարժումների նկատմամբ անհանդուրժողությունն ու կամայականությունը այդ միջնորդի բնորոշ հատկանիշներն են: Ահա թե ինչու խափանվել էր «Հայ մամուլ» թերթը, բռնագրավվել էր թերթի տպարանն իր բոլոր սարքավորումներով: Հրապարակի վրա մնացել էին ովքեր ընդունակ էին դավադրությունների տիղմում լողալու, ովքեր ընդունակ էին շանտաժի դիմելու իրենց ազգակիցների դեմ»¹:

1959 թվականի սկզբներին արգենտինյան իշխանությունները դարձյալ արգելեցին թերթի հրատարակությունը: Նույն թվականի սեպտեմբերին թերթի խմբագրությունը հաջողվեց հրատարակությունը շարունակելու իրավունք ստանալ: Սակայն շուտով նորից փակվեց: 1958 թվականին թերթի խմբագիր Գ. Գյոնջյանը այցելեց Սովետական Հայաստան: Դա հնարավորություն տվեց թերթի խմբագրությունը մի շարք թարմ ու հետաքրքիր նյութեր հրապարակել Սովետական Հայաստանի կյանքի մասին: «Հայ մամուլի» էջերում արձագանք էին գտնում սփյուռքահայությանը հուզող հարցերը: Թերթը մերկացնում էր Արգենտինայի հայ գաղութում գործող դաշնակցական տարրերի հակաժողովրդական գործունեությունը:

1960 թվականի մայիսից գաղութի առաջադիմական շրջանների ջանքերով սկսեց լույս տեսնել «Հայ կյանք» շաբաթաթերթը, որն իր ուղղությամբ «Հայ մամուլի» շարունակությունն է: Առաջին համարը «Հանձնելով Հարավային Ամերիկայի հայ ընթերցողների դատողություններուն և հայրենասիրական տրամադրություններուն», թերթը գրում է, որ դրանք «պատրաստված են քառասուն տարիներու ընթացքին, մեր ազգային կյանքին մեջ ստեղծված մեծ պատահարով, հայ

պետության գոյառությանը և հայոց մայր հայրենիքի վերելքներով»¹: Սակայն այս պարբերաթերթի գոյությունը կարճ տևեց: 1961 թվականին սկսվեց «Սևան» ազգային-հասարակական, գրական շաբաթաթերթի հրատարակությունը: Թերթի սուռջին համարի առաջնորդող հոդվածը գաղափար է տալիս նրա ուղղության մասին: «Սևան»-ի հրապարակագրային ճանապարհը լուսավորող փարոսը,— ընդգծվում է առաջնորդողում,— պիտի ըլլա հայ ստեղծագործ ժողովրդի պատմության ընծայած դասերը և պանծալի Մայր Հայրենիքի խանդավառ իրականությունը: Արդի Հայաստանի հանդեպ առնչելի և անխաղախ սերն ու նվիրումն է որ կառաջնորդե, կմարմնավորե ու կզարգացնե հայ ժողովրդի ազգասեր ոգին: Մայր Հայրենիքի հետ մշակութային սերտ կապի զարգացումը մեկն է, եթե ոչ միակը, այն դարավոր ազդակներեն, որ կամրացնե սփյուռքահայ ժողովրդի դիմադրական պայքարի ոգին խորթ ու անհարազատ մտայնությանց դեմ և կարգիլե անոնց արագափափանց արշավը հայկական հավաքականություններն ներս... եղբայրական ողջույն մը ալ կուղղենք հայ առաջադեմ մամուլի բոլոր օրգաններուն, խմբագիր և աշխատակիցներուն աշխարհի ո՛ր մասին վրա ալ որ գտնվին անոնք»²:

3. Արգենտինյան ռեսպուբլիկայի հայ երիտասարդական ֆեդերացիա: Այս միությունը նույնպես միավորում է հայրենասեր երիտասարդությանը և գաղութում մեծ հեղինակություն ունի: Մի քանի տարի առաջ միությունը հրատարակում էր «Նրևան» ամսաթերթը, բայց այժմ լույս չի տեսնում:

Հնչակյանները Բուենոս-Այրեսում հրատարակում են «Շարժում» թերթը:

Ռամկավարական շրջանները գործում են «Հայ կենտրոնի» շրջանակներում, ինչպես նաև ՀԲԸՄ Արգենտինայի մասնաճյուղի միջոցով: Մինչև 1959 թվականի վերջերը ռամկավարները Արգենտինայում տպագիր օրգան չունեին: Միայն 1960 թվականի փետրվարին Բուենոս-Այրեսում սկսեց լույս տես-

¹ «Սովետական Հայաստան», ամսագիր, 1956 թ., № 4, էջ 41:

¹ «Հայ կյանք», 11 մայիսի, 1960 թ.:

² «Սևան», 22 մարտի, 1961 թ.:

նել «Սուրհանդակ» թերթը: Փետրվարի 6-ի առաջին համարի խմբագրական հոդվածում թերթը, պարզաբանելով իր նպատակները, մասնավորապես գրել է. «Սուրհանդակ»-ը անվերապահորեն պաշտպան պիտի կանգնի մեր ցեղին զգացական և հոգևոր միության երեք գլխավոր սյուներում՝ Հայաստան, Հայ եկեղեցի և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն»:

Արգենտինայում գործում են նաև մի քանի հայրենակցական միություններ («Մարաշ», «Հաճըն», «Սիս», «Սեբաստիա», «Կեսարիա», «Քեսապ», «Խարբերդ», «Քոմարգա» և այլն): Ավելի ակտիվ են գործում «Մարաշ» և «Հաճըն» միությունները:

Մարաշցիներն ունեն սեփական սրահ, հրապարակում են «Մարաշ» ամսաթերթը: Այս հայրենակցական միությունը ունի մոտ 800 անդամ: «Մարաշ»-ի անդամների ճնշող մեծամասնությունը կանգնած է հայրենասիրական դիրքերի վրա: «Հաճըն» միության շուրջը համախմբված են 700-ից ավելի անդամներ: Հրատարակում է «Նոր Հաճըն» ամսաթերթը: «Հաճըն» միության շուրջը հիմնականում համախմբված են հայրենասիրական տարրեր: Հայրենակցական միությունները կապի մեջ են արտասահմանի մյուս գաղութներում գործող համապատասխան միությունների հետ:

Արտասահմանում, հատկապես հաճընցիների շրջանում, ցնթում էր ընդունվեց այն լուրը, որ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության 1958 թվականի նոյեմբերի 4-ի Հրամանագրով հիմնադրվեց Նոր Հաճըն ավանը: Ավանի հիմնադրման տարելիցի առթիվ «Նոր Հաճըն» հայրենակցական միության կենտրոնական վարչության պաշտոնաթերթը գրել է. «Մեր հաճընցիության համար ավելի մեծ սիմֆոնիկ խանդավառ պարզև, ավելի բարձրիմաստ նվեր դժվար թե կարելի ըլլար հուսալ: Մայր Հայաստանի մեջ, այն էլ քաղաքամայր սիրուն Երևանեն հազիվ երկու տասնյակ կիլոմետր հեռավորության վրա Նոր Հաճըն քաղաքատիպ ավանի կառուցումը հայրենասիրական լայն ու խոր բավարարությամբ լեցուց բոլոր մաքուր ու զտարյուն սիրահերը և ավելի ուժ,

կորով ու հավատք ներշնչեց՝ անվրդով ու հաստատակամ շարունակելու հայրենասիրական մեծ գործը, հայրենաշեն պայքարը»¹:

1929 թվականից Բուենոս-Այրեսում գործում է «Կոմիտաս» երգչախումբը, որի ղեկավարն է Վարդապետյանը: 1959 թվականին գաղութում նշվեց այդ երաժշտական կոլեկտիվի գոյություն 30-ամյակը: Տեղի թատերախմբի ուժերով երբեմն կազմակերպվում են ներկայացումներ և ասմունքի երեկոներ: 1959 թվականի հոկտեմբերին «Հայ կենտրոնի» սրահում իսպաներեն լեզվով բեմադրվեց Մելիք Քոչարյանի «Հարազատ մարդիկ» պիեսը: Պիեսի բեմադրության աշխատանքները կազմակերպել էր «Մարաշ» հայրենակցական միությունը: Ներկայացումը նվիրված էր այդ միության 35-ամյակին: Գնահատելով թատերական խմբի շնորհակալ աշխատանքը՝ «Հայ մամուլ» թերթը գրել է, որ այդ բեմադրության «զեղարվեստական արժանիքը մնաց բարձր ու ծափահարվեցավ բոլոր հանդիսատեսներու հուզումնախառն ոգևորությամբ: Թատերական խիստ քննադատի մոտեցումով իսկ, անվարան կարելի է հայտարարել, թե Մարաշի խումբը ակնկալված են ավելի հաջողությամբ ներկայացուց «Հարազատ մարդիկ»-ը»: Արվեստի բնագավառի աշխատողներից պետք է հիշատակել երգիչ Արմեն Կերակին, երգչուհիներ Նինո Խայրբյանին, Սևան Վիկտորիային, Անթառամ Ահարոնյանին և Շաքե Գեմիրճյանին, երիտասարդ կոմպոզիտորներ Ալիս Թերգյանին, Ժան Ալմուխյանին, ջութակահար Խուան Գուլտյանին, դաշնակահարուհի Թագուհի Գալաչյանին, խմբավար Լևոն Վարդապետյանին, քանդակագործ Յանդրմյանին, նկարիչ Գևորգ Գեմիրճյանին: Քաղաքական գրականության ասպարեզում գաղութում հայտնի են Գևորգ Սարաֆյանը և Պերճ Աճեմյանը (Բաֆֆու «Խաչագողի հիշատակարան»-ի իսպաներենի թարգմանիչը):

Արտասահմանի հայ գաղութներում ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են ցուցահանդեսներ, որոնք ոչ միայն

¹ «Նոր Հաճըն», նոյեմբեր—դեկտեմբեր, 1959 թ.

Հայ գաղութին, այլև տեղի բնակչությանը ծանոթացնում են Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական նվաճումներին:

Այդ ցուցահանդեսների կազմակերպման գործը ղեկավարում են գաղութահայ առաջադիմական միությունները: Այդպիսի ցուցահանդեսներ են կազմակերպվում նաև կատինական Ամերիկայի հայ գաղութներում: Արգենտինայի Կորտոպա քաղաքում արգենտինահայ Մշակութային Միության մասնաճյուղի ջանքերով կազմակերպվել է հայ կուլտուրային նվիրված ցուցահանդես: «Մեծագիր ցուցատախտակներու վրա փակցված և յուրաքանչյուրը ըստ տեսակի և բացատրություններով տեղադրված մեր Մայր Հայրենիքի բազմակողմանի վերելքը պատկերացնող նկարներու կողքին,— կարդում ենք «Նոր կյանք» թերթում,— ցուցահանդեսին մեջ գրված են մեծ նկարիչ էներթե Մոնաքոյի դժած Վ. Համբարձումյանի, Ա. Խաչատրյանի, Շիրվանդաղբի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ս. Քոչարյանի, Վ. Փափաղյանի, Խ. Աբովյանի, Բաֆֆիի, Սիամանթոյի, Գ. Վարուժանի և Կոմիտասի մեծագիր նկարները, ինչպես նաև հայկական գլխազիր և փոքրագիր տառերը, Մեսրոպի և Սահակի պատկերներուն առջև, ծանոթություններով և հատուկ ցուցափեղկերու մեջ:

Ցուցահանդեսի մուտքին առջև Արարատ լեռան փեշերուն տակ գրված է հայ ամֆիթատրոնի նախատիպը (մակետ), որուն մեկ կողմը սուր և մյուս՝ կողմը փետուրե գրիչ մը փորագրված է, իսկ տակը գրված է՝ «սուրով պաշտպանեցի, գրչով պահեցի» լուզունգը»¹: Թերթն այնուհետև հաղորդում է, որ ցուցահանդեսի սրահում հավաքված սովար բաղմությունը, հայեր և արգենտինացիներ, հետաքրքրությամբ դիտեցին հայ հին ու նոր ճարտարապետությունը, գրականությունն ու արվեստը պատկերող էքսպոնատները: Արգենտինայի ռադիոն այդ առթիվ հաղորդեց Ա. Տիգրանյանի «Գավիթ բեկ» օպերան, խոսյաներեն թարգմանված լիբրետոյով, ցուցադրվեցին հայկական ֆիլմեր:

Բուենոս-Այրեսում շաբաթական երկու անգամ կես ժամ տևողությամբ ռադիոհաղորդումներ են տրվում գաղութի հայերի համար: Այդ հաղորդումները ղեկավարում է Նուրար Լոմոնեջյանը: Դրանք գերազանցապես հայ երաժշտության համերգներ են, երբեմն նաև լուրեր Սովետական Հայաստանի կյանքից: Այդ ռադիոհաղորդումները գաղութում շափազանց սիրված են և հայերի կողմից ունկնդրվում են մեծ հետաքրքրությամբ: Ռադիոհաղորդումների ծախսերը կատարվում են առևտրական ռադիո-ոնկլամներից ստացված եկամուտներից:

Ինչպես արդեն նշեցինք, Հայ կենտրոնի շրջանակներում հայրենասիրական տարրերից բացի ընդգրկված են գաղութի հետադիմական և շեղոք տարրեր: Գաղականների կողմից գաղութում տիրապետող դիրքեր գրավելու մինչ այժմ կատարված փորձերը հաջողություն չեն ունեցել: Երկու ուղղությունների միջև պայքարը այժմ էլ շարունակվում է, երբեմն գաղտնի, երբեմն բացահայտ: Գաղութի ներսում գոյություն ունեցող պառակտումը ուժեղացնելուց խուսափելու համար հայ կենտրոնի ղեկավարությունը խուսանավելու քաղաքականություն է վարում: Հայ կենտրոնի սրահում կազմակերպվող որոշ կուլտուրական միջոցառումների երբեմն ներկա են լինում տարբեր ուղղությունների պատկանող մարդիկ:

Գաղութում գործող համազգային տոնակատարությունների հանձնախմբի նախաձեռնությամբ ամեն տարի նշվում է 1915 թվականի Ապրիլյան եղեռնի հիշատակը, Մշակույթի ամիսը և Վարդանանց պատերազմի օրը: «Յուրաքանչյուր տոնակատարության կիսոսին բոլոր կողմերու ներկայացուցիչները, առանց զարնվելու կարգին տեսակետներ: Օրինակ, Ապրիլյան եղեռնի տոնակատարության հիմնական նյութը կըլլա՝ աղետ և վերածնունդ, Մշակույթի օրվան տոնակատարության նյութը կըլլա՝ մեր հին ու նոր մշակույթը, Վարդանանց տոնակատարության նյութը կըլլա՝ զորացնել հայ մնալու մեր դիմադրական ճակատը, դիմադարձ կատարելով դեպի մեր վերածնած հայրենիքը»¹:

¹ «Նոր կյանք», 13 նոյեմբերի, 1959 թ.

¹ «Ջարթոնք», 25 հունվարի, 1961 թ.

Ինչքան էլ գաղութի հետադիմական տարրերը փորձեն պղտորել արգենտինահայ գաղութի ներքին կյանքը և հեռու պահել նրան Սովետական Հայաստանի այժմյան իրականությունից, այնուամենայնիվ Հարավային Ամերիկայի այս հեռավոր գաղութը բազում թեկերով կապված է մայր հայրենիքի հետ:



ԲՐԱԶԻԼԻԱ

Առաջին անգամ հայերը Բրազիլիա են մտել անցյալ դարի 80-ական թվականներին, սակայն նրանք եղել են հատուկ կենտ մարդիկ, որոնք հանգամանքների բերումով բնակություն են հաստատել նախ Ուրուգվայում, և ապա Բրազիլիայում: Բուն գաղութը կազմվել է առաջին համաշխարհային պատերազմից հետո: Հատինական Ամերիկայի երեք երկրները՝ Արգենտինա, Ուրուգվայ և Բրազիլիա հայերի մեծ խմբեր եկել են Ծվրոպայից և Մերձավոր Արևելքի երկրներից, 1924 թվականից սկսած: Այժմ Բրազիլիայում ապրում են շուրջ 12 հազար հայեր, որոնցից 10 հազարը Սան-Պաուլո քաղաքում, իսկ մնացած 2 հազարը ցրված են Սան-Պաուլո, Ռիո-Վրանդե Տո Սոլ, Մենաս Ժերայես, Սեարա, Մաթո Կրոսո և մյուս նահանգների քաղաքներում: Արգենտինահայ հրապարակախոս և հասարակական գործիչ Գ. Գյոնջյանի վկայությամբ «Մինչև 1910 թվականը հայոց համրանքը շատ քիչ եղած է— խումբեր կարելի է կոչել Արժանթինի և Բրազիլի մեջ: 1909 թվականի Ադանայի կոտորածեն ետք կուզան նոր պանդուխտ հայեր, մասնավորապես Արժանթին, անոնց մեկ մասը— երիտասարդներ 1914 թվին կամավոր կարձանադրվին ֆրանսական լեգեոններուն և կմեկնին ճակատ:

Հայերու մասսայական արտագաղթը սկիզբ կառնե 1921 թվականին, երբ ֆրանսիացիները կլքեն Կիլիկիան, դրժելով իրենց լորձնաշուրթն խոստումները: Կիլիկիո պարպումեն վերջ

Սուրիա—Լիբանան հաստատված հայեր հազիվ ճանապարհա-
ծախս մը խնայած, կերթան Արժանթին, Պրագիլ և Ուրուգվայ:
1922 թվականի Իզմիրի աղետեն ետք, Հունաստանեն ևս շատ
հայեր կգաղթեն վերև հիշված երեք երկրները: Այսօր Լատին
Ամերիկայի հինգ հանրապետություններուն մեջ— Արժանթին,
Բրագիլ, Ուրուգվայ, Չիլի և Վենեսուելա—հաստատված հայե-
րու համրանքն է 70 հազար, այսպես՝ Արժանթին՝ 45 հազար,
Բրագիլ՝ 12 հազար, Ուրուգվայ՝ 12 հազար, Չիլի և Վենեսուելա՝
1000»¹: Հարավային Ամերիկայում Սան-Պաուլոն Բունեսու-Այ-
րեսից հետո երկրորդ հայաշատ քաղաքն է: Գաղութի բնակչու-
թյան մեծ մասը Կիլիկիայից գաղթած հայեր են: Կան որոշ
թվով արարախոս հայեր, որոնք ազգային նկարագիրը գրեթե
կորցրել են: Սրանց անվանում են «հին հայեր»: Այս մասին
տեղեկություններ կարելի է քաղել Ծ. Վարդանյանի «Բրագի-
լիայի հայ գաղութը» խորագրով գրքից, որը լույս է տեսել
1948 թվականին և մանրամասն տեղեկություններ է տալիս
գաղութի առաջացման և մինչև 1948 թվականը բնկած ժամա-
նակաշրջանի մասին, բայց ներկա կյանքը լուսաբանելու
տեսակետից մասամբ հնացել է. «Արարախոս հայերը,— գրում
է Ծ. Վարդանյանը,— ընդհանրապես նյութական բարելավ
վիճակ ունին, դժբախտաբար իրենց լեզուն, բարքերն ու ճա-
շակը արարացած ըլլալուն համար, հայկական շրջանակի հետ
շփում չեն ունենար գրեթե, անխտիր օտար ամուսնություն
կկնքեն, նախապատվություն տալով սուրիացի արարներուն:
Գրեթե բոլորն ալ հայ եկեղեցվո անդամ են, իրենց ազգային
տուրքը կվճարեն, կմասնակցին հանգանակությանց, այ-
սուամենայնիվ լեզուն ու վարժությունը զիրենք ավելի շատ
արարական շրջանակներուն կմոտեցնեն, քան թե հայկական:
Հայոց եկեղեցին գրեթե չեն հաճախեր, թեև ամուսնություն,
մկրտության և թաղման ծիսակատարություններ հայ արարու-
ղությանը կատարել կուտան»²:

¹ «Ջարթոնք», 20 հունվարի, 1961 թ.:

² Ծ. Վարդանյան, Պրագիլի հայ գաղութը, Բունեսու-Այրես, 1948 թ.,
էջ 554:

Բրագիլիայի հայ գաղութի մասին եղած տեղեկություն-
ները վկայում են այն մասին, որ այստեղ, ինչպես մի շարք
այլ գաղութներում, տեղի է ունենում ձուլման պրոցես:
Ծ. Վարդանյանը իր աշխատության մեջ ընդգծում է, որ
«... մենք հայերս այս տեսակ միջավայրի մը մեջ ազգային
երկար կյանք մը չենք կրնար ունենալ, եթե Հայաստանի կա-
ռավարությունը հարկ եղած ուշադրությունը չդարձնե այս գա-
ղութի վրա և ներգաղթելու հնարավորություն չստեղծե ա-
նոնց...»¹: Այս իրողությունը հաստատում է Ա. Եգիպտացին,
որը 1959 թ. այցելել է Բրագիլիա և իր տպավորությունները
հրատարակել Բեյրութի «Արարատ» թերթում: «Ժողովրդի մեկ
մասին հայերեն չգիտնալը,— գրում է նա,— և ուսումնարա-
նի պետական օրենքին ենթակա դրությունը առիթ ստեղծած
են, որ ճերմակ ջարդը (այսինքն ձուլման պրոցեսը— Ս. Գ.)
առաջանա մեծ քայլերով, անոր թափը զանդաղեցնելու համար
պետք եղած մարդու պակասը շատ զգալի է»: Բրագիլիայի,
ինչպես նաև Լատինական Ամերիկայի մյուս հայ գաղթավայ-
րերի երիտասարդության մի զգալի մասը հայերեն չգիտե:
Այդ է պատճառը, որ հայ երիտասարդությունը Սովետական
Հայաստանի կյանքին ծանոթացնելու համար թերթերը հար-
կադրված են որոշ նյութեր հրատարակել իսպաներեն և պոր-
տուգալերեն: Հայոց լեզուն պահպանել է երիտասարդության
այն մասը, որը սովորել է հայկական դպրոցներում: Իսկ այդ-
պիսիները համեմատաբար փոքր թիվ են կազմում: «Լատին
Ամերիկայի հայության համրանքին հարյուրին 2-ը հայկական
վարժարան կհաճախե»,— գրում է «Ջարթոնք» թերթը²:

Այս վկայությունները բնավ չեն նշանակում, որ Բրագի-
լիայի հայ գաղութում հայկական կյանքը զաղարել է: Այս-
տեղ, ինչպես մյուս գաղութներում, գործում են մշակութային
կազմակերպություններ, զանազան հայրենակցական միու-
թյուններ, որոնք շնորհակալ աշխատանք են կատարում գա-

¹ Ծ. Վարդանյան, Պրագիլի հայ գաղութը, Բունեսու-Այրես, 1948 թ.,
էջ 554:

² «Ջարթոնք», 24 հունվարի, 1961 թ.:

զուժում, մեծապես նպաստելով Սովետական Հայաստանի հետ կուլտուրական կապերի ամրապնդման և ընդլայնման գործին: Բրազիլիայի հայ գաղութի մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Շ. Առուշանյանի «Բրազիլիայում և Ուրուգվայում» գիրքը: Բնութագրելով Սան-Պաուլո քաղաքի հայության կյանքը՝ նա գրում է.

«Սան-Պաուլոյում կա հայկական խոշոր գաղութ, որտեղ ապրում է ավելի քան 10 հազար մարդ: Նրանք ունեն իրենց դպրոցը, ակումբը, եկեղեցին և հասարակական կազմակերպությունները... Սան-Պաուլոյում ես հնարավորություն ունեցա լինելու դպրոցում և ծանոթանալու նրա աշխատանքներին, եղա ակումբում և մի քանի ընտանիքներում...»¹:

Բրազիլիայի համեմատաբար փոքր գաղութում ներկայացված են հայկական բոլոր քաղաքական պարտիաները: Հայ կոմունիստները աշխատում են Բրազիլիայի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ (ընդհատակից դուրս է եկել 1958 թ.), միաժամանակ նրանք ակտիվ մասնակցություն են ցույց տալիս հայ մշակութային կազմակերպությունների գործունեությանը: Այստեղ կա նաև հնչակյան կազմակերպություն: Ռամկավարներն իրենց գործունեությունը ծավալում են գլխավորապես Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Բրազիլիայի մասնաճյուղի միջոցով: Դաշնակները նկատելի ազդեցություն չունեն:

Բրազիլիայում հայերը որևէ պարբերական չեն հրատարակում, թեև անցյալում այստեղ հրատարակվել են «Վերելք», «Արարատ» (պորտուգալերեն), «Հայաստանի ձայն», «Պրագիլ-Հայաստան» թերթերը: Այժմ գաղութում հաճախ է խոսվում հայկական թերթ հրատարակելու անհրաժեշտության մասին, սակայն այդ գործում եղած մի շարք զգվարություններ ղեռնա չեն հաղթահարված: Ա. Եզիպտացին այդ մասին գրում է. «Կըսեն թե ժամանակին ձեռնարկ եղած է թերթ մը ունե-

նալու, բայց ընթերցող չըլլալուն համար փակված է»¹:

Թերթի բացակայությունը գաղութում Ե. Վարդանյանը բացատրում է այդ աշխատանքի համար բավականաչափ պատրաստված մարդկանց պակասով և նրանով, որ «գաղութը փոքրաթիվ է և ղանազան հոսանքներու բաժանված, իսկ այդ հոսանքներեն և ոչ մեկը բավարար չափով զորավոր եղած է մնալուն թերթի մը նյութական և բարոյական պետքերը զոհացնելու համար...»²: Տպագիր պարբերաթերթի բացակայությունը մասամբ լրացնում են հայերեն ռադիոհաղորդումները:

Գր. Գյունջյանը որոշ տեղեկություններ է տալիս բրազիլահայ «Ռադիո-լսարանների» մասին: «Զգացումի, գեղարվեստական ճաշակի և լսողության հետ կապված այս միջոցը,— գրում է նա,— կօգտագործվի Լատին Ամերիկայի հայության կողմն երբեմն ուշիմությամբ և երբեմն անհեթեթությամբ: Բրազիլի Սան-Պաուլո քաղաքին մեջ շարաթական մեկական ժամով կգործեն երկու ռադիո-լսարաններ, թեր և դեմ, այսինքն մեկը հայերենասեր, իսկ մյուսը՝ ոչ: Ծիծաղելի բարեբախտությունն այն է սակայն, որ հակահայաստանյան հորջորջվող ռադիո-լսարաններու երաժշտական բաժինը միայն ու միայն հայաստանյան երգերը կկազմեն»³:

¹ «Արարատ», 3 նոյեմբերի, 1959 թ.:

² Ե. Վարդանյան, Բրազիլիո հայ գաղութը, Բունոս-Այրես, 1948 թ., էջ 539:

³ «Զարթոնք», 25 հունվարի, 1961 թ.:



¹ Շ. Առուշանյան, Բրազիլիայում և Ուրուգվայում, Հայպետհրատ, 1959 թ., էջ 37—38:



ԿԱՆԱԴԱ

Կանադայի գաղութի վերաբերյալ արտասահմանի հայ մամուլում հրատարակված տվյալները շատ կցկտուր են և լրիվ գաղափար չեն տալիս նրա ներքին կյանքի մասին: Հայերը կենտրոնացած են Մոնթրեալ և Տորոնտո քաղաքներում, որտեղ նրանց թիվը կազմում է մոտավորապես 4 հազար: Գաղութը վերջին ժամանակներս քանակապես աճելու տենդենցներ է ցույց տալիս: Որոշ թվով հայեր այստեղ են գալիս Եվրոպայի և Ասիայի զանազան երկրներից: Դատելով Մոնթրեալի քաղաքային իշխանությունների պաշտոնական ներկայացուցիչների հայտարարությունից, կանադական իշխանությունները առայժմ արգելքներ չեն հարուցում Կանադա եկող հայերի համար:

Կանադայի հայերը, բացի փոքրիկ դպրոցից, որտեղ սովորում է 40 երեխա, ուրիշ այլ հաստատություններ չունեն: Մրազրվում է կառուցել հայ մշակութային սրահ: Ժամանակ առ ժամանակ կազմակերպվող կուլտուրական միջոցառումները անց են կացվում եկեղեցական մարմնի կամ «ծխական խորհրդի» հովանավորությամբ, որն ի դեպ, եկեղեցու բացակայության պատճառով դրանք իրականացվում են Կանադայի մյուս եկեղեցիների շենքերում: Գաղութում գործում են նաև Տիկնանց և Երիտասարդաց միությունները:



ՈՒՐՈՒԳՎԱՑ

Ինչպես Հարավային Ամերիկայի մյուս երկրներում, այնպես էլ Ուրուգվայում հայ գաղութը հիմնականում ստեղծվել է առաջին համաշխարհային պատերազմից հետո: Միրիայում, կիրանանում և Եվրոպայի մի շարք երկրներում ապաստան գտած հայերի մի մասը հետագայում բնակություն հաստատեց Հարավային Ամերիկայի այս հեռավոր երկրում: Մանր, մղձավանջային տարիներ էին դրանք, լի դժվարություններով ու զրկանքներով: «Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեո եկած հազարավոր հայեր իրենց բախտը տնօրինում էին ով ինչպես կարող էր: Շատերն ստիպված էին համառ ու քրտնաջան աշխատանքով հայթայթել օրվա ապրուստը»¹,— գրում է տասնյակ տարիներ այստեղ ապրած Ալբերտ Ղալֆեճյանը: Հետագա տարիների ընթացքում Ուրուգվայի հայ աշխատավորների և առաջադեմ մտավորականների ջանքերով ու նյութական միջոցներով այստեղ նույնպես ստեղծվում է հայ մշակութային մի փոքր օջախ: Նորաբնակներն իրենց համառ աշխատանքով կարողանում են հաղթահարել դժվարությունները և տեղավորվել երկրի տնտեսության զանազան ճյուղերում: Այժմ Ուրուգվայի հայերը դրադվում են բանվորությամբ, արհեստներով, զգալի թվով հայեր աշխատում են կոշիկի արդյունաբերության մեջ: Կան նաև արդյունաբերողներ և առև-

¹ «Նովետական Հայաստան», ամսագիր, 1958 թ., № 11:

տրականներու Ա. Ղալֆեճյանի վկայութեամբ հայ բնակչութեանը, չնայած իր համեմատաբար ոչ մեծ քանակին (հայերի թիվը կազմում է մոտ 10 հազար), ճանաչված ու հարգված է Ուրուզվայի մայրաքաղաքում, որի փողոցներից մեկը կոչվում է «Արմենիա»: «Հարավային Ամերիկայի Ուրուզվայ հանրապետության մեջ, — գրում է «Լրաբեր» թերթը, — կա տասը հազարի մոտ հայութուն: Մեծամասնութեանը հաստատված է մայրաքաղաք Մոնտեվիդեոյի մեջ:

Գաղութը հազիվ 35 տարվա գոյութուն ունի, բայց արդեն բարեկեցիկ կյանք կապրի, տեղացի ժողովրդին և կառավարության բարձր շրջանակներուն մեջ շատ համակրութուն շահած են հայերը: Կան շատ երիտասարդներ ու երիտասարդուհիներ, որոնք համայնարանական ուսում առած և կառավարական ու կրթական ասպարեզին մեջ մուտք գործած են: Պատվարներ եղած են իրենց պատկանած համայնքին: Կան հայ երիտասարդ բժիշկներ, ատամնարույժներ, փաստաբաններ և այլն»¹:

Գաղութի մշակութային կյանքը ղեկավարում է «Հայ կենտրոնը», որն ունի 350 ակտիվ անդամներ: Նրա կողմից կազմակերպվող կուլտուրական միջոցառումներին մասնակցում է հայ բնակչության ճնշող մեծամասնութեանը: «Հայ կենտրոնը», որ ստեղծվել է 1935 թվականին, ունի իր սեփական շենքը, ակումբը, գրադարանը և դպրոցը: Հնչակյաններն այստեղ ունեն երիտասարդական միություն, որ նույնպես դրական աշխատանք է կատարում Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական նվաճումների պրոպագանդան ուղղությամբ, ինչպես նաև մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերպման գործում: «Հայ կենտրոնի» հետ համերաշխ աշխատանք են կատարում «Երևան» մշակութային միությունը և կանանց օժանդակ հանձնախումբը: «Հայ կենտրոնը» հայերեն լեզվով կազմակերպում է ռադիոհաղորդումներ, որոնք շատ սիրված են ժողովրդի կողմից: Գրանք հայտնի են «Ռադիո Արմենիա» անունով: Ռադիոհաղորդումների աշ-

¹ «Լրաբեր», 23 հուլիսի, 1960 թ.:

խատանքը ղեկավարում է Հ. Ռուբենյանը: Ռադիոկայանն ունի Սովետական Հայաստանի երգիչների ու երգչուհիների կատարմամբ ձայնագրանակներ, որոնք պարբերաբար օգտագործվում են ռադիոհաղորդումներում: «Ռադիո Արմենիա» անունով ռադիոհաղորդումները Հ. Ռուբենյանը սկսել է դեռևս 1930-ական թվականներին: 1960 թվականին գաղութում նշեցին այդ հաղորդումների գոյության 25-ամյակը: Այդ առթիվ «Լրաբեր» թերթը գրել է. «Վերաշինյալ Հայաստանի բարի լուրերը ամեն Եր մեր տուններն ներս բերած է և սփռված հայրենակարոտ սրտերը: Մասնավանդ պատերազմի այն սև օրերուն, երբ թըշնամին Հայրենիքի սրբազան հողին հասած էր, երբ ամեն հայ սրտատրոփ անձկությամբ ելքին կսպասեր, Ռադիո Արմենիա անխախտ հավատքով և հույսով լեցված էր Հայրենիքի անպարտելիության հանդեպ»¹:

Ուրուզվայում գործող Հայ Ուսանողաց Միությունը գաղութի աշխատավորների համար նույնպես ռադիոհաղորդումներ է տալիս: «Ներկայիս «Հայ Զայն»-ը, — գրում է «Շարժում» թերթը, — որ ձայնն է Հայ Ուսանողաց Միության, շնորհիվ իր անկաշառ, անխոնջ ու պարկեշտ մշակութային, գեղարվեստական և այլ մարզերու մեջ տարած գովելի ջանքերուն, նաև շրջահայաց գործելակերպին, ունի մեծ ժողովրդականություն: Գարծած է գաղութիս ամենասիրելի ռադիո-լսարաններն մին, վայելելով գուրգուրանքը, սերն ու համակրանքը գաղութիս»:

Ուրուզվայի հայերի կյանքում նշանակալի իրադարձություն էր Սովետական Միության Գերագույն Սովետի պառլամենտական խմբի պատվիրակության այցելությունը Ուրուզվայ, որ տեղի ունեցավ 1958 թ. ամռանը: Պատվիրակության կազմումն էր նաև ՀՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Շ. Առուշանյանը, որը հանդիպում է ունենում տեղի հայ համայնքի հետ: Հանդիպումը ջիբմ ու սրտառուչ է եղել: Հանձին Շ. Առուշանյանի՝ Ուրուզվայի հայերը տեսնում էին իրենց վերածնված հայրենիքի պետական ներկայացուցչին: «Առաջին հանդիպումը տեղի ունեցավ օգոստոսի 18-ին, Մա-

¹ «Լրաբեր», 23 հուլիսի, 1960 թ.:

բաշի ակումբում, — պատմում է Շ. Առուշանյանը: — Հորդանան էր տեղում ու թվում էր, թե տեղի շի ունենա այդ հավաքույթը: Սակայն ակումբում ազատ տեղ չկար: Հավաքվել էին մոտ հազար հինգ հարյուր մարդ: Ես ներկայացա որոշված ժամին... դժվար էր անցնել դահլիճում խոնված ժողովրդի միջով: Բարձր էր մարդկանց ոգևորությունը, ամեն կողմից լսվում էին զրնգուն ձայներ. «Կեցցե՛ Սովետական Հայաստանը», «Կեցցե՛ ռուս և հայ ժողովուրդների եղբայրությունը», «Փա՛ռք մեր հայրենիքին, ծաղկուն Հայաստանին»: Դրանից հետո թնդում էին ծափերն ու ուռաները՝: Իր ելույթում կոշկի գործարանի բանվոր Եղիշե Սարոյանը մի բոցաշունչ հայրենասիրական ճառ է արտասանում, որը հուզում է բոլորին: «Մեզանից ո՞վ չգիտե, — ասում է նա, — որ կհարվեինք հոսկարոտ՝ կրակներու մեջ, եթե Հոկտեմբերյան հեղափոխությունն աշխարհում չստեղծեր առաջին բանվորա-գյուղացիական իշխանությունը, եթե ռուս բանվորն օգնության ձեռք չերկարեր հային, որ նա ալ իր բանվորա-գյուղացիական իշխանությունն ունենա, իր հայրենիքը: Հիմա կա այդ հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, որը հեռվեն հեռու շուք կընեն մեզի վրա, հույս կտա ու կորով»¹:

Շ. Առուշանյանի տպավորություններում համառոտ տեղեկություններ կան հայկական ակումբների, դպրոցների, գեղարվեստական ինքնագործ խմբերի, սպորտային խմբակների մասին: Գաղութի երկու տարրական դպրոցները տեղավորվում են ակումբի սրահում, որտեղ առանձնացված են հատուկ սենյակներ: Այստեղ ուսուցանում են հայոց լեզու, պատմություն, աշխարհագրություն և մի շարք այլ առարկաներ: Այստեղ, ինչպես և արտասահմանի հայ գաղութների գրեթե բոլոր դպրոցներում, շափազանց զգալի է դասագրքերի պակասը:

Հարավային Ամերիկայի մյուս երկրներում ապրում են շուրջ 2000 հայեր:

¹ Շ. Առուշանյան, Բրազիլիայում և Ուրուգվայում, Հայպետհրատ, 1959 թ., էջ 102:

² Նույն տեղում, էջ 104—105:



ԹՈՒՐԹԻԱ

ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Ֆրեզնո քաղաքում լույս տեսնող «Նոր օր» թերթում հրատարակված տվյալների համաձայն օսմանյան կաշարության սահմաններում մինչև 1915 թվականը հայերի տեղաբաշխումը հետևյալ պատկերն ուներ.

Արևելյան վեց նահանգներ

| | |
|-------------|-----------|
| Վան | — 187.000 |
| Բաղեշ | — 198.000 |
| Կարին | — 215.000 |
| Սերաստիա | — 225.000 |
| Խարբերդ | — 204.000 |
| Տիգրանակերտ | — 195.000 |

Ընդամենը — 1.224.000

Կիլիկիայում ապրում էր 205.000 հայ: Երկրի մնացած քաղաքներում ու բնակավայրերում հայերի տարածումը հետևյալ պատկերն էր ներկայացնում.

| | |
|--------------------|------------|
| Ստամբուլ | — 72.500 |
| Զմյուռնիա (նահանգ) | — 27.000 |
| Բուրսա | » — 75.000 |
| Կասթեմունի | » — 15.000 |
| Գոնիա | » — 25.000 |
| Էնկյուրի | » — 98.000 |

| | | |
|-------------------|---|---------|
| Տրապիզոն | » | 65.000 |
| Եվրոպական Քուրքիա | — | 27.500 |
| Ընդամենը | — | 405.000 |

Այսպիսով, Արևելյան վեց նահանգներում, Կիլիկյանում և երկրի մնացած բոլոր նահանգներում ու քաղաքներում ապրող հայերի թիվը 1915 թվականին կազմում էր մեկ միլիոն 834 հազար մարդ¹։

Այս թվերը, մոտավոր լինելով հանդերձ, հեռու չեն իրականությունից։ Քուրքիայի աղգային փոքրամասնությունների հարցով զբաղվող որոշ մասնագետներ հայ բնակչության թիվը Եսմանյան կայսրությունում մինչև 1915—1916 թթ. կոտորածները ցույց են տալիս 2 միլիոնից ավելի։ Ժամանակակից Քուրքահայ գաղութի մասին զանազան կցկտուր տեղեկությունների կարելի է հանդիպել սփյուռքահայ քաղաքական բուրձր ուղղությունների պատկանող թերթերի և ամսագրերի էջերում։ Այդ տեղեկությունները այս կամ այն չափով համընկնում են, թեև տվյալ թերթի կամ ամսագրի քաղաքական ուղղությունը, բնականաբար, որոշակի կնիք է դնում թուրքահայ գաղութի մասին հրապարակվող հոդվածների և այլ կարգի նյութերի ընդհանուր ոգու վրա։

Ստամբուլում այժմ ապրում է 70—80 հազար մարդ, մնացած գավառներում և քաղաքներում՝ մոտ 40 հազար մարդ²։

Պետք է նկատել, որ գավառում ապրող հայերի մի ղզալի մասը արդեն կորցրել է լեզուն և աղգային նկարագիրը։ «Գավառի մնացորդացը ազգորեն կորսված է,— գրում է «Նոր օր» թերթը,— 40.000 կամ ավելի գավառահայության հազիվ թե 5 տկոսը կրնա երեսին խաչ հանել ու հայերեն խոսել ու կարգալ։ Մնացորդացը ծնած ու հասակ առած վերջին 40 տարվան շրջանին, միջավայրի ճնշիչ ու թունավոր ազդեցու-

թյան տակ, անհաղորդ կմնա իր ազգային ծագման...»¹
 «Պայքար» թերթում հրապարակված տվյալներով Քուրքիայի զանազան վայրերում ապրող հայերի քանակական կազմը հետևյալ պատկերն է ներկայացնում.

| | |
|-------------------------|----------|
| Վան | — 68 |
| Բաղեշ | — 390 |
| Կարին | — 390 |
| Սեբաստիա | — 9500 |
| Խարբերդ | — 5860 |
| Տիգրանակերտ | — 5100 |
| Կիլիկիա | — 1080 |
| Ստամբուլ և շրջակայք | — 80.000 |
| Աֆոն—Գարահիսար | — 200 |
| Էսկիշեհիր | — 60 |
| Քյոթահիա | — 120 |
| Գոնիա և շրջակայք | — 1000 |
| Էրեզլի | — 300 |
| Գասթեմունի | — 2000 |
| Սինոպ և Զոնգուլտագ | — 1000 |
| Անկարա | — 2000 |
| Կեսարիա և շրջակայք | — 3000 |
| Տրապիզոն | — 50 |
| Օրդու | — 250 |
| Սամսուն | — 500 |
| Պաֆրա | — 400 |
| Գյումուշխանե և շրջակայք | — 300 |
| Էդիրնե | — 200 |
| Կարա-Աղաջ | — 150 |

Այսպիսով, Քուրքիայում այժմ ապրում են մոտ 115 հազար հայեր²։

Քուրքիայի հայ բնակչության մասին այս տեղեկություն-

¹ «Նոր օր», 6 նոյեմբերի, 1959 թ.։

² Քուրքական պաշտոնական վիճակագրությունը այս տվյալները ավելի է նվազեցնում և հայերի թիվը Քուրքիայում ցույց է տալիս 55—60 հազար մարդ։

¹ «Նոր օր», 4 մարտի, 1958 թ.։

² «Պայքար», 27 և 28 հոկտեմբերի, 1959 թ.։

ները խիստ մոտավոր են և հավանաբար նվազեցված: Գավառներում ապրող հայերը հայաժանքներից խուսափելու կամ պարզապես իրենց առօրյա գործերում արգելքները վերացնելու համար հաճախ թաքցնում են իրենց ազգությունը: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ձուլման պայմաններում դժվար է բոլորովին ճշգրիտ տվյալներ հավաքել: Սակայն եթե հաշվելու լինենք նաև նրանց, որոնք պայմանների բերումով մոռացել են մայրենի լեզուն և մասամբ կորցրել ազգային նկարագիրը, ապա Ստամբուլից դուրս դրանց թիվը կարող է կազմել 100—120 հազար: Այս դեպքում թուրքիայի հայերի ընդհանուր թիվը կկազմի մոտ 200 հազար: Այս թիվը հիշատակվում է սովետական և արտասահմանյան մի շարք հեղինակների ուսումնասիրություններում¹: Այն երեմն հիշատակվում է նաև արտասահմանի հայ մամուլում²:

Ստամբուլից դուրս ապրող հայերի մասին որոշ տեղեկություններ է պարունակում պատրիարքարանի 1959 թվականի տեղեկագիրը: «Յանցառ ու ցրված են մեր համայնքները դավառներու և գյուղերու մեջ» — ասված է այս տեղեկագրի մեջ: Տեղեկագրի նյութերից կարելի է եզրակացնել, որ գավառի հայերը ապրում են մեկուսացած կյանքով: Ըստ էության ամբողջ կապը Ստամբուլի և պատրիարքարանի հետ կայանում է նրանում, որ «պատրիարքարանը ամեն տարի կուղարկե հոգևոր հովիվ մը, այցելելու մեր այդ հավատացյալ համայնքներուն, մխիթարելու զանոնք հոգևորապես և մատակարարելու անոնց եկեղեցվո սուրբ խորհուրդները ս. պատարագի մատուցմամբ»³: Նույն տեղեկագրից երևում է, որ կրոնական տոների առթիվ «այս ցրված համայնքներուն ուղարկվում է քաջալերական, հորդորական և թելադրական գրություններ, հայերեն և թուրքերեն լեզուներով»⁴:

Թուրքական իշխանությունների նկատմամբ խիստ զգու-

շավոր լինելու մտադրությունից զրդված պետք է համարել այն պնդումը, որ իբր գավառի համայնքները «կապրին տանելի կյանք մը՝ իրենց աշխատության պտուղներով և կվայելին քաղաքացիական և հայրենակցական իրավունքներ, փոխարեն այն պարտականությունը որս կկատարեն հավատարմորեն»¹:

Հայկական մշակութային կյանքը պահպանվել է միայն Ստամբուլում: Գավառներում շկան ոչ դպրոցներ, ոչ այլ կուլտուրական հաստատություններ: Այդ է պատճառը, որ գավառներում ապրող հայ բնակչության՝ Ստամբուլում հաստատվելու ձգտումը մեծ է: Իսկ դա շափաղանց դժվար է ապրուստի միջոցների և բնակարանային սուղ պայմանների պատճառով:

Պաշտոնապես թուրքական ռեսպուբլիկայի կոնստիտուցիան հռչակում է, որ բոլոր քաղաքացիները, անկախ ազգային պատկանելությունից, օգտվում են հավասար իրավունքներով:

Սակայն ազգային փոքրամասնությունների (հույների, հրեաների, հույների, քրդերի) վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազգային խտրականությունը կրկնում չի վերացված և կիրառվում է ամենատարբեր ձևերով:

1943 թվականին թուրքական կառավարությունը ընդունեց օրենք այսպես կոչված «ունևորության հարկի» վերաբերյալ: Այդ օրենքը իր սուր ծայրով ուղղված էր հրեաների, հույների և հայերի դեմ, որոնց ազգեցությունը երկրի տնտեսության մեջ այն ժամանակ դեռևս զգալի էր: Այդ շափաղանց խիստ օրենքը միանգամից ծանր կացության մեջ դրեց ազգային փոքրամասնությունների տասնյակ հազարավոր ընտանիքներին: «Այս կողոպուտին, — գրում է «Նոր օր» թերթը, — թուրքիտ անհատակ սնտուկը հոսեցավ 320 միլիոն թուրքական ոսկի: Այս զումարին երկու երրորդը կամ քիչ մը ավելին կողոպտվեցավ 20 միլիոն թուրք ազգաբնակչությունն, մնացյալ մոտավորապես 100 միլիոնը՝ Պոլսո 250 հազար հայերի, հույների և հրեաների: Ունևորության սուրբը վճարելու անկարողները և առավելապես հայերը, որպես պատիժ Պոլսեն

¹ Ս. Ավանեսով, Ազգային փոքրամասնությունները Թուրքիայում, ձեռագրի իրավունքով:

² «Ներխուստարը Հայաստան», 7 նոյեմբերի, 1958 թ.:

³ «Արարատ», 5 փետրվարի, 1960 թ.:

⁴ «Արարատ», 6 փետրվարի, 1960 թ.:

¹ «Արարատ», 6 փետրվարի, 1960 թ.:

տարագրվեցան Բարերդի և Կարնո միջև գտնված Կոփ կոչված ձյունապատ լեռները տաժանակիր աշխատանքի: Տարագրվածներեն շատեր անկարող տեղալու սառնաշունչ կլիմային ու մահացու աշխատանքին, այլևս չվերադարձան իրենց ընտանիքին»¹:

Այն ժամանակ, երբ թուրքական պաշտոնական պրոպագանդան փորձում էր համոզել, որ ազգային հարցը երկրում վերջնականապես լուծված է, Թուրքիայում բարձրացավ նացիոնալիզմի ու շովինիզմի նոր ալիք, որը շուտով տեղի տվեց նոր հալածանքների ու ջարդերի: Դա 1955 թվականի սեպտեմբեր ամսին էր: Ստամբուլում, ոստիկանության աչքի առաջ, օրը ցերեկով, ազգայնական տարրերը, մեծ մասամբ երիտասարդներ, ջարդուփշուր արեցին հույների, հրեաների և հայերի խանութները, հրդեհեցին կամ կողոպտեցին նրանց ունեցվածքը: Ավերվեցին մի շարք պատմական հուշարձաններ, Ստամբուլի փողոցներում դարձյալ հոսեց անմեղ մարդկանց արյունը: Այս իրադարձությունների գլխավոր շարժառիթը Կիպրոսի հարցի առնչությամբ հույն-թուրքական հարաբերությունների խիստ սրված վիճակն էր: «Թուրքիո ներկա կառավարության և առաջնորդներուն օրով,— գրել է «Երիտասարդ Հայաստան» թերթը,— թուրքերը Պոլսո մեջ եվրոպացիներու ու ամերիկացիներու աչքին առջև, օրը ցերեկով կազմակերպեցին սեպտեմբերի 6—7-ի անասելի ու աննկարագրելի դազանարար հարձակումն ու խոշտանգումները, պղծելով ու կործանելով տաճարներ, սրբավայրեր, ավերելով ու կողոպտելով առևտրական հաստատություններ, պատմական հուշարձաններ ու ամեն ինչ որ կպատկաներ հայերու և հույներու և որ նշանակալից էր իր արժեքով ու նշանակությամբ»²:

Արտասահմանի հայ մամուլում 1958—1959 թվականներին հրապարակված հաղորդագրությունների համաձայն թուրքական իշխանությունները Ստամբուլի հայկական դպրոցների ու կուլտուրական մյուս հաստատությունների նկատմամբ նոր

սահմանափակումներ են կիրառում: Այսպես, օրինակ, հայկական վարժարաններում մայրենի լեզուն համարվում է ոչ թե հայերենը, այլ թուրքերենը: Հայոց լեզվի դասավանդման համար հատկացվում են սահմանափակ քանակությամբ ժամեր: Բացի հայերենից, մնացած բոլոր առարկաների դասավանդումը տեղի է ունենում թուրքերեն: Որպես արձագանք այս սահմանափակումների, Թուրքիայի մի շարք աջ թերթեր 1958 թվականին կամպանիա սկսեցին ազգային փոքրամասնությունների դեմ, պահանջելով, որ հասարակական վայրերում արգելվի հունարենի, եբրայեցիների և հայերենի գործածությունը: Դրա հետ միասին թուրքական կառավարող շրջանները փորձում են ցույց տալ, որ իրենք հովանավորում են ազգային փոքրամասնությունների կուլտուրական հաստատությունների գործունեությունը, որ հայերը կարող են վերադառնալ Թուրքիա ու այնտեղ բնակություն հաստատել: Պետք է հաշվի առնել, որ հայ գաղութի վերնախավը, որը հասարակության մեջ որոշակի դիրքեր է զբաղում, լույս կերպով համագործակցում է կառավարող շրջանների հետ և ենթարկվում նրանց կամքին: Կա նաև մեկ ուրիշ կարևոր հանգամանք. թեև պաշտոնապես հայ ազգային պարտիաների լեզու գործունեությունը Թուրքիայում արգելված է, սակայն թուրքական ռեակցիոն շրջանները խրախուսում են ամեն տեսակ հակասովետական թափթիուկների, առաջին հերթին դաշնակների գործունեությունը, հատկապես երկրի սահմաններից դուրս: Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Հարավային Ամերիկայում, Մերձավոր և Միջին Արևելքում լույս տեսնող դաշնակցական թերթերը ժամանակ առ ժամանակ քննադատում են Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը, որպեսզի արտասահմանի հայերի մեջ տպավորություն ստեղծեն, թե, իբր դաշնակները թուրքական ղեկավար շրջանների հետ կապերի մեջ չեն, չնայած, որ այդ գաղտնի, իսկ հաճախ նաև բացահայտ կապերը վաղուց հայտնի են: Վերջապես պետք է նկատի առնել այն հանգամանքը, որ Թուրքիայի կառավարող շրջանների համար այժմ, երբ երկրի հայերը ամբողջ բնակչության շնչին տոկոսն են կաղմում, նրանց նկատմամբ տարվող

¹ «Նոր օր», 4 մարտի, 1958 թ.:

² «Երիտասարդ Հայաստան», 25 մարտի, 1958 թ.:

քաղաքականութիւնը այն նշանակութիւնը շունի, ինչ որ ուներ առաջնորում: Ահա այսպիսի պայմաններումն է, որ Քուրքիայի հայ բնակչութիւնը կարողանում է կազմակերպել իր ազգային-կուլտուրական կյանքը և մեծ ջանքեր է գործադրում գաղութը ձուլման վտանգից փրկելու համար: Այստեղ լույս են տեսնում թերթեր ու ամսագրեր, կան մոտ երկու տասնչափ վարժարաններ, ինչպես նաև զեղարվեստական ինքնագործունեութեան խմբեր:

Ստամբուլում ապրող հայերը զբաղվում են արհեստներով: Կան նաև զգալի թվով գործարանային բանվորներ և մանր ձեռնարկութիւններում օրավարձով աշխատողներ: Քաղաքի տարրեր թաղամասերում հայերն ունեն գորգի, կահկարասիների, մուշտակի և կտորեղենի խանութներ: Ստամբուլից դուրս ապրող հայերը հիմնականում զբաղվում են երկրագործութեամբ:

Քուրքական կառավարութեան փոխհարաբերութիւնները հայ համայնքի հետ հենվում է գոյութիւն ունեցող կանոնադրութեան վրա, կազմված Աղգային Սահմանադրութեան այն հոդվածներից, որոնք որևէ անհարմարութիւն չեն ստեղծում թուրքական կառավարող շրջանների համար: Գա այսպես կոչված «Կենտրոնական իշխանութիւնն» է, որն ունի իր Վարչական ժողովը: Կենտրոնական իշխանութեան պատասխանատու զեմքը կառավարութեան համար պատրիարքն է: Վարչական ժողովին կից գործում է Տնտեսական խորհուրդ, որը զբաղվում է հայկական բոլոր կրթական ու մշակութային հաստատութիւնների տնտեսական գործերով: Տեղերում կան թաղական խորհուրդներ, որոնց ընտրութիւնները կատարվում են թուրքական իշխանութիւնների վերահսկողութեամբ, 4 տարին մեկ անգամ: Անվանապես զրանք «անկախ» են, բայց իրենց գործունեութեամբ խստորեն ենթակա են կառավարական իշխանութիւնների կարգադրութիւններին: Քանի որ թաղական խորհուրդները զբաղվում են զուտ հայկական գործերով, նրանք իրենց գործունեութիւնը համաձայնեցնում են նաև «Կենտրոնական իշխանութեան» հետ:

Վերջին տարիների ընթացքում արտասահմանի մյուս գա-

ղութներում ծավալված քաղաքական պայքարն ու հակամարտութիւնները հաճախ իրենց արձագանքն են ունենում նաև այստեղ: Հակասութիւնները տարրեր խմբավորումների միջև զրսևորվում են գաղութի տնտեսական ու մշակութային բնույթի ներքին հարցերի շուրջը: Հաճախ դա կապված է լինում նաև հայ համայնքի այս կամ այն օրգանում ղեկավար դիրքեր զբաղելու ձգտման հետ: Քուրքիայի պայմաններում, որտեղ հայկական դպրոցներում արգելված է որևէ բան ասել Սովետական Հայաստանի մասին, բացի նրանից, որ նա սահմանակից է Քուրքիային, հայրենասիրական տարրերը չեն կարող նույնիսկ նվազագույն չափով զրսևորել իրենց համոզմունքները, առավել ևս՝ իրենց գործունեութեանը պրակտիկ ուղղութիւն տալ: Միաժամանակ նշենք, որ Ստամբուլի հայ պարրերական մամուլի ընթերցողը այն տպավորութիւնն է ստանում, որ անխաբհում Սովետական Հայաստան գոյութիւն չունի: Հազվագյուտ զեպքերում միջայն կարելի է համառոտ լուրեր կարգալ արվեստի ու գրականութեան ասպարեզում տեղի ունեցած իրադարձութիւնների մասին: Անտարակույս է, որ հայ մամուլը գտնվում է չափավոր շրջաններին հարող մարդկանց ձեռքում: Քուրքիայի լուրահատուկ պայմաններում մամուլի օրգանները հալածանքներից խուսափելու համար ստիպված են չափից դուրս զգույշ լինել:

Ստամբուլում և արվարձաններում գործում են 22 նախակրթարաններ, երկրորդ աստիճանի վարժարաններ և 4 իցեյ: Ստամբուլի հայ դպրոցների մասին տեղեկութիւններ է տալիս Քեյրութում հրատարակվող «Զարթոնք» թերթը: «Պոլսո հայութիւնը, — գրում է թերթը, — պահած է գրեթե ամբողջութեամբ իր նախկին ազգային վարժարանները: Զանազան թաղերու մեջ կան 22 նախակրթարաններ, մեջն ըլլալով երկու որբանոցները (Կարազոզյան և Գալֆայան), ինչպես նաև բողոքականաց, Անարատ Հղութեան քույրերու ու Վենետիկի Մխիթարյան վարժարաններն ու Հինդլյան անհատական նախակրթարանը: Ունենք 5 միջնակարգ դպրոցներ՝ Մեհրամեհճյան՝ Ֆերիզյուղ, Պեղճյան՝ Գումգափու, Արամյան՝ Գատրգյուղ, Տատյան՝ Պագրըզյուղ և Անարատ Հղութեան քույրերու աղչ-

կանց վարժարանը: Իբրև ազգային բարձրագույն կրթարան ունենք չորս լիսեյններ՝ Կեդրոնականը, Եսայանը, վիեննական Հայրերու Քանկավթիի վարժարանը և Ս. Խաչ դպրեվանքը¹: Լիցեյներն ավարտողները կարող են ըննություն տալ և ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն: Պրակտիկ տեսակետից հայ երիտասարդների ու աղջիկների համար չափազանց զգվար է Թուրքիայում ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն:

Դպրոցների մի զգալի մասում աշակերտության թիվը շնչին քանակություն է ներկայացնում: Դատելով մամուլի նյութերից, խիստ զգալի է ուսուցիչների, առավել ևս դասադրբերի պակասը: Երեխաները սովորաբար պարապում են 30—40 տարվա հնություն ունեցող դասագրքերով: Ուսուցումը դպրոցներում վճարովի է: Կա այսպես կոչված Աղքատախնամ մարմին, որը օգնություն է հասցնում նյութապես աղքատ երեխաներին:

Ստամբուլի հայկական դպրոցներում սովորում են նաև երկրի տարբեր շրջաններից այստեղ եկած որոշ թվով աշակերտներ: Այսպես, խոսելով դպրեվանքի մասին, Շահեն Կյուրջյանը հաղորդում է, որ «ուսանողները բերված են Տիգրանակերտեն, Խարբերդեն, Կեսարիայեն, Սերաստիայեն և այլ զավառներեն»²:

Դպրոցների ընդհանուր վիճակի մասին որոշ պատկերացում է տալիս Բ. Թեյանի հետևյալ վկայությունը.

«...Մեր բարեսիրական մայր հաստատությունը՝ հիվանդանոցը, հարակից կազմավորումներով մտած է ժամանակի հոգեբանության և առաջադիմության քայլ-քայլ հարմարեցնելու ճամփու մը մեջ: Այդ քիչ շատ բարեկարգ վիճակեն զերծ մնացած են զժրխտաբար տակավին դպրոցները, իրենց մատակարարական անհավասարակշիռ և անհամեմատական գրությունը: Հիշեն ի վեր գրեթե անփոփոխելի մնացած այդ վիճակին մեջ, մեր ուսուցիչները զոհողություններու հանդի-

պելով, կշարունակեն կրթական իշխանության կրթական ծրագիրը իրագործելու իրենց կենսական գործը: Քայց այդ աշխատանքը կկատարվի կրթական մշակներուն նյութական ծյուրումին և կամ իրենց զարմանալի սակավապետության գինովը: Ու ասոր պատճառն այն է, որ շունինք տակավին բոլոր դպրոցներուն համար որոշված վարձատրության համեմատական, ընդհանուր և պարտադիր շափ մը: Կյտրհինք թե, պետական նոր կարգադրությունեն ետք, կեդրոնական մատակարար մարմինը հնարավորություն պետք է ունենա այլևս կրթական պլուստներու կեդրոնացման աշխատանքի: Ատով ամեն ուսուցիչ պիտի գիտնա թե, վարձատրության համար իրեն ինկած բաժինը զերծ է թաղային ժլատություններ կամ խնամիական բարյացակամություններ:

Պետական նոր կարգադրության առիթով, պետք կըլլա նաև մասնանշիչ ուրիշ կարևոր ակնկալություն մը: Հայերեն լեզվի դասագրքերուն պահանջն է ան: ... չորս տարիներ ի վեր սեզանի վրա կմնայ հայերեն դասագիրք պատրաստելու հարցը, իսթամբուլահայ մեր վարժարաններուն համար»¹:

1957 թվականից սկսած Թուրքական իշխանությունները մի շարք նոր սահմանափակումներ կատարեցին ազգային փոքրամասնությունների դպրոցներում դասավանդումը վարելու ուղղությամբ: Այդ մասին որոշակի պատկերացում է տալիս «Լույս Փարիզի» 1958 թվականի հունվարի 4-ի համարում լույս տեսած հաղորդագրությունը: Այստեղ մեջբերումներ կային նաև Թուրքական մի շարք թերթերի էջերից:

««Քաղաքակրթության» Մերձավոր Արևելքի նորելուկ պահակը՝ Թուրքիա, նոր դավեր կծրագրե իր երկրի փոքրամասնությանց գլխուն: Հավատարիմ՝ երկար դարերու խավարածին էր ավանդության, թուրք հետադիմության ղեկավար տարրը այս անգամ կփորձե փոքրամասնությանց ամենափոքրիկ մասնիկն ալ չբացնելու ու մեկընդմիշտ լուծելու հարցը: Զարգը այս անգամ ֆիզիկական չէ: Զի կրնար ըլլալ: Ոչխարներու անտեր հոտեր ղկան այլևս... Թուրքերը այժմ կգիմեն այլ

¹ «Զարթոնք», 20 ապրիլի, 1960 թ.:

² «Այդ», 8 հոկտեմբերի, 1959 թ.:

¹ «Երջանիկ», տարեգիրք, 1957 թ., էջ 5—6:

զենքերու, խաղաղ միջոցներով կուզեն հասնիլ իրենց նպատակին: Վերջ տալ փոքրամասնութեանց ինքնուրույն դիմագծին, ձուլել իրենց, թուրքացնել՝ մեկ խոսքով:

Հարվածը ուղղված է գլխավորաբար դպրոցներուն դեմ: Թուրք կառավարութիւնը մասնավոր օրենք հրատարակած է թուրքերենը պարտադիր մայրենի լեզու դարձնելու համար փոքրամասնութեանց վարժարաններուն մեջ: Փողոցներու և հանրային վայրերու մեջ արգիլված է (և մենք գիտենք թե ի՞նչ կնշանակեն թուրքերու արգելքը) այլ լեզուներով խոսիլ...¹: Նույն համարում հրապարակված է «Միլլեթ» թերթում տպագրված հաղորդագրութիւնը, որից հետևում է, որ «քննութիւններ կկատարվին ուսուցման նոր դրութիւն մը հաստատելու համար փոքրամասնութեանց վարժարաններուն մեջ: «Նախապատրաստական մարմինը», որ պիտի ճշտեն փոքրամասնութեանց վարժարաններու ուսուցման նոր դրութիւնը, հետևյալ որոշումները տված է իր տուածին աշխատութիւններէն ետք...»²: Այդ որոշումներից հետևում է, որ

1. Ազգային փոքրամասնութիւնների դպրոցներում մայրենի լեզուն պետք է համարվի թուրքերենը: Մյուս առարկաները դասավանդվում են որպէս «օժանդակ առարկաներ»:
2. Դպրոցներում չպետք է ուսուցանվի որևէ բան, որ դեմ է Թուրքիայի «ազգային շահերին»: Այս կարգը խախտողները կզրկվեն ուսուցչութիւն անելու իրավունքից:
3. Դպրոցների տնօրենները ազգութեամբ թուրք պետք է լինեն:
4. Բոլոր դասագրքերը գրվում են թուրքերեն, բացի օտար լեզուներից:
5. Փոքրամասնութիւնների դպրոցներում ազգութեամբ թուրք ուսուցիչների թիվը պետք է ավելացվի, իսկ ազգային փոքրամասնութիւններին պատկանող ուսուցիչները պետք է գրվեն նրանց վերահսկողութեան տակ:

¹ «Լույս Փարիզի», 4 հունվարի, 1958 թ.:

² Նույն տեղում:

Հետաքրքրական են թուրքական մյուս թերթերից բերվող վկայութիւնները: Այսպէս, օրինակ, «Ակշամ» թերթը գրել է.

«Երիտասարդութիւնը պայքար կրանա որպէսզի հույները, հրեաները և հայերը հանրային վայրերու մեջ թրքերեն խոսին: Խոսք չունինք այս մասին: Նույնիսկ ուշ մնացած ենք այս ուղղութեամբ: Պեյտլուի փողոցներուն, կղզիի շոգենավերուն և սինեմաներուն մեջ կարծեք թե Թուրքիո մեջ չենք գտնվիր... Լավ, սակայն, իրավունք ունի՞նք վշտանալու և ամբաստանելու փոքրամասնութեան պատկանող հայրենակիցներուն: Մենք չենք այս կացութեան պատասխանատուն: Մշակույթն է, որ մարդիկը կմտտեցնեն իրարու... Հայրենակից, թրքերեն խոսես ըսելով խնդիրը չի լուծվիր: Ասիկա ծառի մը տերեւներով դրաղվելու կնմանի: Եթե տերեւները դեղնած են, պետք է պատճառը փնտրենք և քննենք ծառին արմատը...»¹: Անուհետև պարզվում է, թե ո՞րն է ծառի արմատը, որը թերթի կարծիքով՝ պետք է արմատախիչ անել. «... Եթե կուզենք որ հայրենակիցը թրքերեն խոսի և մեզի մոտենա... պետք չէ առիթ տանք, որ փոքրամասնութեանց պատկանող տղաքը ուրիշ մշակույթ և ուրիշ լեզու սորվին: Մինչև որ ատիկա չընենք, ապահով արդյունք չենք ստանար»²:

Հայկական կրթական հաստատութիւնների վերաբերյալ այս աննպաստ կարգադրութիւնները բացասական արձագանքներ գտան սփյուռքի բոլոր թերթերում: Մենք արդեն հիշատակեցինք «Լույս Փարիզի» և «Նոր օր» թերթերը: «Պայքար» թերթը այդ առթիվ գրել է, որ թուրք կառավարող շրջանները 1943—1944 թվականներին (այսինքն այն ժամանակ, երբ կիրառվում էր մեր կողմից հիշատակված «ունևորութեան տուրքի» մասին օրենքը— Ս. Գ.), 30 հազար հայեր արստրվել են Կարնո լեռները և այնտեղից չրթն ոչ ոք չի վերադարձել: Թերթը այն կարծիքն էր արտահայտում, որ հայկական դպրոցների վերաբերյալ նոր սահմանափակումները այդ քաղա-

¹ «Լույս Փարիզի», 4 հունվարի, 1958 թ.:

² Նույն տեղում:

քականության շարունակությունն են և նպատակ ունեն ուժեղացնել առանց այն էլ տեղի ունեցող ձուլման պրոցեսը:

Նույն առիթով «Երիտասարդ Հայաստան» թերթը գրել է. «Պոլսահայ թերթերու աված վերջին տեղեկությանց համաձայն՝ թուրք կառավարությունը սկսած է հակակշռի տակ առնել Պոլսո փոքրամասնությանց— հայ, հույն և հրեաներու— մայրենի լեզվի գործածությունը որպես մայրենի լեզու:

Փոքրամասնությանց մայրենի լեզվի գործածության արգելքին զուգընթաց՝ թուրքերը միջոցներ ձեռք կառնեն վերջնականապես քանդելու փոքրամասնությանց պատկան կրթական ու մշակութային հաստատություններն ու միջոցները, որոնք կնպաստեն փոքրամասնությանց ազգային դաստիարակության ու մշակութին»¹:

Թուրքիայում տեղի ունեցած պետական հեղաշրջումից հետո ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված ելույթները շղաղարեցին: 1960 թվականի սեպտեմբերին Թուրքիայի Ազգային Ուսանողական Միությունը հրապարակորեն պահանջում էր արգելել այլ լեզուների գործածությունը հասարակական վայրերում: Այդ կամպանիան այնպիսի բնույթ ընդունեց, որ թուրքական մի շարք թերթեր ստիպված եղան զգուշացնել Ուսանողական Միությանը ծայրահեղ քայլերից, որոնք կարող էին աննպաստ հետևանքներ ունենալ: Արձագանքելով այս իրադարձություններին, «Ժամանակ» թերթը գրել է. «Հայրենակից, թրքերեն խոսե՛ք կարգախոսով վերստին հրապարակելով ուսանողական կազմակերպությունները, ինչպես ծանոթ է, պայքար ծավալեցուցած են որպեսզի տարրեր լեզու գործածողները ամենուրեք թրքերեն խոսին, ու կպնդեն թե ասիկա անհրաժեշտ է Թուրքիո բնակչության իրր ազգ միաձուլման համար: Այս պայքարը նկատելի է որ մահմեդական թուրք բնակչության մեջ անդամ մեկ արձագանք չէ գտած, որքան կապասվեր, նույնիսկ ասդին անդին կլավին սապես խոսքեր. «ուրիշ դատ չունինք, մեկ աս մնացած էր...»:

Այժմ կտեսնենք թե թուրք մամուլին մեջ ևս հակազդեցու-

թյուն մը ծայր է աված թրքերեն տարրեր մայրենի լեզու ունեցող համայնքներու և անձերու բուն թրքերեն խոսիլ տալու շարժումին դեմ»¹: Այս առնչությամբ հայտնի ժուռնալիստ Նադիր Նադին «Ջումհուրիեթ» թերթում գրում էր, որ չնայած ինքը Ուսանողական Միության «բարի նպատակների» մեջ ոչ մի կասկած չունի, սակայն ճիշտ չի համարում նմանօրինակ մեթոդների կիրառումը ազգային փոքրամասնությունների նկատմամբ: «Համոզված եմ,— գրում է Նադիր Նադին,— թե այս ապարդյուն և ասպետ շարժումները, որոնք մերթ ընդ մերթ տենդոտ խանդավառությունով մը ձեռք կառնվին և ատեն մը անցնելի հետո ստիպված մեկ կողմ կձգվին, առանց արդյունքի, ոչ միայն օգուտ չունին մեր ազգային մշակույթին, այլև վնասակար են անոր»²: Հեղինակը հիշեցնում է որ Թուրքիայի ստորագրությունը դրված է Մարզու Իրավունքների գեկլարացիայի տակ, և վերջապես, ուրիշ երկրներում էլ ասլուում են թուրքեր, ունեն իրենց մամուլը, դպրոցները և ազգային այլ հաստատությունները: Ինչպե՞ս կվերաբերվեն Թուրքիայում, հարցնում էր Նադիր Նադին, եթե այդ երկրների իշխանությունները հետևեին Թուրքիայի օրինակին և սահմանափակեին թուրք բնակչության իրավունքները:

Ստամբուլի հայ մամուլում հաճախ կարելի է նյութեր կարգալ աշակերտական կամ ինչպես Ստամբուլի հայերը դրանք կոչում են՝ «Մանուց միությունների» գործունեության մասին: Իրանք սովորաբար գործում են որևէ կրթական հաստատության կից և այդ պատճառով էլ կոչվում են համապատասխան վարժարանների անուններով (Կեդրոնական, Սալյան, Արամյան, Պեղճյան, Մեսրոպյան, Սահակյան և այլն): Կազմակերպում են գրական-երաժշտական հանդեսներ, համերգներ, ներկայացումներ, դասախոսություններ: Երբեմն հրատարակում են տպագիր պարբերաթերթ կամ ամսագիր, բայց շափազանց անկանոն:

«Մանուց միությունների» մասին «Լրաբեր» թերթը հետևյալ

¹ «Ժամանակ», 8 սեպտեմբերի, 1960 թ.:

² Նույն տեղում:

¹ «Երիտասարդ Հայաստան», 25 մարտի, 1958 թ.:

տեղեկություններն է հաղորդում. «Իսթամբուլահայությունը ունի 10 ուսանողական սանուց միություններ և հատ մըն ալ մշակութային հնաազոտիչ միություն, ամենքն ալ քիչ թե շատ իրենց կարելիության սահմաններուն մեջ կգործեն, և սակայն ասոնց մեջեն ամենեն շատ իրենց գոյությունը արտացոլողները՝ Եսայան, Կեղրոնական, Արամյան և Մխիթարյան սանուց միություններն են, իսկ մնացյալները՝ Սահակյան, Պեղճյան, Մեսրոպյան, Սկուտարի, Նորիկյան և Քարգմանչաց միություններն են»¹:

Մշակութային կյանքում որոշակի դեր ունեն Ստամբուլի հայ երգեցիկ խմբերը: «Ասոնցմե ամենեն շատ կազմակերպչական գործունեություն և աշխատություն ցույց տվողներն են՝ Գողթան, Կոմիտաս, Զվարթնոց, Ասողիկ, Ս. Քաղվոր և Սկյուտար միացյալ երգչախմբերը»²: Գրականության և արվեստի գործիչներից գաղութում հայանի են գրողներ Վարդան Կոմիկյանը, Զահրազը, Վարդ Շիկահերը, դաշնակահարուհի Գոհարիկ Ղաղարոսյանը, դաշնակահար Հերման Միսեչյանը, կոմպոզիտոր և խմբավար է. Մանասը, երգչուհի Ալիս Մանուկյանը և ուրիշներ:

Ստամբուլի հայերի կյանքում զրական դեր է կատարում Աղզային հիվանդանոցը, որն ունի մոտ 32 բժիշկ և 90 պաշտոնյա: Հիվանդանոցին կից կա նաև ծերանոց: Ըստ մամուլում հրատարակված նյութերի, դա արդիական հիվանդանոց է բոլոր բաժիններով, ունի նաև պոլիկլինիկայի բաժին: Բժըշկական այս հաստատության տարեկան ծախսերը, որոնք գալուստի համար զգալի գումար են կազմում, գոյանում են նրա սեփականություն հանդիսացող որոշ կալվածքներից և նվիրատվություններից:

Մամուլ.— Ստամբուլում հրատարակվում են երկու օրաթերթ և մի քանի ալ պարբերականներ:

1. «Ժամանակ» — պաշտոնապես կոչվում է «Ժողովրդական օրաթերթ»: Ընդհանրապես լոյալ է Քուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության նկատմամբ: Երբեմն, շատ

հազվագեպ, նյութեր է հրուպարակում Սովետական Հասարակական կուլտուրական կյանքի մասին: Թերթը լուսարանում է նաև Ստամբուլի և արտասահմանի հայերի կյանքը: Միջազգային կյանքը լուսարանում է թուրքական մամուլի ոգով:

2. «Մարմարա» — պաշտոնական տնունը՝ Քաղաքական-հասարակական օրաթերթ: Եղած տեղեկությունների համաձայն «Մարմարա»-ի շուրջը համախմբված են գերազանցապես գաղութի պահպանողական տարրերը: Դատելով թերթի էջերում երևացող նյութերից, «Մարմարա»-ի շուրջը համախմբված մարդիկ գաղութի ներքին հարցերի բնագավառում «Ժամանակ» թերթի հետ վեճեր ու տարակարծություններ ունեն: «Մարմարա» թերթի էջերում կարելի է հանդիպել բուլվարային բնույթի նյութերի, միջազգային էժանազին սենսացիաների ու ասեկոսենների վերաբերյալ հաղորդագրությունների:

3. «Առշավ» — շաբաթաթերթ: Հրատարակում են «Ժամանակ» օրաթերթի շուրջը համախմբված մարդիկ, ուղղությունը նույնն է:

4. «Հայ կին» — պարբերաթերթ: Կուսարանում է գերազանցապես կանանց կյանքը, նրանց մասնակցությունը գաղութահայ կյանքին:

5. «Պարտեզ» — մանկական ամսագիր:

6. «Քուլիս» — կիսամսյա գեղարվեստական հանդես: Հանդեսը բազմազան նյութեր է տպագրում հայ թատրոնի պատմության ու ներկա շրջանի, առանձին գերասանների, նկարիչների, կոմպոզիտորների, կինոգերասանների մասին: Պատկերազարդ է: Կուսարանում է արտասահմանի մյուս հայ գաղութների մշակութային կյանքը:

7. «Սաե» — պարբերաթերթ, եռամսյա հանդես: Հրատարակում է Մխիթարյան Սանուց միությունը:

8. «Երջանիկ» — տարեգիրք: Վերջին համարը լույս է տեսել 1957 թ. մահահին:

9. «Շողակար» — կրթական ամսագիր, հրատարակում է Ստամբուլի հայոց պատրիարքարանը:

Բաղի հեռատեղիված թերթերը, երկոտրդ համահեծանության պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում (մինչև

¹ «Երբեր», 10 ապրիլի, 1958 թ.:

² Նույն տեղում:

Յր

1954 թ.) Թուրքիայում լույս են տեսել նաև այլ թերթեր («Նոր լուր», «Ճառագայթ»), բայց գեմոկրատական ուղղության պատճառով փակվել են թուրքական իշխանությունների կողմից:

Ինչպես տեսնում ենք, Ստամբուլի հայ համայնքը և նրա դեկավարները օգտակար աշխատանք են կատարում հայկական դպրոցները և կուլտուրական մյուս հաստատությունները պահպանելու ուղղությամբ: Այդ աշխատանքի դժվարությունը պատկերացնելու համար պետք է հաշվի առնել կուլտուրական և այլ կապերի բացակայությունը Սովետական Հայաստանի հետ: Դրա միակ պատճառը Թուրքիայի կառավարող շրջանների ղեկավարները, հակաժողովրդական ներքին և արտաքին քաղաքականությունն է, մի քաղաքականություն, որ ծանր է նստում Թուրքիայի բոլոր աշխատավորներին:



ԻՍՐԱՅԵԼ

Մինչև արաբ-իսրայելական պատերազմը (1948—1949 թթ.) Պաղեստինում ապրում էին 5 հազարից ավելի հայեր: Պատերազմի հետևանքով նրանց մեծ մասը փոխադրվեց այլ երկրներ: Այժմ Իսրայելի հայ բնակչության ընդհանուր թիվը կազմում է մոտ 2 հազար մարդ: Նրանք ապրում են հետևյալ բնակավայրերում.

| | |
|----------|---------------|
| Յաֆա | — 400 |
| Հալֆա | — 400 |
| Նաղարեթ | — 150 |
| Տել-Ավիվ | — 100 և այլն: |

Հայերն Իսրայելում զրադվում են արհեստներով: Կան որոշ թվով բանվորներ: Կուլտուրական հաստատություններից պետք է նշել Հայկաշեն Միությունը, որն ունի իր փոքրիկ սկումբրը:

Հայկական պատմական հուշարձաններից Իսրայելի տերիտորիայում կա երեք վանք: Պատերազմական գործողությունների ժամանակ դրանք մասամբ վնասվել են: Երուսաղեմի պատրիարքությունը Իսրայելում ունի նաև կալվածքներ, որոնցից հասույթներ է ստանում:





ԻՐԱՆ

Իրանահայ գաղութը սփյուռքի հնագույն գաղութներից է: Հայ ժողովուրդը, որ հնագույն ժամանակներից սկսած շփման մեջ է եղել իր հարևան Պարսկաստանի հետ, զգալի հետք է թողել նրա պատմության մեջ: Մինչև այժմ էլ Իրանում պահպանվել են հայ ժողովրդի նյութական ու հոգևոր կուլտուրայի շատ արժեքներ՝ ճարտարապետական շենքեր ու հուշարձաններ, հայ մանրանկարչության նմուշներ, գրավոր հիշատակարաններ և այլն: Դրանց կարելի է հանդիպել երկրի բազմաթիվ վայրերում: Այսպես, օրինակ, նոր Զուղայում, Ամենափրկիչ վանքի թանգարանում, մինչև այսօր էլ պահվում են հին հայկական դրամներ, զորգեր, հայ մանրանկարչության ու ասեղնագործության նմուշներ, գրչագրեր և այլն: Նույն վանքի մատենագրարանում կան մոտ 6 հազար հայկական գրքեր:

Պատմության տարբեր շրջաններում տեղի ունեցած պատերազմների ընթացքում կատարվել է հայ ժողովրդական զանգվածների բռնազաղթ գեպի Պարսկաստանի խորքերը: Իր մասշտաբների և կործանարար հետևանքների տեսակետից բնորոշ է Շահ Արասի տիրապետության շրջանում տեղի ունեցած մասսայական բռնազաղթը: Դա տեղի ունեցավ 1603—1604 թվականների թուրք-պարսկական պատերազմի ընթացքում: Ա. Ալպոյաճյանը այդ մասին գրում է. «... ավերվեցան և կործանվեցան բազմաթիվ գավառներ և քաղաքներ և անապատիվերածվեցան ամբողջ Արարատյան դաշտը, Երևանը, Մաղ-

կունքը, Գեղամա գավառը, Կաղզվանի գավառը, Լոռին, Շիրակը, Ապարանքը, Ալաշկերտը, Նախիջևանի գավառը, Աղբակը, Մակուն, Խոյը, Սալմաստը, Ուրմիան և այլն: Այս գավառներուն բնակիչներուն հետ տարագրվեցան նաև Թուրքիո պատկանող հայկական զանազան գավառներին և քաղաքներին Երևանի շրջանը բերված գերիները...: Այս համատարած գերեվարությանը Շահ Արաս կհետապնդեր բացի երկիրը անապատ դարձնելու գլխավոր նպատակեն, նաև հայ գործունյա և աշխատասեր ժողովուրդը տեղափոխել, որպեսզի անոնք մշակեին, ծաղկեցնեին և հարստացնեին իր երկիրը»¹:

Համաձայն հայ և օտար աղբյուրների՝ այդ շրջանում Պարսկաստան տեղափոխված հայ բնակչության թիվը կազմել է շուրջ 500 հազար մարդ²: Տեղահանված հայերը բնակություն են հաստատում Ղազվիխում, Սպահանում և շրջակայքում, Մաղանդարանում, Գիլանում, Շիրազում: 1605 թվականին էր, որ հայերի ձեռքով հիմք դրվեց նոր Զուղային, որը կարճ ժամանակ անց դարձավ առևտրի, արհեստների և մշակույթի կենտրոններից մեկը: Իր բարգավաճ վիճակն ու աղղեցությունը նոր Զուղան պահում է մինչև 18-րդ դարի վերջերը: Սակայն հետագա ժամանակաշրջանում ևս Իրանահայ գաղթօջախը, թեև կուլ և նվազ չափով, պահպանեց իր նշանակությունը երկրի կյանքում: Շատ նշանավոր դեմքեր է տվել Իրանահայ գաղթօջախը: Ծագումով նոր Զուղայից էր Լազարյանների հայտնի ընտանիքը, որի շառավիղները մի ժամանակ երևելի դիրք ունեին Ռուսաստանում: Մինաս Զուղայեցին հայտնի էր որպես նկարիչ վարպետ, որը «պատկերահանության և ծաղկարարության» արվեստը բերեց Իրան և զնահատելի ծառայություն ունեցավ նրա զարգացման մեջ: Իրանում է ապրել ու գործել Շեքսպիրի ստեղծագործությունների հայտնի թարգմանիչ ու դիվանագետ Հովհաննես Խան Մասհճյանը: Կարելի է շատ անուններ բերել:

¹ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Գ. հատոր, Կահիրե, 1961 թ., էջ 141—142:

² Նույն տեղում, էջ 156:

Իրանահայ գաղութում ծնված ու ապրած այդ գործիչները գնահատելի ավանդ են մուծել հայ ժողովրդի հարուստ մշակույթի գանձարանում:

Հետպատերազմյան շրջանում երկրում ստեղծված իրադրությունը միանգամայն ձեռնառու էր դաշնակների համար: Հենց այդ ժամանակ էր, որ նրանք ղեկավար դիրքեր գրավեցին և այժմ վերահսկում են մշակութային և կրթական գրեթե բոլոր հաստատությունների գործունեությունը: Փակվեցին և դադարեցին գոյություն ունենալուց «Վերածնունդ» թերթը, «Անի» կոմիտեն, «Մշակույթ» միությունը, «Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը» և այլ կազմակերպություններ:

«Վարագույրը փոխվեց: Պատերազմը վերջացավ,— կարդում ենք Իրանից ստացված մի թղթակցության մեջ, որ հրապարակվել է «Երիտասարդ Հայաստան» թերթում:— Դաշնակից զորքերը հեռացան: Մարդկանց գույները փոխվեցին: Համակիր դեմքերը երևան եկան իրենց հին և իսկական դիմագծերով: «Ալիք»-ը այդ օրերից ցարդ տանում է շեշտված և մոլի հակա-սովետ և հակա-Հայաստան պայքար և հակա-էջմիածնական արշավ... Նապոլեոնը Բուրբոնների մասին ասել է. «Նրանք այս անցած 25 տարիներին ոչ իրենց իմացածն են մոռացել և ոչ էլ նոր բան սովորել»: Այդ բնորոշումը շատ լավ օազում է մեր դաշնակ մտավորականներին, որոնք ոչ իրենց հին օրերի ցանած քամիներն են մոռանում և ոչ էլ կարողանում են ճշտորոշել այս անցած 40 տարիների դեպքերը»¹:

Իրանում այժմ ապրում են մոտ 140 հազար հայեր, որոնցից շուրջ 60 հազարը Թեհրանում: Սպահանի նահանգում գտնվող Նոր Զուղայում բնակվում են մոտ 8 հազար հայեր: Այս նահանգում կա 23 հայկական գյուղ 30 հազար բնիկներով: Հարավային մյուս շրջանների բնակչության տարածումը հետևյալ պատկերն է ներկայացնում. Սուլթանա-

բաղ՝ 2—3 հազար, մոտակա գյուղերում՝ մոտ 4 հազար, Աբադանում՝ 6 հազար, Մասջեդե-Սոլեյմանիևում՝ 2 հազար, Ահվազում, Համադանում, Քիզմանշահում և Քերմանում՝ հազար մարդ: Զգալի թվով հայեր ապրում են Իրանի հյուսիսային շրջաններում, այդ թվում՝ Փավրիզում մոտ 6 հազար, Իրանական Ադրբեջանի գյուղերում՝ 20 հազար, գլխավորապես Մալմաստի և Ղարադաղի գավառներում, Ռեզայիում և շրջակայքի գյուղերում՝ մոտ 5 հազար, Մոշհեղում՝ 300, Ռեշտում, Փեհլեվիում, Ղորղանում, Շահիում, Համբեթում և Կարուում՝ մոտ հազար մարդ և այլն:

Իրանահայ գաղութը խիստ շերտավորված է: Այստեղ կան միլիոնների հասնող հարստություն զիջած կապիտալիստներ, խոշոր վաճառականներ, կան մեծ թվով արհեստավորներ, խառնութայաններ, նավթային արդյունաբերության և արդյունաբերության այլ ճյուղերում աշխատող բանվորներ, վերջապես կան հողի հետ կապված զգալի թվով հայ գյուղացիներ: Մտավորական խավի ներկայացուցիչները աշխատում են որպես բժիշկներ, ճարտարապետներ, պետական հիմնարկների ծառայողներ և այլն:

Իրանի հայ աշխատավորության և մտավորականության լավագույն զավակները միշտ հանդես են եկել հայ և պարսիկ ժողովուրդների բարեկամության օգտին: Նրանք միշտ բարձր են գնահատել պարսիկ հասարակ ժողովրդի հյուրընկալությունը, որը ձգտել է հաշտ ու խաղաղ ապրել պատմական հանգամանքների բերումով Իրանում բնակություն հաստատած հայերի հետ: Իրենց աշխատասիրությամբ ու ազնուվորությամբ հայ աշխատավորական խավերը նվաճել են երկրի աշխատավոր մարդկանց հարգանքը:

Շատ ջանք ու եռանդ է թափել իրանահայ աշխատավորությունը՝ պահպանելու համար դաղթօջախի դպրոցները և կուլտուր-լուսավորական մյուս հաստատությունները: Եթե այդպես չլիներ, իրանահայությանը չէր հաջողվի երկար ու ձիգ դարերի ընթացքում պահպանել դաղթօջախի մշակութային հաստատությունները, պահպանել լեզուն, ազգային

¹ «Երիտասարդ Հայաստան», 15 հուլիսի, 1960 թ.

սովորություններն ու ավանդությունները: Դրա մեջ պետք է փնտրել զազութի կենսունակությունը:

Իրանում կան 50-ի մոտ հայկական դպրոցներ: Շատ դպրոցներ ունեն մանկապարտեզի բաժիններ, և աշակերտության ընդհանուր թիվը ցույց տալիս հաշվի են առնում նաև մանկապարտեզների երեխաներին: Դպրոցների ղգալի մասը կենտրոնացած է Քեհհրանում (16 դպրոց, այդ թվում երկուսը միջնակարգ: Երկսեռ աշակերտության թիվը ավելի քան 5 հազար է): Մնացած դպրոցները ցրված են երկրի մյուս հայաշատ վայրերում: Դրանք տարրական դպրոցներ են, ուսման տևողությունը՝ 4,5 կամ վեց տարի, նաչած տեղի պայմաններին: Գյուղական վայրերում գործող դպրոցները սովորաբար շատ փոքր են, աշակերտների թիվը հասնում է 20—100-ի: Շատ գյուղերում դպրոցներ չկան: Դպրոցները և մյուս համայնքային կադամակերպությունները պահվում են ծխական տուրքից ստացվող եկամուտներով, զանազան բարերարների նվիրատվություններով: Դպրոցական բյուջեի որոշ մասը հատկացնում է պետությունը (հիմնականում դրանք իրաներեն գասավանդավող առարկաների դասատուների աշխատավարձի գումարներն են): Եկամտի կարևոր աղբյուր է հանդիսանում ուսման համար գանձվող վճարը: 1936 թվականին Իրանի իշխանությունների հրամանով Իրանի բոլոր հայկական դպրոցները փակվեցին: Հայկական դպրոցները վերաբացելու թույլտվություն ստացվեց 1942—43 ուսումնական տարում, խիստ սահմանափակումներով, այն էլ միայն Քեհհրանում: Իսկ մնացած վայրերում հայկական դպրոցները փակ մնացին մինչև 1954—55 թվականները: Ինքնին հասկանալի է, թե զազութահայ կյանքի յուրահատուկ պայմաններում նմանօրինակ արգելքներն ու սահմանափակումները ինչպիսի բացասական ազդեցություն են գործում երեխաների ուսուցման ու դաստիարակության վրա: Բնական է, որ հայկական դպրոցները,

փակելուց հետո հայ ընտանիքները երեխաներին ուղարկում էին իրանական դպրոցներ, իսկ քանի որ դպրոցահասակ երեխաների մի ղգալի մասը պարսկերեն չգիտեր, ուրեմն և ղրժվարություններ էր կրում: Մյուս կողմից դա լուրջ ղժվարություններ ստեղծեց հետագայում, հայկական դպրոցները վերացվելուց հետո սովորողների անհրաժեշտ կոնտինգենտ ստեղծելու տեսակետից: Հայկական դպրոցների գործունեությունը վերահսկվում է պետական մարմինների կողմից: «Հայ վարժարանները ենթակա են այսուհանդերձ պետական խիստ հակալիզի, դասացուցակներու պատրաստության և գործադրության ղժով մանավանդ: Պարսկական վարժարաններու հավասար ուժ տրված է պետական լեղվի, պատմության և ուսուցումը պարսկերենով պարտաղիր նյութերու ղասավանդության: Արտոնված է հայերենի ուսուցումը իբրև լեղու, և կրոնքի ղասավանդություն միայն, այն ալ, ընկալնաբար, սահմանափակ ժամերով... Տարրական և միջնակարգ վարժարաններու ավարտական ղասարաններու քննությունները տեղի կունենան պետական քննիչներու հսկողության տակ և կրթական տեսչության պատրաստած հարցումներով (անշուշտ պարսկերենով)»¹:

Այսպիսով, հայկական դպրոցների իրավական վիճակը Իրանում ղրեթե նույնն է, ինչ որ մենք տեսանք Քուրդիստան: Այսինքն, դպրոցներում ղասավանդվում է մայրենի լեղու շաբաթական 10—12 ժամ, իսկ մնացած առարկաները ղասավանդվում են պարսկերեն: Մաթեմատիկա, Ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն և այլ առարկաներ ղասավանդելու համար դպրոցներում պաշտոնավարում են կրթության միևիստություն կողմից ուղարկված իրանցի ուսուցիչներ: Զղալի թիվ են կաղմում այն հայ ուսուցիչները, որոնք նույն առարկաները ղասավանդում են պարսկերեն: Սովորաբար հայկական ղրոցների տնօրենները հայեր են, սակայն կան դպրոցներ, որտեղ տնօրենի կամ տեսչի պարտականությունները կատարում են պարսիկները:

¹ «Սովետական Հայաստան» ամսաղիր, № 6, 1946 թ., էջ 33:

¹ Ամենօր տարեղիրը, Բեյրութ, 1958 թ., էջ 374—375:

Ձեռնամուխ լինելով իրանահայ եկեղեցական թեմերը էջմիածնից անջատելու իրենց ծրագրի իրականացմանը, դաշնակները 1958 թվականի վերջերին Իրան ուղարկեցին իրենց վաղեմի, արդեն բավականաչափ մարզված գործակալ Խորեն Արքեպիսկոպոս Բարոյանին, որը այցելեց Քեհրանի, Ատրպատականի և Սպահանի թեմերը և մանրամասն ղեկուցագիր ներկայացրեց Անթիլիասի կաթողիկոսությանը: Այդ այցելության նպատակն էր սփյուռքահայության մեջ այն տպավորությունն ստեղծել, թե դաշնակցությունը և Անթիլիասի կաթողիկոսությունը խիստ մտահոգված են Իրանի թեմերի վիճակով և մտադիր են լայն ծրագրեր իրականացնել:

Իրանի հայ գաղութի բնակչության թվի, դպրոցների, աշակերտների և գաղութի մյուս հաստատությունների մասին մեր բերած տեղեկությունները լրացնելու նպատակով որոշ տվյալներ ենք բերում այդ ղեկուցագրից¹: Դրանք հնարավորություն կտան ավելի լրիվ գաղափար կազմել գաղութի ընդհանուր վիճակի մասին: Ձեկուցագրում տեղեկությունները տրվում են ըստ թեմերի:

| 1. Քեհրանի թեմ | | |
|-----------------------|---------------|------------|
| 1. Քեհրան քաղաք— | 60.000 | հայ բնակիչ |
| 2. Վանազի շրջան— | 1.000 | » » |
| 3. Ղազվին— | 400 | » » |
| 4. Ռեշտ— | 500 | » » |
| 5. Փեհլևի— | 300 | » » |
| 6. Մաղանդարանի շրջան— | 500 | » » |
| 7. Գորգանի շրջան— | 700 | » » |
| 8. Ղարաղանի շրջան— | 800 | » » |
| 9. Քիրմանշահ— | 400 | » » |
| 10. Համաղան— | 600 | » » |
| 11. Արաքի շրջան— | 5.000 | » » |
| Ընդամենը— | 70.200 | » » |

¹ Ձեկուցագիրը հրատարակված է «Արևիք» թերթի 1959 թվականի հունիսի 11, 12, 13, 15 և 16-ի համարներում:

Աղզային վարժարաններ

| Քեհրան | |
|------------------------------|-------------|
| 1. Քուշեշ— Դավթյան—Մարիամյան | 617 աշակերտ |
| ա) Տղաների բաժին— | 520 » |
| բ) Աղջիկների բաժին— | 1336 » |
| գ) Տարրական երկսեռ— | 472 » |
| 2. Դանայի վարժարան— | 280 » |
| 3. Արամ—Արովյան— | 504 » |
| 4. Արաքս— | 406 » |
| 5. Հուր— | 1030 » |
| 6. Շահազիդ — Սահակյան— | 200 » |
| 7. Շահ Աբրաս Մեծ— | 348 » |
| 8. Ռոստոմ— | 660 » |
| 9. Նաիրի— | 275 » |
| 10. Արարատ— | 160 » |
| 11. Հախնազարյան— | 292 » |
| 12. Թումանյան— | |

Ընդամենը— 7.100 »

Շրջանների դպրոցներ

| | |
|---------------|------------|
| 1. Ռեշտ— | 70 աշակերտ |
| 2. Ղազվին— | 70 » |
| 3. Փեհլևի— | 35 » |
| 4. Արաք— | 210 » |
| 5. Համաղան— | 100 » |
| 6. Քիրմանշահ— | 80 » |
| 7. Մեշեդ— | 60 » |
| 8. Վանազ— | 40 » |

Ընդամենը Քեհրանում և շրջաններում— 7.815 »

Այստեղ շեն հիշատակված այն դպրոցները, որոնք պատկանում են հայ կաթողիկ և ավետարանական համայնքներին: Այս դավանանքներին պատկանող հայերի թիվը Իրանում շատ փոքր է, հազիվ 3 հազար մարդ: Քեհրանում կա կաթողիկ հա-

մայնքին պատկանող Անարատ Հղիության քույրերի Մարիամ-
յան դպրոցը, որտեղ սովորում են մոտ 400 երեխաներ, ո-
րոնցից մոտ 150-ը հայ աշակերտուհիներ են: Ավետարանական
համայնքն ունի «Մեսրոպյան—Գոհար» տարրական դպրոցը,
որտեղ սովորում են մոտ 200 երեխաներ: Այս համայնքի երկ-
րորդ տարրական դպրոցը գտնվում է Նոր Զուղայում և կոչ-
վում է «Անուշիրվան Ազգային դպրոց»:

2. Ատրպատականի թեմ

Հայերի բնդհանուր թիվը Ատրպատականի թեմում կազմում
է 12 հազար մարդ: Նրանցից 4—5 հազարը ապրում է թափ-
րիզում: Հայերը կենտրոնացված են քաղաքի Ղալա (Բերդա-
թաղ) և Լիլավա թաղերում:

Դպրոցներ

1. Արամյան վարժարան (աշակերտների թիվը բացակայում է)
2. Ս. Անանյանց երկու վարժարան (աշակերտների թիվը
բացակայում է)

3. Հայկազյան— Թամարյան վարժարան— 700 աշակերտ

4. ՀՕՄ-ի մանկապարտեզ— 80 երեխաներ

Ատրպատականի շրջանները

1. Ռեզվալե գավառում ապրում է 4000 հայ:
Այստեղ կա 13 դպրոց: Դրանց տեղերը չեն հիշատակված:

2. Շահվուրի գավառում ապրում է 1000 հայ:

Այստեղ կա միայն մեկ դպրոց:

3. Ղարաղաղի գավառում ապրում է 800 հայ:

Կա մեկ դպրոց՝ Քարագլուխ գյուղում:

4. Մարաղայի գավառում ապրում է 500 հայ:

Այստեղ կա մեկ դպրոց:

3. Իրանա—Հնդկաստանի (Սպահանի) թեմ

1. Նոր-Զուղա, հայերի թիվը այստեղ կազմում է 5000 մարդ:
Նոր Զուղայում կա 4 վարժարան և մեկ մանկապարտեզ:

1) Տղաների տարրական (6-ամյա) դպրոց—404 աշակերտ

2) Տղաների միջնակարգ դպրոց— 86 աշակերտ

3) Ս. Կատարինյան աղջիկների տարրական

դպրոց— 356 աշակեր-

տուհի

4) Աղջիկների միջնակարգ դպրոց— 110 աշակեր-
տուհի

5) Մանկապարտեզ— 250 երեխաներ

Նոր-Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքը ունի մատենադա-
րան, տպարան և թանգարան:

2. Խուզխտան

1. Աբաղան, այստեղ ապրում է 6000 հայ:

Ունի մեկ միջնակարգ դպրոց, որում սովորում են մոտ
1000 երեխաներ:

2. Մասչեղե-Սուլեյմանիեն ունի 13000 հայ բնակիչ:

Կա մեկ դպրոց՝ 360 աշակերտներով:

3. Աղջատար— 1000 հայ

4. Բանդար-Մաշուր— 130 »

5. Հաբֆեյ— 130 »

6. Նաթ-Աֆիֆ— 100 »

7. Լալ— 72 »

8. Գեազ Սարան— 13 »

9. Ահվազ— 700 »

Այստեղ կա դպրոց, որտեղ սովորում են 150 երեխաներ:

3. Ֆարսի գավառ

Շիրազ քաղաք, որտեղ ապրում է 260 հայ:

4. Փիրիայի գավառ, այստեղ ապրում է 12.000 հայ. հե-
տեյալ 17 գյուղերում.

1. Նամակերտ 973 հոդի, 130 աշակերտ

2. Ղարզոն 1100 » 150 »

3. Սվարան 618 » 80 »

4. Անկերտ 455 » 60 »

5. Ղալամեյիք 146 » 25 »

6. Զեզան 213 » 38 »

7. Դրախտակ 108 » 48 »

8. Միլակերտ 672 » 104 »

9. Մուրիշկան 656 » 98 »

10. Խունդ 370 » 80 »

11. Շահբուլաղ 252 » 60 »

12. Խոյզան 1370 » 225 »

| | | | | |
|---------------|------|---|-----|---|
| 13. Սազիրարան | 1392 | » | 230 | » |
| 14. Ղաջան | 80 | » | 20 | » |
| 15. Բոլորան | 1118 | » | 160 | » |
| 16. Հազարչրիբ | 960 | » | 110 | » |
| 17. Հադան | 657 | » | 108 | » |

5. Զահարմահալ դավառ: Հայ բնակչության ընդհանուր թիվը կազմում է 700 մարդ, հետևյալ երեք գյուղերում.

| | | | | |
|--------------|-----|-------|----|---------|
| 1. Մամուբա— | 388 | հոգի, | 74 | աշակերտ |
| 2. Սիրաբ— | 138 | » | 54 | » |
| 3. Հաջիբազ — | 174 | » | 53 | » |

Այս տվյալների համաձայն Իրանում այժմ ապրում է 108.875 հայ: Հայ բնակչության թիվը այստեղ նվազեցված է: 1955 թվականին «Նոր Ազդարար» եռամսյա պարբերաթիվում հրատարակված տվյալներով Իրանում ապրում էր 119 հազար մարդ, որից Քեհրանի թեմում՝ 62 հազար, Ատրպատականի թեմում՝ 14 հազար, Նոր Զուղայի թեմում՝ 43 հազար մարդ¹:

Արտասահմանի հայ գաղթօջախների բնակչության թվի մասին խոսելիս պետք է հաշվի առնել անընդհատ տեղի ունեցող բնական աճը: Եթե ընդունենք, որ 1955 թվականին Իրանում ապրում էր 119 հազար հայ, բնական աճը վերջին 6 տարիների ընթացքում պետք է կազմի առնվազն 20 հազար: Այստեղից էլ հետևում է, որ մի քանի տարի առաջ հիշատակվող թվերը այժմ, բնականաբար, չեն կարող օբյեկտիվորեն արտացոլել այս կամ այն գաղութում ապրող հայերի քանակական վիճակը: Նույն տվյալներով Իրանահայ գաղութում գործում է զանազան տիպի 67 գյուղացի մոտ 12.240 աշակերտաշակերտահիներով: Մովորդների ընդհանուր թիվը բնակչության թվի հետ համեմատելով, բարձր չէ: Մոտ 110 հազար բնակչությունը, որ ցույց է արվում զեկուցագրում, պետք է բաղկացած լինի շուրջ 25 հազար ընտանիքից (ընտանիքում մոտ 4 և կես մարդ հաշվելով): Այսպիսով ստացվում է, որ

երկու հայկական ընտանիքում միայն մեկ սովորող երեխա կա:

Այս տեղեկությունները մոտավոր են և չեն կարող արտացոլել երեխաներին դպրոց ընդգրկելու լրիվ պատկերը: Բնականաբար, ոչինչ չի ասվում նաև այն մասին, որ Իրանի հայերի ճնշող մեծամասնությունը, ինչպես և արտասահմանի մյուս գաղութներում, կանգնած է հայրենասիրական դիրքերի վրա:

Ինչպես վերը նշեցինք, ոտնահարելով հայ աշխատավորության դեմոկրատական իրավունքները, դաշնակները բռնի ուժով իրենց տիրապետությունը հաստատեցին երկրի հայկական բոլոր մշակութային և կրթական հաստատությունների վրա: 1958 թվականին դաշնակները կազմակերպեցին Իրանի եկեղեցական թեմերի «անջատումը» էջմիածնից:

Իրանահայ մշակութային կյանքի մասին արտասահմանի հայ առաջադիմական մամուլը գրեթե հնարավորություն չունի տեղեկություններ տալու, եթե չհաշվենք առանձին բացառությունները: Քեհրանում կան մի քանի երգիչներ ու երգչուհիներ, արվեստի ու գրականության աշխատողներ: Շնորհակալ աշխատանք է կատարում «Կոմիտաս» երգչախումբը, կոմպոզիտոր և խմբավար Համբարձում Գրիգորյանի ղեկավարությամբ: Քեհրանում գործունեության որոշ ասպարեզ ունի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղը, որ ղեկավարվում է Նյու-Յորքի կենտրոնական վարչության կողմից: Նրա միջոցներով է պահվում Քեհրանի «Նուպար» դպրոցը: Նույն բնույթի կազմակերպություն է Հայ Կանանց Բարեգործական Ընկերությունը, որի միջոցներով տրվում է հայկական դպրոցների մի քանի աշակերտների ուսման վճարը: Նյութական որոշ օժանդակություն է ցույց տալիս աղքատ ընտանիքների: Նույնպեսի նպատակներ հետապնդող փոքր միություններ կան նաև Իրանի մյուս հայաշատ վայրերում: Ինչ վերաբերում է աեումներին, ապա զբանց գործունեությունը սահմանափակ է: Գաշնակցական «Ազդակ» թերթը գրում է. «Հայ ազգամբը իր անդամներուն ընտանեկան հանդիպումներու

¹ «Նոր Ազդարար», 1955 թ., № 17—21:

վայրն է և զըսաստունը: Եննքը ունի երկու հարկ, ընդարձակ սրահներով օժտված: Դժբախտաբար մշակութային կամ գեղարվեստական ձեռնարկներ չեն կազմակերպվի այդ ակումբին մեջ: Հոն առավելաբար տեղի կունենան ճաշկերույթներ, պարահանդես և թղթախաղի ժամանցները¹:

Ինչպես արտասահմանի մյուս գաղութներում, այստեղ էլ հայ աշխատավորությունը չի պաշտպանում դաշնակ ղեկավարության հակաժողովրդական քաղաքականությունը:

Չնայած գաղթօջախում տիրող այս ոչ բուրրուլին նպաստավոր պայմաններին, Իրանի հայերի ճնշող մեծամասնությունը շարունակում է մնալ հայրենասիրական դիրքերում, հետևում է հայրենիքի տնտեսական ու կուլտուրական վերելքին: Այստեղ մենք ունենք հայրենասեր ժողովուրդ, առաջագնի գրողներ, բանաստեղծներ, երգիչներ ու երաժիշտ կատարողներ: Իրանի հայերի ջերմ հայրենասիրության մասին են վկայում Երևանի ռադիոյի հասցեով ստացվող հարյուրավոր նամակները և այն ջերմ ու սրտազին վերաբերմունքը, որ Իրանի հազարավոր հայեր ցուցաբերում են Սովետական Հայաստանից ժամանող հազվագյուտ հյուրերի նկատմամբ:

Իրանի հայերի իսկական հայրենասիրության մասին է վկայում այն փաստը, որ նրանք բուռն խանդավառությամբ ընդունեցին առաջիկա հայրենադարձության լուրը: Այն կայծակի արագությամբ տարածվեց բոլոր հայաշատ վայրերում: Մի քանի ամսվա ընթացքում Իրանում հայրենադարձության համար ցուցակագրվեցին տասնյակ հազարավոր մարդիկ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում ընդդժել, որ հայերի հայրենադարձության առնչությամբ Իրանի կառավարությունը հայտարարեց, թե չի առարկի Սովետական Միություն տեղափոխվել ցանկացող հայերի մեկնմանը: Կարելի է հուսալ, որ շուտով տեղի կունենա հայերի առաջին խմբերի հայրենադարձությունը դեպի Սովետական Հայաստան: Իզուր էր դաշնակցական «Ալիք» թերթը փորձում թունավորել մթնոլորտը, իզուր էր նա աշխատում համոզել հայերին, որ հրաժարվեն


հայրենիք գնալու որոշումից: Դա լավագույն ապացույցն էր այն բանի, որ ընայած «Ալիք»-ը լույս է տեսնում հայերեն լեզվով, բայց նա որևէ չափով չի կապված գաղութի աշխատավորական զանգվածների հետ, դեմ է նրանց կենսական շահերին ու արհամարհված նրանցից, որ այդ թերթը լույս է տեսնում մի խումբ դաշնակցականների հաճույքի համար:

Չըշափելով սովետա-իրանական հարաբերությունների զարգացումը հետպատերազմյան շրջանում, անհրաժեշտ ենք համարում նշել միայն երկու երկրների փոխհարաբերությունների որոշակի բարելավումը վերջին շրջանում: Բարիդրացիական հարաբերությունների հաստատումը երկու հարևան երկրների միջև համապատասխանում է նրանց կենսական շահերին, մերձավոր ու միջին Արևելքի խաղաղության շահերին: Ահա թե ինչու հարաբերությունների նշվող շրջադարձը դրական լայն արձագանք գտավ ինչպես Իրանի ժողովրդի, այնպես և Սովետական Հասարակականության լայն շրջաններում:

Ինչ վերաբերվում է իրանահայերի հայրենադարձությանը, ապա անհրաժեշտ է նշել այս հարցում Իրանի կառավարության բարի կամքը, որի շնորհիվ շատ իրանահայեր հնարավորություն են ստանում վերադառնալ իրենց հայրենիքը:



¹ «Ազգակ», 9 հուլիսի, 1959 թ.



ԻՐԱՔ

Իրաքի հայ գաղթօջախը սկիզբ է առնում 17-րդ դարի կեսերից: Նրա առաջացումը կապված է Շահ Աբասի տիրապետության շրջանում տեղի ունեցած բռնագաղթի հետ: Բռնի ուժով գեպի Պարսկաստանի խորքերը տարված հարյուր հազարավոր հայերի մի մասը հետագայում բնակություն է հաստատում Բաղդադում և երկրի այլ վայրերում: Դարերի ընթացքում այդ փոքր գաղթօջախը կարողացել է պահպանել իր գոյությունը: Հին ժամանակներից այստեղ բնակություն հաստատած հայերին այժմ անվանում են «հին հայեր», ի տարբերություն այն հայերի, որոնք Իրաք են եկել 1915—1922 թվականներին: Նրանց անվանում են «նոր հայեր»: Ըստ Հ. Վարժապետյանի տված տեղեկությունների, այժմ Իրաքում ապրում է 20 հազար հայ¹:

Ըստ առանձին քաղաքների ու բնակավայրերի, հայերի տարածումը հետևյալ պատկերն է ներկայացնում. Բաղդադում և շրջակայքում՝ 10.000, Բասրայում՝ 3500, Մոսուլում՝ 3000, Կիրկուկում՝ 1000, իսկ մնացածները՝ մյուս վայրերում:

Հայ բնակչության մոտավորապես 65 տոկոսը զբաղվում է բանվորությամբ և արհեստներով, 20 տոկոսը մանր ծառայողներ ու մտավոր աշխատանքով զբաղվողներ են, իսկ մնացած 15 տոկոսը՝ առևտրականներ:

Միապետական ռեժիմի տարիներին Իրաքի հայ գաղութի կապերը օֆյուռքի մյուս գաղութների հետ համեմատաբար թույլ էին: Ինչ վերաբերում է Սովետական Հայաստանին, ապա նրա հետ ոչ մի կապ չկար: Իրաքն այդ ժամանակ աշխարհի այն հազվագյուտ երկրներից էր, որը Սովետական Միության հետ դիվանագիտական հարաբերություններ չուներ:

Ռեսպուբլիկայի հռչակման պահին (1958 թ.) գաղութի հասարակական կյանքում որոշ աշխուժություն է սկսվում, սակայն հետագա տարիներին ներքին քաղաքական պատճառներով այդ աշխուժությունը զգալիորեն կասեցվեց: 1960 թվականի սկզբներին «Մեր նշանաբանն է Հառաջ» թերթը գրում էր. «Ներկայի իշխանությանց կողմն կիրառվող դեմոկրատական սկզբունքները իրենց անմիջական բարիքները ունեցան նաև հայ ազգային կյանքին ներս: Նուրի Սաիդի բռնատիրության օրով Իրաքի մեջ հայ ժողովրդին պարտադրված էր դաշնակներ կազմված քաղաքական մարմին մը և թաղական խորհուրդներ:

Այսօր հուլիսի 14-ի հեղափոխությունը շրջած է կացությունը հայկական կյանքին ներս ևս: Այսօր Իրաքի մեջ հայ ժողովրդին տրված են ազգային փոքրամասնությանց հատուկ բոլոր ազատությունները: Որպես առաջին քայլ, ազգային դեմոկրատական իշխանությունը հատուկ հրամանագրով լուծեց դաշնակ քաղաքական մարմին կոչվածը և անոր տեղ նշանակեց անկախ ազգայիններն քաղաքական մարմին մը: Փետրվարի 25-ին կառավարությունը լուծեց նաև Մոսուլի, Կիրկուկի և Բասրայի դաշնակ թաղական խորհուրդները և անոնց տեղ էշանակեց թաղական նոր խորհուրդներ՝ կազմված հայրենասեր անձնավորությունների: Այս ձևով հայկական կյանքը վերագարթնած է և ստացած է նոր թափ մը: Հայկական տոնակատարություններ և հավաքույթներ իրարու կհաջորդին՝ գոհացնելով իրաքահայ բոլոր հայրենասերներու տարիներու կարոտը: Ազատագրված իրաքահայերը մեծ խանդավառությամբ կհետևին Երևանի ռազիոկայանի ձայնասփռումներուն:

¹ «Ջարթոնք», 23 դեկտեմբերի, 1959 թ.:

Նուրի Սաիրի օրով լուծված էին նաև բոլոր հայրենասեր կազմակերպությունները: Նոր իշխանությունը մոտ օրենս Շ. Բ. Ը. Միություն և հայ դեմոկրատ երիտասարդներու ընկերության պիտի տա նոր արտոնագրեր և յուրաքանչյուրը պիտի ունենա իր սեփական ակումբը»¹:

1959 թվականին Բաղդադում կազմակերպվեց սովետահայ գրքի և արվեստի ցուցահանդես: Ցուցահանդեսում արտասանած իր ճառում ժողովրդական դատարանի նախագահ Ֆադել էլ Մաթավին ասաց.

«Սովետահայ գրքի և արվեստի այս գեղեցիկ ցուցահանդեսը կծառայի մեր երկու երկրների՝ Իրաքի ու Սովետական Միության միջև բարեկամական կապերի ամրապնդմանը: Սովետական Հայաստանն այժմ դարձել է աշխարհի համբավավոր երկրներից մեկը և հավասար անդամը Սովետական մեծ Միության 15 ռեսպուբլիկաների: Թող երջանկություն թագավորի Սովետական Միության և Իրաքի մեջ այդոչ յուրաքանչյուր աշխատավոր հայի հարկի տակ: Վստահ եղեք, որ է՛լ ավելի կրարելավեն բարեկամական փոխհարաբերությունները Իրաքի և Սովետական մեծ Միության ժողովուրդների միջև»²:

Ինչպես ասացինք, Իրաքում ապրում է ընդամենը 20 հազար հայ: Դա երկրի բնակչության մի շատ աննշան տոկոսն է կազմում: Սակայն երկրում տիրող քաղաքական կացությունն իր անխուսափելի կնիքն է դնում նաև հայ բնակչության կյանքի վրա: Եվ դա անխուսափելի է: Նմանօրինակ երևույթները ընդհանուր են սփյուռքահայ մյուս գաղութների համար: Հայտնի է, որ Իրաքում սկիզբ առած դեմոկրատական վերափոխումները մնացին անավարտ, ղգալի փոփոխություն կրեց էրկրի քաղաքական կացությունը: Իրաքի ռեակցիոն շրջանները նոր հալածանքներ սկսեցին երկրի դեմոկրատական գործիչներին դեմ: Հասկանալի է, որ դա իր անդրադարձումը գտավ նաև հայկական կյանքի վրա: Նկատելի է, որ վերջին ժամա-

նակներս Իրաքի դաշնակցական տարրերը փորձում են ակտիվացնել իրենց հակաժողովրդական գործունեությունը:

Հայկական կյանքը Իրաքի գաղութում իր արտահայտությունն է գտնում գլխավորապես հայկական դպրոցներում: Որոշ ասպարեզ ունեն բարեգործական նպատակներով գործող համայնքային միությունները: Բաղդադում այժմ կա 4 հայկական դպրոց: Գրանցից մեկը միջնակարգ է և կոչվում է Ազգային Միացյալ վարժարան: Այստեղ սովորում են շուրջ 1200 աշակերտներ: Մյուս երեք դպրոցները տարրական են: Հայկական փոքր դպրոցներ կան նաև Բասրայում, Կիրկուկում, Մոսուլում, Հաբբանիեում և Զախոյում: Գյրոցները պահվում են ազգային հասույթներով: Բացի դրանից գոյություն ունի ծխական տուրք: Ուսումը վճարովի է, բայց աղքատ ընտանիքների ներխանները ուսման վարձից ազատվում են: Գյրոցական բյուջեն լրացվում է զանազան բարեգործների նվիրատվություններով: Սակայն լուսավորության համար անհրաժեշտ բյուջեի բացակայության պայմաններում դպրոցներ պահելը միշտ չափազանց մեծ ղժվարություններ է ստեղծում: Այդ տեսակետից բնորոշ են Բաղդադի հայոց առաջնորդարանի հաղորդագրության մեջ տրված տեղեկությունները: «Անցյալ տարի, — կարդում ենք այստեղ, — Գալուստ Կյուպենկյան հիմնարկությունը Ազգային Միացյալ վարժարանի չքավոր աշակերտներին որդեգրած է 75 հոգի, Իրաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը՝ 30 հոգի: 7 ազգայիններ որդեգրած էին երկուական, 31 ազգայիններ՝ մեկական հոգի և այլն... Իրաքի հայ երկսեռ երիտասարդաց Միությունն ալ այս նպատակի համար տված երգահանդեսին ամբողջ հասույթը, 272 տինար և 250 ֆլա, հատկացուցած է դպրոցին... Անցյալ տարի վարժարանի չքավոր աշակերտության թիվն էր 282. այս տարի անոնց թվին վրա ավելցան 70 հոգի ևս, որով այս տարվան չքավոր աշակերտներու թիվը հասած է 352-ի»¹:

Իրաքում սահմանված ուսուցման սխեմայի համաձայն հայ-

¹ «Մեր նշանաբանն է Հառաջ», 22 մարտի, 1959 թ.:

² «Գրական թերթ», 22 հունվարի, 1960 թ.:

¹ Հաղորդագրություն Բաղդադի հայոց առաջնորդարանի, 1961 թ., № 13:

կական դպրոցներում մայրենի լեզվից բացի մնացած հանրա-
կրթական առարկաները դասավանդում են արաբերեն լեզ-
վով: Այն երեխաները, որոնք հայկական միջնակարգ դպրո-
ցում չեն ընդգրկվում, տարրական դպրոցն ավարտելուց հետո,
եթե ընտանիքի նյութական պայմանները թույլ են տալիս,
ընդունվում են արաբական դպրոց: Տնտեսապես կարող ընտա-
նիքի երիտասարդներն ու աղջիկները կարող են ընդունվել
բարձրագույն ուսումնական հաստատություններ: Հայ հա-
րուստները հաճախ իրենց զավակներին ուսում տալու համար
ուղարկում են Ծվրոպայի զանազան երկրներ:



ԼԻՒԱՆԱՆ

Լիրանանը և Սիրիան դարեր շարունակ հարևան են եղել
Կիլիկյան Հայաստանին և ժամանակին այստեղ ստեղծված
պետությունները լայն կապերի մեջ են եղել Հայաստանի հետ:
Դեռևս մինչև Կիլիկյան թագավորության ստեղծումը, պատմա-
կան ամենահին ժամանակներից, մեր թվարկությունից էլ
շատ առաջ Հայաստանի և Անտիոքի միջև գոյություն են ունե-
ցել բազմապիսի կապեր: Այս կապակցությամբ հետաքրքիր
փաստեր են բերված 1951 թվականին Բեյրութում լույս տե-
սած Սիսակ Վարժապետյանի «Հայերը Լիրանանի մեջ»¹ խո-
րագրով աշխատության մեջ:

Հայտնի է, որ իր արշավանքների ընթացքում Տիրգրան Մեծը
գրավել էր նաև Սիրիան և Պաղեստինը: Այս ժամանակաշրջա-
նի իրադարձությունները մանրամասն կերպով լուսաբանված
են հայ պատմաբանների աշխատություններում, որոնք լայնո-
ւեն հայտնի են մեր գիտական հասարակայնությանը: Պետք է
նշել նաև Ար. Սուրմեյանի երկու հատորանոց աշխատությունը
«Պատմություն Հալեպի հայոց» խորագրով, որը հարուստ

¹ Գիրքը տալիս է Լիրանանի հայերի պատմությունը հին ժամանակներից
մինչև 1918 թվականը: Հեղինակի մտահղացմամբ գրքի երկրորդ հատորը
պետք է ընդգրկեր 1918 թվականից հետո ընկած ժամանակաշրջանը: Սա-
կայն որքան մեզ հայտնի է, այն դեռևս լույս չի տեսել:

փաստական նյութ է պարունակում Սիրիայի և Լիբանանի հայ գաղութների պատմության մասին:

Դժվար է որոշակի նշել Լիբանանի հայ գաղութի սկզբնավորման ժամանակաշրջանը: Հայտնի է միայն, որ մեր թվարկության առաջին դարերում մերթ խաղաղ, մերթ պատերազմական պայմաններում հայերը լայն շփումներ են ունեցել Անտիոքի ժողովուրդների հետ: Այսպես, 539 թվականին պարսից խոսրով Ա. թագավորը գրավում է Անտիոքը և Եղեսիան: Նա մեծ թվով քրիստոնյաներ, այդ թվում և հայեր է փոխադրում նոր նվաճած վայրերը:

Ավելի ուշ շրջանում Բագրատունիների թագավորության անկումից հետո զգալի թվով հայեր փոխադրվում են Կիլիկիա, որոնց մի մասը բնակություն է հաստատում Անտիոքում: Հետագայում, մամլուքների դեպի Անտիոք ու Կիլիկիա կատարած արշավանքների ժամանակ նույնպես տեղի է ունենում բռնի արտագաղթ դեպի զանազան երկրներ, այդ թվում և Սիրիա ու Լիբանան: Այս գաղթը տարբեր շափերով շարունակվում է նաև օսմանյան կայսրության շրջանում: Սակայն պետք է նկատել, որ Սիրիայում և Լիբանանում բնակություն հաստատած հայերի մեծ մասը ձուլվել է տեղի բնակչության հետ, կորցրել է լեզուն և ազգային մյուս հատկանիշները: Նույն պրոցեսը տեղի է ունեցել Կիլիկյան թագավորության կործանումից հետո այդտեղ հաստատված հայերի հետ:

18-րդ դարի սկզբից, Լիբանանը, հատկապես Բեյրութը, դառնում է գաղութահայության կենտրոններից մեկը: Գաղթված էր օսմանյան կայսրության մեջ հայ լուսավորչականների և կաթոլիկների միջև ծավալված դավանաբանական սուր պայքարի հետ, որի հետևանքով մի խումբ կաթոլիկներ բնակություն են հաստատում Բեյրութում: Այստեղ 1749 թվականին հիմնվում է հայտնի Զմմառի վանքը: Հետագայում դրանց թվին ավելանում են Երուսաղեմից եկած բողոքական միսիոներներ և քաղաքական շարժառիթներով օսմանյան կայսրության կենտրոնական քաղաքներից այստեղ բնակություն հաստատած հայերը:

1895 թվականի հայտնի իրադարձություններից առաջ

Լիբանանի հայ գաղութը շատ փոքր էր: Սուլթան Համիդի կազմակերպած ջարդերից հետո զգալի թվով հայեր ապաստան են գտնում Լիբանանում: Այստեղ մեծ գաղութ է ստեղծվում միայն 1915—1916 թվականների հայկական կոտորածների հետևանքով: Տասնյակ հազարավոր հայեր առաջին համաշխարհային պատերազմից հետո բնակություն են հաստատում արաբական այս փոքր երկրում: Այդ ժամանակ հայ գաղութը ձուլման ուժեղ պրոցես էր ապրում և մշակութային նկատելի կյանք չկար: Նոր, մեծ գաղթը «երիտասարդացնում է» գաղութը: Հազիվ մի քանի տասնյակ տարի հետո Լիբանանը, մասնավորապես Բեյրութը, դառնում է արտասահմանի հայ մշակութային կյանքի առաջնակարգ կենտրոններից մեկը, եթե ոչ գլխավոր կենտրոնը: Զգալի թվով հայեր Լիբանան եկան 1938—1939 թվականներին, երբ Ֆրանսիայի և Թուրքիայի միջև կայացած դիվանագիտական գործարքով Սիրիայի Ալեքսանդրետի սանջակը տրվեց Թուրքիային:

Պատմական իրադարձությունների բերումով հայ աշխատավորական մասսաների հոծ խմբեր բնակություն հաստատեցին արաբական այս փոքր երկրում: Երկար տասնամյակներ շարունակ կողք-կողքի ապրելով արաբ ժողովրդի հետ, հայերը արժանացել են արաբ աշխատավորների սիրուն և համակրանքին: Հայ և արաբ ժողովուրդների լավագույն ներկայացուցիչները միշտ բարձր են գնահատել այդ բարեկամությունը: Նրբանք միշտ համատեղ պայքարել են իմպերիալիզմի լծի դեմ: Լիբանանի անկախության համար մղած երկարամյա պայքարում իրենց ակտիվ մասնակցությունն են բերել հայ ժողովրդի լավագույն զավակները: Ահա թի ի՛նչ էր ասում այդ մասին Լիբանանի Մինխտրների խորհրդի նախագահ Ռիադ Սուհր 1943 թվականին. «Ծա հայերի ներկայությունն այս երկրում ընդունում եմ գրկաբաց և առանձին հաճույքով: Նրանք այս երկրի անկախությունը գուցե մեզնից ավելի լավ պաշտպանեն: Որովհետև նրանք երկար ժամանակ ապրել են բռնության տակ, պայքարել և զոհվել են անկախության համար, հետևաբար լավ գիտեն անկախության արժեքը: Իմ կառավարության «իրտը բաց է հայերի համար: Ծռ անելու եմ ինչ հնարավոր

է, որպեսզի հետ այսու նրանք ավելի լայնորեն մասնակցեն կառավարական գործերին»¹:

Լիբանանում այժմ կան մի շարք հայկական պատմական հուշարձաններ, ճարտարապետական շենքեր, հայ-լուսավորչական, կաթոլիկ և բողոքական վանքեր ու եկեղեցիներ, բնակավայրեր, փողոցներ: Բեյրութի փողոցներից հինգը հայկական անուններ են կրում. դրանք են՝ Ռյու վարդապետ, Ռյու Գաուդ փաշա, Ռյու էդիպ Իսհազ, Ռյու Հաննա Ղուկաս և Ռյու էրմեն (հայոց շուկա): Մի քանի թաղերում հայերը մեծամասնություն են կազմում: Վանքերից մի քանիսում պահպանում են հայկական ձեռագրեր, կերպարվեստի գործեր, դեղարվեստական առարկաներ: Այսպես, Ջամառի վանքն ունի հայ ձեռագրերի հավաքածու, հին հրատարակություններ: Այստեղ է գտնվում Մարիամ Աստվածածնի Ռաֆայելի վրձինին վերագրվող հայտնի նկարը, որ բերվել է Իտալիայից:

1920-ական թվականներին, երբ Կիլիկիայի հայ բնակչության մի զգալի մասը ապաստան գտավ Սիրիայում և Լիբանանում, Կիլիկյան Կաթոլիկոսությունը փոխադրվեց Լիբանան. Անթիլիաս բնակավայրը, որը Բեյրութի արվարձաններից մեկն է: Այստեղ կառուցվեց նոր վանք, բացվեց դպրավանք, սկսեց լույս տեսնել «Հասկ» ամսագիրը:

Այս երկիրը, հատկապես նրա մայրաքաղաք Բեյրութը, այժմ սփյուռքահայ մտքի ու մշակույթի գլխավոր կենտրոններից մեկն է: Այստեղ ներկայացված են հայկական բոլոր քաղաքական կուսակցությունները, որոնք զգալի դեր են խաղում երկրի քաղաքական կյանքում: Այստեղ են ապրում ու ստեղծագործում Սովետական Հայաստանում ու սփյուռքում հայտնի շատ գրողներ, արվեստագետներ, հասարակական ու քաղաքական գործիչներ: Գուցե հենց դրանով է բացատրվում սփյուռքում տարածված ու միշտ կատակով ասվող «Փոքր Հայաստան» հորջորջումը, որը կրում է Լիբանանի մայրաքաղաքը: Ոչ մի տեղ քաղաքական հակամարտություններն ու պայքարը հայկական կուսակցությունների միջև այն-

քան ցայտուն ու ուժեղ չեն, ինչպես այստեղ: Ոչ մի տեղ հայ մամուլը, տարբեր ուղղությունների պատկանող հասարակական ու մշակութային կազմակերպությունները այնպիսի խայտարղետ պատկեր չեն ներկայացնում, ինչպես այստեղ: Ու թերևս ոչ մի երկրում հայերը երկրի հասարակական ու քաղաքական կյանքում այնպիսի կարևոր դեր չեն խաղում, ինչպես այստեղ: Լիբանանում ավելի շատ գրքեր, թերթեր ու ամսագրեր են հրատարակվում, քան սփյուռքահայ որևէ այլ գաղութում. կրթական ցանցը այստեղ ավելի լայն է ու լավ է կազմակերպված, քան որևէ այլ գաղութում:

Լիբանանի հայ գաղութում են ստեղծագործում գրողներ Վ. Վահյանը, Գ. Աղաբաբյանը, Ա. Մառուկյանը, Զ. Մելքոնյանը, Ա. Գարայանը, Գ. Սևանը, Հ. Նորունին, Հ. Գանգրունին, կոմպոզիտորներ Ա. Պատմագրյանը, Բ. Կանաչյանը, Հ. Պերպերյանը, դիրիժոր Ա. Գալաշյանը, երգչուհիներ Ա. Պատրոսյանը, Ելիզ Թաշչյանը, Ա. Գասպարյանը, Ս. Հակոբյանը, Մ. Ավետիսյանը, դաշնակահարուհիներ Շ. Մխիթարյանը, Ահարոնյանը, Գ. էմբայանը, թավջութակահար Վ. Պերպերյանը և ուրիշներ:

Հայ բնակչության ընդհանուր թիվը այս փոքր երկրում (տեղիտորիան կազմում է 10,4 հազար քառ. կմ., բնակչությունը՝ 1525 հազար մարդ) Լիբանանի պաշտոնական վիճակագրական տվյալներով 1952 թվականին կազմել է մոտ 85 հազար, որից 60 հազարը ապրում է Բեյրութում¹: Մնացածներն ապրում են Տրիպոլիում, Ջահլեում, Բիքֆայայում, Այն-ճարում և այլ վայրերում: Այժմ Լիբանանի հայ բնակչության թիվը կազմում է մոտ 120 հազար մարդ: Լիբանանի հայերը զբաղված են երկրի տնտեսության գրեթե բոլոր ասպարեզներում. այստեղ կան բանվորներ ու գյուղացիներ, արհեստավորներ և վաճառականներ, պետական պաշտոնյաներ, բժիշկներ, ինժեներներ, արվեստի ու գրականության գործիչներ: Կան նաև խոշոր առևտրականներ ու ձեռնարկատերեր²:

¹ «Ջարթոնը», 18 հոկտեմբերի, 1959 թ.:

² Լիբանանի պառլամենտում ընտրվում է 4 հայ ղեկավար, ըստ կրթական համայնքների՝ հայ-լուսավորականներից 3, կաթոլիկներից՝ 1:

¹ «Ժողովուրդի ձայն», 1 դեկտեմբերի, 1943 թ.:

Մշակութային կազմակերպություններ.

1. «Վահան Թեֆեյան մշակութային միություն»։ Լիբանանի հայ կուլտուրական բազմամարդ կազմակերպություններից մեկն է։ Հիմնադրվել է 1947 թվականին։ Ունենալով նյութական համեմատաբար բարվոք վիճակ, Միությունը պարբերաբար կազմակերպում է գրական և երաժշտական հանդեսներ, ներկայացումներ, խրախուսում ու աջակցում է դեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը։ Վերջին տարիներին ընթացքում Միությունը զգալի աշխատանք է կատարել լիբանանահայ երիտասարդությանը Սովետական Հաստատանի հետ կապելու, սփյուռքում հայ լեզուն ու մշակույթը պահպանելու ուղղությամբ։

Թեքեյան մշակութային միությունն ունի իր շենքը, որտեղ տեղավորված է ակումբը և ռամկավարների օրգան «Ջարթոնք» խերթի խմբագրությունը։

2. «Վերածնունդ» մշակութային Միություն։ Այս կազմակերպության գործունեությունը ղեկավարում են անկուսակցական գործիչներ, ուղղությունը հայրենասիրական է։ Իր մասնակցությունն է բերում գաղթօջախում կազմակերպվող կուլտուրական միջոցառումներին։

3. «Գրական շրջանակ»։ Այս գրական կազմակերպության կորիզն է կազմում Լիբանանի հայ երիտասարդ շնորհալի գրողների ու արվեստագետների մի խումբ (Գ. Աղգարյան, Ա. Գարյան, Գ. Սևան, Հ. Լաշինյան և ուրիշներ)։ «Գրական շրջանակը» պարբերաբար կազմակերպում է գեղարվեստական երեկոներ, դիսպուտներ, դասախոսություններ, սովետահայ և սփյուռքահայ գրողների երկերի քննարկումներ։ Բավականաչափ լայն է «Գրական շրջանակի» ազդեցությունը գաղութի առաջադեմ մտավորականության շրջանում և նրա կապերը երկրի արար գրողների ու արվեստագետների հետ։ «Գրական շրջանակը» հրատարակում է «Գիրք գրականության և արվեստի» հանդեսը, որը տարածվում է ոչ միայն Լիբանանում, այլև մյուս գաղութներում։ Հանդեսը հարուստ է իր բովանդակությամբ, նյութերի բազմազանությամբ, բայց լույս է տեսնում

չափազանց անկանոն, որի գլխավոր պատճառներից մեկը նյութական միջոցների պակասն է։

4. «Նոր սերունդ մշակութային շարժում»։ Գրական այս խմբակը միավորում է հնչակյան գրական երիտասարդությանը, հրատարակում է «Արարատ գրական» ամսագիրը, որտեղ իրենց արձակ ու շափածո երկերն են տպագրում Հակոբ Նորունին, Հրանտ Գանգրունին, Ժիրայր Նաիրին, Երվանդ Գարաճյանը, Պեպո Միմոնյանը, Սարգիս Խայանը, Մարտիրոս Մոմճյանը և ուրիշներ։ «Արարատ գրական» ամսագրի էջերում տպագրվում են սովետահայ գրողների երկերը։ Սովետական Հայաստանի հասարակական կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների առիթներով, ինչպես նաև սփյուռքահայ գրողների և բանաստեղծների նոր երկերը քննարկելու նպատակով։ «Գրական շրջանակը» և «Նոր սերունդ մշակութային շարժում» խմբակը իրենց երեկոներն ու հանդեսները երբեմն կազմակերպում են միացյալ ուժերով։

5. «Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Լիբանանի մասնաճյուղը»։ Այս կազմակերպությունը զբաղվում է գերազանցապես կրթական ու մշակութային գործերով, կարգավորում է այդ ընկերության կենտրոնի կողմից հատկացվող միջոցների ծախսման հարցերը, հրատարակում է «Խոսնակ» ամսագիրը։

6. «Բաղրամյան մարզական Միություն»։ Լիբանանի հայերի ամենամասսայական սպորտային կազմակերպությունն է։ Ունի Լիբանանի մասշտաբով ուժեղ ֆուտբոլի թիմ և մարզական խմբակներ. մասնակցում է երկրում անցկացվող սպորտային մրցումներին։ Սերտ կապերի մեջ է Լիբանանի մարզական մյուս կազմակերպությունների հետ։ Այս ընկերության շուրջը համախմբված է հայ հայրենասեր երիտասարդության մեծամասնությունը։

7. «Հայ մարմնամարզական Միություն»։ Հնչակյան կուսակցության կողմից ղեկավարվող այս միության շուրջը համախմբված է հնչակյան երիտասարդությունը։ Ունի ֆուտբոլի թիմ, հեծանիվի ու սպորտի այլ ձևերի խմբակներ։

8. «Համազգային մշակութային միություն»: Դաշնակցական կազմակերպություն է փոքրաթիվ անդամներով:

9. «Հայ մարմնամարզական ընդհանուր միություն»: Դաշնակցական երիտասարդության սպորտային կազմակերպություն է, ունի ֆուտբոլի թիմ և սպորտային մի քանի այլ խումբակներ:

Քացի հիշատակված կազմակերպություններից, կիբանանում կան նաև մի քանի այլ փոքր կազմակերպություններ ու միություններ, որոնք հարում են զանազան քաղաքական կուսակցությունների և խմբավորումների, սահմանափակ թրվով անդամներ ունեն և նկատելի դեր չեն խաղում ոչ հայկական շրջաններում, ոչ, մանավանդ, ամբողջ կրկրի մասշտաբով:

Հայ կրթական գործը կիրանանում

Ամբողջ կիրանանում 1959 թվականի տվյալներով կար մոտ 66 վարժարան, մոտ 14 հազար սովորողներով¹:

Ըստ առանձին քաղաքների ու բնակավայրերի, զրանք բաշխվում են հետևյալ կերպ.

| | | |
|------------------|------|----------|
| 1. Տրիպոլի | — 4 | վարժարան |
| 2. Ծիպեյլ | — 1 | » |
| 3. Ծյունի | — 1 | » |
| 4. Անթիլիաս | — 1 | » |
| 5. Ռայոք | — 1 | » |
| 6. Զահլե | — 3 | » |
| 7. Շթորա | — 2 | » |
| 8. Այնճար | — 3 | » |
| 9. Ալեյ | — 1 | » |
| 10. Սայդա | — 1 | » |
| 11. Հոզմիմի | — 1 | » |
| 12. Բեյրութ | — 23 | » |
| 13. Պուրջ Համուտ | — 17 | » |
| 14. Տրպալա | — 1 | » |
| 15. Բիքֆայա | — 6 | » |

«Զարթոնք» թերթի տվյալներով, կրթական նպատակներով ամեն տարի հայ զաղութը ծախսում է 2 միլիոն լիբանանյան ոսկի: Դպրոցները պահվում են գլխավորապես ծնողներից գանձվող ուսման վճարով, նվիրատվություններով, կտակային գումարներով, զանազան տեսակի բարեգործական միությունների միջոցներով: Այստեղից էլ պարզ է դառնում այն, թե ինչպիսի մեծ դժվարությունների ու զոհողությունների հետ է կապված դպրոցներ պահելը: Արտասահմանյան մամուլում հաճախ կարելի է կարդալ այն մասին, որ շին բովարարում միջոցները, դպրոցական շենքերը, ուսուցչական կադրերը:

Քանի որ կիրանանում կրթական ցանցի վերաբերյալ տեղեկությունները տրվում են ըստ կրոնական համայնքների, ապա ստորև բերում ենք հետևյալ աղյուսակը, որ գաղափար է տալիս բնակչության, վարժարանների, աշակերտների, ուսուցիչների թվի, ինչպես նաև դպրոցների բյուջեի մասին.

| | Բնակչու- թյան թիվը | վարժ. | Աշակ. | Ուսու- ցիչներ | Բյուջե |
|------------------|-----------------------|-------|--------|------------------|-----------------|
| ա) Հայ լուս. | 67.137 | 24 | 5076 | 260 | 509.800 լ. ոսկի |
| բ) Հ. կաթոլիկ | 14.218 | 14 | 2730 | 182 | 370.000 » |
| գ) Հ. բողոքական | 4.278 | 16 | 3673 | 216 | 708.000 » |
| դ) Մասնավոր վարժ | - | 12 | 2015 | 184 | 600.000 » |
| Ընդամենը | 85.633 ¹ | 66 | 13.449 | 842 | 2.187.800 |

Աղյուսակում ցույց տրված աշակերտների թվում կան 450 դիշերթիկ երեխաներ: Ուսուցչական կազմի մեջ են մտնում արաբերենի և արաբերեն դասավանդող առարկաների դասատուները, որոնք նշանակվում են պետության կողմից:

Ընթերցողի համար, մեր կարծիքով, կարող են հետաքրքրություն ներկայացնել հետևյալ տվյալները.

Հայերի թիվը կազմում է կիրանանի ընդհանուր բնակչու-

¹ Ուրիշ տվյալների համաձայն բնակչության թիվը կազմում է 120 հազար:

¹ «Զարթոնք», 29 հոկտեմբերի, 1959 թ.:

թյան $\frac{1}{15}$ մասը, հայ աշակերտության թիվը կիրանանի աշակերտության $\frac{1}{18}$, իսկ հայ դպրոցների թիվը կիրանանի դպրոցների $\frac{1}{26}$ մասը¹:

Այս տվյալները ցույց են տալիս, որ հայ աշակերտության և դպրոցների թիվը կիրանանի աշակերտության և դպրոցների թվի համեմատությամբ, հարաբերական ձևով վերցրած, զգալիորեն ավելի փոքր է: Երեխաներին կրթության տալը սփյուռքահայ աշխատավոր մասսաների համար կապված է մեծագույն զգվարությունների հետ: Այդպես է վիճակը նաև իրանանահայ գաղութում: Այս իրողությունը հաստատելու համար անհրաժեշտ ենք համարում վկայակոչել «Այդ» թերթում հրատարակված հոդվածից մի հատված, որտեղ ասվում է.

«Մեզի դիմող ընտանիքներուն պարագան նկատի առնելով, քննեցինք և իմացանք անոնց շահն ու ծախսը և նկատեցինք, թե անոնք կշահին 150—200 իրանանյան ոսկի ամսական: Չենք ուզեր մեզի դիմողներուն անունները տալ, որովհետև քաջ գիտենք, թե անոնց պես հազարավորներ կան մեր իրականության մեջ:

Փոքրիկ հաշիվ մը՝ արդեն պատկերը կպարզվի հստակորեն.

Ամիսը 40—50 լ. ո. (նվազագույն) տան վարձը, անշուշտ ոչ շատ ներկայանալի բնակարանի մը համար: Ապրուստի համար նվազագույն օրական 5 լ. ո., $30 \times 5 = 150$ լ. ո.: Տան վարձը և հացի դրամ, արդեն դրամը վերջացավ: Ուրեմն ինչպե՞ս պետք է շարժի ընտանիքի մայր մը, որ ունի զոնն երեք զավակ, ծեր հայր մը և մայր մը: Հապա եթե հիվանդացավ, ս՛ւր դիմե... իսկ ասոնցմե վերջ դպրոցական անխուսափելի ծախսը, հոս արդեն մեր շունչը կկտրի:

Պուրճ Համուտի մեջ, օրինակ (ուր հո՞՞ հայություն կա), ունինք մոտ 20 նախակրթարաններ, առաքելական, կաթողիկե և ավիտարանական, որոնք բոլորն ալ վճարովի են:

Փոքրիկ հաշիվը մը ևս ընենք, միշտ նվազագույնը նկատի առնելով: Յուրաքանչյուր զավկի համար ծնող մը պետք է վճարե գրենական պիտույքի, կրթաթոշակի և այլ ծախսերու

համար ամսական 15 լ. ո.: Իսկ եթե ենթական քանի մը զավակ ունի, հաշիվը ավելի «փայլուն» կդառնա: Ուրեմն, քանի որ գողություն չի կրնար ընել ընտանիքի հայրը, պիտի համակերպի, բայց ի՞նչպես: Ան ալ ըսենք.—

Առաջին ակնարկը պիտի երթա ապրուստին. այսինքն՝ ժողովրդական բացատրությամբ, կոկորդեն պիտի կտրե: Պտուղ չուտեր, շաբաթը մեկ անգամ միս կառնե կամ շառներ, և չերկարենք... արդյունքը. ֆիզիկական տկարություն և հիվանդ սերունդ¹:

Ահա այս պատճառով է, որ դպրոցահասակ շատ երեխաներ չեն սովորում: Նույն թերթի տվյալներով միայն բեյրութում մոտ 4 հազար հայ երեխաներ նույնիսկ տարրական դպրոցում սովորելու հնարավորությունից զուրկ են: Այս կացությունից դուրս գալու համար որոշ թերթեր առաջարկում են տարրական կրթությունը դարձնել ձրի, մի բան, որ կիրանանի, ինչպես նաև արտասահմանի մի շարք այլ գաղութներում զգվար իրագործելի ցանկություն է միայն:

Ինչպես վերևում նկատել ենք, մամուլը նշում է հայ ուսուցիչների զգալի պակասը և նրանցից շատերի ցածր պատրաստությունը: 1959 թվականի սեպտեմբերին «Զարթոնք» թերթում հանդես եկած Վաղարշ Օֆլազյանը գտնում է, օրինակ, որ «Սփյուռքի հայ կրթական գործերով զբաղվող գրասենյակ մը պետք է, որուն առաջին և զլիսավոր գործը պիտի ըլլա վարժապետանոցի մը բացումը անմիջապես»: Այդպիսի մի հիմնարկի բացակայությամբ է բացատրում հեղինակը այն, որ «մեր կրթական գործը այսօր անբաղձալի վիճակի մեջ կգտնենք»²:

Այս «վարժապետանոցը», ըստ հեղինակի շարադրած նպատակների, պիտի կատարի մանկավարժական բարձրագույն ուսումնական հաստատության դերը, այսինքն՝ միջին և ստորին աստիճանի դպրոցների համար պետք է ուսուցիչներ պատրաստի: Կիրանանի պայմաններում հայկական նախակրթա-

¹ «Զարթոնք», 29 հոկտեմբերի, 1959 թ.

¹ «Այդ», 2 սեպտեմբերի, 1960 թ.

✓ ² «Զարթոնք», 10 սեպտեմբերի, 1959 թ.

րանները, վարժարաններն ու երկրորդական վարժարանները ուսման ծրագրերը կազմում են այն հաշվով, որ դրանք ավարտողները կարողանան մտնել կամ ֆրանսիական, կամ ամերիկյան համալսարանը (երկուսն էլ գտնվում են Բեյրութում), սակայն աշակերտների ավելի մեծ մասին պատրաստում են ֆրանսիական համալսարանի համար, քանի որ այստեղ ուսման տեղությունն ավելի կարճ է, իսկ վճարման գինը համեմատաբար ավելի մատչելի:

Անդրադառնալով լեզուների դասավանդմանը, «Արարատ» թերթը գրում է. «Մենք Լիբանանի մեջ պետք ունինք չորս լեզվի: Հայերենը մայրենի լեզուն է: Արաբերենը մեր պետական լեզուն է: Հայ վարժարաններն ուսմանը սաները կը դրկեն ֆրանսական բարձրագույն վարժարաններ, ուրիշներ՝ ամերիկյան: Ուրեմն առաջինները ստիպված են ֆրանսերենը ուսուցանել որպես երրորդ լեզու, իսկ վերջինները՝ անգլերենը: Գծախտաբար թե՛ մեկ և թե՛ մյուս ուղղությունը բռնող սանը իր նոր վարժարանին մեջ պետք պիտի ունենա չորրորդ լեզվին»¹: Բացի հանրակրթական առարկաներից, դպրոցներում ուսուցանում են կրոն, ըստ տվյալ համայնքի հավատքի:

Լիբանանի հայկական մանկապարտեզների առանձնահատկությունը, որ ի դեպ, բնորոշ է նաև մյուս գաղութների համար, այն է, որ այստեղ արդեն սովորեցնում են գրել-կարդալ: Սովորաբար մանկապարտեզի դասընթացը տևում է չորս տարի— առաջին դասարանը կոչվում է «ծիլ», երկրորդ դասարանը՝ «բողբոջ», երրորդ դասարանը՝ «կոկոն» և չորրորդ դասարանը՝ «ծաղիկ»: Կրթական հաստատությունների ներքին կյանքի ղեկավարման միասնական կենտրոնական մարմին գոյություն չունի: Դրանք գտնվում են զանազան քաղաքական կուսակցությունների կամ դրանց հարող կրթական, բարեգործական միությունների ձեռքում: Դրա հետ միաժամանակ դպրոցների խորհուրդները կամ հոգաբարձությունները ենթարկվում են կրթական սխտեմի վերաբերյալ Լիբանանի կառավարության օրենքներին ու հրահանգներին:

Մ ա մ ու լ

1. «Հառաջ» (լրիվ անունը՝ «Մեր նշանաբանն է Հառաջ») — լույս է տեսնում Բեյրութում, շաբաթական մեկ անգամ, 8 էջ ծավալով: Լիբանանի հայ դեմոկրատների և նրանց հարող շրջանների օրգանն է: Միտեմատիկաբար աշխատակցում են Լ. Մադեյանը, Ծ. Սևանը, Զ. Աղբաշյանը, Զ. Լաշինյանը, Ա. Գարյանը, Թ. Թորանյանը և ուրիշներ:

Հարուստ բովանդակություն և ճոխ իլյուստրացիաներ ունեցող այս թերթում ընթերցողը կարող է առատ նյութ գտնել միջազգային կյանքի, հայ և արաբ ժողովուրդների դեմոկրատական պայքարի, մարքսիզմ-լենինիզմի տեսական հարցերի, Սովետական Հայաստանի անտեսական ու կուլտուրական շինարարության, հայ, արաբ ու մյուս ժողովուրդների արվեստի ու գրականության մասին: «Հառաջը» համարձակորեն մերկացնում է արաբական երկրների ռեակցիոն շրջանների և նրանց հետ ընթացող գաղնակների հակաժողովրդական դավերն ու մեքենայությունները:

Միջազգային կարևոր հարցերի ընդգրկումով հանդերձ Լիբանանի հայ դեմոկրատների մարտական օրգանը միաժամանակ լայն տեղ է տալիս սփյուռքահայ կյանքի լուսաբանմանը: Արտասահմանի հայ դպրոցների, մշակութային կաղմակերպությունների ու միությունների գրական, թատերական, մարզական խմբակների գործունեությունը իր բազմապիսի կողմերով միշտ գտնվում է թերթի ուշադրության կենտրոնում:

Հենց դրանով էլ պայմանավորված է թերթի աճող հեղինակությունը ընթերցողների լայն շրջաններում:

2. «Արարատ» — ազգային-քաղաքական օրաթերթ է: Հընչակյան կուսակցության Լիբանանի շրջանի օրգանն է, բայց ըստ էության մյուս երկրներում ապրող հնչակյանները դիտում են այն որպես այդ կուսակցության գլխավոր թերթը, մանավանդ, որ հնչակյան մամուլը արտասահմանի հայ գաղութներում բավականաչափ թույլ է տարածված: Լույս է տեսնում Բեյրութում:

✓ ¹ «Արարատ», 13 սեպտեմբերի, 1959 թ.:

3. «Զարթոնք» — ազգային, գրական, քաղաքական-հասարակագիտական օրաթերթ: Ռամկավար-ազատական կուսակցության կիրանանի շրջանի օրգանն է, լույս է տեսնում Բեյրութում: Ունի սպորտային հավելված («Զարթոնք սփոր»), որ լույս է տեսնում երկու շաբաթը մեկ անգամ:

4. «Այգ» — քաղաքական-տնտեսական օրաթերթ, լույս է տեսնում Բեյրութում: Թերթը իրեն հռչակում է «անկախ»:

5. «Ազդակ» — օրաթերթ: Դաշնակցության կիբանանի շրջանի պաշտոնական օրգանն է: Լույս է տեսնում Բեյրութում:

6. «Նաիրի» — ազգային-գրական շաբաթաթերթ:

7. «Մասիս» — շաբաթաթերթ: Բեյրութի հայ կաթոլիկ շրջանների օրգանն է:

8. «Պիրֆ գրականության և արվեստի» — հետպատերազմյան տարիներին առաջադիմական մտավորականության հանդեսն էր: Այստեղ տպագրվում էին առաջադիմական գրողների արձակ և չափածո երկերը, հոդվածներ ու զրույցների արվեստի ու գրականության տեսական հարցերի մասին: Հանդեսը միշտ լավ ընդունելություն էր գտնում ընթերցողի կողմից, բայց լույս էր տեսնում անկանոն: Այժմ լույս է ընծայվում «ՀԱՌԱՋ գրական» պարբերականը:

9. «Արարատ գրական» — հրատարակում են «Արարատ» օրաթերթի շուրջը համախմբված գրողներն ու բանաստեղծները: Այս հանդեսը նույնպես անկանոն է լույս տեսնում:

10. «Շիրակ» — ամսագիր գրականության, արվեստների և մշակույթի: Հրատարակում է «Վահան Թեքեյան մշակութային Միության» ռամկավար երիտասարդական կազմակերպությունը:

11. «Նոսնակ» — ամսաթերթ: Հրատարակում է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կիբանանի շրջանային հանձնաժողովը:

12. «Բագին» — դաշնակների գրական ամսագիր, լույս է տեսնում Բեյրութում:

13. «Նվիրում» — պարբերաթերթ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Հովակիմյան — Մանուկյան վարժարանի:

14. «Երիտասարդ հայունի» — կանանց ամսագիր, լույս է տեսնում Տրիպոլի քաղաքում, կապված է կիրանանի ռամկավարական շրջանների հետ:

15. «Նոր կյանք» — ամսագիր: Լուսարանում է գլխավորապես կինոարվեստի նորությունները, մասամբ նաև երաժշտական արվեստի հարցերը:

16. «Զահակիր» — ամսագիր, հրատարակում է Փալանջյան ճեմարանը:

17. «Հասկ» — կրոնական ամսագիր, Կիլիկյան կաթողիկոսության պաշտոնական օրգան: Հրատարակվում է Անթիլիասում, որտեղ գտնվում է Կիլիկյան կաթողիկոսությունը:

18. «Զանախեր» — երկշաբաթաթերթ: Հրատարակում է բրիտանական Զանից Միությունը (բողոքականների): Լույս է տեսնում Բեյրութում:

19. «Ավետիֆ» — ամսագիր, հրատարակում են կիրանանի հայ կաթոլիկ շրջանները:

Կիրանանի օրինակը ցույց է տալիս, թե ինչպիսի կարևոր դեր ունի հայ պարբերական մամուլը արտասահմանի հայ գաղութներում:



Մամուլը միշտ կարևոր դեր է խաղացել սփյուռքահայ աշխատավորների կյանքում, հոգևոր թարգմանը հանդիսանալով նրանց խոհերի ու ակնկալությունների և դրա հետ մեկտեղ՝ սփյուռքը հայրենիքին միացնող կամուրջի ամուր սյուներից մեկը: Հետպատերազմյան շրջանում ավելի է բարձրանում առաջադիմական մամուլի դերն ու նշանակությունը: Եվ դա հասկանալի է, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ազգային-ազատագրական պայքարի զարթոնքը, միջազգային բանվորական շարժման աննախընթաց հաջողությունները ընդդեմ նոր պատերազմի, հանուն խաղաղության և ժողովուրդների անվտանգության ծավալված տիտանական պայքարը, Ասիայի և Աֆրիկայի երկրների ու Սովետական Միության միջև ընդլայնվող բարեկամական կապերը և աշխարհում տեղի ունեցող

քաղաքական ու տնտեսական այլևայլ փոփոխությունները իրենց լայն արձագանքն են գտնում առաջադիմական մամուլի էջերում, մամուլ, որը չի կարող հեռու մնալ աշխատավորական լայն մասսաներին հուզող հարցերից, չի կարող չգտնվել ժամանակակից կյանքի խաչմերուկում: Միայն այդ դեպքում նա կարող է օգտվել ժողովրդական լայն աջակցությունից, միայն այդ դեպքում նա կարող է կյանքի իսկական հայելին հանդիսանալ: Հետաքրքրական է նշել, որ այժմ Սովետական Միության սահմաններից դուրս, արտասահմանի ամենատարբեր երկրներում լույս է տեսնում մոտ 90 հայկական թերթ և ամսագիր: Սոֆիայում, Բուխարեստում, Աթենքում, Փարիզում, Ստամբուլում, Բեյրութում, Կահիրեում, Նյու-Յորքում, Չիլագելֆիայում, Բուենոս-Այրեսում և շատ ու շատ այլ քաղաքներում հայ մամուլի համեստ մշակները շարունակում են իրենց դժվարին, բայց շնորհակալ գործը— հայ աշխատավորական մասսաներին հաղորդակից են դարձնում նրանց վերածնված հայրենիքի պատմական նվաճումներին, ժամանակակից մարդկությունը հուզող հրատապ հարցերին: «Հայ թերթին մեծագույն բարիքը պիտի ըլլա անշուշտ, ինչպես ամեն հայ կրնդունի անառարկելի կերպով,— կարդում ենք «Արև» թերթում,— այն հսկայական դերը, որով սփյուռքի հայությունը կկապե իր մայր երակին, իր ամենեն ամբակուռ խարխուխին, իր բոլոր հույզերու և հույսերու աղբյուրին, իր դարավոր երազին և ներկա իրականության՝ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ»¹:

Արտասահմանում ապրող հարյուր հազարավոր հայ աշխատավորներ ուշի ուշով հետևում են իրենց հայրենիքի՝ Սովետական Հայաստանի բազմաբովանդակ կյանքի զարկերակի թևավորվում ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բնագավառում հայ ժողովրդի ձեռք բերած հաջողություններով: Ի՛նչպիսի նոր գործարաններ ու ֆաբրիկաներ են կառուցվում Սովետական Հայաստանում, ինչի՛ վրա են աշխատում սովետահայ գրողները, ի՛նչ նոր երգեր են ստեղծում Հայաստանի կոմպոզիտորները, ի՛նչ բեմադրություններ են

պատրաստում օպերային և դրամատիկական թատրոնները, այս ամենը հավասարապես հետաքրքրում է հայ բանվորներին, դուռադռներին, աշխատավոր ինտելիգենցիային, բոլոր հայրենասերներին: Բայց նրանց հետաքրքրությունների շրջանակները միայն Սովետական Հայաստանով չեն սահմանափակվում: Սփյուռքի հայ աշխատավորները ապրում են բովանդակ Սովետական հայրենիքի տնտեսական և կուլտուրական վերելքով, աշխույժ հետաքրքրություն են ցուցաբերում սովետական եղբայրական ռեսպուբլիկաների կյանքի ամենատարբեր կողմերի նկատմամբ: Սփյուռքահայ առաջադիմական մամուլը օրը օրին այս ամենի մասին գրում է իր էջերում, դառնալով սփյուռքահայության հոգևոր սննդի մշտահորդ աղբյուր:

Սովետական գիտության ու տեխնիկայի նվաճումները մեծ արձագանք գտան արտասահմանի բոլոր գաղթօջախներում: Մամուլը թարգման հանդիսացավ սփյուռքահայ աշխատավորական զանգվածների բուռն խանդավառության: «Սովետական դրոշը կծածանի լուսնի վրա»— գրել է «Մեր նշանաբանն է Հառաջ» թերթը,— ու յուրաքանչյուր մարդ, անպատմելի հույզերով և անսահման հիացումով անգամ մը ևս նայեցավ դեպի սովետներու մեծ երկիրը, որ միայն քառասնամյակի մը ընթացքին, երեկվա հետամնաց Ռուսաստանեն փոխակերպվեցավ մարդկության առաջապահ Սովետական մեծ Միությունը, դառնալով դրոշակակիրը մարդկային ստեղծագործ մտքին ու գիտության վիթխարի նվաճումներուն: Ու բոլորին հետ ու բոլորից առաջ սփյուռքահայ մարդը ևս հպարտությամբ նայեցավ դեպի Մոսկվա ու Երևան, գիտակցելով, որ սովետական այդ հաղթանակը հաղթանակն է նաև իր մայր հայրենիքին, որուն գիտնականները իրենց պատկառելի բաժինն ունին այս մեծ իրագործումին մեջ... Ու մինչ սովետական դրոշը կծածանի լուսնին վրա, ՍՍՌՄ-ի վարչապետ Ն. Խրուշչևը բարձր կրճնի խաղաղության դրոշը Միացյալ Նահանգներու մեջ»¹: Գոհունակությամբ պետք է նշել այն իրողությունը, որ

¹ «Արև», 20 նոյեմբերի, 1961 թ.:

¹ «Մեր նշանաբանն է Հառաջ», 19 սեպտեմբերի, 1959 թ.:

սփյուռքահայ աշխատավորական մասսաները խորապես զգում են Սովետական Միության ժողովուրդների եղբայրական բարեկամության նշանակությունը հայ ժողովրդի համար: Ահա թե ի՞նչ է գրում «Երևան» թերթը. «Սովետական Հայաստանի 40-ամյակը առիթ կընծայի մեզի, որ գնահատենք մեր հայրենիքի սխարագործությունները և ծանոթանանք անոր նվաճումներուն, բարիքներուն ու մշակույթին: Այն, ինչ որ իրագործված է մեր երկրին մեջ ամբողջ 40 տարիներու ընթացքին՝ կմնա միայն հպարտություն: 40-ամյակը շատ կարճ ժամանակամիջոց մըն է մեր պատմության մեջ և մեր ժողովուրդը իր տաղանդին միացնելով իր արյունը, քրտինքը, բոլորանվեր պահանջարկի ոգին, կրցավ իր քարքարոտ հողամասին վրա կերտել տնտեսապես և մշակութապես բարձր կյանք մը»¹:

Չափազանց մեծ է մամուլի դերը հայ կուլտուրայի զարգացման գործում: Գաղութահայ կյանքի յուրահատուկ պայմաններում մամուլը հնարավորություն է ընձեռում իրականացնել մշտական կապեր տարբեր գաղութների միջև: «Հայ մամուլը եղած է նաև գաղութահայության առօրյային հարազատ հայելին, — գրում է «Նոր օր» թերթը: — Անոր էջերուն մեջ արձանագրված են անհատական թե խմբական շարժումներու հաջողությունները և կամ ձախողությունները, ազգային կյանքի առաջընթացը կամ ընկրկումը: Հոն ներկայացված է հին սերունդը իր բարբերով, իր մտահոգություններով և ակնկալություններով: Սերունդներ շարան-շարան եկան ու անցան՝ իրենց անջնջելի ապրումները արձանագրելով մամուլի էջերուն մեջ իբրև ուղեցույց գալիք սերունդներուն: Եվ դեռ հայ մամուլը հանդիսացած է շաղկապը զանազան երկիրներու մեջ ցանուցրելի հայ գաղութներուն: Հեռավոր Հնդկաստանն, Միջին Արևելքն մինչև Միացյալ Նահանգներ հայ կյանքը խոտվող և կամ խինդ ու հպարտություն պատճառող դեպքեր կարձանագրվին մամուլին միջոցով, առանց օրուն արտասահմանի հայր անհաղորդ պիտի մնար մեր մայր Հայրենիքի հրա-

¹ «Երևան», 22 ապրիլի, 1961 թ.:

շալի վերածնունդին ոգևորիչ իրականություն»¹: 1960 թվականին Սովետական Հայաստանը բոլորեց իր գոյության 40 տարին և սփյուռքահայությունը մի առանձին շուքով, մի առանձին խանդավառությամբ տոնեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման պանծալի հոբելյանը: «Հայ ժողովուրդի վերածնունդին և հաղթական առաջընթացին 40-ամյակի տոնակատարությունը եթե ինքնին խանդավառության, հպարտության մեծ առիթ մըն է, եթե 40-ամյա Սովետական Հայաստանի պայծառ իրականությունն ու շքեղ հեռանկարները ոգեշնչումի ազդյուր են բոլոր հայերուն համար, — գրել է այդ օրերին «Մեր նշաբանան է Հառաջ» թերթը, — Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովի ներկայությունը քաղաքամայր Երևանի մեջ նոր փայլ ու տարողություն կընծայի մեր ազգային տոնին, անգամ մը ևս ի լուր բոլորին վկայելով թե՛ հայ ժողովրդի փրկության ու վերածնունդի թվականը՝ նոյեմբերի 29-ը ինքնին ծնունդն է Հոկտեմբերյան մեծ հեղափոխության, պոր իրագործող կոմունիստ կուսակցության լենինյան Կենտրոնական Կոմիտեին առաջին քարտուղարն է, որ այսօր կայացել է Սովետական Հայաստան»²:

Տոնակատարության օրերին չափազանց շնորհակալ աշխատանք կատարեց սփյուռքահայ առաջադիմական մամուլը, ամենալայն կերպով լուսաբանելով Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական նվաճումները:

Առանձին գաղութների մասին խոսելիս մենք չենք տալիս թերթերի ու ամսագրերի մանրամասն բնութագրությունը: Այդ քաջը մասամբ լրացնելու համար լիբանանահայ գաղթօջախին նվիրված բաժնում ուզում ենք համառոտակի բնութագրել մամուլի հիմնական ուղղությունները: Մենք արդեն առիթ ունեցանք նշելու, որ սփյուռքահայ հասարակությունը դասակարգային տեսակետից խիստ շերտավորված է: Միանգամայն սխալ կլիներ պատկերացնել սփյուռքահայությունը առանց դասակարգային ներհակ ուժերի, սոցիալական սուր հակա-

¹ «Նոր օր», 11 հոկտեմբերի, 1960 թ.:

² «Մեր նշանաբան է Հառաջ», 7 մայիսի, 1961 թ.:

սությունների, առանց դասակարգային պայքարի: Դրանով է պայմանավորված հայ քաղաքական մի քանի կուսակցությունների առկայությունը սփյուռքում: Միանգամայն իրավացիորեն «Երևան» թերթը գրում է. «Հայ գործարանատերը իր արարք, հայ, ֆրանսիացի թե ամերիկացի բանվորին կնայինուն աչքով: Աշխատանքի արտադրության ու անոր արդյունքի բաշխումին նույն ազադակող հակասությունը կա նաև հայ բանվորին ու գործարանատիրոջ միջև:

Ուրեմն, ելնելով այս իրողությունեն, կրնանք հաստատել, թե սփյուռքի մեր զանգվածներուն մեջ անհամաձայնություն ազադակող երևույթները ինքնեկ չեն երբեք:

Անհամաձայն ենք իրարու հետ ոչ թե անոր համար, որ հայ ենք, ինչպես կկրկնեն ոմանք մանկամտորեն, այլ տարակարծություններ ունինք անոր համար, որ մեր մոտ ալ տարբեր դասակարգի մարդեր կան, կհետապնդեն տարբեր շահեր»¹:

Հասկանալի է, որ դասակարգային յուրաքանչյուր խմբավորում ունի իր գաղափարախոսությունը, իր դավանանքը, իսկ նրա մամուլը արտահայտում է տվյալ քաղաքական կուսակցության գաղափարախոսությունը: Գաղութահայ քաղաքական կուսակցությունների ու խմբավորումների գործունեությունը անշուշտ առանձին ուսումնասիրության նյութ է, այստեղ մենք խոսում ենք այդ մասին միայն մամուլի տարբեր ուղղությունների առնչությամբ: Այդ տեսանկյունից էլ սփյուռքահայ մամուլը կարելի է բաժանել հետևյալ հիմնական ուղղությունների.

1. Կոմունիստական մամուլ.
2. Հնչակյան մամուլ.
3. Ռամկավար-ազատական կուսակցության մամուլ.
4. Դաշնակցական մամուլ.
5. Չեղոք խմբերի մամուլ:

Սփյուռքահայ կոմունիստական թերթերը, շարունակելով կոմունիստական մամուլի լավագույն տրադիցիաները, հաղ-

¹ «Երևան», 14 ապրիլի, 1961 թ.:

թահարելով տնտեսական ու քաղաքական բնույթի բազմաթիվ դժվարություններ, հաջողությամբ կատարում են առաջադիմական մամուլի իրենց պատվավոր դերը: Նրանք անվերապահորեն կանգնած են Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերում և հենց այդ պատճառով ամենից ավելի են սիրված սփյուռքահայ աշխատավորների կողմից: Կոմունիստական հայ մամուլի օրգանները ամենից ավելի են հայաժվում կապիտալիստական կառավարող շրջանների կողմից, ամենից ավելի են ենթակա պետական օրգանների կողմից հարուցվող զանազան դժվարություններին ու արգելքներին: Հետաքրքրական է նշել, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում Ֆրանսիայում, Մերձավոր ու Միջին Արևելքի, Լատինական Ամերիկայի և այլ երկրներում եղել են պետական օրգանների կողմից հայ կոմունիստական թերթերի փակման բազմաթիվ զեպքեր, մինչդեռ այլ ուղղություններին պատկանող մյուս թերթերի փակման զեպքեր գրեթե չեն եղել: Հալածանքների ու արգելքների պատճառները միշտ նույնն են. կոմունիստական մամուլի օրգանների հետևողական, անհասանջ պայքարը հանուն աշխատավորների դեմոկրատական իրավունքների, հանուն խաղաղության ու ժողովուրդների բարեկամության: Պատճառներից մեկն էլ այն է, որ կոմունիստական մամուլի օրգանները լայնորեն լուսաբանում են Սովետական Հայաստանի նվաճումները, հետևողականորեն պաշտպանում են նրա շահերը: Սակայն սփյուռքում միայն կոմունիստական մամուլը չէ որ կանգնած է հայրենասիրական դիրքերի վրա: Հնչակյանների և ռամկավարների մամուլը ընդհանուր առմամբ ճիշտ է լուսաբանում Սովետական Հայաստանի այժմյան կյանքը, հանդես է գալիս հանուն խաղաղության, պաշքարում է դաշնակցության դեմ: Այդ գործունեությունը արժանի է գնահատման ու խրախուսանքի: Շոշափելով այդ կարևոր հարցը, ընկ. Յա. Զարոբյանը Հայաստանի Կոմունիստական պարտիայի 22-րդ համագումարում ասաց. «Արտասահմանում կոմունիստներից բացի, հայրենասիրական օգտակար աշխատանք են կատարում նաև մի քանի այլ առաջադիմական կազմակերպություններ: Մենք պետք է պարզ և որոշակի հայտարարենք

մեր վերաբերմունքը նրանց նկատմամբ: Այդ բխում է Կոմունիստական պարտիայի քաղաքականությունից, որի նպատակն է ամրապնդել կապերն այն բոլոր առաջադիմական կազմակերպությունների հետ, որոնք պայքարում են խաղաղության համար, ռեակցիայի, իմպերիալիզմի և պատերազմի դեմ, բոլոր առաջադիմական ուժերի միասնական ճակատ ստեղծելու համար: Ներկայումս, օրինակ, հնչակյան պարտիան վարում է Սովետական Հայաստանին աջակցելու գիծ, պրոպագանդում է մեր ռեսպուբլիկայի նվաճումները, պայքար է մղում դաշնակ թափթիուկների դեմ, հանդես է գալիս իմպերիալիզմի դեմ, հանուն խաղաղության: Մոտավորապես նույնպիսի դիրքերումն է կանգնած ռամկավարների պարտիան»¹:

Հիտլերյան Գերմանիայի և իմպերիալիստական Ճապոնիայի դեմ տարած պատմական հաղթանակը, մեր երկրի միջազգային հեղինակության աննախընթաց աճը, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծումը, Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի զարթոնքը, նոր պատերազմի վտանգի դեմ ուղղված խաղաղության կազմակերպված ճակատի ստեղծումը, այս բոլոր պատմական իրադարձությունները լուրջ խնդրումներ են ստեղծել արտասահմանի հայ գաղութներում: Այդ իմաստով հետպատերազմյան ժամանակաշրջանը գաղութահայ իրականության մեջ նշանավորվել է գաղութահայ մասսաների ավելի վճռական օրինետացիայով դեպի Սովետական Հայաստանը: Տեղի է ունեցել, և այդ պրոցեսը շարունակվում է նաև այժմ, սփյուռքահայ բոլոր հայրենասիրական ուժերի հետագա համախմբում Սովետական Հայաստանի շուրջը: Այդպիսի պայմաններում, սփյուռքահայ մամուլի մի շարք օրգաններ, շարունակելով մնալ որոշակի դասակարգային խմբերի ու խմբավորումների ու դրանց շահերն արտահայտող քաղաքական կուսակցությունների գաղափարական դիրքերի

¹ Յա. Զարոյան, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու ղեկուցումը Հայաստանի Կոմպարտիայի 22-րդ համագումարին, Հայպետհրատ, 1961 թ., էջ 123:

վրա, հանդես են գալիս հայրենասիրական ուժերի ճակատում: «Ռամ. Ազատ. կուսակցությունը,— գրում է «Պայքար» թերթը,— իր ծրագրով հռչակեց լուսավոր ճշմարտություն մը, որ հավատքի խարխախու գործունեության փարոս դարձավ արևմտահայության համար: Ան հայտարարեց, որպես անժխտելի, թանձրացյալ իրողություն, թե նորաստեղծ Խորհրդային Հայաստանը, իբրև հայրենիք ու պետություն, միակ երաշխիքն է հայ ազգության ֆիզիկական գոյատևումին... Ուրեմն ամեն հայրենասեր հայու նվիրական պարտքն է եղբայրական նվիրումով օգնել, որ վերաշինվի, բարգավաճի, առաջադիմի Հայաստանը տնտեսապես, ճարտարվեստորեն, որպեսզի նախ ապահովի հայության գոյատևումը և հետո՝ իրագործի իրեն վիճակված առաքելությունը»¹: Սովետական Հայաստանի 40-ամյակի օրերին հնչակյանների օրգան «Արարատ» թերթը գրել է. «1920 թվականի նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի ազգային ու պետական վերածնունդը խորհրդանշող պատմական անկյունաքարն է: Խոսել մայր Հայրենիքի 40-ամյակին մասին, կնշանակի պատմականը ընել ազատագրված այդ հողին վրա 40 երկար տարիներն ի վեր տարված ստեղծագործական, հերոսական աշխատանքին: Եվ այսօր, քառասունամյա մեր մայր հայրենիքին՝ ժպտուն դեմքը դիտելով, մեր գլխարկները վար կառնենք պահ մը, մայր երկրի մեր եղբայրներուն ու քույրերուն առջև»²:

Վերը ասածներից ու բերած փաստերից բնավ չի հետևում, որ վերանում են գաղափարական խրամատներն ու տարակարծությունները մեր և գաղութահայ այդ կուսակցությունների միջև: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր ծրագիրը, իր նպատակները, իր գործելակերպը: Հենց այդ է ընդգծվում Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի 22-րդ համագումարին տված հաշվետվության մեջ: «Այդ պարտիաների նկատմամբ մեր դիրքերը միանգամայն պարզ են: Մենք մտադիր չենք ներանց գաղափարական որևէ զիջում անել, բայց մենք ողջու-

¹ «Պայքար», 6 օգոստոսի, 1958 թ.:

² «Արարատ», 30 նոյեմբերի, 1960 թ.:



նում ենք նրանց հայրենասիրական գործունեությունը կապիտալիստական երկրների հայկական գաղութների պայմաններում»¹։

Հնչակյաններն ու ռամկավարներն ունեն իրենց տեսակետներն ու կարծիքները հայ ժողովրդի պատմության, հայ ազգային-ազատագրական շարժումների, դասակարգային պայքարի պատմության և այլ հարցերի վերաբերյալ, որ մենք չենք բաժանում։ Հայտնի է, օրինակ, որ ռամկավարների կուսակցությունը հենվում է հայ հարուստ վերնախավի ու նրանից ելած մտավորականության վրա։ Նա չի ընդունում դասակարգային պայքարը հայ հասարակության մեջ, պաշտպանում է մասնավոր սեփականությունը և «անձնական նախաձեռնությունը»։ Ինքնին հասկանալի է, որ այս ամենը իր արտացոլումն է գտնում ռամկավար-ազատական կուսակցության մամուլի էջերում։

Ինչնակցական մամուլի վրա մենք մանրամասն կանգ չենք առնում։ Նրա բովանդակությունն ու ուղղությունը հայտնի են։ Կապիտալիստական դեղին մամուլի ոգով նա ամեն օր ստեր ու հերյուրանքներ է հորինում ընդդեմ Սովետական Միության և Սովետական Հայաստանի, իր գոյությունը պահում է իմպերիալիստական հետախուզությունների նետած գումարներով։ Հայկական գաղութներում այդ մամուլը փորձում է ջլատել հայ առաջադիմական ճակատի ուժերը և ղեկավար գիրքեր գրավել հայկական դպրոցներում, կուլտուրական-բարեգործական հաստատություններում և եկեղեցական թեմերում։ Ինչ վերաբերում է չեղոք խավերի մամուլի օրգաններին, ապա պրանց թիվը համեմատաբար փոքր է։ Այդ կարգի թերթերն ու ամսագրերը, ակտիվորեն շմասնակցելով գաղութահայ քաղաքական պայքարին, այնուամենայնիվ գերազանցապես կանգնած են հայրենասիրական դիրքերի վրա։

¹ Ցու. Ջառոյան, Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի Կոմպարտիայի 22-րդ համագումարին, Հայգետհրատ, 1961 թ., էջ 123։

Սովետական Միության և արաբական երկրների միջև ստեղծված բարեկամության, նրանց միջև տնտեսական, կուլտուրական, գիտական, սպորտային կապերի ընդլայնման ու ամրապնդման պայմաններում տարեցտարի ընդլայնվում են Սովետական Հայաստանի և լիբանանահայ գաղութի մշակութային կապերը։ Սովետական Միության աճող հեղինակությունը ամբողջ աշխարհում, նրա անշահախնդիր օգնությունն ու աջակցությունը իմպերիալիզմի դեմ պայքարող Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդներին, նրա անսկուն և աննահանջ պայքարը հանուն խաղաղության. ահա գլխավոր դրավականը սփյուռքահայ գաղութների հետ Սովետական Հայաստանի կապերի ընդլայնման ու սերտացման։ Հետպատերազմյան շրջանում հարյուրավոր լիբանանցի հայ տուրիստներ այցելել են Սովետական Հայաստան։ Փաղութի շատ հասարակական գործիչներ, գրողներ, ժուռնալիստներ, եկեղեցական գործիչներ եկել են Հայաստան, սեփական աչքերով տեսել հարազատ ժողովրդի ստեղծագործական աշխատանքը, Սովետական Հայրենիքի պատմական նվաճումները, նրա առաջընթացը դեպի կոմունիզմ։

Վերջին տարիների ընթացքում Սովետական Հայաստանից զգալի թվով տուրիստներ այցելել են Լիբանան, ծանոթացել երկրի տեսարժան վայրերին, գաղութի հայկական առաջադիմական կազմակերպությունների գործունեությանը, հայ աշխատավորական խավերի կյանքին։ Լիբանանում, ինչպես այդ լինում է մյուս գաղութներում, նրանք արժանացել են իրենց եղբայրների ջերմ ընդունելությանը։

1959 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում Լիբանան և Միացյալ Արաբական Ռեպուբլիկա այցելեց Հայկական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլը։ Անսամբլի ելույթները ամենուրեք առաջացրին անհկարագրելի խանդավառություն, դրանք ալեկոծեցին հայ աշխատավորական զանգվածների հայրենասիրական զգացմունքները, ավելի ամուր թելերով կապեցին նրանց մայր Հայ-

րենիքի հետ: Արտասահմանի հայ առաջադիմական մամուլի էջերում երգի և պարի անսամբլի ելույթների առթիվ երկու ամիս շարունակ հրապարակվում էին հաղորդումներ, կարծիքներ ու հողվածներ: Անսամբլի ելույթներին լայնորեն արձագանքում էր արարական մամուլը:

Սովետահայ արվեստը, ձևի ու բովանդակության իր կուսներգաշնակությունը, իր սեպիղմով ու ճշմարտացիությամբ խոր ապավորություն թողեց հայ և արաբ հանդիսատեսի վրա:

Անսամբլի ելույթները նորոգեցին և նոր թափ ու ավյուն ավեցին սփյուռքահայ աշխատավորների ու առաջադեմ մտավորականության հայրենասիրական ապրումներին: Երկու ամիս շարունակ հայ մամուլը այդ համերգները դիտում էր որպես «հայ մշակույթի փառատուն»: «Աչքը լույս լիբանանահայության», «Մովածավալ բազմություն օգանալակայանին մեջ ուրախության արցունքներով, ծափերով և կարոտակեղ սղջւյններով դիմավորեց երգի ու պարի անսամբլը»: «Հայկական ժողովրդական երգի ու պարի վաստակավոր անսամբլի հույսի և խոյ սիրո անմոռանալի երեկույթը Յունեսկոյի շքեղ սրահին մեջ», «Բազմահազար լիբանանահայեր արցունքով բաժանվեցին երգի ու պարի անսամբլի թանկագին հարազատներին» — ահա թերթերի բազմաթիվ խորագրերից մի քանիսը: Թերթերը, հայ և արարական, գրել են, որ 1700 տեղանոց «Յունեսկոյի» սրահը, որ ամենամեծն է Մերձավոր Արևելքում, միշտ լիկուլեցուն էր 2000—2500 հանդիսականներով: Այդպիսի բան դահլիճը իր գոյության ընթացքում չէր տեսել: Եվ այդպես, 23 օր շարունակ: «Իժվար է բառերով վերարտադրել այն, ինչ որ տեղի ունեցավ 13 դեկտ. 1959-ին (հրաժեշտի համերգն էր—Ս. Գ.) Յունեսկոյի սրահին մեջ, — գրում է «Մեր նշանաբանն է Հառաջ» թերթը: — Յուրաքանչյուր կատարում, ըլլա սն երգ կամ պար, ալեկոծեց մեր հոգիները, տեղափոխեց մեզ հայրենիք, Արաղածի հայրենի գեփյուղը շույն մեր դեմքերը, շրջեցանք Երևանի դիշերներու աստղածորան լույսերուն տակ, խմեցինք հայրենի լեռներու սառնորակ աղբյուրներեն ու վերջապես ասյրեցանք հոգեկան հղորությունն

ու անպարտելիությունը հայրենիքին ու անոր կենսուրախ երիտասարդության»¹:

Սփյուռքահայությունը շատ զգայուն է ու սրտին մոտ է ընդունում այն ամենը, ինչ կապված է Սովետական Հայաստանի պետականության հետ, գնահատում, սիրում ու փառաբանում է այն ամենը, ինչով Սովետական Հայաստանը ներկայանում է համաշխարհային հասարակայնության առաջ ծիշտ է նկատում կոմսյոզիտոր Աշոտ Պատմագրյանը, երբ գրում է, որ բացի հայրենիքի կարոտից կար նաև մեկ ուրիշ պարագա, «որը եթե անտեսվի, մեծապես ստորագնահատած, արժեզրկած պիտի լինենք այդ ցույցերի խորքն ու տարողությունը: Դա հայ պետականության ներկայության զգացումն էր և նրա այրած հպարտանքը»²: Այս նույն գաղափարը «Արև» թերթում արտահայտել է էդմոն Կոտալազյանը, նշելով, որ «կաթնահամ իրենց երգերուն ունկնդրության մեջ մենք հայրենիքով է որ կսնանինք, հայրենիքով կուռճանանք և կդառնանք անպարտելի՝ ալլասերումի ամեն հոսանքի ղեմ: Հայրենիքի նվաճումը կըլլա նաև հարազատորեն մերը և օտարությանը ցրտահար մեր հոգիները կնորանան հայրենիքի հետ»³:

¹ «Մեր նշանաբանն է Հառաջ», 20 դեկտեմբերի, 1959 թ.:

² «Արարատ», 16 դեկտեմբերի, 1959 թ.:

³ «Արև», 3 հոյեմբերի, 1959 թ.:





ԿԻՊՐՈՍ ԿՂՋԻ

Կիպրոսահայ գաղութը սկզբնավորվել է 9-րդ դարում: Միջին դարերում, հատկապես Կիլիկյան թագավորության շրջանում, հայերի ազդեցությունը կղզու ընդհանուր կյանքում ավելի ուժեղանում է: Պատմական տարբեր ժամանակներում Կիպրոս կղզին են այցելել հայ թագավորներ ու իշխաններ: Հանրահայտ են Կիլիկյան վերջին թագավորների ընտանեկան կապերը Ֆրանսիայի Լուսինյան արքայական տան հետ: Ըստ պատմական վավերագրերի, 12-րդ դարում Կիպրոսում արդեն գոյություն ունի կաղմակերպված հայկական համայնք: «Հայոց վիճակը կրարեփոխվի և անոնց հարզն ու վարկը կրարձրանա, երբ Կիլիկիո հայ թագավորությունը կղաշնակցի Կիպրոսի Փրնակ (Լուզինյան) իշխանության հետ, այնպես որ 1399 թ. նոյեմբերի 11-ին Տարսոնի եպիսկոպոս Մատթեոս հայ ծեսով կօժն Հովհաննես Ա. (Յանոս) թագավորը»¹: Վ. Ռեյնոլդսը մի շարք պատմական փաստեր է բերում Կիպրոսի հետ Հայաստանի տնտեսական ու քաղաքական կապերի վերաբերյալ, կղզում հաստատված հայերի քանակի ու զբաղեցրած դիրքի մասին²:

Այդ շրջանում Կիպրոսում կային մի քանի հայկական գյուղեր: Դրանցից մեկը իր անունը պահպանել է մինչև այժմ և

կոչվում է «Արմենիսորի» կամ հայդյուղ: Սակայն նոր ժամանակներում կիպրոսահայ վաղեմի գաղութից գրեթե ոչինչ չի մնացել: Դարերի ընթացքում կղզու հայ բնակչությունը ձուլվել է տեղի բնակչությանը կամ փոխադրվել այլ վայրեր: Կղզու այժմյան հայերը այստեղ բնակություն են հաստատել հիմնականում 1895—1896 թվականների իրադարձություններից և առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակամիջոցում:

Կիպրոսահայ ժամանակակից գաղութը համեմատաբար փոքրաթիվ է, այդտեղ ապրում են 4000 հայեր, գերազանցապես Նիկոսիա և Լաոնազա քաղաքներում: Նիկոսիայից ոչ հեռու գտնվում է Մելքոնյան կրթական հաստատությունը (երկսեռ) 18 ուսուցիչներով և 220 սովորողներով: Այս դպրոցի նյութական ծախսերը հոգում է Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը: Դա միջնակարգ դպրոց է, մանկավարժական, գիտական և առևտրական բաժիններով: Վերջին տասնամյակների ընթացքում Միլիթիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Թուրքիայից, Հունաստանից և այլ երկրներից մոտ 400 երիտասարդներ ավարտել են Մելքոնյան կրթական հաստատությունը և վերադարձել իրենց երկրները: Բացի դրանից, ներկայումս գործում է Ազգային Ուղղության—Մելքոնյան վարժարանը, որտեղ սովորում են 300 երեխաներ: Վարժարաններ (նախակրթարաններ) կան նաև Լաոնազայում, Լիմասոլում և Փամակուստայում՝ փոքրաթիվ աշակերտներով: Հայկական մյուս հաստատություններից պետք է հիշատակել ՀԲԸՄ մասնաճյուղը, Նիկոսիայի և Լաոնազայի ակումբները և Ազգային բուժարանը: Գաղութում պահպանվում են հին հայկական ձեռագրերի (չուրջ 67) և գեղարվեստական առարկաների հավաքածուներ¹:

1960 թվականի օգոստոսին Կիպրոսը հռչակվեց որպես անկախ ռեսպուբլիկա: Առանց կանգ առնելու հույն-թուրքական և հույն-անգլիական հակասությունների վրա, որոնք

¹ Վ. Ռեյնոլդս, «Հայ Կիպրոս», Անթիլիաս-Լիբանան, 1936 թ.:

² Նույն տեղում, էջ 17—45:

¹ Ղ. Չեռեյան, «Հիշատակարան կիպրահայ գաղութի», Բելրութ, 1955 թ., էջ 79—87:

այժմ էլ շեն հաղթահարված, նշենք, որ այդ նույն շրջանում տեղի ունեցավ օրենսդիր ժողովի անդամների ընտրություն, կազմվեց այսպես կոչված Կիպրոսի Համայնքային Տուն, որում ներկայացված էին հույները, թուրքերը, կաթոլիկները, մարոնիթները և հայերը ըստ բնակչության քանակի: Վերջին երեքը Կիպրոսի Համայնքային Տան կազմում առաջադրել էին մեկական ներկայացուցիչ: Այս ընտրությունների ընթացքում դաշնակցությունը պարտություն կրեց, ստանալով ընդամենը 821 ձայն:

Համայնքային Տան կազմում ընտրվեց ռամկավարների ներկայացուցիչ, Մեկրոնյան դպրոցի ատենապետ Պերճ Թիլեպյանը, որը ստացել էր 1321 ձայն: Դաշնակցության ներկայացուցչի պարտությունը խոստում և հատկանշական է, եթե նկատի ունենանք, որ Կիպրոսի հայոց թեմը գտնվում է դաշնակների վերահսկողության տակ:

Անդրադառնալով այդ ընտրությունների արդյունքներին՝ «Պայքար» թերթը գրել է. «Ո՛չ խեղաթյուրումներն ու ստահոգ վերադրումները, ո՛չ ալ իրենց Անթիլիասյան առաջնորդարանի դիրքով ու վարկով կիրարկված ճնշումները կրցան փրկել դաշնակցության թեկնածուն ամոթալի պարտությունից մը, որովհետև կառավարությունը, զորք ու ոստիկան՝ որդեգրեցին ամբողջապես անկողմնակալ, ձեռնպահ դիրք մը, և Նիկոսիո, Լաոնազայի, Յամագուստայի և Լիմասոլի հայերը ազատորեն տվին քվեներն՝ իրենց նախասիրած թեկնածուներուն: Եվ անոնց դատավճիռը եղավ պերճախոս ու տիրական— ճշմարիտ, փառավոր հաղթանակ մը համայնքի հարազատ ներկայացուցչին, որ նաև անհերքելի վկայություն մը կհանդիսանա մյուս գաղութներուն մեջ ևս, հայրենասեր ու հայրենադրոժ սեմերու հարաբերական արժեքին ու զորություն մասին»¹:

Կիպրոսի եկեղեցական թեմը ըստ պատմական տրադիցիայի ենթարկվում է Անթիլիասի Կիլիկյան կաթողիկոսությանը, որն այժմ գտնվում է դաշնակների վերահսկողության տակ: Այդպիսի պայմաններում Կիպրոսի դաշնակցական

տարրերը փորձում են, օգտագործելով եկեղեցին, ապահովել իրենց ազդեցությունը գաղութում: 1959 թվականի մայիսից Նիկոսիայում հրատարակվում է «Հենարան» շաբաթաթերթը (աբսոլյուտ Ս. Կեսեյան): Դատելով թերթում հրատարակվող նյութերից՝ կիպրոսահայերի շրջանում տարբեր ուղղությունների միջև տեղի է ունենում ներքին պայքար: «Հենարանը»-ը արտահայտում է ռամկավարների և Բարեգործական Միության հետ կապված շրջանների տեսակետը: Կիպրոսի հայ գաղութում դրությունը սրվեց նաև կղզում ծավալված իրագործությունների (Կիպրոսին անկախություն տալու պահանջի) կապակցությամբ, որոնք չէին կարող չշոշափել ազգային փոքրամասնությունների շահերը: «Հենարան» թերթը քննադատում է դաշնակների ձեռքում գտնվող այսպես կոչված «ազգային իշխանություն» դիրքը, մեղադրելով նրան կամայականության և գաղութի լայն շրջանների իրավունքների ոտնահարման մեջ: «Կերևի թե իր ընթացքն ու վերաբերումը բավարար վստահություն չի ներշնչեք ժողովուրդին»¹— գրում է թերթը: Թերթի կարծիքով Ազգային իշխանության ներկա կազմը 1955 թվականին ընտրվել է ոչ իսկական ժողովրդական ազատ ընտրությունների պայմաններում, այլ նշանակվել է առանց հաշվի առնելու ժողովրդի կարծիքը: Դատելով թերթի հաղորդումներից, որոշ թվով հայեր թողնում են կղզին և բնակություն են հաստատում Անգլիայում և այլ երկրներում: «Պատմության ընթացքին,— գրում է թերթը,— Կիպրոս միշտ ապաստանավայր եղած էր հանգիստը և ապահովությունը կորսնցնող հայերուն համար: Յավալի դեպքերին վերջ և անոնց հետևանքով Կիպրոսն ալ ուրիշ տեղեր հրաժարու շարժում մը ծայր տված է»²: Կիպրոսում ստեղծված քաղաքական կացության անշուքությամբ անհանգիստ վիճակ ստեղծվեց նաև հայկական շրջաններում: Թերթը հույս էր հայտնում, որ «կղզին տիրապետելու պատրաստվողները... մեզի կուտան քաղաքացիական և համայնքային այն իրավունքները, որոնք ընկալվալ և նվիրա-

¹ «Պայքար», 18 օգոստոսի, 1960 թ.:

¹ «Հենարան», 8 օգոստոսի, 1959 թ.:

² «Հենարան», 26 օգոստոսի, 1959 թ.:

գործյալ իրավունքներեն են արդեն: Եվ այդ իրավունքները ուրիշ բան չեն, եթե ոչ այս երկրին մեջ մեր բնակությունը և աշխատանքը անխափան շարունակելու, մեր ազգությունն ու շնչուն, մեր մշակույթն ու ավանդությունները անարգել պահելու ազատության հետ, հանրապետական Կիպրոսի հառաջադիմության և բարգավաճման մեջ շինարար աշխատանքի մեր պատվարներ բաժինը ունենալու կարելիությունները»¹:

Շոշափելով հայ գաղութի քաղաքական վիճակը, թերթը մի այլ համարում գրում է. «Այո, իմացած ենք, որ սահմանադրությամբ ոչ-հույն և ոչ-թուրք համայնքներուն ալ մարդկային իրավունք շնորհված է: Այսինքն, ընդունած են, որ հայերը մարդեր են և մարդկային իրավունքներ ունենալու են: Շնորհակալ ենք: Միայն թե ընդունելու են, որ հայն ալ իբրև մարդունի իր մարդկային փորձառությունները, որոնք, կարծես, կզգացնեն իրեն թե Կիպրոս այլևս հայուն համար բաղձալի վայր մը չէ և կամ ավելի ճիշտը, ինքը այլևս կրնա բաղձալի շնկատվիլ: Եվ ապահովաբար այդ զգացումին հետևանքն է կիպրահայոց արտագաղթի շարժումը»²:

Կիպրոսահայ գաղութի վիճակի մասին տեղեկություններ է տալիս Ստամբուլի «Ժամանակ» թերթը: Թերթի հաղորդմամբ Կիպրոսից շարունակվում է արտագաղթը, որը «թեև դանդաղ, բայց հարատևորեն կշարունակվի: Մարդիկ գլխավորաբար Անգլիա կերթան իրենց և իրենց ընտանիքին ապահովության և ապրուստի համար: Ասկե քանի մը տարի վերջ կիպրոսահայության ներկա թիվը պիտի մնա՝ արդյոք, շատ տարակուսելի է: Փոքրամասնություն ենք, շուրջ 3500՝ 550 հազարին մեջ, որուն շորս հինգերորդը հույն, մեկ հինգերորդն ալ թուրք է»³:

Կիպրոսի հայերը աշխույժ հետաքրքրություն են ցուցաբերում Սովետական Հայաստանի նկատմամբ: 1959 թվականի

հուլիսին կիպրոսաբնակ Միհրան Մահակյանը և Մանուկ Մանկալճյանը որպես տուրիստներ այցելեցին Հայաստան: «Հենարան» թերթի վկայությամբ այդ երկուսի բնակարանները «շաբաթներն ի վեր ամեն զիշեր կլեցվին ու կպարպվին հայրենակարոտ ազգայիններու բազմություններով»:



¹ «Հենարան», 17 մայիսի, 1959 թ.:

² «Հենարան», 1 հուլիսի, 1960 թ.:

³ «Ժամանակ», 11 ապրիլի, 1960 թ.:



ՀՆԴԿԱՍՏԱՆ

Անցյալում բավականին ծաղկուն հնդկահայ գաղութը, որ երկար տարիներ իրենից ներկայացնում էր հայ մշակույթի առաջնակարգ օջախներից մեկը, այժմ կորցրել է իր այդ դիրքն ու նշանակությունը: Շատ հնուց են գալիս հայ-հնդկական կապերը: Հին է նաև հնդկահայ գաղութը: Հայտնի է, որ 16-րդ դարի 60-ական թվականներին Ակրաջում, իսկ այնուհետև Սուրաթում, Բոմբեյում, Կահորում, Գնլիում, Հայդարաբադում, Մադրասում, Կալկաթայում, Ջինսուրաթում, Գակկայում հայ գաղութներ են հիմնվում: Հայտնի է նաև այն երեկի դիրքը, որ հայերը երկար ժամանակ գրավել են երկրի առևտրական կյանքում: Այստեղ է, որ 1794 թվականին լույս է տեսել հայկական առաջին տպագիր պարբերաթերթը՝ «Ազդարար»-ը: Այժմ 380 միլիոն բնակչություն ունեցող այս երկրում ապրում են մի բուռ հայեր: Հայերի ընդհանուր թիվը կազմում է մոտ 1500 մարդ: Նրանք հիմնականում ապրում են Կալկաթայում: Միայն մի քանի տասնյակ հայեր ապրում են Բոմբեյում և Մադրասում: Հնդկաստանի հայ բնակիչներից շատերը տեղափոխվել են (գլխավորապես տնտեսական շարժառիթներով) Բիրմա, Սիամ, Ինդոնեզիա, Ավստրալիա: Այժմ նույնպես տեղի է ունենում գաղութի բնակչության նվազում:

Հնդկական իշխանությունների կողմից սահմանված կարգի համաձայն Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից և առհասարակ արտասահմանից Հնդկաստան ժամանող հայ երիտա-

սարդները, որոնք Հնդկաստան են գալիս ուսանելու նպատակով, ուսումն ավարտելուց հետո պարտավոր են վերադառնալ իրենց երկրները: Կալկաթայում այժմ կա երկու դպրոց՝ Հայոց մարդասիրական ճեմարանը և Գալիթյան օրիորդաց դպրոցը (այժմ միացված են): Երկուսը միասին վերցրած երբեմն դրանց անվանում են կոլեջ: Դրանցից առաջինը հիմնվել է 1821 թվականին, երկրորդը՝ 1922 թվականին: 1949 թվականից պարապմունքները երկու դպրոցներում տեղի են ունենում միասին: Ուսման տևողությունը 10 տարի է, աշակերտների ընդհանուր թիվը՝ 125 մարդ: Գալիթյան օրիորդաց դպրոցին կից գործում է նաև մանկապարտեզ: Ուսուցումը տարվում է անգլերեն: Դրա հետ միասին խնամքով դասավանդվում են մայրենի լեզու և հայ ժողովրդի պատմություն: Հայկական կոլեջը պանսիոնատի բնույթ ունի: Աշակերտները ապահովվում են հագուստով և սնունդով, ապրում են դպրոցին կից շենքում: Ուսուցումը վճարովի է: Ուսման վարձից ազատվում են միայն ծայրահեղ աղքատ ընտանիքների աշակերտները:

Գաղութն ունի սպորտային փոքր ակումբ: Ակումբի անդամ հայ երիտասարդները երբեմն մասնակցում են Կալկաթա քաղաքի և նահանգի սպորտային մրցություններին:

1948 թվականին ստեղծվել է 5 հոգուց բաղկացած Հայ կանանց բարեգործական միություն, որի նպատակն է օգնել երեխաներին, ինչպես նաև գաղութի հիվանդ և նյութական օժանդակության կարիք ունեցող մարդկանց:

Շնորհակալ աշխատանք է կատարում Հայկադյան գեղարվեստական միությունը, որ ժամանակ առ ժամանակ կազմակերպում է գեղարվեստական երեկոներ, երաժշտական հանդեսներ: 1959 թվականի սեպտեմբերին այդ միության ջանքերով Հայոց մարդասիրական ճեմարանի մեջ կազմակերպվեց գեղարվեստական երեկո: Հայ երաժշտությունը օտարների ծանոթացնելու նպատակով միությունը հրավիրել էր հնդկական հասարակայնության ներկայացուցիչներին, ինչպես նաև սովետական, ամերիկյան, ֆրանսիական, եգիպտական և այլ երկրների հյուպատոսներին: 32 հոգուց բաղկացած երգչախումբը Ասատուր Կյուպելյանի ղեկավարությամբ կատարել է

հայկական ժողովրդական քառաձայն երգեր, ցուցադրվել են գեղարվեստական ինքնագործունեության նմուշներ:

«Հայկազյան գեղարվեստական միությունը, — գրում է «Արարապ» թերթի կալկաթայի թղթակիցը, — որ պարագաներու բերումով ժամանակն մը ի վեր անկազմակերպ վիճակ մը կը ներկայացնեն, այժմ վերակազմակերպվելով՝ իր շուրջը համախմբած է քաղաքիս հայ երիտասարդ ուժերը, որոնք անվերապահորեն և հայու համառությունը կաշխատին վարչության և մշակութային հանձնախումբի հետ համագործակցարար ստեղծել շարժում մը, որ մեր կարծիքով մանավանդ ազգ-մշակութային տեսակետով կրնա մեծ դեր խաղալ կալկաթահայության կյանքին մեջ:

Հայկական գեղարվեստական միության գլխավոր նպատակն է ծանոթացնել հայ համայնքին և հնդիկ ժողովրդին մեր պատմությունը, գրականությունն ու արվեստները, ինչպես նաև վերածնված հայրենիքի մշակութային բարգավաճման ներկան»¹:

Նույն միության նախաձեռնությամբ ստեղծվել է փոքր գրադարան և հայոց լեզվի ու գրականության խմբակ:

1950 թվականից սկսած Կալկաթայում լույս էր տեսնում «Նոր ազդարար» գրական հանդեսը (տարեկան 4 համար): Սովետական Հայաստանի կյանքից հանդեսում հրատարակվել են գլխավորապես մշակութային բնույթի նյութեր: Հետադարձում նյութական դժվարությունների պատճառով փակվել է: Որոշ ժամանակ հրատարակվել է «Նոր ազդարար» շաբաթաթերթը, որը ըստ մեզ հասած բանավոր տեղեկությունների՝ նույնպես փակվել է:

Հայ գաղութի կյանքը կարգավորվում է ներքին կանոնադրությամբ, որ հնդկական իշխանությունների կողմից հաստատվել է դեռևս 1888 թվականին: Համաձայն այդ կանոնադրության՝ ղեկավար կազմակերպություն է համարվում եկեղեցական խորհուրդը, բաղկացած 11 անդամներից: Որևէ հայկական կազմակերպություն ստեղծելու ղեկավարում պահանջվում

է, որ հնդկական իշխանությունները գրանցեն ու վավերացնեն այն: Եկեղեցական խորհրդի կազմում են գաղութի հարուստ և ազդեցիկ քաղաքացիները: Նախագահն է Գ. Արադունը, որ ճանաչված է որպես գործարար շրջանների ներկայացուցիչ: Նա շեղակի և ջուրի արտահանման ընկերության տնօրեն է: Խորհրդի կազմում են Տ. Ալեքսիս, Պ. Բազելը, Մ. Մարգարը, որոնք նույնպես խոշոր հարուստներ են: Եկեղեցու ձեռքում են կենտրոնացված զգալի թվով շենքեր, որոնք տրված են վարձակալության, ինչպես նաև պետական արժեթղթեր:

Հայերից շատերը ազդեցիկ դեր ունեն կտորեղենի, բամբակի, դոճախեթի արտահանման ասպարեզում: Կան նաև տներ, կահկարասիներ, սառցարաններ, էլեկտրական սարքավորումներ վարձակալության տվող ընկերությունների տնօրեններ, հյուրանոցների տերեր և այլն: Որոշ թվով հայեր աշխատում են տրանսպորտում որպես ծառայողներ:

Չնայած հնդկահայ գաղութի մշակութային կապերը Սովետական Հայաստանի հետ համեմատաբար թույլ են, սակայն այդ կապերն ընդլայնելու ձգտումը այստեղ, ինչպես մյուս գաղութներում, ուժեղ է: Սովետական Հայաստանից Հնդկաստան ժամանած այցելուները միշտ արժանանում են ջերմ ընդունելության: Վերջին տարիների ընթացքում հնդկահայ գաղութի մի քանի ներկայացուցիչներ այցելել են Հայաստան: Նրանք հայրենիքից վերադարձել են ամենավառ տպավորություններով:

Հնդկահայ գաղութի կյանքում հետաքրքիր իրադարձություն էր ՀՍՄԻ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի և կոմպոզիտոր Ա. Բարաշանյանի այցելությունները, որոնք տեղի ունեցան 1959 թվականին: Հնդկաստանում հույ տուրիստներ եղան նաև հետագա տարիների ընթացքում:

¹ «Արարապ», 21 հոկտեմբերի, 1959 թ.:





ՀՈՐԴԱՆԱՆ

Հայերի թիվը Հորդանանում կազմում է մոտ 8 հազար մարդ, որոնցից 4 հազարը ապրում է Հորդանանի մայրաքաղաք Ամմանում, 2000—2500՝ հին Երուսաղեմում, իսկ մնացածները՝ երկրի մյուս վայրերում (Իրպիթ՝ 100, Զարկա՝ 100, Ուսեյֆա՝ 80, Բերաք՝ 50): Ինչպես հայտնի է, 1948 թվականին վերացվեց բրիտանական մանդատային սիստեմը Երուսաղեմի նկատմամբ: Երկիրը բաժանվեց երկու մասի. մի մասը անցավ Հորդանանին, մյուսը՝ նորաստեղծ Իսրայելի պետությանը: Երուսաղեմը նույնպես բաժանվեց երկու մասի՝ արաբական և հրեական: Հին Երուսաղեմը այժմ գտնվում է Հորդանանի կազմում, նոր Երուսաղեմը՝ Իսրայելում: Հին Երուսաղեմում է գտնվում հայ եկեղեցու գլխավոր կենտրոններից մեկը՝ Երուսաղեմի պատրիարքությունը՝ վանքերի, եկեղեցիների և օժանդակ շենքերի մի ամբողջ կոմպլեքսով: Ս. Հակոբյանց վանքն ու Ս. Հակոբյանց եկեղեցին հայ հին ճարտարապետության առաջնակարգ հուշարձաններից են: Երուսաղեմի պատրիարքությունն զբաղեցնում է 15 քառակուսի կիլոմետր տարածություն, հանդիսանալով հին քաղաքի չորս թաղամասերից մեկը: 1948—1949 թթ. Հորդանանի և Իսրայելի միջև ծագած պատերազմի օրերին մոտ 1500 գաղթականներ տապառանեցին Հին Երուսաղեմում:

Այդ ժամանակաշրջանում հայ գաղթականները նյութական և բարոյական շատ դժվարություններ կրեցին: «Ս. Հակոբյանց

վանքին մեջ ապաստանած հայությունը, — գրել է «Պայքար» թերթը, — խմբված միաբանության շուրջը, թեև կարոտ նպաստի և օգնության, ծանր պատասխանատվության մը բեռը կտանի իր կարգին, պայմանով որ ամեն հայ, ուր ալ որ գտնվի, որքան ալ որ հեռու ըլլա Երուսաղեմեն, ինքնզինքը զգա նույնքան նախանձախնդիր իր ազգային պարտականության այնպես՝ ինչպես եթե կանչված ըլլար անձնապես տեղվույն վրա կիրարկելու դայն»¹:

Այստեղ, Երուսաղեմի պատրիարքության շենքերից մեկում է գտնվում հայ հին ձեռագրերի ամենահարուստ հավաքածուներից մեկը՝ թվով մոտ 4 հազար: Պա արտասահմանյան երկրներում պահվող հին հայկական ձեռագրերի ամենահարուստ հավաքածուն է: Գրավոր հուշարձանների այդ մեծածեք հավաքածուն բացառիկ նշանակություն ունի աշխարհի շատ ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Այստեղ կան նաև թանգարանային արժեք ներկայացնող շատ առարկաներ, «որոնց յուրաքանչյուրին թվումը շատ երկար պիտի ըլլար, և սակայն անոնցմե յուրաքանչյուրը Եվրոպայի ամենամեծ թանգարաններուն մեջ ցուցադրվելու արժանի է»²: — գրում է Վիկտորիա Արշարունին 1959 թվականին Բոստոնում լույս տեսած «Պայքար» տարեգրքում:

Այստեղ է գտնվում նաև Գյուլպինկյան մատենադարանը 60 հազար հին ու նոր հայկական գրքերով (հիմնվել է 1927 թվականին):

Երուսաղեմը այժմ էլ մնում է քրիստոնեական և մահմադական եկեղեցիների հակամարտությունների գլխավոր կենտրոններից մեկը: Ս. Հակոբյանց վանքը նախանձախնդրորեն պաշտպանում է հայ եկեղեցու այսպես կոչված տերունական սրբավայրերի իրավունքները: Երուսաղեմը երկու մասի բաժանվելուց հետո նոր Երուսաղեմում (Իսրայելում) են մնացել պատրիարքության գլխավոր կալվածքները, որոնցից մի մասի հասույթները նա շարունակում է ստանալ:

Վիկտորիա Արշարունին, որը 1958 թվականին այցելել է

¹ «Պայքար», 26 փետրվարի, 1950 թ.:

² «Պայքար», նոր տարու բացառիկ, Բոստոն, 1959 թ., էջ 284:

Երուսաղեմ, որպես ընդհանուր տպավորություն, ի միջի այլոց, գրում է. «Այո, Երուսաղեմը կորսնցուցած է իր փառքը: Պատմական Սիոնը ոչ ևս է այլևս, և նոր Երուսաղեմը, Քրիստոսի Երուսաղեմը, կը հյուծի, կը մեռնի նման քարյուղը սպառած լամպի մը ճրագին»:

Երուսաղեմի պատրիարքությունն ունի երկու վարժարան՝ ժառանգավորաց և Քարգմանչաց Ազգային վարժարանը (380 սովորողներով), պատրիարքությունն ունի նաև տպարան և հրատարակում է «Սիոն» եկեղեցական ամսագիրը¹:

Ժառանգավորաց վարժարանը կրոնական ուսումնական հաստատություն է, 30—40 սաներով: Քարգմանչաց վարժարանում ուսուցումը տարվում է մոտավորապես այն ծրագրերով, որոնք գոյություն ունեն Մերձավոր Արևելքի երկրների մյուս հայկական դպրոցներում: Ունի մանկապարտեզ, նախակրթարան և երկրորդական բաժին: Սովորում են հայոց լեզու, հայոց պատմություն, անգլերեն, ֆրանսերեն, մաթեմատիկա, բնագիտություն, քիմիա, աշխարհագրություն, երաժշտություն, ֆիզիկական դաստիարակություն, աղջիկների համար՝ ձևագործ: Ուսուցումը վճարովի է: Գլխավոր բյուջեի պակասը լրացվում է նվիրատվություններով և կտակային գումարներով: Հայ կաթոլիկ համայնքն ունի դպրոց, ուր սովորում է 40 աշակերտ:

Ամմանում գործում է այսպես կոչված Հեթումյան վարժարանը՝ 200—250 աշակերտներով, կաթոլիկների վարժարանը՝ 120 և բողոքականների դպրոցը՝ 80 սովորողներով:

Հին Երուսաղեմում ապրող հայերը գլխավորապես զբաղվում են արհեստներով (ղերձակներ, կոշկակարներ, լուսանկարիչներ, վարսավիրներ, մեխանիկներ): Որոշ թվով բանվորներ աշխատում են հախճապակու գործարանում: Գյուղական բնակչությունն զբաղվում է երկրագործությամբ:

Հորդանանում գործում է հայ Երիտասարդաց Միությունը. որի շուրջը համախմբված է հայրենասիրական ուղղության երիտասարդությունը: Միությունը անց է կացնում սպորտա-

յին և մշակութային միջոցառումներ: Հորդանանի կառավարության ակադեմիան ներքին ու արտաքին քաղաքականությունը նախադրություն չի տալիս գաղութին կուլտուրական կապեր հաստատել Սովետական Հայաստանի հետ, թույլ են կապերը նաև արտասահմանի մյուս գաղութների հետ: Կիրանանի և Եգիպտոսի գաշնակցական կենտրոնների հրահանգով փորձեր են կատարվում պղտորելու տեղի հայ գաղութի կյանքը, առանձին գործիչների մեղադրելով «կոմունիզմին համակրելու» մեջ:

Գաշնակցականների դեմ պայքարում են գաղութի առաջադիմական տարրերը: Անդրադառնալով Հորդանանում տիրող դրությունը՝ «Նոր օր» թերթը գրում է. «Որոշ է թե քաղաքական վերիվայրումները, որոնք դժվարին կացություն մը ստեղծեցին Միջին Արևելքի այդ շրջանին մեջ, անխուսափելի կերպով ազդեցին հայոց պատրիարքարանին և հայոց վիճակին վրա ևս: Ավելի՛ն. ծանոթ պատրիարքական սուր տագնապը, որուն բոլոր մանրամասնություններուն օրը օրին տեղյակ պահված է մեր ընթերցող հասարակությունը, շեշտած է այդ դժվարությունները»¹: Նույն հարցի առնչությամբ անգլիական թայմս» թերթը 1958 թվականի փետրվարին գրել է, որ որոշ քաղաքական կուսակցություններ ուզում են հայ եկեղեցին շահագործել իրենց հակասովետական քաղաքականության համար²: Անգլիական որոշ շրջանների այս դիրքավորման մեջ իր արտացոլումն է գտել այդ շրջանների դժգոհությունն այն առնչությամբ, որ Հորդանանում, ի վնաս Անգլիայի շահերի, կրենց տիրապետությունն են ուժեղացնում ամերիկյան իմպերիալիստական շրջանները:

¹ «Նոր օր», 11 սեպտեմբերի, 1959 թ.:

² «Երև», 12 մարտի, 1958 թ.:



¹ Տե՛ս «Նոր օր» օրաթերթ, 11 սեպտեմբերի, 1959 թ.:



ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Ավստրալիա և Խաղաղ օվկիանոսի երկրներ

Այս երկրների հայ դադուքների մասին պատկերացում տալու համար ստորև բերում ենք հայ բնակչության մոտավոր թիվը.

1. Ինդոնեզիա— մոտ 800 մարդ, ապրում են Զակարտայում, Սուրաբայա և Մակասար կղզիներում:
2. Ավստրալիա— 500 մարդ, ապրում են Սիդնեյ, Մելբուռն, Մաունթ-Քեմփեր և Ադելաիդա քաղաքներում:
3. Ֆիրմա— 200 մարդ, ապրում են Խանդունում և մի քանի այլ վայրերում:
4. Չինաստան— 50 մարդ, ապրում են գլխավորապես Խարբինում: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը այս քաղաքում ապրում էր մոտ 500 հայ: Հայերի թիվը կորուստով է ճապոնական օկուպացիայի տարիներին: Մանջուրիայում ապրող հայերի մի մասը այդ ժամանակ գաղթել է Ավստրալիա և այլ երկրներ:
5. Սինգապուր— 60 մարդ:
6. Նոր Զելանդիա— 500 մարդ:

Դրան պետք է ավելացնել Հոնկոնգ կղզում, Ֆիլիպիններում, Տաիլանդում և Հեռավոր Արևելքի ու Խաղաղ օվկիանոսի մյուս երկրներում ապրող հայերին, որոնց ընդհանուր թիվը 200-ից ավելի չէ: Այսպիսով, հիշատակված երկրներում

ապրող հայերի ընդհանուր թիվը կազմում է 2300 մարդ: Եթե նկատի ունենանք այս երկրների թիվը, դրանց դրազեցրած հրակայական տարածությունները և հայերի մեծ ցրվածությունը, պարզ կդառնա, թե ինչպիսի դժվարությունների հետ է կապված ազգային մշակութային գործունեության ծավալումը: Հիշատակված երկրներում հայկական մշակութային կյանք գրեթե գոյություն չունի, բացի Ավստրալիայից և մասամբ Ֆիրմայից ու Ինդոնեզիայից: Ավստրալիայի հայ գաղութի գործերը վարում է Ազգային եկեղեցու խորհուրդը, որը 1957 թվականից հրատարակում է կրոնական «Լույս» ամսագիրը (խմորատիպ): Գաղութում կազմակերպվում են դասախոսություններ, 10-ից ավելի երեխաներ շաբաթը մեկ անգամ մասնակցում են հայոց լիզվի գասընթացներին: Սիդնեյում և Մելբուռնում գործում է Հայուհյաց Միությունը: Մելբուռնում հրատարակվում է «Զայն» ամսաթերթը:

1958 թվականին Հեռավոր Արևելքի և Խաղաղ օվկիանոսի երկրներում ուղևորություն կատարեց եպիսկոպոս Գ. Փոլադյանը, որն արտասահմանի հայ մամուլում հրատարակեց իր ապավորությունները¹: Դրանք մի կողմից վկայում են հայ բնակչության աճող հետաքրքրությունը հայրենիքի նկատմամբ, նրա մշտական ջանքերը իր լիզուն, ազգային սովորություններն ու մշակույթի արժեքները պահպանելու ուղղությամբ, իսկ մյուս կողմից ձուլման ուժեղ պրոցեսի մասին:

Ճապոնիայի փոքր գաղութը ցրվել է ու իսպառ ձուլվել: Վերջին մի քանի ընտանիքները Ճապոնիայից մեկնել են 1956 թվականին: Շատերը մահացել են հայրենիքի կարոտը սըրտներում: Յոկահամայում մահացած Միհրան Սադոյանի շիրիմի վրա գրված է. «Հայրենիքի կարոտով, հայկական ոգով»: Գ. Փոլադյանը հաստատում է, որ Բանկոկի մի բուռ հայերը «չափազանց հետաքրքիր են հայ հայրենիքի վերելքով»: Հայկական անունների պահպանումը դիտվում է որպես ձուլման պրոցեսին դիմադրավելու միջոցներից մեկը: Մանիլայում

¹ Տե՛ս «Զարթոնք» թերթի 1958 թվականի մարտ-ապրիլ ամիսների համարները և «Ժամանակ» թերթի 1960 թվականի փետրվարի 11-ի համարը:

այժմ ապրում է երկու հայ ընտանիք: Գրանցից մեկի հայրը՝ Սարգիս Կարապետյանը, որ նոր Զուղայից մի երիտասարդ է, ամուսնացել է Ֆիլիպինուհու հետ և իր տղաների անունները դրել է Սարգիս և Տիգրան: Սակայն քիչ շին դեպքերը, երբ Աստվածատրյանը դառնում է Չաթեր, Ավետիսյանը՝ Ավիյեթ, Պետրոսյանը՝ Պետերս և այլն:



ԵԳԻՊՏՈՍ

Հայ-եգիպտական կապերի մասին հիշատակությունները վերաբերում են մեր թվականության առաջին դարերին: Ինչ վերաբերում է հայ գաղութի կազմավորմանը, ապա պատմաբանների կարծիքով դա մոտավորապես համընկնում է Բյուզանդական կայսրության շրջանին:

Հետագա ժամանակներում, արաբական տիրապետության շրջանում, հայ շատ զորավարներ և քաղաքական գործիչներ եգիպտոսում լուրջ դեր են խաղացել, երկար տասնամյակների զրավելով պետական ամենապատասխանատու պաշտոններ: Գա սկսվում է արաբական խալիֆների ֆաթիմյան ղինաստիյայի թագավորության շրջանում (10-րդ դարի երկրորդ կեսը) և տևում է մի ամբողջ հարյուրամյակ: Հիշատակված գործիչների մեծ մասը սովորաբար փոխում էր դավանանքը և արաբական անուններ ընդունում: Այս շրջանում եգիպտոսում վեզիրների մեծ մասը ծագումով հայեր էին: Գրավելով այդպիսի բարձր դիրք, հայ վեզիրներից շատերը եգիպտոսում կառուցել են բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններ, որոնց զգալի մասը պահպանվել է մինչև մեր օրերը:

Հիշատակենք, օրինակ, Վահրամ և Վասակ Պահլավունիներին, որոնք պատկանում էին հայ պատմության մեջ լայնորեն հայտնի Պահլավունի տոհմի երկրորդ ճյուղին: Վահրամը և Վասակը եկել էին Կիլիկիայից: Նրանք եգիպտոսում շափազանց ազդեցիկ դիրք էին գրավում: Հաֆեզ խալիֆի օրոք Վահ-

բամբը վարում էր վեղիբրի պաշտոն, իսկ Վասակը Եգիպտոսի կարևոր նահանգներից մեկի՝ Լուբսորի կառավարիչն էր:

Հայ աշխատավորները տեղացի ժողովրդի հետ միասին բազմաթիվ անգամ մասնակցել են երկրում ծավալված սոցիալական շարժումներին, ժողովրդական ապստամբություններին, որոնք ուղղված էին սուլթանների և ֆեոդալական վերնախավի դեմ:

Անհրաժեշտ չհամարելով ավելի մանրամասն խոսելու այս շրջանի մասին, քանի որ դա դուրս է ներկա աշխատության շրջանակներից, հիշատակենք նաև Սպու Սալեհ էլ Արմանի անունը, որը ֆաթիմյան շրջանի նշանավոր մատենագիրն էր: Ծագումով հայ պետական գործիչները երկրի կյանքում նկատելի դեր են խաղացել նաև XIX դարում: Պետք է հիշատակել Պողոս պեյ Յուսուֆին, որը փոխարքա Մոհամեդ Ալիի տիրապետության շրջանում մի շարք պետական պատասխանատու պաշտոններ է վարել: Դա այն շրջանն էր, երբ եվրոպական օտերությունների միջև ուժեղ պայքար էր գնում օսմանյան կաշարության մեջ տիրապետող դիրքեր գրավելու համար:

Եգիպտոսի նոր պատմության մեջ լայնորեն հայտնի է Նուբար փաշայի անունը (1825—1899): Նուբար փաշայի ծնողները ծագումով Ղարաբաղից էին, որոնք հետագայում բնակություն էին հաստատել Ջմյուտնիայում: Երկար տարիներ աշխատել է տրտաքին գործերի մինիստրությունում, մասնակից է եղել Սուեզի ջրանցքի կառուցման հետ կապված իրադարձություններին, եղել է արդարագատության նախարար, իսկ այնուհետև նաև նախարարապետ: Նրա անվան հետ են կապված գյուղատնտեսության բնագավառում կատարված որոշ բարեփոխություններ: Նուբար փաշան կապված էր Եգիպտոսի և մյուս երկրների հայկական շրջանների հետ և մասնակցություն է ունեցել կրթական-բարեգործական մի շարք միջոցառումների: Կահիրեում կանգնեցված է Նուբար փաշայի արձանը, իսկ քաղաքի փողոցներից երկուսը կրում են նրա անունը: Նրա որդի Պողոս փաշա Նուբարը (1851—1930) հայտնի է որպես խոշոր պետական գործիչ եգիպտական մասշտաբով: Իր ժամանակի սփյուռքահայ կյանքի եռանդուն գործիչներից էր Նուբարը, որը

հայտնի է նաև որպես Հայ Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադիր անդամներից մեկը: Նրա անվան հետ է կապված Բրյուսելի Նուբարյան ֆոնդը, Օբսֆորդի համալսարանի հայկական մթիոնը, Փարիզի ուսանողական տունը և մատենադարանը և այլն: Պողոս Նուբար փաշայի գործունեությունը համընկնում է այն շրջանին, երբ արևմուտքի իմպերիալիստական տերություններն իրենց դիվանագիտական խաղերում լուրջ տեղ էին հատկացնում «Հայկական գատին»: Որպես հայ բուրժուազիայի աղղեցիկ ներկայացուցիչներից մեկը, նա մասնակցել է դանազան միջազգային կոնֆերանսների, որտեղ բննարկվել է նաև «հայկական հարցը»:

Վերը նշված մի քանի փաստերը, որոնք չափազանց հեռու են լրիվ լինելուց, ասում են այն մասին, որ Եգիպտոսի պետական կյանքում այդպիսի դիրք գրավելու համար անհրաժեշտ էր տնտեսական կշիռ ունենալ, իրականում այդպես էլ էր: Բոլոր այն անձնավորությունները, որոնց մասին թուղցիկ կերպով այստեղ հիշատակեցինք, Եգիպտոսի հայ բուրժուազիայի ներկայացուցիչներ էին, գործարանատերեր, խոշոր առևտրականներ և միաժամանակ պետական պաշտոնյաներ, մի բան, որ նրանց հնարավորություն էր տալիս իրենց ձեռքում պահել հասարակական կյանքի շատ զսպանակներ, թե՛ եգիպտական մասշտաբով, թե՛ հայկական միջավայրում: Հայ հարուստ վերնախավը լայնորեն օգտագործում էր նաև իր կապերը եվրոտական բուրժուազիայի հետ:

Եգիպտահայ գաղութի պատմության մասին կան առանձին ուսումնասիրություններ, ճամփորդական նոթեր, հողվածներ: Առանձնապես պետք է նշել Ա. Ալպոյաճյանի գիրքը, որ տալիս է եգիպտահայ գաղթօջախի մանրամասն պատմությունը սկզբից մինչև մեր ժամանակները¹:

Եգիպտոսի հայ աշխատավորները միշտ էլ ձգտել են ամբարտաճել եղբայրական բարեկամությունը արար աշխատավորների հետ: Չնայած հետադիմական շրջանների շատ փորձերին՝ սեպ խրելու երկու ժողովուրդների բարեկամության

¹ Ա. Ալպոյաճյան, Արարական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը, Կահիրե, 1960 թ.:

մեջ, այդ բարեկամությունը չի խախտվել: «Եթե մոռանանք 1500 տարվան պատմությունը և առնենք միայն հետպատերազմյան (1915) շրջանը,— գրում է «Արև» թերթը,— պիտի տեսնենք, որ հայերը այս երկիրը եկած են իբրև ապաստանյալ, փախչելով թրքական և այլ հալածանքների: Երախտապարտ ենք արար ժողովուրդին, որ բացավ իր գիրկը և տեղ, գործ և մեք կրոնքով ու մշակույթով ապրելու ազատություն տվավ մեզի: Ասոր փոխարեն մենք մեր պարտքը կատարեցինք, սատարելով երկրի կազմակերպումին և առաջադիմության»¹:

Եգիպտահայ գաղութը քանակապես զգալիորեն աճեց առաջին համաշխարհային պատերազմից հետո, ի հաշիվ Քուրթիայից տեղահանված հայերի: Հայկական բնակչությունը այժմ հիմնականում կենտրոնացած է Կահիրեում (30 հազար) և Ալեքսանդրիայում (10 հազար): Փոքր թվով հայեր ապրում են Տանտայում, էլ-Մանսուրում և Հելուանում:

Հայերը Եգիպտոսում հիմնականում զբաղվում են արհեստներով: Հայ մտավորական խավի մեջ կան զգալի թվով բժիշկներ, անտեսագետներ, ժուռնալիստներ, առևտրական գրասենյակների ծառայողներ և այլն: Ինչպես մյուս հայ գաղութներում, այստեղ էլ հայերի մի մասը բարձր տնտեսական դիրքի է հասել: Գաղութում կան մի քանի խոշոր ձեռնարկատերեր և առևտրականներ:

Եգիպտոսի հայ գաղութում հիմնական պայքարը գնում է ուսման և դաշնակների միջև: Գա հստակ կերպով իր արտացոլումն է գտնում մամուլի էջերում, որտեղ տարբեր դիրքերից քննարկվում են Սովետական Հայաստանի նկատմամբ դիրքորոշման և դրանից բխող ու սիյուեթահայությունը միշտ հուզող հարցերը: Ռամկավարների է հարում գաղութի այսպես կոչված շեզոք խավի մի զգալի հատվածը, մասնակցելով նրանց կողմից կազմակերպվող կուլտուրալ-ազատական միջոցառումներին: Ռամկավարների ազդեցությունը ուժեղ է նաև եգիպտահայ եկեղեցական թեմում և գալրոցական խորհուրդներում:

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը ընկած ժամանակաշրջանում սովետա-եգիպտական հարաբերությունների սահմանափակման պատճառով եգիպտահայ գաղութը Հայաստանի հետ շոշափելի կապեր չունեց և գրեթե անտեղյակ էր հայրենիքում կատարված պատմական վերափոխումներին: Այս վիճակը մասամբ փոխվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Եգիպտոսը անկախություն նվաճեց, երբ Սովետական Միության հեղինակությունը արաբական աշխարհում աննախընթացորեն բարձրացավ և Սովետական Միության ու արաբական երկրների միջև հաստատվեցին կուլտուրական լայն կապեր: Մեծ նշանակություն ունեցավ հետպատերազմյան շրջանում եգիպտահայ տուրիստական մի քանի խմբերի այցելությունը Սովետական Հայաստան: Վերադառնալով Կահիրե և Ալեքսանդրիա, նրանք իրենց խանդավառ ապավորությունները հաղորդեցին Եգիպտոսի հայ աշխատավորներին, որոնք ծարավի էին իրենց վերածնված հայրենիքի մասին լուրերի ու նորությունների: Որպես հետևանք այս բուրբ, ուսման և աշխատանքի շրջանները այս ուղղությամբ համեմատաբար աշխուժացրին իրենց գործունեությունը:

Գաղութում որոշ ազդեցություն ունեն հնչակյանները: Սակայն մեր տրամադրության տակ եղած տվյալները բավարար չեն նրանց գործունեությունը ավելի մանրամասն բացահայտելու համար: Գրա պատճառներից մեկն էլ հնչակյան պարբերական մամուլի բացակայությունն է: Ունենալով իրենց վեճերն ու տարակարծությունները ուսման և գրեթե մյուս բոլոր գաղութներում, դաշնակցության դեմ տարվող պայքարում հանդես են գալիս ուսման և գրեթե մամուլի հետ միասին: Գաղութի առաջադիմական ուժերի դեմ տարվող պայքարում դաշնակները համագործակցում են հայ կաթոլիկ շրջանների հետ, որոնց գործունեությունը ղեկավարում է Վատիկանը: 1959 թվականին Եգիպտոս այցելեց կարդինալ Աղաջանյանը, որտեղ նա հանդիպումներ ունեցավ հայկական ռեակ-

¹ «Արև», 13 հունվարի, 1962 թ.:

ցիոն ակտիվ գործիչների հետ: Միաժամանակ պետք է նշել, որ ի հակադրություն կաթոլիկ համայնքի ղեկավարների, հայ շարքային կաթոլիկները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Սովետական Հայաստանի նկատմամբ և գերազանցապես հարում են հայրենասիրական շրջաններին: Այն փաստը, որ Կահիրեն դարձավ դաշնակցության գլխավոր կենտրոններից մեկը, պայմանավորված էր մի շարք պատճառներով: Անգլիական իմպերիալիզմից գաղութային կախման մեջ գտնված միապետական Եգիպտոսը, որտեղ միշտ ուժեղ է եղել ռեակցիայի ազդեցությունը, կրոնական ու քաղաքական անհանդուրժողականությունը, նպաստավոր միջավայր էր հայկական ռեակցիայի համար: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ դաշնակները մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը կապված էին գերազանցապես անգլիական և ֆրանսիական շրջանների հետ, իսկ վերջիններս, ինչպես հայտնի է, այդ ժամանակաշրջանում Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում տեր ու տնօրեն էին:

Անհրաժեշտ ենք համարում համառոտակի կերպով շոշափել հայ համայնքի իրավական վիճակը եգիպտահայ գաղթօջախում: Ընդհանրապես, հայ բնակչությունը, բնականաբար, ենթակա է Եգիպտոսում գործող պետական օրենքներին: Սակայն համայնքն ունի իր «Կազմական կանոնադիրը», որը կարգավորում է նրա փոխհարաբերությունները եգիպտական իշխանությունների հետ, սահմանում է համայնքային կազմակերպության իրավասության սահմանները: Ըստ եգիպտական կառավարության կողմից հաստատված այդ կանոնագրի դրույթների, հայ համայնքի պատասխանատու օրգաններ են համարվում թեմական և քաղաքական ժողովները: Թեմական ժողովը կազմված է 26 անդամներից, որոնցից 24-ը աշխարհիկ, իսկ 2-ը կրոնական ներկայացուցիչներ են: Թեմական և քաղաքական ժողովների կազմը ընտրվում է կանոնագրով սահմանված կարգով: Ըստ նույն «Կազմական կանոնագրի», թեմական ժողովը ընտրում և ղեկավարում է քաղաքական ժողովի գործունեությունը: Քաղաքական ժողովը բաղկացած է 7 հոգուց (աշխարհիկ անդամներ): Նրանց ընտրում է թեմա-

կան ժողովը գաղտնի քվեարկությամբ, 2 տարի ժամանակով: Դա մի տեսակ գործադիր մարմին է, որը զբաղվում է համայնքի ընթացիկ գործունեությամբ (արձանագրություններ ամուսնությունների, ամուսնալուծումների, համայնքի տարեկան բյուջե, շարժական և անշարժ գույքի տնօրինում և այլն): «Կազմական կանոնագիրը» ունի հատուկ բաժին, որ կարգավորում է քաղաքացիների «դատական գործողությունները» և կոչվում է «Կանոնագիր դատական գործողության»:

Եգիպտահայ դպրոցներ

Կրթական գործը եգիպտահայ գաղութում բավականին հին պատմություն ունի: Կահիրեի Գալստյան վարժարանը 1955 թվականին տոնեց իր հիմնադրման 100-ամյակը: Այն տեղավորված է Կահիրեի կենտրոնական թաղամասերից մեկում, երկհարկանի շենքում: Դպրոցում սովորում են 700-ից ավելի երեխաներ: Ուսման տևողությունը 7 տարի է:

Կահիրեի մյուս հայկական դպրոցը Նուբարյան վարժարանն է, որտեղ սովորում են 300-ից ավելի երեխաներ. 1959 թվականին ավարտվեց դպրոցի նոր շենքի կառուցումը:

Բացի հիշատակված դպրոցներից, Ալեքսանդրիայում գործում են Պողոսյան վարժարանը և կաթոլիկ համայնքի 2 դրոցներ՝ Կահիրեում և Ալեքսանդրիայում: Այդ երկու դպրոցները պահում է Վիեննայի կաթոլիկ միաբանությունը:

Դատելով երգիպտահայ մամուլում հրատարակված նյութերից, կրթական գործը գտնվում է անմխիթար վիճակում: Այն ղեկավարությունները, որոնք մշտապես ծագում են այս սպառնալուծում մյուս երկրների հայ գաղութներում, առկա են նաև այստեղ. չկան բավարար քանակությամբ, ուսուցման ժամանակակից պահանջներին համեմատ կազմված դասադրքեր, չկան պատրաստված ուսուցիչներ, չեն բավարարում նյութական միջոցները: Բացի դրանից նկատելի է, որ տարեցտարի դեկասում է հայկական դպրոցներում սովորողների թիվը. քանի որ ավելի ու ավելի մեծ թվով հայ ծնողներ իրենց երեխաներին տալիս են օտար դպրոցներ: 1960 թվականին Մ. Հայկազը, հանդես գալով մամուլում, պահանջ էր դնում Եգիպտոսում երկրորդական վարժարան (11 դասարան) բաց-

լու մասին, մի միջոցառում՝ որը հեղինակի կարծիքով մասամբ կլուծեր ուսուցիչներ պատրաստելու հարցը: Շոշափելով ուսման որակի հարցերը, հեղինակը գրում է, որ Ալեքսանդրիայի Պոդոսյան և Կահիրեի նուբարյան վարժարաններում հայերեն լեզվի և գրականության ուսուցումը «Բավական դժվար է թե ուսուցչին և թե՛ աշակերտին համար, նկատելով որ պատահական դասագրքեր կգործածվին, որոնք իրենց մակարդակով կա՛մ խիստ բարձր են, կա՛մ տկար: Կարելի է հայաստանյան դասագիրքերը պատշաճեցնել մեր պայմաններում...»¹:

Ինչ վերաբերում է հայկական դպրոցներին կից գործող մանկապարտեզներին, ապա այստեղ «վարժուհիներուն բուն թերությունը կկայանա անոր մեջ, որ անոնք կկիրարկեն հինբրեն ավանդ մնացած մեթոդները և իրենց ականջները բոլորովին փակ կպահեն արդի տեսական մանկավարժության պահանջներուն»²:

Հեղինակը ցավով է արձանագրում այն իրողությունը, որ Եգիպտոսի հայ գաղութի մշակութային, կրթական կազմակերպությունները բավականաչափ ճիգեր չեն գործադրում մանուկների կրթության և դաստիարակության գործը կազմակերպելու ուղղությամբ: «Բովանդակ եգիպտահայությունը, հնագույն և բարեկեցիկ այս գաղութը ինչո՞ւ մտավորական ցընցոտիներով կներկայանա այժմ: Եվ ի՞նչպես կըլլա, որ Լիբանանի և Սուրիո նման հարաբերաբար չբավոր գաղութներն են, որ մեզի ազգային կենարար ջուր կմատուցակեն, երբ անոնք է որ անցյալին վայելած են հոգեպարար ներկայությունը նյութի և լույսի սպիրտով լեցուն եգիպտահայերու»³:

Նկատելի է, որ վերջին տարիներին ուժեղացել է պետական վերահսկողությունը հայկական դպրոցների նկատմամբ: Այդ վերահսկողության նպատակն է հայերենի ուսուցումը սահմանափակել և դրա փոխարեն ուժեղացնել արաբերեն դասավանդվող առարկաների ուսուցումը: 1962 թվականին եգիպտական

«Մեր էլ-Ուսպոնի» թերթը հանդես եկավ Եգիպտոսում գործող օտար դպրոցների դեմ, բնորոշելով դրանք որպես գաղութատիրության հենարան: Այդ դպրոցների թվում հիշատակված էին նաև Կահիրեի հայկական երկու դպրոցները: Հայ մամուլը և Եգիպտոսի հայոց առաջնորդարանը հարկադրված եղան հրապարակորեն պարզարանելու և հերքելու այդ մեղադրանքը: Անդրադառնալով այդ հարցին՝ «Արև» թերթը գրել է. «... Մենք դիտենք և մեզ հյուրընկալող արաբ ժողովուրդն այ հատկորեն գիտե, որ հայերը այս երկիրը չեն եկած գաղութարարական նպատակներով կամ արևմտյաններու շահերուն ծառայելու դիտավորությամբ... Ինչպե՞ս կարելի է օտար վարժարաններու կարգին դասել հայ վարժարաններն ալ և զրպարաւել՝ «արաբ երիտասարդությունը կայլասերեն» ըսելով, երբ մեկ հատիկ արաբ աշակերտ չեն ունեցած և շունին մեր համայնքին պատկանող դպրոցները: Ի՞նչ անխղճությամբ կարելի է արձանագրել թե «այս վարժարանները պայքարած են մեր լեզվին, մեր պատմության և նույնիսկ մեր ներկային դեմ», երբ դեռ շատ կանուխեն՝ հայ վարժարաններուն մեջ սկսված է «Եգիպտոսի պատմության» ամբողջական ընթացք մը, արաբերենի պարտադիր ուսուցումը և արաբական ծրագրի գործադրումը...»¹:

Մշակութային կազմակերպություններ *

Հայ Գեղարվեստասիրաց միություն

Հայ Գեղարվեստասիրաց միությունը կազմակերպվել է 1920 թվականին: Արդեն 40 տարվա կենսագրություն ունեցող այդ միությունը, որ նպատակ ունի, ինչպես գրված է նրա կանոնադրության մեջ, «համախմբել կազմակերպված ուժի մը

¹ «Արև», 13 հունվարի, 1962 թ.:

* 1958 թվականին տեղի ունեցած մեր տուրիստական ուղևորության ընթացքում մենք ծանոթացանք Կահիրեի և Ալեքսանդրիայի հայ մշակութային միությունների գործունեությանը: Մեր հավաքած նյութերի մի մասը օգտագործում ենք այս բաժնում:

¹ «Արև», 8 սեպտեմբերի, 1960 թ.:

² «Արև», 7 սեպտեմբերի, 1960 թ.:

³ «Արև», 6 սեպտեմբերի, 1960 թ.:

շուրջ գաղութի երկսեռ հայ երիտասարդութիանը, վառ պահելու բարձրացնել անոր մեջ գեղարվեստի ճաշակը», զնահատելի գեր է խաղացել եգիպտահայ գաղութի մշակութային կյանքում:

Միութեան թատերախումբը, ինչպես իր սրահում, այնպես էլ Կահիրեի լավագույն թատրոններում ու օպերային թատրոնում բեմադրել է հայ և օտար հեղինակների մի քանի տասնյակ պիեսներու Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խմբի խաղացանկում իր տեղն ունի նաև սովետահայ դրամատուրգիան: Ազգային դրամատուրգիային զարկ տալու նպատակով միությունը մի քանի անգամ հայտարարել է պիեսների մրցանակարաշխություններ, որոնք, սակայն, ցանկայի արդյունքներ չեն տվել: Միությունը բազմիցս կազմակերպել է երգչախմբեր և երաժշտական այլ կոլեկտիվներ, պարերաբար համերգներ է տվել թե՛ տեղի և թե՛ հրավիրված երաժիշտների ուժերով: Այդ համերգներին մասնակցել են Գուրգեն Ալեմշահը, Աշոտ Պատմագրյանը, Համբարձում Պերպերյանը, Մանուկ Բարիբջյանը, Զավեն Խաչատրյանը, Ռաֆֆի Պետրոսյանը, Ժիրայր Գանթարձյանը, Աստրա Մարյանը և ուրիշ շատ երաժիշտներ:

Միութեան աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում կոմպոզիտոր էդուարդ Հակոբյանը, նկարիչներ Օննիկ Ավետիսյանը, Ալեքսանդր Սարուխանը և ուրիշներ: Էդուարդ Հակոբյանը ամբողջ Եգիպտոսում ճանաչված արվեստագետ է: Նրա տաղանդը բարձր զնահատականի է արժանացել արաբական և հայկական մամուլում: Եգիպտահայ երգչախումբը նրա ղեկավարությամբ հնչեցրել է Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Ալեքսանդր Հարությունյանի և ուրիշների ստեղծագործությունները, միշտ արժանանալով ժողովրդի ջերմ ընդունելություն: Նա հեղինակ է ոչ միայն երաժշտական երկերի, այլև հայ երաժշտությանը նվիրված ուսումնասիրությունների:

Կահիրեում ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են կերպարվեստի փոքր ցուցահանդեսներ, որոնց մասնակցում են եգիպտահայ տարեց և երիտասարդ նկարիչներ: Եգիպտա-

հայ գաղթօջախում հայտնի են նկարիչներ Տիրան Կարապետյանի, Աշոտ Զորյանի, Բյուզանդ Կոճամանյանի անունները: Մամուլում խոսվում է նաև երիտասարդ նկարչուհիներ Ռոզա Փափազյանի, Անահիտ Արթինյանի, Գոհար Կայսերյանի մասին:

Կ ո կ ա ն յ ա ն ա կ ու մ բ

Ինչպես վերը նշեցինք, եգիպտահայ գաղութում բավականին ազդեցիկ է այսպես կոչված «չեղոք» խավը: Այդ ազդեցությունը պայմանավորված է նրանց տնտեսական դիրքով: «Չեղոքներից» շատերը խոշոր առևտրականներ են և հետևաբար շատ հաճախ նրանց դիրքավորումից է կախված թե քաղաքական ո՛ր կուսակցությանը կհաջողվի գաղութում ղեկավար դիրքեր ունենալ: Կոկանյան ակումբը հենց «չեղոքների» հավաքատեղին է: Իրենց ժամանցը անցկացնելու համար սովորաբար այստեղ են գալիս խոշոր ձեռնարկատերերն ու վաճառականները: Ի դեպ նշենք, որ այսպիսի ակումբներ կարելի է տեսնել սփյուռքահայ մյուս գաղութներում: Դրանք կարելի է կոչել «անկուսակցական» ակումբներ, որտեղ գերազանցապես հավաքվում են քաղաքականությունից «հեռու» մարդիկ:

Գեղարվեստասիրաց միութեան աշխատանքին ավելի մեծ կարելիություններ տալու համար վ. Թեքեյանի անվան Հայ Տան վարչությունը իր նորակառույց տան մի քանի սենյակներ տրամադրել է միությանը: Հայ գեղարվեստասիրաց միությանը կից գործում է Հայ ուսանողական միությունը: Նրա երկարամյա նախագահ Լևոն Աճեմյանը իր էլույթներից մեկում ասել է. «... Մի՛ մոռանաք թե ազնիվ ու ստեղծագործ ժողովուրդի մը զավակներն եք, անոր հարստություններուն ժառանգորդը և որ պարտք կզնն ամենուզ վրա բարձր պահել իր անունը, իր պատիվը: Մտածեցե՛ք, թե այս ժողովուրդը դարերու անլուր իր տառապանքներուն զինովը ստեղծած է հայրենիք մը երիտասարդ, առույգ ու կորովի՝ և որ մեկ բան կպահանջն քոլորեդ, քոլոր երիտասարդներն,— ըլլալ ուժն՝ը՝

միտքով, ուժն՝ դ՛ մարմնով և ուժն՝ դ՛ նկարագրով»¹։
«Տիգրան Երկաթ» հայ մշակութային միությունը։ Գործում է Ալեքսանդրիայում։ Միության կանոնադրության մեջ նշվում է, որ նրա նպատակն է «...մրապնդել կապերը Ալեքսանդրիայի հայ մտավորականների միջև և «հայությանը միշտ մոտ պահել մայր հայրենիքին, տարրալուծման վտանգից փրկել նորահաս երկսեռ երիտասարդությունը», հնարավորություններ ստեղծել, որ նա կարողանա դասախոսություններ լսել, ներկա լինել գրական-գեղարվեստական հավաքույթների, վիճարանությունների և վերջապես՝ «սատարել հայ կրթարաններն ընթացավարտ կարիքավոր երկսեռ պատանիներու ուսման ու դաստիարակչական գործին...»²։ «Տիգրան Երկաթ» հայ մշակութային միությունը կից գործում են մի քանի օժանդակ միություններ և հանձնաժողովներ (հայ ուսանողական միություն, պարահանդեսների, զբոսապատույտների, գրական-գեղարվեստական, թատերական հանձնախմբեր)։ Իր՝ մոտ 60 տարվա գոյություն տարիներին հայ մշակութային միության ջանքերով բեմադրվել է «Արմենուհի»-ն՝ հեղինակի իսկ ներկայությամբ, «Կործանված»-ը, «Պատվի համար»-ը, «Կարմիր ժամուց»-ը, «Դեռասան Քին»-ը։ Այս ներկայացմանը մասնակցել է Հովհաննես Զարիֆյանը։ «Քամելիազարդ տիկին» ներկայացմանը մասնակցել է Սիրանուշը, «Պատվի համար»-ում հանդես է եկել Հովհաննես Արելյանը։

Ականավոր՝ դերասանուհի Սիրանուշի մասին «Հիշատակարան-նսկեմատյան» հոբելյանական գրքի մեջ ասվում է, որ նա 1930 թվականին վերջնականապես հաստատվել է Եգիպտոսում։ «Եվ առաջին ու ավագ, վերջին ներկայացումը՝ «Քամելիազարդ տիկին»-ը որ բեմադրեց Ալեքսանդրիո մեջ, 1931-ին, արտակարգ հաջողությամբ «Տիգրան Երկաթ»-ի թատերախումբին, իր անձնավորած դերին՝ Մարկրիթ Կոթիկի նման, հոգիին խավարումը եղավ և հավիտենապես փակեց աչքերը Գահիրեի մեջ՝ մի քանի ամիսներ վերջ»³։

¹ «Հայ գեղարվեստասիրաց միություն», Կահիրե, 1955 թ., էջ 69։

² «Ոսկեմատյան—Հիշատակարան», Ալեքսանդրիա, 1952 թ., էջ 24։

³ «Ոսկեմատյան—Հիշատակարան», Ալեքսանդրիա, 1952 թ., էջ 107։

ժամանակին «Տիգրան Երկաթ»-ի սրահում դասախոսություններով հանդես է եկել Վահան Թեքեյանը։ Գնահատելով Ալեքսանդրիայի հայ մշակութային միության օգտակար գործունեությունը, միաժամանակ պետք է նշել, որ այս հաստատությունը վերջին տասնամյակների ընթացքում գրեթե կտրված է եղել Սովետական Հայաստանի կուլտուրական կյանքից։ Այդ մասին են վկայում նաև «Հիշատակարան-նսկեմատյան»-ում զետեղված նյութերը։ Այս ուղղությամբ միության կողմից նկատելի ջանքեր չեն եղել։ Դա պետք է բացատրել ոչ միայն միջազգային աննպաստ իրադրությամբ, այլև «Տիգրան Երկաթ»-ի ղեկավարության զգուշավորությամբ և պասիվությամբ։ Այս վիճակը մասամբ փոխվել է վերջին տարիների ընթացքում։

1958—1960 թվականների ընթացքում Հայաստանից Միացյալ Արաբական Ռեսպուբլիկա ժամանած տուրիստները այցելեցին նաև «Տիգրան Երկաթ» հայ մշակութային միության սրահը և ջերմ հանդիպումներ ունեցան տեղի հայերի հետ։

Հ Բ Ը Մ Ե գ ի պ տ ո ս ի մ ա ս ն ա ճ յ ու ղ

Կատարում է ՀԲԸՄ Կենտրոնի հրահանգները, զբաղվում է նյութական միջոցների հայթայթումով, նպատար է գաղութի մշակութային հաստատությունների գործունեությունը։

Ա ղ գ ա յ ի ն Հ ի մ ն ա դ ր ա մ

Այս կազմակերպության ղեկավարությունը գտնվում է հարուստների ձեռքում։ Տիպիկ բարեգործական մեկենասային կազմակերպություն է, որ երբեմն միջոցներ է հատկացնում աչքի ընկնող գրողների, գիտնականների, արվեստագետների, ինչպես նաև մշակութային կազմակերպությունների։ Անդամների թիվը կազմում է մոտ 600 մարդ։

Բնութագրելով Հայ Ազգային Հիմնադրամի նպատակներն ու

խնդիրները՝ «Արև» թերթը գրում է, որ այդ կազմակերպությունը հիմնականում երեք ուղղությամբ է նպաստում եղիպտոս-հայ մշակութային կյանքի զարգացմանը. մշակութային ակումբների ստեղծում, հրիտասարդության ուսուցման հարցեր և հայերեն լեզվով արժեքավոր երկերի հրատարակություն: Հիմնադրամի աջակցությամբ հրատարակվել են Հրանտ Արմենի «Մեծն Տիգրան»-ը, էփեն Փափազյանի «Օտարաբանությունները հայ լեզվին մեջ», Վահան Թերեյանի ամբողջական գործերը և այլն: Կահիրեի Կոկանյան ակումբը նույնպես կառուցվել է Հիմնադրամի միջոցներով: «Միևնույն ժամանակ,— գրում է թերթը,— Հայ Ազգային Հիմնադրամը կաշխատի գաղութիս ճանչցնել Հայաստանի մեջ հրատարակված գրական զանազան գործերը, որոնք մեղի կհաղորդեն հայրենիքի գրական փառքն ու վերելքը»¹:

Ս պ ո Ր տ ա յ ի ն կ ա ղ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն ն ե ր

Հայ մարմնամարզական ընդհանուր միությունը Եղիպտոսում պառակտված է երկու մասի: Անդամների մի մասը կանգնած է հայրենասիրական դիրքերի վրա, մյուս մասը՝ «ՀԲԸՄ-Արարատ» անունով գտնվում է դաշնակիների վերահսկողության տակ:

Ե գ ի պ տ ա հ ա յ մ ա մ ու լ

Այժմ Եղիպտոսի երկու քաղաքներում՝ Կահիրեում և Ալեքսանդրիայում լույս են տեսնում հետևյալ թերթերն ու ամսագրերը.

1. «Արև» օրաթերթ: Լույս է տեսնում Կահիրեում, կանգնած է հայրենասիրական դիրքերի վրա:
2. «Զահակիր» ամսագիր. լույս է տեսնում Կահիրեում, հարում է հայրենասիրական ճակատին:

3. «Սալաոնակ» շաբաթաթերթ. լույս է տեսնում Կահիրեում:
4. «Արաբ» շաբաթաթերթ. լույս է տեսնում Ալեքսանդրիայում: Պատկանում է հայրենասիրական ուղղությանը:
5. «Հուսարե» օրաթերթ. հրատարակում են դաշնակիները:



¹ «Արև», 13 սեպտեմբերի, 1960 թ.:



ՍԻՐԻԱ

Հիրանանի հայ գաղութի «սուաջացման մասին խոսելիս մենք արդեն նշեցինք, որ հայերի գաղթը դեպի արաբական երկրներ սկսվել է ամենահին ժամանակներից: Դա պայմանավորված էր ոչ միայն Հայաստանի արտաքին կապերով, այլև Բյուզանդական կայսրության և արաբական խալիֆաթում հայերի դրաված դիրքով: Ա. Ալպոյաճյանն իր աշխատության մեջ հայ և օտար աղբյուրների վրա հենվելով ասյուցուցում է, որ հայերի գաղթը դեպի Սիրիա ավելի կամ պակաս շափով տեղի է ունեցել Բյուզանդական կայսրության, արաբական տիրապետության, թուրք սելջուկների, մոնղոլական ու թաթարական արշավանքների շրջանում:

«Արևելքի երկիրներուն գալով,— գրում է Ա. Ալպոյաճյանը,— Ե դարեն մինչև ԺԱ, Սուրիա, Միջագետք, Պաղեստին, Եգիպտոս, Պարսկաստան, Կեղրոնական Ասիա և այլն, Հայաստանի հետ, արաբ տիրապետության տակ էին մեծ մասամբ: Այդ երկրները հայ գաղթականին համար անձանոթ չէին, քանի որ այդ տեղերը գոյություն ունեցած էին գաղութներ, որոնք պատահած վերիվայրումներու հետևանքով թերևս ցրված էին, սակայն տեղ-տեղ ալ իրենց գոյությունը պահած»¹:
Նույն հեղինակի հաստատումով բյուզանդական կայսր վա-

սիլ թ արաբներից նվաճած երկրներում «հայեր կրնակեցնե, ինչպես, օրինակի համար՝ Սուրիական Կեսարիո (Որոնդես գետի վրա)... մեջ, զի արաբ բնակչությունը լքած էր քաղաքը: Վասիլ անոնց տեղ բերավ ու հոն տեղավորեց 999-ին հայ գաղթականներ, որոնք վերստին ծաղկեցուցին քաղաքը»¹:

Ինչպես մենք այդ տեսանք մյուս գաղութներում, հայերը Սիրիայի պատմության մեջ զգալի հետք են թողել: Մասնավորապես Հալեպի հայ գաղութի մասին Ա. Սուրմեյանը գրում է.

«Հալեպի, Սուրիական անապատին մեջ ցցվող այս «օվպիսին» հայ գաղութը իսկապես որ մեծ դեր խաղացած էր երկրին առևտուրին, արհեստներուն ու մշակույթին մեջ և որքան որ Հալեպ հայության համար կարևոր կեղրոն մը չէր, ինչպես էին, զոր օրինակ, Վան, Կարին, Սեբաստիա, Կեսարիա և այլն, բայց և այնպես ունեցած էր ավելի քան վեց դարերու բնավ շրջմիջված հայ-ազգային կյանք մը, ու Հալեպի պարիսպներեն ներս հայությունը կրցած էր պետական ու միջազգային գնահատությանց արժանի բարգավաճ ու երբեմն մեծապես ճոխ կյանք մը ապրիլ... Կիլիկյան իշխանության կործանումեն հետո Կիլիկիո զանազան քաղաքներեն գաղթող փոքրաթիվ հայություն մը եկած ապաստանած էր համեմատաբար ապահով նկատվող այս մեծ շահաստանին մեջ, ուր հետզհետե եկած ավելցած էին հայաստանցի հայեր, գլխավորաբար ջուղայեցիք և Փոքր Հայքի զանազան հայ բնակիչներ: Այնպես որ Հալեպի հին հայությունը սկզբեն մինչև այսօր պահած էր իր այս դիմագիծը, ըլլալով խառնուրդ մը շատ մը քաղաք ու գյուղերու հայության, առանց բնորոշ նկարագրի, առանց նույն սովորությանց, բարքերու ու նույնատիպ մշակույթի»²:

Սակայն պատմական ավելի ուշ ժամանակաշրջանում հայ կյանքը Սիրիայում աստիճանաբար սկսում է թուլանալ, քանի որ ուժեղ կերպով տեղի էր ունենում ձուլման պրոցես: Առա-

¹ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Ա հատոր, էջ 243:

² Ա. Սուրմեյան, պատմություն Հալեպի Հայոց, Ա հատոր, Հալեպ, 1940 թ., էջ 6:

¹ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Ա հատոր, էջ 344:

զին համաշխարհային պատերազմին նախորդած շրջանում հայ բնակչությունը շնչին թիվ էր կազմում և երկրի կյանքում նկատելի դեր չէր խաղում: 1915—1916 թթ. հայ բնակչության հոծ զանգվածները ապաստան են դառնում այս երկրում: Ցրվելով երկրի քաղաքներում ու գյուղերում և օրհասական պայքար մղելով սովի ու մասսայական հիվանդությունների դեմ, հաղթահարելով այլևայլ դժվարություններ, հայ աշխատավորական մասսաները սկսում են կառուցել իրենց նոր օջախները, հայթայթել ապրուստի միջոցներ, հիմք դնել դպրոցների ու մշակութային հաստատությունների: Հայ աշխատավորական զանգվածների համար շափազանց ծանր այդ շրջանում նրանք արժանացան արաբ, աշխատավորական խավերի հյուրընկալ վերաբերմունքին:

Հետագա շրջանում, ինչպես մենք տեսանք այդ կիրանանում, Սիրիայի հայերը լուրջ դեր խաղացին երկրի քաղաքական ու կուլտուրական կյանքում: Նրանք ակտիվորեն մասնակցեցին արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին և այդ արդարացի պայքարում շատ զոհեր տվեցին: Ազատագրական պայքարի բովում ավելի կոփվեց ու ամրացավ երկու ժողովուրդների բարեկամությունը:

1946 թվականին Սիրիան ազատագրվեց ֆրանսիական իմպերիալիզմի տիրապետությունից և հռչակեց իր անկախությունը: Սիրիական անկախ ռեսպուբլիկայի հռչակման գործում վճռական նշանակություն ունեցավ Սուվետական Միության դիրքը, որը հետևողականորեն պաշտպանեց սիրիական ժողովրդի ազգային ազատագրական պայքարը: 1958 թվականին Սիրիան միացվեց Եգիպտոսին և կազմվեց Միացյալ Արաբական Ռեսպուբլիկա: Սակայն Սիրիայի պետական այդ ստատուտը պահպանվեց կարճ ժամանակ: 1961 թվականին Սիրիան դուրս եկավ ՄԱՌ-ի կազմից և հռչակվեց անկախ ռեսպուբլիկա:

Մեր նպատակը չէ մանրամասն շարադրել երկու պետությունների միավորման ներքին և արտաքին շարժառիթները, ինչպես նաև նրա բացասական հետևանքները Սիրիայի համար: Նշենք միայն, որ Սիրիան Եգիպտոսին կցելուց հետո Եգիպտոսի կուռավարությունը երկրում սահմանեց անհամե-

մատ ավելի խիստ ուժեղ: Արգելվեց քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Օրենսդրական կարգով սահմանափակվեց մամուլի գործունեությունը: Հասկանալի է, որ այս բոլոր անխուսափելի կերպով պետք է ազդեր հայ բնակչության ընդհանուր վիճակի վրա: Միացյալ Արաբական Ռեսպուբլիկայի կառավարության այս քաղաքականությունը մի կողմից նպաստավոր պայմաններ ստեղծեց դաշնակների համար, իսկ մյուս կողմից բազմաթիվ դժվարություններ հարուցեց հայ ղեմնկրատական, առաջադիմական կազմակերպությունների գործունեության ճանապարհին: Հայ մշակութային կյանքը դրվեց ավելի սահմանափակ շրջանուկի մեջ: Երկրում տիրող կրոնական մոլեռանդությունը, ազգայնական տրամադրությունների աշխուժացումը բացասաբար անդրադարձան հայկական մշակութային կյանքի զարգացման վրա: Բնորոշ է, որ այդ շրջանում նկատելի կերպով աճեց արտագաղթը: Շատերը թողնում էին Սիրիան և բնակություն հաստատում Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Հարավային Ամերիկայի երկրներում: Արտագաղթի շարժառիթներից մեկն էլ երկրում աճող գործազրկությունն էր: Սիրիան Եգիպտոսին միացնելուց հետո սիրիական իշխանությունները ամեն տեսակի դժվարություններ էին հարուցում Սուվետական Միությանից թերթեր, ամսագրեր, գրքեր ստանալու գործում, որից տուժում էր նաև հայ բնակչությունը: Սիրիական իշխանությունները արգելքներ էին հարուցում առաջադիմական թերթերի և ամսագրերի հրատարակության գործում: Այդ շրջանումն էր, որ արգելվեց «Երկիր» հանդեսի (գիրք գրականության և արվեստի) և «Սուրիա» թերթի հրատարակությունը: Գոյություն իրավունք չունեցող միայն դաշնակցական «Արևելք» թերթին:

Ըստ Սիրիայի պետական վիճակագրության 1954 թվականի տվյալների, հայերի թիվը Սիրիայում կազմում էր 135 հազար 36 մարդ¹: Եթե հաշվելու լինենք այդ վիճակագրությունից հետո տեղի ունեցած բնական աճը, ապա այժմ Սիրիայի հայերի թիվը պետք է կազմի առնվազն 150 հազար մարդ:

¹ «Ջարթոնք», 15 սեպտեմբերի, 1954 թ.:

Նրանցից 75 հազարը ապրում է Հալեպում, 15 հազարը Գամիշլիում, 10 հազարը Գամասկոսում, իսկ մնացածները՝ Արաբ-Քունարում, Ճարապուսում, Տրբախայում, Հոմսում, Տեր-Ջորում, Քեսապում և մյուս վայրերում: Այսպիսով, կարող ենք ասել, որ Հալեպը արտասահմանի ամենահայաշատ քաղաքն է: Հայկական այսպիսի կոմպակտ բնակչություն չի ապրում արտասահմանի որևէ երկրի, որևէ քաղաքում: Այս տեսակետից Հալեպի հետ կարող է համեմատվել միայն Բեյրութը, սակայն այստեղ հայերի թիվը 65 հազարից չի անցնում: Չնայած դրան, Հալեպը չի դարձել հայ մշակույթի խոշոր կենտրոն, ինչպես Բեյրութը: Դա բացատրվում է մի շարք պատճառներով: Լիբանանի մայրաքաղաքը ավելի լայն միջազգային տնտեսական ու կուլտուրական կապեր ունի, քան Հալեպը: Բեյրութում բավականաչափ ուժեղ է կոմպրոդորային բուրժուազիան, այդ թվում և հայ բուրժուազիան, որը շատ կապերով, գլխավորապես առևտրական, կապված է մի շարք երկրների գործարար շրջանների հետ: Կարևոր հանգամանք է այն, որ Բեյրութը արաբական մասշտաբով վերցրած մեծ մշակութային կենտրոն է համարվում, մի բան, որ չի կարելի ասել Հալեպի մասին: Բեյրութի նշանակությունը ընդգծվում է նաև նրանով, որ այն երկրի մայրաքաղաքն է, մինչդեռ Հալեպը Սիրիայի երկրորդ քաղաքն է: Ոչ նվազ կարևորություն ունի այն փաստը, որ Լիբանանում քրիստոնեական տարրը անհամեմատ ավելի ուժեղ է քան Սիրիայում, որտեղ միշտ ուժեղ է եղել մուսուլմանական շրջանների ազդեցությունը:

Հալեպի հայ բնակչությունը, կազմելով մի պատկառելի թիվ, մասնակցում է քաղաքի տնտեսական կյանքի բոլոր ասպարեզներին: Այստեղ կան մեծ թվով գործարանային բանվորներ, որոնք զբաղված են գլխավորապես տեքստիլ արդյունարերության մեջ, արհեստավորներ, գլխավորապես ոսկերիչներ, դերձակներ, կոշակարներ և այլն: Զգալի է մանր առևտրականների և խանութպանների թիվը: Հայերից մի քանիսր հասել են տնտեսական բարձր դիրքի, և ունեն իրենց խոշոր խանութները, ֆարբիկաներն ու այլ տիպի արդյունաբերական ձեռնարկություններ:

Հայ բնակչության դասակարգային շերտավորումը բավականին ցայտուն է տրտահայտված: Այն ժամանակ, երբ հարուստները ազատ ու շոտյ կյանք են վարում, աշխատավորական խավերը, հաղթահարելով բազմապիսի դժվարություններ, հազիվ հայթայթում են օրվա ապրուստը: Քաղաքի հայ բնակչության մի ստվար մասը (ինչպես նաև արաբ բնակչության) գտնվում է բնակարանային անմխիթար վիճակում: Երկրում պետական բնակարանային շինարարություն չի տարվում: Սովորաբար անհատական շինարարությունը տարվում է մեծահարուստների ձեռքով, որոնք տներ են կառուցում ոչ թե իրենց սեփական կարիքների համար, այլ վարձակալության տալու նպատակով: Տներից հարուստները մեծ եկամուտներ են ստանում: Այդպիսի պայմաններում, բնականաբար, բնակարանային վարձը շատ բարձր է: Ընտանիքի միջին եկամուտը տարեկան կազմում է 2000—2500 սիրիական ոսկի, որից 600-ը տրվում է որպես բնակարանային վարձ: Այսպիսով, տարեկան աշխատավարձի 25 տոկոսը տրվում է որպես բնակարանային վարձ: Պետք է նկատի առնել, որ մենք վերցրինք աշխատավարձի միջին շափը, որը բավականին խարուսիկ է: Բնակչության մի զգալի մասը վաստակում է տարեկան 1500 սիրիական ոսկուց ոչ ավելի: Մենք շատ առիթներ ենք ունեցել խոսելու Սիրիայից (և ոչ միայն Սիրիայից) եկած հայերի հետ (տուրիստներ, պատվիրակություններ, առանձին հյուրեր) և գրեթե բոլորը հաստատում են, որ «բնակարանները սուղ են»: Եթե դրան գումարինք բժշկական օգնության վրա կատարվող ծախսերը, երևիսների ուսման վարձը, որոնք նույնպես պատկառելի գումար են կազմում, և մի շարք նման կարգի ծախսեր, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի դժվարություններ է կրում «միջին հալեպցին»:

Մ շ ա կ ու թ ա յ ի ն հ ա ս տ ա տ ու թ յ ու ն ն եր

Վերևում մենք նշեցինք, որ Հալեպը չի դարձել սփյուռքահայ մշակույթի խոշոր կենտրոն, բայց այստեղ մենք նույնպես ունենք զանազան ուղղությունների պատկանող մշակու-

թային կազմակերպություններ, հայրենասիրական ու սպորտային միություններ:

1. Ազգային մշակութային միություն: Այս կազմակերպության շուրջը համախմբված է քաղաքի առաջադեմ մտավորականությունը զգալի մասը: Միությանը կից գործող «Գրական շրջանակ»-ը կազմակերպում է գրական երեկոներ ու դիսկուսիաներ, ուր քննարկվում են Սովետական Հայաստանի և սփյուռքահայ գրողների ստեղծագործությունները: Միության ակումբում կազմակերպվում են դասախոսություններ, հորեկյանական երեկոներ և այլ միջոցառումներ:

2. Հալեպի հայերի շրջանում շնորհակալ աշխատանք է կատարում Մաբախոս Սաբյանի անվան «Ակադեմիան»: Դա կերպարվեստի աշխատանոց սրահ է, որտեղ հավաքվում են կերպարվեստով հետաքրքրվող երիտասարդները: Նրանք այստեղ ցուցադրում են իրենց աշխատանքները:

3. Երիտասարդ կերպարվեստագետների կողքին հայ երաժշտական կուլտուրայի զարգացմանն ու տարածմանը սատարում է Ասլամազյանի անվան լարային կվարտետը: 1953 թվականին Երևանի ռադիոյի արտասահմանյան հաղորդումների խմբագրության հասցեով ստացված նամակում կվարտետի անդամները գրում էին, որ «Հայրենիքի մեջ երաժշտության արձանագրած առաջադիմությունները մեզ մոտ ստեղծեցին խանդավառություն և պատճառ դարձան արթնացնելու նոր շարժումներ: Այսպես՝ քաղաքիս մեջ կազմվեցավ սիրողներու նվազախումբ մը, նույնպես եռանդ առավ Ասլամազյան լարային քառյակը, նպատակ ունենալով իր կարողության սահմաններուն մեջ գաղութիս ներկայացնել սովետահայ գործիքային երաժշտության նորությունները»:

4. Կիլիկյան մշակութային միություն: Հնչակյան կազմակերպություն է: Այս միության հետ է կապված նաև Հայ մարմնամարզական միությունը սպորտային կազմակերպությունը:

5. Հայ Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղ: Բնչպես արտասահմանի մյուս գաղութներում, այնպես էլ Հա-

լեպում այս կազմակերպությունը գտնվում է ոամկավարների ազդեցության տակ:

6. Վահան Թեֆեյան մշակութային միություն: Բեյրութի համանուն միության մասնաճյուղն է, գտնվում է ոամկավարների վերահսկողության տակ:

7. Հայ երիտասարդաց ընկերակցություն: Այս կազմակերպությանը անդամակցում են մի խումբ ոամկավար երիտասարդներ: Միության աշխատանքները ղեկավարում է ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղը:

8. Հալեպում գործում են մի քանի հայրենակցական միություններ (Մարաշ, Ուրֆա, Զեյթուն, Այնթաբ, Քիլիս և այլն), «Մարաշ» հայրենակցական միությանն է հարում Վասպուրական մշակութային միությունը իր սպորտային կազմակերպությամբ: «Վասպուրական» ֆուտբոլային թիմը Սիրիայի ամենատեղ թիմերից մեկն է:

Ս Ի ր Ի ա յ Ի հ ա յ կ ա կ ա ն դ պ ր օ ց ն Ե ր Ե

Գպրոցների մասին մեր ունեցած տեղեկությունները առայժմ լրիվ չեն: Հալեպի հայ մամուլը բավարար չափով չի լուսաբանում դպրոցական կյանքը: Թերթերի էջերում հրատարակված կցկտուր տեղեկություններից դատելով Հալեպում այժմ գործում է 18 դպրոց, որոնցից 3—4-ը միջնակարգ են, իսկ մնացածը՝ տարրական դպրոցներ: Հինգ դպրոց կա Դամասկոսում: Եթե դրան ավելացնենք Սիրիայի մյուս քաղաքներում և դյուղերում գործող դպրոցները, որոնց թիվը 17-ից ավելի չէ, ապա կստացվի, որ այժմ Սիրիայում կա 40 դպրոց: Պետք է նկատել, որ դրանք մեծ մասամբ տարրական դպրոցներ են՝ փոքրաթիվ սովորողներով: Գպրոցները սովորաբար տեղավորվում են 3—4 սենյակից բաղկացած շենքերում, առանց անհրաժեշտ հարմարությունների: Գյուղական վայրերում երբեմն նույն դպրոցական շենքում պարապում են և՛ հայ, և՛ արաբ երեխաները:

Փոքր է Դամասկոսի հայ դպրոցը: Այստեղ ապրում է ընդամենը 10 հազար մարդ: 1958 թվականին մենք այցելեցինք

Սիրիայի մայրաքաղաքը և ուզում ենք հակիրճ կերպով հաղորդել գաղութից ստացած մեր տպավորությունները: Արաբական այդ մեծ քաղաքում հայերը կղզիացած չեն, նրանք աշխատում են պետական ու հասարակական հիմնարկներում, զբաղվում են արհեստներով ու առևտրով: Միաժամանակ հայերը կազմակերպել են իրենց զուտ ազգային կյանքը, ունեն իրենց դպրոցները, ակումբներն ու սպորտային միությունները: Դրանք այն կարևոր ազդակներն են, որոնք հայ աշխատավորներին, նրանց զավակներին օգնում են պահպանելու լեզուն, մշակույթն ու ավանդությունները, կապելու նրանց «մեծ հողի» մայր Հայրենիքի հետ: Հասկանալի է, որ այդ մեծ նպատակը մեծ գոհողություններ է պահանջում, ու ամեն մի հայրենասեր հայ չի խնայում իր եռանդն ու նյութական միջոցները ազգային հաստատությունները կանգուն պահելու համար:

Հայ գաղութի ներքին գործերը վարում է Ազգային իշխանությունը: Քաղաքում գործում է ՀԲԸՄ ակումբը, որտեղ կազմակերպվում են հրեբլյանական երեկոներ, գեղարվեստական ասուլիսներ, գեղարվեստական ինքնագործունեության համերգներ: Բացի դրանից հնչակյաններն ունեն իրենց սպորտային ակումբն ու մարզադաշտը: Դամասկոսում որևէ թերթ կամ ամսագիր չի հրատարակվում: Գաղութի կյանքը լուսաբանվում է Լիբանանում հրատարակվող թերթերի էջերում: Քաղաքում գործում է 5 դպրոց (Սահակյան վարժարան, Քարգամանչաց վարժարան, Մխիթարյան վարժարան, Հայ ավետարանականների վարժարան և մեկ վարժարան, որը գտնվում է դաշնակների վերահսկողության տակ):

Կրթական գործի մասին զաղափար տալու համար համառոտ տեղեկություններ բերենք Սահակյան վարժարանի մասին: Ուսուցման տևողությունը այս դպրոցում 6 տարի է: Ունի մանկապարտեզի բաժին: Այստեղ ուսուցանում են մայրենի լեզու, պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն և այլ հանրակրթական առարկաներ: Դասավանդումը բոլոր դասարաններում վճարովի է: Վճարման չափը սահմանվում է ըստ ընտանիքի նյութական կարողության: Որոշ թվով երեխաներ, որոնց ծնողները զուրկ են նյութական միջոցներից, վճարու-

միջ ազատվում են: Մյուս գաղութների մասին խոսելիս մենք ասացինք, որ կրթական գործի կազմակերպումը սփյուռքահայ գաղութներում մեծ պծվարությունների հետ է կապված: Սփյուռքի յուրահատուկ պայմաններում հայ ուսուցիչը հիրավի մեծ ու շնորհակալ աշխատանք է կատարում: Սակայն շպետք է անտեսել սփյուռքահայ դպրոցներում գոյություն ունեցող որոշ թերություններ, որոնք բնորոշ են արտասահմանում գործող գրեթե բոլոր դպրոցների համար: Դա այն է, որ երեխաները Սովետական Հայաստանի մասին բավարար գիտելիքներ չեն ստանում: Դա, բացի համապատասխան դասագրքերի բացակայությունից, պայմանավորված է մի շարք այլ պատճառներով: Բանն այն է, որ երկրի իշխանությունները վերահսկում են հայ դպրոցների գործունեությունը և աշխատում են որքան հնարավոր է հեռու պահել դրանք իրենց համար աննպաստ տրտաքին ազդեցություններից: Կարևոր նշանակություն ունի թե քաղաքական ո՛ր խմբավորման ազդեցության տակ է գտնվում դպրոցը, ո՛վ է դպրոցի տնօրենը, ի՛նչպիսին է ուսուցչական կազմը գաղափարական-քաղաքական հակումների տեսակետից:

Ավելորդ է նշել, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի սփյուռքի պայմաններում աճող սերնդին Սովետական Հայաստանի մասին անհրաժեշտ գիտելիքներ տալը: Դա նոր բարձրացող սերնդի հայրենասիրական դաստիարակության վճարական գործունեության մեկն է: Ուսումնասիրելով հայ լեզուն, պատմությունը, հայ մանուկները պետք է հնարավորին չափ բազմակողմանի գիտելիքներ ստանան Սովետական Հայաստանի մասին, այլապես նրանց հայրենասիրական զգացմունքները կարող են խամրել, կամ նույնիսկ չքանալ: Ահա թե ինչու մենք անհրաժեշտ համարեցինք ընդգծել այդ հարցի կարևորությունը:





ՍՈՒԴԱՆ

Հայերը Սուդանում բնակություն են հաստատել առաջին համաշխարհային պատերազմից հետո: Հայերի թիվը ամբողջ երկրում 800 մարդուց չի անցնում: Նրանցից 600 մարդ ապրում են մայրաքաղաք Խարտումում և Ուտուրման քաղաքում, իսկ մնացածը երկրի այլ վայրերում: Նրանք զբաղվում են արհեստներով և առևտրով:

Այստեղ էլ, ինչպես Եթովպիայում, ստեղծված է «դադու» թային ժողով» 7 հոգուց բաղկացած, որը զբաղվում է կրթական ու մշակութային հարցերով, ներկայացնում է հայ գաղութը պետական իշխանությունների առաջ, տնօրինում է գաղութի սեփականությունը կազմող անշարժ ու շարժական գույքը, ինչպես նաև կտակային գումարներն ու նվիրատվությունները: 1956 թվականից Խարտումում գործում է հայկական վարժարան 33 աշակերտներով և մանկապարտեզ՝ 11 երեխաներով: Գաղութի միջոցներով կառուցվել է փոքր սրահ, որտեղ երբեմն կուլտուրական միջոցառումներ են անցկացվում: Գաղութի մյուս կազմակերպություններից պետք է հիշատակել Հայ երիտասարդաց միությունը և Հայ բարեսեր տիկնանց միությունը:

Աֆրիկյան մայր ցամաքի մյուս երկրներում ապրում են մոտ 2000 հայեր: Մշակութային կազմակերպված կյանք այդ երկրներում չկա:



ԱՆԳԼԻԱ

Անգլիահայ գաղութը սկզբնավորվել է 16-րդ դարի երեսնական թվականներին: Հայերի մի մասը Անգլիա է եկել Հոլանդիայից (Ամստերդամից), մյուս մասը Եվրոպայի և Ասիայի այլ երկրներից: Անգլիայի հայերը, թվով 3000 մարդ, ապրում են Լոնդոնում, Մանչեստրում, Լիվերպոլում և այլ քաղաքներում: Նրանք հիմնականում զբաղվում են գորգի, մուշտակի, կտորեղենի, շոր մրգեղենի առևտրով, աշխատում են որպես տնտեսական զանազան գրասենյակների ծառայողներ: Կան նաև որոշ թվով բժիշկներ, ատամնաբույժներ, արվեստագետներ, համալսարանական ուսանողներ: Լոնդոնում գործում է Հայ երիտասարդական միությունը, որը երբեմն անց է կացնում մշակութային միջոցառումներ: Լոնդոնում հայերը որևէ ակումբ կամ սրահ չունեն: Գաղութը տպագիր թերթ կամ ամսագիր նույնպես չունի: Մանչեստրում կա Երիտասարդական և Տիկնանց միություն, որոնք ունեն փոքր սրահ:

Անգլիայի հայերը մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Սովետական Միության և Սովետական Հայաստանի նկատմամբ: Այդ հետաքրքրությունը ուժեղանում է նրանով, որ անգլիահայ գաղութը փոքր է և մինչև հիմա չի հաջողվել բավարար քանակությամբ այնտեղ ուղարկել հայկական ֆիլմեր, թերթեր, ամսագրեր, ձայնապնակներ: Սովետական Հայաստանի մասին Անգլիայի հայերը տեղեկություններ են ստա-

նում հայկական և միջազգային մամուլից, Սովետական Միության մասին արվող հաղորդումներից: Նրանք մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Անգլիայում կազմակերպվող սովետական ցուցահանդեսների նկատմամբ:



ԱՎԱՏՐԻԱ

Ավստրիայի փոքրաթիվ հայերը (մոտ 200 մարդ) ապրում են հիմնականում Վիեննայում: Այստեղ է գտնվում Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, որի մասին ստորև տալիս ենք հակիրճ տեղեկություններ:

1776 թվականին Վենետիկի Մխիթարյան միաբանության ներսում ծագած վեճերի հետևանքով միաբանության մի մասը թողնում է Վենետիկը և բնակություն հաստատում Տրիեստ քաղաքում, որտեղից էլ 1811 թվականին տեղափոխվում է Վիեննա: Այս թվականն էլ համարվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման սկիզբը: Միաբանության ջանքերով շուտով Վիեննայում հիմնադրվում է տպարան, որը դառնում է Ավստրիայի առաջնակարգ տպարաններից մեկը: Այս տպարանի եկամուտներով է, որ Վիեննայում կազմակերպվում է հայագիտական մի շարք աշխատությունների հրատարակության գործը, իսկ ավելի ուշ սկսում է լույս տեսնել «Հանդես ամսօրյա» ամսագիրը (1888 թ.): XIX դարի կեսերից սկսած Վիեննան դարձավ արտասահմանի հայագիտական խոշոր կենտրոններից մեկը: Հիշատակենք հատկապես Հովսեփ Գաթրճյանին, Մատթիա Գարագաշյունին և Արսեն Այտրնյանին, որոնց գրչին են պատկանում մի շարք արժեքավոր աշխատություններ:

Անդրադառնալով Վիեննայի Մխիթարյան միաբանության

ժամանակակից վիճակին, ամերիկահայ պրոֆեսոր Մանասե Սեակը գրում է.


«Բժրախտաբար, սակայն, Վիեննայի վանքը ներկայիս կգտնվի նյութական անձուկ վիճակի մը մեջ: Տպարանը, որ անցյալին եկամտոտի գլխավոր աղբյուրն էր, այժմ կորսնցուցած է իր այդ հանգամանքը: Փակված են նաև Թրքահայաստանն և հին Հայաստանն եկած նյութական հասույթներ, որոնք կորչանային տպագրված գրքերու վաճառումեն»¹:

«Հանդես ամսօրյա»-ն այժմ էլ շարունակում է կանոնավոր լույս տեսնել, գլխավորապես Ն. Ակինյանի ջանքերով, որը, շնայած իր պատկառելի հասակին, ամսագրում պարբերաբար հրատարակում է իր հոդվածները: Ն. Ակինյանը հրատարակության է պատրաստում «Հայ մատենագրության պատմությունը» երեք հատորից: Վիեննայում են պահպանվում հայկական մոտ 3000 հին ձեռագրեր: Միաբանության գրադարանը իր տրամադրության տակ ունի հայերեն գրեթե բոլոր տպագիր հրատարակությունները, հին ժամանակներից սկսած մինչև մեր օրերը: Հարուստ է հատկապես մինչև 1920 թվականը լույս տեսած գրքերի հավաքածուն:

Ամերիկահայ մամուլում հրատարակված տեղեկությունների համաձայն 1959 թվականին ԱՄՆ-ի զանազան բաղաբներում հանգանակություններ են անցկացվել Վիեննայի միաբանության համար հայերեն տողաշար մեքենա և վերելակի սարքավորում գնելու նպատակով:

Վենետիկի և Վիեննայի միաբանությունները պահպանելով իրենց ներքին վարչական ինքնուրույնությունը, սերտ կապեր ունեն իրար հետ: Վիեննայի Մխիթարյան միաբանությունը գալորոցներ է պահում Բելյուրթում, Ստամբուլում և Կահիրեում:

¹ «Հայաստանի կոչակ», 31 հոկտեմբերի, 1952 թ., № 44:



ԲՈՒԼՂԱՐԻԱ

Բուղարահայ գաղթականության պատմության որոշ ուսումնասիրողներ այն կարծիքին են, որ հայերի առաջին խումբերը այս երկրում բնակություն են հաստատել մեր թվականության 6-րդ դարում: Բուղարահայերի պատմությանը զբաղվող Ն. Գասապյանը 1958 և 1959 թվականներին «Երվան» թերթում հրատարակեց հոդվածների մի ամբողջ շարք, սրտեղ նա, հենվելով հայկական, բուղարական, ռուսական և օտարերկրյա աղբյուրների վրա, ապացուցում է, որ հայերի մուտքը Բուղարիս սկսվել է 6-րդ դարում և տարբեր չափերով շարունակվել հետագա դարերի ընթացքում¹: «Հայերու պատմությունը Բուղարիո մեջ հաղարամյա պատմություն ունի,— գրում է Ն. Գասապյանը:— Պիտի չերթանք այնքան խորերը, այլ անցողակի պիտի հիշենք Բյուզանդիոնի կայսրերու օրով 6-րդեն մինչև 10-րդ դար եղած բազմաթիվ գաղթերն ու տեղափոխումները, ինչպես՝ Մավրիկի (582—602), Կոստանտինն Կոպերոնիմոսի (741—775), Լևոն Գ. Խազարի (775—780), Նիկիֆոր Բոթիանատի (802—811) և Հովհ. Չմշկիկի (969—975) օրով եղած հայերու զանգվածային

¹ Տե՛ս «Երևան» շաբաթաթերթի 1953 թվականի դեկտեմբերի 19-ի, 1959 թ. հունվարի 16-ի և հաջորդ համարները, 1959 թ. ապրիլի 30-ի, մայիսի 8-ի, 15-ի, մայիսի 22-ի, 29-ի, հունիսի 5-ի, 12-ի, 19-ի և 26-ի համարները:

բունագաղթները դեպի բուլղարական հողերը՝ Քրակիա, Մակեդոնիա և Միզիա (Դանուբի շրջան): Այս գաղթականությունները ցրված էին երկրի գրեթե բոլոր մասերուն մեջ: Անպակաս շեն եղած նաև ուրիշ մասնակի գաղթներ, գերեզմարումներ, Բյուզանդիոնեն եկած խմբական կամ փոքրաթիվ տեղափոխումներ, փախստականներ և այլն, որոնք նույնպես ոչ զանցառելի թիվ մը կկազմեին»¹:

Բաղմաթիվ հայերի գաղթը շարունակվում է հետագա դարերի ընթացքում, մինչև նոր և նորագույն ժամանակները: Բացի բաղմաթիվ դրավոր հիշատակարաններից, պատմական հուշարձաններից, որոնք հաստատում են այս տեսակետը, հեղինակը նշում է հնում հայկական բնակավայրերի գոյությունը Բուլղարիայում: «Հայերուն բուլղար հողամասին վրա երկար ժամանակներում բնակությունը կհաստատվի բաղմաթիվ տվյալներով: Անոնք նույնիսկ տված են իրենց անունը շատ մը գյուղերու և ավաններու, որոնք կհիշատակվին 10-րդ դարեն ասդին»²: 1895—1896 թվականներին բուլղար ժողովուրդը դարձյալ հյուրընկալում է Քուրքիայից գաղթած հայերի նոր խմբեր: Բուլղարիան, որը 1877 թվականի ռուս-թուրքական պատերազմից հետո անկախություն էր ստացել, հուսալի ապաստան էր թուրքական հալածանքներից փրկված հայերի համար: Առաջին համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցավ հայերի վերջին գաղթը Բուլղարիա:

1892 թվականի վիճակագրությամբ Բուլղարիայում ապրում էր 6.643 հայ, 1900-ին՝ 13.809, 1926-ին՝ 27.322 հայ: 1959 թվականի տվյալներով Բուլղարիայում ապրում են մոտ 25 հազար հայեր: Բուլղարիայի հայերը այժմ բնակվում են երկրի 14 քաղաքներում, այդ թվում՝ Պլովդիվում՝ 7000, Սոֆիայում՝ 5000, Վառնայում՝ 3.800, Ռուսելյում՝ 750, Սլիվենում՝ 530, Քաթար-Քազարձիզում՝ 450, Տոլբուխինում՝ 320, Միլիտրենում՝ 260, Ստարա-Չագորայում՝ 250 և այլն:

1944 թվականը պատմության մեջ մտավ որպես բուլղար

ժողովրդի ազատագրության տարի: Սովետական Բանակի մուտքը Բուլղարիա նպաստավոր պայմաններ ստեղծեց բուլղար ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության համար: 1944 թվականի սեպտեմբերի 9-ի ժողովրդական ապստամբությունը բնորոշում էր այնպիսի միասնական կարգերին, երկրից վտարեց ֆաշիստական տարրերին և հռչակեց ժողովրդի իշխանություն:

1944 թվականը հայերի կյանքում նույնպես շրջադարձային կետ էր: Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ազդեցության տակ երկրում ստեղծվում են առաջին կոմունիստական կազմակերպությունները, բուլղար կոմունիստների կողքին մարտնչում են նաև հայ ժողովրդի զավակները: Հայ կոմունիստների գործունեությունը միավորելու և ավելի կազմակերպված դարձնելու նպատակով Բուլղարիայի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեին կից ստեղծվեց մամուլի կոմիտե, որի նախագահն էր Ստեփան Շահրազյանը: «1919 թվի հուլիս ամսին, — գրում է Արմենակ Թագվորյանը «Երևան» շաբաթաթերթում, — Մամուլի կոմիտեն «Հայ բանվորական կոմունիստական ինքնազարգացման միություն» անունից Պլովդիվում բրոշյուրի ձևով հրատարակեց իր առաջին տպագիր կոչը՝ ուղղված Բուլղարիայի և արտասահմանի հայ աշխատավորության: Այդ կոչը մեծ տիրաժող տարածվեց ոչ միայն Բուլղարիայում, այլև մյուս երկրներում: Այն ժամանակվա շովինիստական նեխած մթնոլորտում կոչը առաջ բերեց ցնցում: Հայ բանվորներն ու աշխատավորները իրենց հայացքը դարձրին դեպի Կոմունիստական պարտիան... Սրանից 40 տարի առաջ Պլովդիվում հրատարակված հիշյալ պատմական կոչը մեծ իրադարձություն էր գաղութահայ քաղաքական ու հասարակական կյանքում: Այդ ցույց էր տալիս, թե գաղութահայ իրականություն մեջ հասունացել է մի նոր քաղաքական ու հասարակական կյանք: Այդ ցույց է տալիս, թե գաղութահայ իրականություն մեջ հասունացել է մի նոր քաղաքական ուժ, հայ կոմունիստների քաղաքական ուժը, որը հրապարակ է իջնում անհաշտ պայքարի դուրս գալով բոլոր զույնի ազգայնական

¹ «Երևան», 8 մայիսի, 1959 թ.:

² «Երևան», 29 մայիսի, 1959 թ.:

պարտիաների դեմ, համախմբելով սփյուռքահայ աշխատավորությանը կոմունիստական պարտիաների դրոշի տակ: Ազեղունը խոսքերով հայ կոմունիստները կոչ էին անում «հին ու եղեռնական աշխարհի ավերակներուն վրա կառուցանելու սոցիալիստական աշխարհի հոյակապ շենքը՝ գեղեցկության, ճշմարտության, ազատության, եղբայրության ու հավասարության կոմունիստական նոր աշխարհը»¹:

1920 թվականի սեպտեմբերին Պլովդիվ քաղաքում սկսում է լույս տեսնել «Կարմիր լուրեր» սփյուռքահայ առաջին կոմունիստական թերթը: 1960 թ. այդ թերթի մասին գնահատելի ուսումնասիրություն է հրատարակել Ռ. Խաչատրյանը:

Հայ կոմունիստների մասնակցությունը բուլղար ժողովրդի կողմից ծավալված ռևոլյուցիոն պայքարին շարունակվում է հետագա տարիների ընթացքում: 1940—1944 թվականներին հայ ժողովրդի լավագույն զավակները մասնակցում էին հակաֆաշիստական պայքարին: Նրանցից շատերը այդ պայքարում զոհարեցին իրենց կյանքը: Հիշատակենք Հարություն Պողոսյանին, Կարապետ Խաչատրյանին (Վառնայից), Հերմիոնե Ռազգրադյանին (Բուտեզրադից): Ոստիկանական դաժան հալածանքների ենթարկվեցին Ս. Ալանյանը, Վ. Միրանոսյանը, Կ. Ծինգոլյանը, Հ. Փափազյանը, Զ. Ղասարյանը, Հ. Մարգարյանը, Գ. Գարբիելյանը, Ա. Ասլանյանը, Կ. Մարգարյանը, Գ. Դավթյանը և ուրիշներ:

Ժողովրդա-դեմոկրատական կարգի հաղթանակը Բուլղարիայում միաժամանակ հայ աշխատավորության լավագույն ձգտումների ու երազանքների իրականացումն էր: Սոցիալիզմի հիմքերի կառուցումը հաղթանակած ժողովրդական դեմոկրատիայի պայմաններում արժատապես փոխեց նաև հայերի վիճակը: Կրթյուն կյանքով է ապրում ներկայումս Բուլղարիայի հայ աշխատավորությունը: Հայ աշխատավորական զանգվածները ակտիվորեն ներգրավվել են սոցիալիզմի կառուցման գործին: Ոչ թե արհամարհանքն ու ատելությունը փորբամասնությունների նկատմամբ, ո՛չ իրավագուրկ վիճակն

¹ «Երևան», 29 նոյեմբերի, 1959 թ.:

ու տնտեսական անապահով կյանքը, այլ հավասարությունը, եղբայրությունն ու նպատակների ընդհանրությունն է միավորում հայ և բուլղար աշխատավորներին, բոլոր ազգություններին: Այժմ Բուլղարիայում, ինչպես և Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայում, որտեղ անվերադարձ կերպով պատմության գիրկն է անցել շահագործման ու կեղեքման վրա հիմնված իրավակարգը, հայկական բոլոր հասարակական, կուլտուրական ու կրթական կազմակերպությունները օգտվում են պետական լայն հովանավորությունից ու աջակցությունից: Այստեղ, ինչպես մենք տեսնում ենք արտասահմանի մյուս հայ գաղութներում, այդ կազմակերպություններն ու միությունները այլևս չեն պահվում ժողովրդական հանգանակություններով, հարուստ բարերարների կտակներով ու նվիրատվություններով: Ժողովրդական պետությունն է հոգում այդ բոլոր ծախսերը: Դեմոկրատական այս երկու ռեսպուբլիկաներում արժատական փոփոխություններ են տեղի ունեցել նաև հայ բնակչության սոցիալական կազմի մեջ: Սոցիալիզմի կառուցման տարիներին հայերը ներգրավվել են արդյունաբերության բազմազան ճյուղերի մեջ, աճել է հայ գիտնականների ու արվեստագետների թիվը: Հայ նոր, սոցիալիստական մտավորականությունը իր ակտիվ մասնակցությունն է բերում սոցիալիզմի կառուցման գործում:

Կուլտուրական լայն կապերը Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ, գիտական ու կուլտուրական տրժեքների լայն փոխանակությունը, պատվիրակությունների փոխադարձ այցելությունները, այս բոլորը բացառիկ նպաստավոր պայմաններ են ստեղծում Բուլղարիայի հայ աշխատավորների հետաքրքիր ու բազմաբովանդակ կյանքի համար:

Սովետական Հայաստանի երաժշտական-կատարողական կոլեկտիվների, անհատ կատարողների, դերասանների, նկարիչների, գրողների ելույթները սփյուռքահայ գաղութներում մեծ նշանակություն ունեն ո՛չ միայն այն իմաստով, որ դրանք իսկական գեղարվեստական հաճույք են պատճառում հանդիսատեսին, սրբապազանդում սովետահայ կուլտուրայի, արվես-

տի ու գրականության նվաճումները, սփյուռքահայ մասսաներին ավելի կապում մայր-հայրենների հետ, այլև մեծապես նպաստում են տեղում կուլտուրական-գեղարվեստական կյանքը աշխուժացնելուն: «Սովետական Հայաստանի երգի և պարի պետական անսամբլի Բուլղարիա այցելությունն հետո, — գրում է «Երևան» թերթը, — պետք է խոստովանինք, թե մեր երգերն ու պարերը ստացան նոր թափ:

Ու գեղեցիկը միշտ օրինակելի համարվելով, մեր միության կոլեկտիվներու համար աշխուժացման այդ գիծը պահելը դարձավ առաջադրություն»¹: Նույն այս երևույթը օրինաչափորեն տեղի է ունենում մյուս գաղութներում:

Մեծ ու շնորհակալ աշխատանք է կատարում Սոֆիայի «Երևան» կուլտուրական միությունը, որն իր մասնաճյուղերն ունի բոլոր հայաշատ քաղաքներում: Շատ մասնաճյուղեր ունեն իրենց ակումբները, սրահներն ու թատրոնները: Այնտեղ, ուր դրանք բացակայում են, մասնաճյուղերն իրենց միջոցառումներն անց են կացնում պետական մյուս ակումբներում ու սրահներում:

Գեղարվեստական ինքնագործունեության խմբերին իրենց աջակցությունն ու օգնությունն են ցուցաբերում Բուլղարիայի երաժշտագետները, թատերագետները, դերասանները, գրողները: Երկու տասնյակ հազարից մի քիչ ավելի բնակչություն ունեցող բուլղարահայ գաղութը բազմաթիվ երգչախմբեր, թատերական, ժողովրդական երգերի խմբեր, ժողովրդական գործիքների նվագախմբեր ունի: 40-ից մինչև 120 երգիչ ունեցող հայ երգչախմբերը փոխադարձ համերգներ են տալիս հայաշատ վայրերում, մասնակցում են երկրի երաժշտական կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Դրանցից շատերը հայտնի են համաբուլղարական մասշտաբով: Այդպիսիք են Պլովդիվի «Արամ Խաչատրյան», Սոֆիայի «Երևան», Ռուսեի «Կոմիտաս» երգչախմբերը: «Երևան» կուլտուրական միության մասնաճյուղը ունի նաև հատուկ, 65 հոգուց բաղկացած «Օպերային» խումբ, որը քիմիոդրոլ է Անուշ

¹ «Երևան», 15 հուլիսի, 1960 թ.:

օպերան: Բացառիկ հաջողություն ունեն ժողովրդի մեջ թատերական խմբերը:

Արտասահմանի հայ գաղութներում պրոֆեսիոնալ թատրոններ չկան: Սակայն դրանց փոխարեն գոյություն ունեն զգալի թվով թատերական ինքնագործ խմբեր, որոնց կազմում կան հետաքրքիր և ինքնատիպ տաղանդներ: Դժվար է գերազնահատել թատերական խմբերի նշանակությունը հայ գաղութներում: Պարբերաբար տրվող ներկայացումները հակայական դեր են խաղում մայրենի լեզվի և կուլտուրայի պահպանման գործում: Նրանք դաստիարակում են հայ բնակչության գեղարվեստական ճաշակը, կապում նրան ժամանակի հրատապ հարցերի հետ: Պետք է հաշվի առնել նաև, որ թատերական ժանրը դարգացնելու համար ավելի մեծ դժվարություններ պետք է հաղթահարել, քան դրանք լինում են արվեստի մյուս ձևերի դարգացման ասպարեզում (հարմար բեմ, դեկորներ, հատուկ ռեժիսորական աշխատանք և այլն):

Հայ դասական, ժամանակակից, ռուսական, բուլղարական, արևմտաեվրոպական դրամատուրգների բազմաթիվ պիեսներ են ներկայացվել Բուլղարիայում վերջին 15 տարիների ընթացքում: Առանց չափազանցության կարելի է ասել, որ արտասահմանի որևէ այլ հայկական գաղութում թատերական կյանքը այնպիսի թափ չունի, ինչպես Բուլղարիայում: Թատերական խմբերում մասնակցող շատ սիրող-դերասաններ ըստ էության պրոֆեսիոնալ մակարդակ ունեցող դերասաններ են:

Բուլղարիայի երաժշտաներ հասարակայնությանը հայտնի են դաշնակահարուհիներ Ալիս Աբրահամյանի, Զարուհի Սայանի և ջութակահար էմանուել Գուլումջյանի անունները: Ինչպես գրում է «Երևան» թերթը, Ալիս Աբրահամյանը Պլովդիվ քաղաքի սիմֆոնիկ նվագախմբի համերգում Բեթհովենի գաշնամուրային 4-րդ կոնցերտը «մեկնաբանեց բացառիկ հուղականությամբ, խոր ըմբռնումով և բարձր տեխնիկայով, առանց արտաքին ավելորդ էֆեկտների»: Ալիս Աբրահամյանը սովորում է Սոֆիայի երաժշտական ակադեմիայում, պրոֆեսոր Ա. Ստոյանովի դասարանում: Հաջողությամբ հանդես է գալիս նաև Զարուհի Սայանը:

Հայ մամուլը Բուլղարիայում երկար տասնամյակների պատմություն ունի: Սկսած 1880-ական թվականներից, Բուլղարիայում տարբեր ժամանակներում լույս են տեսել «Հույս», «Իրավունք», «Գանուբ», «Վերածնություն», «Հայաթերթ», «Շավիղ», «Հայելի», «Վիպաթերթ», «Կարմիր լուրեր» թերթերը և այլ պարբերականներ:

«Երևան» կուլտուրական միության կենտրոնական վարչությունը 1944 թվականից հրատարակում է «Երևան» շաբաթաթերթը, որը լույս է տեսնում ավելի քան 3000 օրինակ տիրաժով: Թերթի բազմամյա խմբագիրն է Բենիամին Քյուֆենկչյանը: 1951 թվականի մարտի 13-ին լույս տեսավ թերթի 1000-րդ համարը, որը նշվեց որպես բուլղարահայ առաջագիմական մամուլի տոն: «Ընտրված ուղին,— գրել է այդ առթիվ «Երևան» թերթը,— ժողովրդի ծառայության պատվարներ ուղին է: Տակավին առաջին թիվին մեջ կհռչակվեր թերթի հակաֆաշիստական և հառաջագիմական գիմագիծը: Հետագային՝ սոցիալիզմի կառուցման ձեռնարկումեն հոբ, ինչպես բուլղարահայ «Երևան» միությունը, նույնպես և թերթը, իրենց սկզբունք ընդունեցին սոցիալիզմի կառուցման ծառայությունը, հետևելով Կոմունիստական պարտիայի ղեկավարության: Այս սկզբունքներու որդեգրումը կրիներ այս երկրի ժողովրդի կենսական շահերի պաշտպանության գիտակցությունեն, ավելի ևս, որ բուլղարահայությունը որպես անոր անբաժան մասնիկը, փորձով տեսավ իր շահերու նույնությունը բուլղար ժողովրդի շահերուն հետ:

Մեր թերթին որպես ուղեցույց ծառայող ուրիշ մեկ սկզբունքն է Սովետական Հայաստանի և բուլղարահայությունից միջև սերտ հարաբերություններու հաստատումը: Ու, վերջապես, մեր թերթը կծառայե բուլղարահայ «Երևան» միության ինքնագործ գեղարվեստական կոլեկտիվներու զարգացման»¹: Թերթի ակտիվ թղթակիցներից են՝ Մարտիկ Տունիկյանը, Մարտիկ Հագիդյանը, Միսաք Ռեթևոսյանը, Վահան Գասպարյանը և շատ ուրիշներ: Գնահատելով թերթի երկարամյա րեզմնա-

¹ «Երևան», 13 մարտի, 1959 թ.:

վոր գործունեությունը, «Երևան» կուլտուրական միության կենտրոնական վարչության նախագահ Մ. Խաչիկյանը¹ գրում էր, որ 15 տարի շարունակ թերթը բուլղարահայությունը ծանոթացրեց Սովետական Հայաստանի նվաճումներին, սեր և նվիրվածություն սերմանեց Բուլղարական Ժողովրդական Ռեսպուբլիկայի հանդեպ, Սովետական մեծ Միության հանդեպ, ջատագովեց ժողովուրդների բարեկամությունը, պայքարեց հանուն խաղաղության, կազմակերպեց հայ հասարակության բարոյա-քաղաքական միասնությունը:

Բուլղարիայի մի շարք քաղաքներում գործում են հայկական դպրոցներ. 1960—1961 ուսումնական տարում Բուլղարիայում հայկական դպրոցներ կային հետևյալ քաղաքներում.

| | | | |
|--------------|--------------------|-----|---------|
| Պլովդիվ— | ուլթամյա վարժարան— | 582 | աշակերտ |
| Սոֆիա— | » | » | — 190 » |
| Ռուսե— | » | » | — 300 » |
| Բուրգաս— | քառամյա վարժարան— | 110 | աշակերտ |
| Սլիվեն— | » | » | 48 » |
| Խասբովո— | » | » | 23 » |
| Կոլարովգրադ— | » | » | 22 » |

Նախորդ, 1959—60 թվականներին հայկական դպրոցներ կային նաև Ստարա-Չագորա, Բաղարճիք, Տոլբուխին և Յամբոլ քաղաքներում: Աշակերտների թիվը 20-ից իջնելու հետևանքով այդ դպրոցները միացվեցին տեղի բուլղարական դպրոցներին, սակայն մայրենի լեզվի դասավանդումը հայ աշակերտների համար պահպանվում է (շաբաթական 2-ից 6 ժամ), ինչպես նաև Հայաստանի պատմության և աշխարհագրության դասավանդումը:

Ահա թե ի՛նչ է գրում «Երևան» թերթը Բուլղարիայում կրթական գործի զարգացման մասին. «Կապիտալիստական տիրապետության օրով փոքրամասնությունների դեմ շովինիստական ճնշումի քաղաքականությունը կղժվարացրեց հայկական դպրոցներու անարգել առաջընթացը: Ինք սեպտեմբերին հերոս Կոմունիստական պարտիայի ղեկավարության տակ

¹ Այժմ վարչության նախագահն է Գաբրիելովը:

գար, այցման լայն ուղի բացվեց նաև փոքրամասնություններու և անոնց կարգին հայկական դպրոցներու առջև: Այս նեղ սյունակը հնարավորություն չընծայեր լայն բաղդատություններ ընել անցյալի և ներկայի միջև, սակայն անհրաժեշտ է շեշտել, թե ներկայիս ուսուցչական կազմը անհամեմատ ավելի ապահով վիճակ մը ունի, վայելելով պետական ծառայողի իրավունքներ, որոնք կապահովեն նյութական կանոնավոր վճարում և կենսաթոշակ»¹:

Հայկական դպրոցներն ավարտելուց հետո հայ երիտասարդներն ու աղջիկները մտնում են երկրի բարձրագույն ուսումնական հաստատությունները: Այժմ այդ հաստատություններում սովորում են 300-ից ավելի երիտասարդներ:

Բուլղարիայի հայերի հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն են ցույց տալիս պիոներական և կոմերիտական կազմակերպությունները: Նրանք մասնակցում են երկրի մասշտաբով կազմակերպվող ֆեստիվալներին և գեղարվեստական այլ միջոցառումների: «Բուլղարահայ երիտասարդությունը, — գրում է «Նրևան» թերթը, — որպես անբաժան և իրավահավասար անդամը երիտասարդական այս կուլեկտիվին, կապրի անսահման վերելք: Հայ պատանիներն ու երիտասարդները, օգտվելով ժողովրդական կառավարության կողմից ստեղծված պայմաններեն, ֆիզկուլտուրայի զանազան ճյուղերուն մեջ առաջադիմելու ամեն հնարավորություն ունին»²:

1959 թվականին Բուլղարիայի ժողովրդական ժողովը ընդունեց օրենք «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և Բուլղարական ժողովրդական Ռեսպուբլիկայի մեջ ժողովրդական կրթության հետագա զարգացման մասին»: Անդրադառնալով դպրոցի կյանքում տեղի ունեցած այդ խոշոր իրադարձությանը, «Նրևան» թերթը գրել է, որ կրթական նոր օրենքը հավասարապես վերաբերում է հայկական դպրոցներին: «Մեր ազգակիցները, — գրում է թերթը, — ևս նույնքան և ավելի մեծ

¹ «Նրևան», 15 մայիսի, 1959 թ.:

² «Նրևան», 5 հուլիսի, 1959 թ.:

լավով կուզեն տեսնել իրենց գավակները ոչ միայն ավելի ուսյալ, այլև կյանքի համար ավելի լավ պատրաստված»¹:

1959 թվականի մայիսին Պլովդիվի Ստեփան Շահումյանի անվան դպրոցը տոնեց իր հիմնադրման 125-րդ տարեդարձը: Այդ առթիվ ժողովրդական ժողովի նախագահության հրամանագրով դպրոցը պարգևատրվեց «Կիրիլ և Մեթոդի» Առաջին աստիճանի շքանշանով: Հրապարակվեց Սովետական Հայաստանի Լուսավորության մինիստրության ողջույնի հեռագիրը: Ներկաները բուռն խանդավառությամբ ընդունեցին այն լուրը, որ Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրությունը դպրոցին նվիրել է լաբորատորիա և կինոապարատ, իսկ ժողովրդական Տնտեսության հորհուրդը՝ խառատային հաստոց իր գործիքներով:

¹ «Նրևան», 3 հուլիսի, 1959 թ.:





ԻՏԱԼԻԱ

Իտալահայ գաղութի անցյալի մասին «Արարատ» թերթը գրում է. «Իտալիո հայ գաղութը իր սկզբնավորությունը կառնե Թուրինյանց հարստության շրջանեն... Արդարև Կիլիկյան հայոց թագավորության օրերուն հայերը կերթային ու կուգային Իտալիո բոլոր նավահանգիստները՝ Վենետիկ, Քրիեստ, Ճենովա, Նարոլի և այլն: Հնագույն արձանագրություն մը հայերեն և լատիներեն լեզվով ժՔ դարեն կմնա իբրև փաստ Քրիստոսթանն Քրափիարներու վանքին մեջ ի Հռոմ:

Իտալիո մեջ ժՁ դարուն առաջին հայերեն գիրքը տպված է հայոց Կլուսենյակը կը հանդիսացող Հակոբ Մեղապարտի, որ ի Վենետիկ լույս ընծայած է 1512—1513 հայերեն 5 գիրքեր՝ Պարզատումար, Պատարագատետր, Ուրբաթագիրք, Տաղարան և Աղթարք: Այսպիսով տպագրության գյուտեն 60 տարի վերջ հայերը ունեցած են տպված գիրք շատ մը եվրոպական ազգերն առաջ»¹:

Գաղութի մասին ընդարձակ ուսումնասիրություն ունի Ղեվոնդ Ալիշանը: Այդ ուսումնասիրությունը, «Հայ-Վենետ կամ յարբնչությունը հայոց և Վենետաց» խորագրով լույս է տեսել Վենետիկում, 1896 թվականին:

Վենետիկի մոտ, Ս. Ղազարոսի կղզում է գտնվում հայ կաթոլիկ Մխիթարյան միաբանությունը: Այն հիմնվել է 1717

¹ «Արարատ», 28 փետրվարի, 1960 թ.:

թվականին: Հենց այդ ժամանակ էլ Վենետիկի պառլամենտը կղզին վարձակալության պայմաններով տրամադրել է Մխիթարյաններին, որն այժմ միաբանության սեփականությունն է: Կղզին 28 հազար քառ. մետր տարածություն ունի:

Մխիթար Սեբաստացու (1676—1749) գործունեությունը պայմանավորված էր պատմական մի շարք հանգամանքներով: Այդ շրջանում Վատիկանը և Ֆրանսիան կաթոլիկության տարածման միջոցով ձգտում էին ավելի ու ավելի տիրապետող դիրքեր գրավել Արևելքում: Այդ ժամանակաշրջանում Մերձավոր ու Միջին Արևելքի որոշ խավերում ձգտում էր նկատվում դեպի եվրոպական լուսավորությունը, լեզուներն ու գիտությունը: Մխիթարյան միաբանության ամբողջ պատմության մեջ միշտ պայքարի մեջ էին երկու ուղղություն: Մի կողմից հայ կաթոլիկ հոգևորականությունը ձգտում էր իր կողմից վերահսկվող վարժարանների սաներին տալ զուտ կղերական աստվածաբանական կրթություն, մյուս կողմից սովորողները, բնականաբար, չէին բավարարվում ուսման այդպիսի զրվածքով և հայ դեմոկրատական շրջանների ցանկություններին համաձայն ավելի ու ավելի ընդգծված ձևով էին պահանջում կրթության գործը գնել աշխարհիկ հիմքերի վրա:

Հետագայում, 1776 թվականին միաբանությունը երկու մասի բաժանվելու պատճառներից մեկն էլ հենց այս հանգամանքն էր: Հնդկահայ բարերարների մի մասը պահանջում էր տրված զումարները ծախսել ոչ թե աստվածաբանական, այլ պատմաբանասիրական երկերի թարգմանության վրա: Միաբանության մի մասը ուժեղ դիմադրություն էր ցույց տալիս այս պահանջին, ցուցաբերելով ծայր աստիճան կրոնական մոլեռանդություն¹:

Հետագայում Վատիկանի հովանավորությամբ Մխիթարյանները իրենց ազդեցությունը տարածեցին արտասահմանի հայ բնակչության մի մասի վրա, մի շարք գաղութներում հիմնելով դպրոցներ և մշակութային այլ հաստատություններ: Այդ դպրոցների մի մասը շարունակում է գործել նաև այժմ:

¹ Ավելի մանրամասն տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ դպրոցի, Կահիրե, 1947 թ., էջ 600—625:

Վենետիկում այժմ էլ լույս է տեսնում «Բաղմավեպ» ամսագիրը, որը նյութեր է հրատարակում հայոց լեզվի, պատմության, գրականության և այլ հարցերի վերաբերյալ: Այստեղ է գտնվում հայ ձեռագրերի մեծ հավաքածուներից մեկը, թվով մոտ 4000 ձեռագիր:

Միանգամայն իրավացի է Ա. Կարինյանը, երբ գրում է. «Մխիթարյան միաբանության ներկայացուցիչները Վատիկանի անմիջական հավանությամբ և կարգադրությամբ են հիմնել հայկական դպրոցներ, տպարաններ, բարեգործական հաստատություններ: Նրանք կաթոլիկ կղերապետության հավանությամբ են հրատարակել որոշ աշխատություններ հայ լեզվի, գրականության մասին և ապա մշակել կուլտուր-լուսավորական աշխատանքի ծրագրեր, միշտ ջանալով շոշափելի հարվածներ հասցնել ատելի «էջմիածնական» եկեղեցու ղեկավարությանը: Ծրագրերը այնքան էլ բարդ չեն եղել: Հայ նոր ընթերցողների ընդհանուր կոնտինգենտը լայնանում էր: Մխիթարյան գործիչների գատողությամբ աշխարհիկ թեմաներ արժարժող հայերեն հրատարակությունները առաջին հերթին պետք է գրավեին հենց այդ ընթերցողների ուշադրությունը»¹:

Մխիթարյան միաբանությունը Ս. Ղազարոսի կղզուց վերահսկում ու ղեկավարում է արտասահմանի հայ գաղութներում գործող Մխիթարյան դպրոցների աշխատանքը: Այդպիսի դպրոցներ կան Իտալիայում, Իրանում, Քուրբիայում, Սիրիայում, Եգիպտոսում, Լիբանանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում: Գրանցում սովորողների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 2 հազար մարդ: Թեև արտասահմանի հայ դպրոցներում սովորող աշակերտների ընդհանուր թվի համեմատությամբ այս թիվը այնքան էլ մեծ չէ, բայց պետք է հաշվի առնել, որ արտասահմանի հայության կաթոլիկ դավանությանը պատկանող մասը նույնպես մեծ չէ: Կաթոլիկ եկեղեցուն, բողոքական և այլ աղանդներին պատկանող հայ հավատացյալները

¹ Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատոր 2, էջ 18—19:

կազմում են արտասահմանի հայ բնակչության 10 տոկոսից ոչ ավելին: Ծիշտ է, դավանաբանական պայքարի հարցերը մեծ օրերում այնպիսի սուր բնույթ չեն կրում, ինչպես անցյալում, սակայն դրա հետ միասին պետք է նկատի ունենալ արտասահմանի հայ գաղութների յուրահատուկ միջավայրը: Հայ պետական իշխանության բացակայության պայմաններում հայ եկեղեցին շարունակում է իրականացնել նաև մի շարք աշխարհիկ ֆունկցիաներ (մասնակցություն դպրոցների, բարեգործական ու մշակութային կազմակերպությունների աշխատանքների ղեկավարմանը և այլն): Այսպիսի պայմաններում քաղաքական կուսակցությունները (հնչակյաններ, ոսմկավարներ, դաշնակներ) պայքարում են եկեղեցական թեմերում իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար: Հասկանալի է, որ կապիտալիստական երկրների կառավարող շրջաններն իրենց հերթին ձգտում են եկեղեցական շրջանների միջոցով ուժեղացնել իրենց ազդեցությունը հավատացյալների շրջանում, եկեղեցին օգտագործել իրենց հակաթողութային ծրագրերի իրականացման գործում:

Արտասահմանյան տուրիստները սովորաբար այցելում են Սուրբ Ղազարոսի կղզին, որպես Իտալիայի տեսարժան վայրերից մեկը:

Լինելով Վատիկանի ազդեցության տակ, Մխիթարյանների միաբանությունը միաժամանակ ձգտում է պահել իր ներքին անկախությունը: Միաբանության որոշ անդամներ հետաքրքրություն են ցուցաբերում Սովետական Հայաստանի մշակույթի նկատմամբ: Միաբանությունը սիստեմատիկաբար ստանում է Հայաստանի պարբերական մամուլն ու հումանիտար գիտությունների գծով հրատարակվող գրքերի նմուշները: Գրանցից մի մասը գրախոսվում է «Բաղմավեպ» ամսագրի էջերում:

Սովետական Հայաստանից Իտալիա ժամանած տուրիստների ու հյուրերի նկատմամբ միաբանության անդամները սովորաբար լույս վերաբերմունք են ցուցաբերում: Վենետիկի Մխիթարյան միաբանությունը ուղղակի չի ենթարկվում Մերձավոր Արևելքի հայ կաթոլիկ կենտրոնին, որը գտնվում է

Բեյրութում, սակայն այդ կենտրոնի հետ կապեր է պահպանում: Կաթուղի կենտրոնը և ընդհանրապես կաթուղի վերնախավը հանդես են գալիս արհեստագործական ուժերի հետ համագործակցած:

Իտալիայում այժմ բնակվում են մոտ 1000 հայեր, որոնցից Միլանում ապրում է 400 մարդ, Վենետիկում՝ 200, Հռոմում և շրջակայքում՝ 200: Մնացածները ապրում են Տրիեստում, Տուրինում, Բարիում, Ճենովայում, Բոլոնիայում և այլուր: Ընդհանրապես վերցրած Հռոմի, Միլանի և Իտալիայի մյուս քաղաքների հայերը իրենց համեստ թվով երկրի քաղաքական կյանքում ակտիվ ազդեցություն չունեն: Հայկական կյանքը ավելի ակտիվ է Միլանում, որտեղ գործում է «Հայ տուն» անունով ակումբը: Այստեղ կազմակերպվում են Հայաստանից ստացված կինոֆիլմերի ցուցադրումներ, դասախոսություններ ու հանդեսներ: Հայ տունը Սովետական Միությունից ստանում է գրքեր, թերթեր և ամսագրեր: Տան դիրեկտորն է Գևորգ Խանգելյանը:

1960 թվականին Միսիթարյան միաբանության անդամ, Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի տնօրեն Վահան Հովհաննիսյանը այցելեց Սովետական Հայաստան: Նա Հայաստանում եղել էր 1936 թվականին, և այն պատմական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել այդ ժամանակվանից հետո, նրա վրա մեծ տպավորություն թողեցին: «1936-ին և 1960, կործանարար պատերազմին վերջը, — գրում է նա իր տպավորություններում, — հայ բազուկն ու հանճարը խանդավառ հոգիով, համեստ բանվորը և ճարտարապետը կողք-կողքի և քար առ քար կերտած էին Երևանը: Ամեն կողմ հայ ճարտարապետությունն էր խոր դրոշմը դրած բանդակված պատուհաններին ու դռներին: Կարմիր շեշաքարը կիշխեր ամեն կողմ: Քաղաքն անազնորեն արշաված է բլուրի բլուր: Տարածած է իր թևերը հեռավոր բարձունքներ և տակավին մեքենաներ ճամբա կբանան նոր թաղեր ստեղծելու: Կարելի է առանց վարանելու, հազարամյա մայրաքաղաքներու պերճանքին մոտ

դնել և ըսել. Ասիկա 15 տարվան մեջ շինված հայ հանճարի գործ է»¹:

Այն հանգամանքը, որ Վենետիկը և Հռոմը հանդիսանում են հայ կաթուղի կղերի կենտրոնները, որոշակի կնիք են դնում իտալահայ գաղութի կյանքի վրա: Վենետիկում գործում է Միսիթարյանների Մուրադյան վարժարանը, հոգևոր դպրոցը, իսկ Հռոմում՝ Լեոնյան հոգևոր վարժարանը:

Դրանցից ավելի մեծը Մուրադյան վարժարանն է: «Վարժարանը գոյություն ունի 1836 սեպտ. 11-ին ի վեր, — գրում է Մ. Ճիհանյանը իր տպավորություններում, — ընդունած է շուրջ երկու հազար ուսանողներ, որոնց կեսը շրջանավարտ եղած է: Այժմ վարժարանը ունի 100 աշակերտ և կրնա մինչև 140 հոգիի տեղ պատրաստել՝ եթե աշակերտներու թիվը բարձրանա հետզհետե: Վարժարանը ունի 15—20 ձրի կամ կիսաթոշակ աշակերտներ, կսորվին հայերեն (գրաբար ու աշխարհագրագիտություն, ֆրանսերեն և անգլերեն լեզուները: Շրջանավարտները կընդունվին օտար բարձրագույն դպրոցները, հետևելու իրենց նախընտրած ուսումներուն՝ բժշկության, քիմիագիտության, երաժշտության, ճարտարագիտության, նկարչության և այլն»²:

¹ «Մեր նշանաբանն է Հռոաջ», 2 հոկտեմբերի, 1960 թ.:

² «Մուրհանդակ», 23 դեկտեմբերի, 1961 թ.:





ՀՈՒՆԱՍՏԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և ավելի ուշ՝ 1919—1922 թթ. հուլյն-թուրքական պատերազմի շրջանում ավելի քան 70 հազար հայեր անպատան գտան Հունաստանում: Մինչ այդ Հունաստանում գոյություն ունեւր շատ փոքր գաղութ և երկրում նկատելի հայ մշակութային կյանք չկար:

Տնտեսական և քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով հայերի մեծ մասը 1920-ական թվականներին թողնում է Հունաստանը և բնակություն հաստատում Ֆրանսիայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, մասամբ նաև Սիրիայում և Լիբանանում: 1946 թվականի հայրենադարձության նախօրյակին Հունաստանում ապրում էին 30 հազար հայեր, որոնցից 20 հազարը 1946—1947 թթ. ներգաղթել է Սովետական Հայաստան:

Հայերի թիվը Հունաստանում այժմ կազմում է մոտ 10 հազար մարդ, որոնցից 3500 մարդ ապրում են Աթենքում և նրան կից Դուրղուտի կոչվող շրջանում, 3100-ը՝ Պիրեյում և Կոկինիայի շրջանում, 1000—1200-ը՝ Սալոնիկում, 200-ը՝ Հեբրակլոնում, 800-ը՝ Կոմոտին, Կսանտի, Ալեքսանդրուպոլիս, Կավալա և Դրամա քաղաքներում, 1200-ը՝ Պելոպոնեսում և մյուս կղզիներում: Հայերը հիմնականում զբաղվում են բանվորությամբ և արհեստներով:

Հայ մշակութային կյանքը Հունաստանում զգալիորեն

թուլանում է Մետաքսասի դիկտատուրայի տարիներին: Դրան հաջորդում են հուլյն-իտալական պատերազմի և գերմանական օկուպացիայի տարիները: Այդ շրջանում զգալի թվով հայեր ակտիվ մասնակցություն են ունեցել պարտիզանական շարժմանը և այդ պայքարում զոհեր են տվել:

1945—1947 թվականներին հայ առաջադիմական կազմակերպությունները որոշ շափով աշխուժացնում են իրենց գործունեությունը, սկսում են լույս տեսնել հայկական թերթեր, վերաբացվում են որոշ դպրոցներ: Սակայն «սառը պատերազմի» շրջանը և Հունաստանի կառավարության հակադեմոկրատական կուրսը անխուսափելիորեն իրենց կնիքն են դնում հունահայ մշակութային կյանքի վրա:

1957 թվականի սկզբին հունահայ գաղութը պառակտվեց երկու մասի, որոնց միջև սուր պայքար է մղվում: Արտաքնապես պայքարը ծավալվել է հունահայ եկեղեցական թեմում ղեկավար դիրքեր զբաղեցրած համար, սակայն ըստ էության պայքարը տեղի է ունենում երկու հակադեմ ճակատների՝ հայրենասիրական ճակատի և դաշնակների ու գաղութի մյուս հետադիմական ուժերի միջև: Մինչև 1957 թվականը գաղութի ազգային գործերը ղեկավարում էր Կենտրոնական պատգամավորական վարչությունը, որի կազմում ներկայացված էին քաղաքական բոլոր ուղղությունների ներկայացուցիչները: Օգտվելով երկրում իրենց համար ստեղծված նպաստավոր կացությունից, դաշնակները, որոնց թիվը գաղութում 300-ից չի անցնում, շանսաժի և պրովոկացիաների միջոցով զավթեցին վարչության ղեկավարությունը: Դաշնակները հայրենասիրական ճակատի բոլոր գործիչներին ու նրանց համակրողներին հունական իշխանությունների առաջ ամբաստանում էին կոմունիզմին համակրելու մեջ, անվանելով նրանց Սովետական Միության գործակալներ: «... Դաշնակցության այս գործունեությունը, այս համառ փորձը, — գրել է այդ օրերին «Ջարթոնք» թերթը, — ցույց կուտա, թե թուրքին ետադաշնները վճռած են ամեն գնով բռնազբաղել Հունաստանի թեմը, և ապա զայն կցել զարհահական հերձվածին: Անոնք որոշած են անխտիր ամեն օտարի դուռը ափ առնել, և զրպարտությունը ու քծնանքով

ապահովել անոր աջակցությունը, որպեսզի հաջողի իրենց դավը էջմիածնի և հայ ժողովրդին դեմ»¹։

Այս իրադրության մեջ 1958 թվականի մարտին դաշնակիները կազմակերպեցին պատգամավորական ժողովի միակողմանի ընտրություններ և տեղորի ու ահաբեկման մեթոդներով ապահովեցին իրենց թեկնածուների ընտրությունը։ Ապրիլին կազմվեց 11 հոգուց բաղկացած ժողովի վարչություն, ամբողջությամբ դաշնակներից։ Հունահայության առաջադիմական կազմակերպություններն ու միությունները հրաժարվեցին ընդունել դաշնակցական պատգամավորական ժողովի օրինականությունն ու իրավասությունները և ստեղծեցին իրենց անկախ ճակատը։

1958 թվականի հուլիսին դաշնակների ինտրիգների և մատնությունների հետևանքով հունական իշխանությունները երկրից արտաքսեցին էջմիածնի պատվիրակ Իսահակ Ղազարյանին։ Նույն թվականի հոկտեմբերին հունահայ թեմը «միացավ» դաշնակների վերահսկողության տակ գտնվող Կիլիկյան կաթողիկոսությանը, որ աճապարանքով, դաշնակ բյուրոյի հրահանգով նշանակեց նոր «առաջնորդ»։

Հակադաշնակցական ճակատը Հունաստանում գլխավորում են ռամկավարները։ Կան որոշ թվով հնչակյան գործիչներ։ Երկրում ստեղծված քաղաքական վիճակը խիստ սահմանափակում է նաև նրանց գործունեությունը։ Հունաստանում գործում է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղը, որին անդամակցում է 600 մարդ։ Մասնաճյուղը որոշ միջոցներ է հատկացնում կրթական ու կուլտուրական միջոցառումներին, ինչպես նաև կարիքավորներին։ Նրա վարչության նախագահն է Հրանտ Ֆեներջյանը։ Այդ ընկերությանը կից ստեղծվել է Տիկնանց Միությունը, որը զբաղվում է կրթական-մշակութային գործերով։ Առաջադիմական ճակատի ջանքերով ստեղծվել է «Արարատ» միությունը, որը գասախոսություններ է կազմակերպում Սովետական Հայաստանի նվաճումների մասին, անց է կացնում մշակութային և սպորտային

¹ «Զարթոնք», 10 դեկտեմբերի, 1957 թ.։

միջոցառումներ։ Միությունն ունի իր սրահը, որը գտնվում է Պիրեյում։ Միության վարչության նախագահն է՝ էդուարդ Սափիրիչյանը։ Դրան ղուգահեռ գործում են հունահայ երիտասարդության Բնասիրաց միությունը և Քատերասիրաց միությունը։ Գաղնակները վերահսկում են հայ Մարմնամարզական միության, Կարմիր խաչի և Տիկնանց Միության գործունեությունը։ Այժմ Հունաստանում գործում է 6 հայկական դպրոց, որոնցից 4-ն Աթենքում, իսկ 2-ը՝ Պիրեոսում։ Սովորողների ընդհանուր թիվը կազմում է մոտ 600 մարդ։ Ուսուցման սխեմեմը գրեթե նույնն է, ինչ մենք տեսանք արտասահմանի շատ գաղութներում։ Բացի հայոց լեզվից, պատմությունից և աշխարհագրությունից, մնացած բոլոր հանրակրթական առարկաները տարվում են հունարեն լեզվով։

Հունահայ գաղութում լույս է տեսնում երկու պարբերաթիթ։ Ռամկավարները հրատարակում են «Երկիր» թերթը, որը լույս է տեսնում շաբաթական երկու անգամ։ «Երկիրը» պարբերաբար նյութեր է հրատարակում Սովետական Հայաստանի մասին, լուսաբանում է նրա առօրյան, մերկացնում է դաշնակների տեղական օրգան «Ազատ օր»-ում հրատարակվող հակասովետական հերյուրանքները։ Փնահատելով շաբաթաթերթի դրական գործունեությունը հունահայ գաղութում, բուլղարահայ «Երևան» թերթը գրել է. «Հայրենազարծեն վերջ ավելի ևս փոքրացած հունահայ գաղութը ունի «Երկիր» շաբաթաթերթը, որ ահա հինգ տարի է վեր կհրատարակվի ու հակառակ փոքրածավալ ըլլալուն, գաղութին մեջ կտանի շնորհակալ աշխատանք։ Իր ընթերցողները տեղյակ կպահեն ընդհանրապես գաղութահայ ու մասնավորապես Սովետական Հայաստանի ամեն օր ծաղկող կյանքին շուրջ... կշարունակե կիսատ ձգած գործը երբեմնի «Նոր շարժում», «Նաիրի», «Երեվան», «Նոր կյանք» և այլ հայրենասիրական թերթերու, մերկացնելով դաշնակներու խաֆիեե աշխատանքը հաշս հայ և երբեմն ալ հույն աշխատավորության»¹։

Հունաստանում ապրող հայ աշխատավորները գտնվում են

¹ «Երևան», 5 մայիսի, 1961 թ.։

նյութական ծանր վիճակում. կան զգալի թվով գործազուրկներ: Հատկապես ծանր են աշխատավորների բնակարանային պայմանները: Հայերի մեծ մասը պատասպարվում է Աթենքի և մյուս քաղաքների արվարձաններում գտնվող հյուղակներում, որոնք զուրկ են տարրական հարմարություններից: Հույն ժողովրդի հետ միասին նրանք իրենց ուսերի վրա կրում են հունական կառավարող շրջանների հակադեմոկրատական քաղաքականության ծանրությունը: Այն ընդհանուր ներքին և արտաքին կացությունը, որի մեջ այժմ գտնվում է Հունաստանը, անխուսափելիորեն անդրադառնում է հայ աշխատավորների և մտավորականության կյանքի վրա:

Գաղութի հայ աշխատավորական խավերը ձգտում են ընդլայնել կուլտուրական կապերը Սովետական Միության հետ, ավելի շատ բան իմանալ Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական շինարարության մասին:



ՌՌԻՄԻՆԻԱ

Հայերի գաղթը Ռումինիա դարերի պատմություն ունի Առաջին մեծ գաղթը կապված է Բագրատունիների թագավորության և Անիի անկման հետ և հայտնի է «Անիի գաղթականություն» անունով: Պատմական այդ դեպքերի բերումով հայերի հոծ զանգվածներ ստիպված եղան թողնել հայրենի հողը և այլ երկրների թվում բնակություն հաստատել Ղրիմում, Ահաստանում, Տրանսիլվանիայում, Մոլդավիայում ու վալախիայում: Դարեր շարունակ ապրելով ռումինական հողի վրա, ռումինահայերը խոր հետք են թողել այդ երկրի պատմության մեջ: Մինչև այժմ էլ Ռումինիայում պահպանվել են հայ մշակույթի բազմապիսի հուշարձաններ (ճարտարապետական շենքեր, վանքեր, գերեզմանաքարեր, պատմական վավերագրեր և այլ հիշատակարաններ): Ռումինիայի մի շարք բնակավայրերի պահպանել են իրենց հայկական ժազումը: Ռումինիայի շատ պատմաբաններ իրենց աշխատություններում նշում են հայերի զգալի ավանդը արհեստների, առևտրի, ճարտարապետության և մշակույթի այլևայլ բնագավառներում: Պատմական գանազան ժամանակաշրջաններում հայերից շատերը զբաղեցրել են նաև պետական պատասխանատու պաշտոններ: Հայերի մեծ գաղթ է եղել հատկապես դեպի Տրանսիլվանիա: Մի քանի դար շարունակ այստեղ ազգային ուրույն կյանքով են ապրել հայերը՝ կառուցելով իրենց քաղաքներն ու գյուղերը: «Թրանսիլվանիա հաստատված հայերը, իրենց աշխույժ

գործունեության շնորհիվ, տեղվույն իշխանություններուն համակրությունն ու պաշտպանությունը շահելով, հաջողեցան շինել իրենց համար 2 նոր քաղաքներ: Այս քաղաքներն առաջինը հիմնեցին Կերլա Բերդըն քով, Սունջ գետի աջ եզերքին վրա, Լեոփոլտ 1-ին թագավորին արտոնությամբ, զեղեցիկ քաղաք մը 17-րդ դարու վերջերը, որ կոչվեցավ Հայաքաղաք (այժմ Կերլա), իսկ երկրորդը, որ թագուհին անունով կոչվեցավ Նդխաբեթոպոլիս (այժմ Տումպրենն), զրեթե միևնույն թվականին կառուցված էր, Թունավա գետին արևելակողմը: Միքայել Ապաֆի իշխանին թույլատրությամբ, իր իշխանական կալվածներն մեկուն մեջ:

Հայերի կառուցած այս երկու զուտ հայաբնակ քաղաքները մոտ երկու ու կես դարեր, ըստ տրված կայսերական մասնավոր հրովարտակներու, ապրեցան ներքին անկախությամբ, ունենալով իրենց հայ դատավորներն ու վարչական կազմակերպությունները¹:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով հայերի թիվը Տրանսիլվանիայում ժամանակին հասել է 200 հազարի: Այսպես, օրինակ, Մ. Պոտուրյանը գրում է. «Երկար է ցանկը այն անկախ վոր անձերուն, զորս Քրանսիլվանիա հաստատուած մոտ 200 հազար հայերը տվին իրենց նոր հայրենիքին»²:

Վալախիայի և Բուխարեստի հայերի պատմության մասին շահեկան տեղեկություններ է տալիս Ս. Քոլանջյանը³:

Հետագա դարերի ընթացքում Տրանսիլվանիայի, Մուրգավիայի և Վալախիայի հայկական գաղութներում տեղի է ունենում ձուլման ուժեղ պրոցես: 19-րդ դարի վերջերին արդեն շփվար էր խոսել հայկական ազգային ուրույն համայնքների մասին: Կորցնելով լեզուն ու ազգային սովորությունները, հայերը գրեթե ամբողջությամբ ձուլվել էին տեղի բնակչությանը: 1895—1896 թթ. հայկական կոտորածների հետևանքով հայերի նոր խմբեր դարձյալ ապաստան են գտնում Ռումինիայում,

իսկ ավելի մեծ թվով հայեր այս երկիրն են գալիս 1915—1916 թթ.: Գառուսահայ գաղութի յուրատեսակ վերածնունդն էր: Նորարնակ հայերը սկսում են զբաղվել արհեստներով (գլխավորապես կոշկակարությամբ և գորգագործությամբ), բանվորությամբ և առևտրով: Նրանք ստեղծում են մշակութային միություններ, մամուլ:

Ռումինական ամբողջ ժողովրդի հետ միասին հայ բնակչության ճնշող մեծամասնությունը ցնծությամբ ընդունեց ժողովրդա-դեմոկրատական կարգերի հաստատումը: Հայ աշխատավորների լավագույն զավակները Հայրենական ճակատի շարքերում իրենց մասնակցությունը բերեցին ժողովրդի թշնամիների դեմ մղվող պայքարին և դեմոկրատական կարգերի ամրապնդման գործին: Գաղութում պարտություն կրեցին ու արմատախիլ արվեցին դաշնակցության գործակալները: Այդ մեծ և պատվավոր աշխատանքը ղեկավարում էր «Հայաստանյան ճակատ» կազմակերպությունը, որը նույն վերտառությամբ հրատարակում էր պարբերաթերթ (1951 թվականից լույս է տեսնում «Նոր կյանք» վերտառությամբ): Այդ ժամանակ «Հայաստանյան ճակատ»-ը արդեն կատարել էր իր վրա դրված խնդիրները: Երկրում սոցիալիզմի ծավալուն կառուցման պայմաններում նրան մնում էր զբաղվել գլխավորապես մշակութային գործունեությամբ: Հենց դրանով էլ պայմանավորված էր «Հայաստանյան ճակատ»-ի վերակազմությունը:

Երբ ռեսպուբլիկայում ամբողջ թափով ծավալվեցին սոցիալիստական շինարարության աշխատանքները, Ռումինիայի հայ աշխատավորներն իրենց ստեղծագործական ամբողջ ուժն ու կարողությունը նվիրեցին նոր կյանքի կառուցմանը:

Մինչև 1946—1947 թթ հայրենադարձությունը Ռումինիայում ապրում էր 25 հազար հայ: Հայերի թիվը Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայում հետևյալ պատկերն է ներկայացնում. Բուխարեստում և շրջակայքում ապրում է 5000 մարդ, Կոստանցայում՝ 3000, Գալացում՝ 800, Պոտոշանում՝ 500, Յոկլանում՝ 400, Յաշում՝ 400, Ռումանում՝ 400, Պակիում՝ 400, Տուլչայում՝ 300, մնացած բնակավայրերում մոտ 1000 մարդ:

¹ «Նոր կյանք», 2 հոկտեմբերի, 1959 թ.:

² «Պայքար», 15 օգոստոսի, 1958 թ.:

³ Տե՛ս «Էջմիածին» ամսագրի 1944 թ. 3, 4, 1950 թ. 2, 7, 8 և 1951 թ.

Տրանսիլվանիայում ձուլված հայերի մի մասն իրեն անվանում է «լուսավորչական ուսմեններ»։ Դրանց թիվը կազմում է մոտ 5000: Այսպիսով հայերի ընդհանուր թիվը (չհաշված լուսավորչական ուսմեններին) Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայում կազմում է 12.200 մարդ: Ժողովրդա-դեմոկրատական կարգերի հաղթանակից հետո արմատապես փոխվեց հայերի իրավական վիճակը: Ռեսպուբլիկայի նոր կոնստիտուցիայի հիման վրա ազգային փոքրամասնությունները, այդ թվում և հայերը, հանդիսանում են ռեսպուբլիկայի լիիրավ քաղաքացիներ, նրանք ազատ ու անկաշկանդ իրենց ակտիվ մասնակցությունն ունեն պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Ռումինահայերի այժմյան վիճակին ծանոթացող յուրաքանչյուր անկողմնակալ մարդ հեշտությամբ կարող է տեսնել ժողովրդա-դեմոկրատական կարգի մեծագույն նվաճումներից մեկը՝ ազգային հարցի լուծումը: Դա մի անգամ ևս գալիս է հաստատելու այն մեծ ճշմարտությունը, որ միայն սոցիալիզմը կարող է վերջ տալ ազգային փոքրամասնությունների իրավազուրկ ու արհամարհված վիճակին, տրամադրել նրանց նոր, սոցիալիստական դեմոկրատիայի բոլոր առավելությունները և ապահովել նրանց ֆիզիկական ու մտավոր կարողությունների անսահմանափակ զարգացումը:

Բուխարեստում գործունեության լայն ասպարեզ ունի «Ստեփան Շահումյան» մշակույթի տունը, որն ունի մեծ դահլիճ ու գրադարան: Դա Բուխարեստի հայերի կուլտուրական ժամանցի սիրելի վայրն է: Այստեղ կազմակերպվում են հոբելյանական երևիզներ ու ժողովներ, դասախոսություններ, ցուցադրվում են սովետական, ռումինական և արտասահմանյան ֆիլմեր: «Ստեփան Շահումյան» մշակույթի տանը կից գործում է «Կոմիտաս» քառաձայն երգչախումբը, Զ. Պարոնյանի անվան թատերախումբը, հայ ժողովրդական պարերի խումբը և հայկական ժողովրդական գործիքների նվագախումբը:

«Ստեփան Շահումյան» մշակույթի տունը, — գրում է «Նոր կյանք» թերթը, — վայր մըն է՝ սիրված հայ աշխատավոր

մարդոցմե, վայր մը, ուր անոնք սիրով կուզան բարձրացնելու իրենց քաղաքական ու գաղափարախոսական մակարդակը, ձևեր բերելու նոր ու օգտակար ծանոթություններ, ծավալելու ինքնագործ արվեստագետներու գործունեությունը և զարգացնելու իրենց զանազան ընդունակությունները»¹:

Ռումինահայերի մշակութային կյանքին ակտիվ մասնակցություն ունեն Կ. Աղամյանը («Ստեփան Շահումյան»-ի տան գիրեկտոր), Գր. Փամբուկչյանը, Տ. Տեր-Գրիգորյանը, Կ. Քովմասյանը, Մ. Խաչերյանը, Ա. Սահակյանը, Վ. Երեցյանը, Գ. Խժրիկյանը, զգալի թվով խմբավարներ, դերասաններ, նկարիչներ և արվեստի այլ ներկայացուցիչներ:

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Բուխարեստի 500-ամյակի առթիվ երկրում միջոցառումներ անցկացվեցին պատմական հուշարձանների վերականգնման ու պահպանման ուղղությամբ: Ռումինական թերթերում հրատարակված հաղորդագրություններից մեկում սսվում է, որ իր նախկին ճարտարապետական ոճով պետք է վերականգնվի հայ ճարտարապետական հուշարձաններից մեկը — Մանուկ պեյի Իջևանը: (Մանուկ պեյ Միրզայանցը 19-րդ դարի սկզբում Ռումինիայում և հարևան երկրներում ճանաչված երեկի դիվանագիտական դեմք էր):

Տարեցտարի ընդլայնվում են կուլտուրական կապերը Սովետական Հայաստանի և Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի միջև: Այդ կապերի ամրապնդումը մեծ նշանակություն ունի նաև Ռումինիայում ապրող հայերի համար: Ռեսպուբլիկայի հայկական դպրոցները ապահովված են Հայաստանից ստացված դասագրքերով, սիստեմատիկաբար ստացվում են Հայաստանի Պետական Հրատարակչության, Գիտությունների ակադեմիայի, Պետական համալսարանի հրատարակած գրքերը, ինչպես նաև ռեսպուբլիկայի պարբերական մամուլը: Հաճախակի են դարձել ռումինահայ գաղութի ներկայացուցիչների այցելությունները Սովետական Միության: Գնալով ավելի ու ավելի է աճում Ռումինական Ժողովրդական

¹ «Նոր կյանք», 13 փետրվարի, 1959 թ.:

Ռեսպուբլիկայի աշխատավորների հետաքրքրությունը Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի նվաճումների, հայ ժողովրդի անցյալ ու ժամանակակից պատմության նկատմամբ:

«Հանույթով կհաստատենք,— գրում է «Նոր կյանք» թերթը,— որ սովետական մյուս ժողովուրդներու կարգին հայ ժողովուրդն ալ վերջին ժամանակներս մասնավոր հետաքրքրության առարկա դարձավ ուսման ժողովրդական ռեսպուբլիկայի աշխատավորական լայն շրջանակներու կողմն: Այս հետաքրքրությունը ավելի շեշտվեցավ և հետզհետե ավելի ծավալուն հանգամանք ստացավ մանավանդ, երբ Ռումին ժողովրդական Ռեսպուբլիկայի աշխատավորները պատեհություն ունեցան իրենց հողին վրա ողջունելու հայ ծագումով գիտություն և արվեստի մարզիկ—կոմպոզիտոր, երգիչ, դերասան, մաթեմատիկոս, տեխնիկ, սպորտսմեն և այլն, որոնք Ռումին ժողովրդական Ռեսպուբլիկայի բեմերուն վրա և ուսման հասարակության առջև հանդես բերին սեփական ժողովրդի մտքի ու հոգու ըստեղծագործությունները»¹:

Այդ ուղղությամբ շնորհակալ աշխատանք է կատարում Ռումինա-Սովետական բարեկամության ընկերությունը (Ա.Ռ.Ս.Ի.Ս.):

Հայ գիտնականների հետազոտական աշխատանքների մասին հոդվածներ է հրատարակում ռումինական մամուլը: Վերջին տարիների ընթացքում ռումիններն լույս տեսան Վ. Անանյանի պատմվածքները, նրա «Սևանի ափին», Գարեգին Սևունցի «Թեհրան» վեպը և սովետահայ գրողների այլ ստեղծագործություններ: Ռումինիայում ապրող հայերի օրինակը վկայում է, թե արտասահմանի հայերի համար ինչպիսի հսկայական նշանակություն ունեն կուլտուրական կապերը Սովետական Միության և Սովետական Հայաստանի հետ: Այդպիսի եղբայրական կապերը հնարավոր դարձան միայն ժողովրդագեմոկրատական կարգերի հաղթանակից հետո: Արտասահմանի հայ մամուլի որոշ օրգաններ տարբեր առիթներով անդ-

րադառնալով Ռումինիայի և Բուլղարիայի հայերի ժամանակակից վիճակին, նույնպես ընդգծում են ժողովրդագեմոկրատական պետության հոգատարությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ և դրա հսկայական կարևորությունը ազգային մշակույթի պահպանման ու զարգացման գործում: Նշելով, որ օտար երկրներում ապրող ազգային փոքրամասնություններն իրենց գոյությունը կարող են պահել այն դեպքում, երբ տվյալ պետության սահմանադրությունը, իրավակարգը պաշտոնապես ճանաչի նրանց իրավունքները, Թագվոր խաչիկյանը «Պայքար» թերթում գրում է.

«Նոր վարչակարգերը, ուրիշ փոքրամասնության կարգին, ոչ միայն թուլատրեցին, այլ նաև նյութական լայն օգնություն ընծայելով կարելի դարձուցին, որ հայկական առանձին դպրոցներ բացվին պետության հաշվում: Այսինքն՝ պետությունն է, որ կվճարե դպրոցներու վերաբերյալ բոլոր ծախսերը, ինչպես և հայ ուսուցիչներուն ամսականները: Փոքրամասնությանը ազգային վարժարանները ունին այն բոլոր իրավունքներն ու առավելությունները, որ ունին երկրի պետական դպրոցները: Պուրբնջի մեջ նույնիսկ հայկական գիշերօթիկ ճյուղ մը ստեղծեցին, որպեսզի քաղաքեն դուրս ապրող հայ տղաքը ևս կարենան ստանալ հայեցի կրթություն:

Այս երկու կառավարությանը կրթական նախարարները դիմեցին և ստացան հայերեն դասագրքեր Հայաստանի կուլտուրության նախարարությունեն»¹:

Ռումինիայի հայկական գաղութը տվել է զգալի թվով շնորհալի արվեստագետներ: Լայնորեն հայտնի է ռումինահայ տաղանդավոր նկարիչ Չիկ Գամատյանը, որի ստեղծագործական տաղանդը դրսևորվել է հատկապես ժաղրանկարչության մեջ: Չիկ Գամատյանը մեկն է սփյուռքահայ այն արվեստագետներից, որոնք կապված լինելով սեփական ժողովրդի անցյալի ու ներկա արվեստի լավագույն տրագիցիաներին, միաժամանակ շին սահմանափակվում զուտ ազգային շրջանակներում: Բազմազան ու լայն է նկարչի հետաքրքրության ասպարեզը:

¹ «Նոր կյանք», 14 մարտի, 1959 թ.:

¹ «Պայքար», 22 օգոստոսի, 1958 թ.:

Սուր, հատու զենքով, որպիսին ծաղրանկարչությունն է, նկարիչը անխնա մերկացնում է կապիտալիստական բարքերը, նոր պատերազմ հրահրողներին, բուրժուական դեմոկրատիայի գովերգուներին: Այս ասպարեզում արվեստագետի տաղանդը հասնում է բարձր կատարելության: Չիկ Դամատյանը ճանաչված է ամբողջ Ռումինիայում և նրա սահմաններից դուրս: Նրա մի շարք գործեր տարբեր ժամանակներում հրատարակվել են ռումինական և համաշխարհային մամուլում: Հիշատակենք նրա «Ընտրությունները ԱՄՆ-ում», «Բաղդադի պակտը առանց Բաղդադի», «Ժողովրդական կապիտալիզմ», «Կենդանի դիակ» և այլն: 1959 թվականին Չիկ Դամատյանը այցելեց Սովետական Հայաստան: Այդ առթիվ արվեստի աշխատողների տանը կազմակերպվեց նրա վրձինին պատկանող ծաղրանկարների ցուցահանդես: «Սովետական արվեստ» ամսագրի թղթակցին տված ինտերվյուում նկարիչը մասնավորապես ասաց. «Կուզեք տպավորություններս իմանալ: Անոնք աննկարագրելի են, այնքան հաստուն ու զանազան, որ պարզվելու և բյուրեղանալու համար դեռ ժամանակ պիտի անցնի: Բան մը միայն պարզորոշ կպատկերացնեմ. հայրենիք ոտք դնելուս պահին ինքնզինքս կարծես գինով զգացի, գինով էի շրջածս, խոսածս, նկատածս ատենները, գինով ալ կմեկնիմ»¹:

Ստեղծագործական լուրջ վաստակ ունեցող նկարիչ է Հրանտ Ավագյանը, որի կտավներից մի քանիսը մենք առիթ ունեցանք տեսնելու Սովետական Հայաստանում:

Սովետական Միության և Ռումինիայի հասարակայնությունները լավ հայտնի են Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստ, Բուխարեստի օպերայի և բալետի թատրոնի մեներգիչ Կարպիս Զոպյանի, նույն թատրոնի մեներգիչ, պետական մրցանակի լաուրեատ Դավիթ Հովհաննիսյանի անունները, որոնք այժմ Ռումինիայում արվեստի ականավոր գործիչներ են: Զոպյանը հյուսիս, գեղեցիկ տեմբրի դրամատիկ տենորով Եվրոպայի շատ բեմերում հնչեցրել է Դոն-Նոզեի, Կանիոյի, Ռադամեսի դերերգերը: Երևանի հասա-

րակայնությունը լավ է հիշում Դավիթ Հովհաննիսյանի Ռիգոլետոն, Ամոնասրոն, Օնեգինը, Օթելլոն: 1958 թվականին Մոսկվայում տեղի ունեցած Չայկովսկու անվան միջազգային կոնկուրսի մասնակիցների թվումն էր ջութակահար Դանիել Վարուժան Կոզիկյանը, որը հաջող կատարման համար արժանացավ պատվոգրի: Հայտնի է, որ Չայկովսկու անվան միջազգային կոնկուրսում մասնակցում էին աշխարհի երիտասարդ ուժեղագույն կատարողները: Այդ իմաստով Կոզիկյանին պատվոգիր շնորհելը պետք է դիտել որպես երիտասարդ կատարողի նոր հաջողությունը: Կոզիկյանը պրոֆ. Կարպիս Ավագյանի աշակերտն է: Երիտասարդության և ուսանողների համաշխարհային 6-րդ ֆեստիվալում նա շահեց երկրորդ մրցանակ: Երիտասարդ ջութակահարի տաղանդը բարձր գնահատեց ժյուրիի նախագահ Դավիթ Օյստրախը: Ռումինիայում և Բուլղարիայում ճանաչված երգչուհիներ են Արաբս Ավաճյանը և Շաքե Շիշմանյանը, որոնք համերգային դահլիճում և ռադիոյով ունեցած ելույթներում կատարում են ռուս, արևմտա-եվրոպական և հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Տակավին երիտասարդ, բայց արդեն սիրված երգչուհի է Անահիտ Քերփիշյանը: Նա Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի երիտասարդ մեներգիչների մրցանակի լաուրեատ է: Հանդես է գալիս նաև օպերային դերերում: Բուխարեստի օպերայի և բալետի թատրոնում նրա Աիդան, Վիոլետը, Բատերֆլայը, Ռումինիայի մասնագիտական շրջանների կողմից ճանաչվել են որպես երիտասարդ երգչուհու ստեղծագործական հաջողությունը:



¹ «Սովետական արվեստ», № 11, 1959 թ.,



ՖՐԱՆՍԻԱ

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Ֆրանսիայում ապրում էին ընդամենը մի քանի հազար հայեր: Հայ-ֆրանսիական կապերը սկիզբ են առնում 11-րդ դարից: Կիլիկյան թագավորության շրջանում այդ կապերը, հատկապես առևտրի ասպարեզում, ավելի են ընդլայնվում: «Հայոց Ֆրանսա ներկայությունը շատ հին է,— գրում է «Ժամանակ» թերթը:— ԺԱ դարուն Անիի կործանումին ետք, բյուրավոր հայեր գաղթեցին Ղրիմ, Լեհաստան, Քրանսիլվանիա, Պալքաններ, մեկ խոսքով՝ Եվրոպայի զանազան երկրները: Այդ շրջանին մասը մը հայեր ալ եկած ու հաստատված են Գաղղիա»¹: Ըստ այս վկայության, հայերի և ֆրանսիացիների կապերը որոշակի բնույթ են ստանում խաչակրաց արշավանքների շրջանում, երբ «Կիլիկյան իշխաններու և խաչակիր ասպետներու միջև կնքված ընտանեկան խնամությունները և փոխադարձ ամուսնություններն առանձնաշնորհումներ կուտան Եվրոպայի ամեն ազգի վաճառականներու Կիլիկյան հայկական թագավորության մեջ»²:

Լյուդովիկոս XIII-ի տիրապետության օրոք կարդինալ Ռիշելյենն՝ ելնելով Ֆրանսիայի արտաքին քաղաքական շահերից, խրախուսում էր հայերի մուտքը Ֆրանսիա: XVII դարի երկ-

րորդ կեսին (1673 թ.) Ֆրանսիայում (Մարսելում) կազմակերպվում է առաջին հայկական տպարանը (փոխադրված Ամստերդամից): Հաջորդ, XVIII դարի ընթացքում հայերը շարունակում են բնակություն հաստատել երկրի զանազան քաղաքներում: XIX դարի սկզբից ավելի ու ավելի մեծ թվով հայ ուսանողներ Հայաստանից և արտասահմանի այլ երկրներից մեկնում են Ֆրանսիա բարձրագույն կրթություն ստանալու: Հասկանալի է, որ այդ ուսանողները չէին կարող հեռու մնալ երկրի քաղաքական-հասարակական կյանքից, մանավանդ երբ խոսքը վերաբերում է այնպիսի մի երկրի, որը XIX դարի հասարակական առաջավոր մտքի խոշորագույն կենտրոնն էր: 1849 թվականին Ֆրանսիայում հիմնվում է «Արարատյան ընկերություն»: Այդ ընկերության հիմնադիրներից էին՝ Գրիգոր Աղաթոնը, Նահապետ Ռուսինյանը, Ստեփան Ոսկանը և ուրիշներ: Այդ ընկերության շուրջը համախմբված հասարակական գործիչները, տողորված ֆրանսիական հեղափոխության դադափարներով՝ պայքարում էին հայ ժողովրդի ազգային-ազատագրության համար: Հետագա տասնամյակների ընթացքում, ֆրանսիական իմպերիալիզմի արևելյան քաղաքականության շահերին համապատասխան, Ֆրանսիան ձեռք բերեց «Հայկական դատի» պաշտպանի համբավ: Հանրահայտ է, թե ինչ ծանր հետևանքներ ունեցավ Ֆրանսիայի, Անգլիայի, իսկ ավելի ուշ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների այդ քաղաքականությունը հայ ժողովրդի կյանքում: Այն ժամանակ, երբ Ֆրանսիայի առաջավոր մտավորականության լավագույն ներկայացուցիչները անկեղծորեն իրենց ձայնն էին բարձրացնում հօգուտ հայ ժողովրդի իրավունքների, ֆրանսիական պաշտոնական շրջանները օգտագործում էին հասարակական կարծիքը՝ թուրքիայում և Մերձավոր Արևելքում իրենց դիվանագիտական խաղերի համար: Բուրժուական պատմագրությունը, այդ թվում և դաշնակցական «պատմագիրները», «Հայկական դատի» մասին խոսելիս ժան ժորեսի և Անատոլ Ֆրանսի պայծառ անունները համարձակվում են դնել ֆրանսիական իմպերիալիզմի մոլի ջատագույններ ժորժ Կլեմանսոյի, Հանրի Տարգյեյի, կարդինալ Ֆուշեի անունների կողքին, մի բան, որ պատ-

¹ «Ժամանակ», 7 հունվարի, 1950 թ.:

² Նույն տեղում:

մական ազազակող անարդարացիություն է¹։ Վերսալյան սիստեմը և նրա մաս կազմող Սևրի դաշնագիրը եկան մի անգամ ևս հավաստելու, որ հայ ժողովուրդը արևմտյան տերություններից որևէ սպասելիք չի կարող ունենալ։ Երբ իմպերիալիստական հաղթող պետությունները բավարարեցին իրենց ախորժակները, երբ աշխարհը վերաբաժանվեց ըստ այդ տերությունների քմահաճույքի, այսպես կոչված «Հայկական հարցը» դարձյալ ուղարկվեց դիվանագիտական արխիվ։ Դա միաժամանակ դաշնակցական վայ-դիվանագետների մեծ պարտությունն ու ժողովրդի աչքում նրանց վերջնական հեղինակազրկումն էր նշանակում։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո տասնյակ հազարավոր հայեր ապաստան գտան Ֆրանսիայում։ Հետագա տարիներին Ֆրանսիան դարձավ գաղութահայություն մշակութային գլխավոր կենտրոններից մեկը։ Սակայն ֆրանսահայ հասարակությունը միատարր չէր։ Փարիզում, որ կապիտալիստական Եվրոպայի գլխավոր քաղաքական կենտրոններից մեկն է, պատերազմական դեպքերի բերումով հավաքվել էին Ֆրանսիայում ապաստան գտած և՛ հայ աշխատավոր զանգվածներ, և՛ առաջավոր մտավորականներ, և՛ դաշնակցական պարագլուխներ։ Դա մի խայտաբղետ հասարակություն էր, լինեքին հակասություններով ու հակամարտություններով, բաժանված տարբեր խավերի ու խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր գաղափարներն ու իդեալները, իր շահերն ու նպատակները։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ֆրանսիական իմպերիալիզմը Եվրոպայում գլխավորում էր բոլոր տեսակի հակասովետական թափփուկների դավադրությունները ընդդեմ սովետական երիտասարդ պետության։ Փարիզում ապաստանած ռուս կալվածատերերն ու ֆարրիկանտները, սպիտակգլավրդիական գեներալներն ու մինիստրները այստեղից էին սուր ճռճում Սովետական ռեսպուբլիկայի դեմ, սպառնում նրան հակակոմունիստական նոր խաշակրաց արշավանքով։ Այդ իմաստով պատահական չէր, որ դաշնակցա-

կան ղեկավարությունը իր բյուրոյի կենտրոնատեղին է դարձնում Ֆրանսիան, որտեղ այն մնում է ընդհուպ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը։ Երկար տարիներ շարունակ Փարիզում ու այլուր Սովետական Հայաստանի դեմ իրենց դավերն էին հյուսում Ալեքսանդր Խատիսյանը, Միքայել Վարանդյանը, Համո Օհանջանյանը, Արշակ Զամալյանը, Շավարշ Միսաքյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Գարեգին Շահյամյանը և ուրիշներ։

Այն ժամանակ, երբ ֆրանսիական իմպերիալիզմը մոբիլիզացնում էր իր ուժերը և փորձում արմատախիլ անել երկրի դեմոկրատական շարժումները, ֆրանսիական պրոլետարիատը և նրա ավանգարդ Կոմունիստական պարտիան համարձակորեն պայքարի դրոշ էին պարզել ընդդեմ պաշտոնյան կողմից դատապարտված ուժերի, հանուն դեմոկրատական իրավունքների, հանուն Սովետական Ռուսաստանի հետ բարեկամության և համերաշխության։ Պայքարի այս բուռն տարիներին Ֆրանսիայում ապաստանած հայերը հաղթահարելով աննկարագրելի դժվարություններ, մաքառում էին օրվա ապրուստի համար, նոր պայմաններում ընտանեկան օջախ ստեղծելու ու գոյատևելու համար։ Լրացնելով ֆրանսիական պրոլետարիատի շարքերը, նրանք միաժամանակ ակտիվ կերպով մասնակցում էին երկրի քաղաքական պայքարին, իսկ երբ վրա հասավ երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ Ֆրանսիան ընկավ ֆաշիզմի տիրապետության տակ, նրանցից շատերը ոտքի ելան անարգ թշնամու դեմ և զենքը ձեռքին ընկան հանուն Ֆրանսիայի ազատության ու անկախության, հանուն դեմոկրատիայի հաղթանակի։

Նույն շրջանում դաշնակցության պարագլուխները գործակցում էին ֆաշիստական Գերմանիայի հետ։ Հայտնի է Բեռլինում կազմված, այսպես կոչված, «Աղգային խորհրդի» ու նրա ղեկավարների անփառունակ արշավանքը դեպի Հայաստան ու նրանց խայտառակ փախուստը Հյուսիսային Կովկասից։ Նույն ոգով դաշնակները գործում էին հիտլերյան զորքերի կողմից օկուպացված Ֆրանսիայում։

Ներկայումս Արևմտյան Եվրոպայի ամենամեծ հայկական

¹ Տե՛ս Կ. Գևորգյանի «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1959 թ., էջ 270։

գաղութի ֆրանսիականն է: Այստեղ ապրում են մոտ 130 հազար հայեր: Մի պատկառելի թիվ, որը գերազանցում է Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում ապրող հայերի ընդհանուր թվին: Առավել հայաշատ քաղաքներ են Փարիզը իր արվարձաններով (Ալֆորվիլ, Բանյո, Սեվրան, Առնուվիլ լե Կոնես, Իսի լե Մուլինո, Շավիլ, Մեզոն և այլն), որտեղ ապրում է մոտ 35 հազար հայ, Մարսելը իր արվարձաններով (Պոմոն, Սեն-Ֆերմ, Սեն-Լուի, Սենթ-Անթուան և այլն) մոտ 20 հազար, Լիոնը՝ 9 հազար: Հայերը ապրում են նաև Տեսին, Վալանս, Գրենոբլ, Սենթ-էյտեն, Նիցցա, Լա Սիոտայ, Սեն Շամոն և այլ քաղաքներում ու բնակավայրերում: Ֆրանսահայերը զբաղվում են արհեստներով (ղերձակներ, կոշիկակարներ, գորգագործներ, սաֆրիչներ և այլն), աշխատում են որպես գործարանային և գյուղատնտեսական բանվորներ: Զգալի թիվ են կազմում մտավորական աշխատանքով զբաղվող մարդիկ¹:

Ֆրանսիական «Կոմբա» թերթի աշխատակից Պոլ Կաշը 1961 թվականին կովկասյան ժողովուրդների մասին հրատարակեց մի հոդվածաշարք: Հայերին նվիրված հոդվածում, որ թարգմանաբար հրատարակվեց հայկական մամուլում, հեղինակը որոշ տեղեկություններ է տալիս նաև ֆրանսահայ գաղութի մասին: Ստորև բերում ենք մի հատված այդ հոդվածից.

«Քսաներորդ դարու գաղթականության երկրին՝ Ֆրանսայի մեջ, անոնք կը գրավեն ՆՈՐ ՅՐԱՆՍԱՅԻՆՆԵՐՈՒ հինգերորդ կարգը՝ իտալացիներեն, բուլղարացիներեն, սպանացիներեն և պելճիքացիներեն հետո: Զգեստեղենի գործին մեջ՝ պետք անգամ չկա անոնց դիրքը շեշտելու: Բազմաթիվ են նաև հնությանց վաճառականներու մեջ և «աղամանդավաճառներու սրճարանին» շուրջ: Երկու հինգերորդը կը բնակին փարիզյան շրջանին մեջ, Կոնեսի և Վիլե-լը-Պելի շրջանին մեջ կազմելով ամբողջ թաղ մը:

¹ Ֆրանսահայ գաղութի մասին որոշ տեղեկություններ կարելի է քաղել «Ժամանակ» թերթի հունվարի 7, 8, 9, 10, 11 և 12 համարներում հրատարակված նյութերից: Տե՛ս նաև «Նոր օր», 25 և 26 հունվարի, 1960 թ.:

Գավառի մեջ, հայոց ամենեն կարևոր խումբը Մարսել կը գտնվի: Մոտ 10 հազար են Լիոնի մեջ, 3000՝ Իզեռի մեջ, 2000՝ Ռոնի հովտին Տեսինի մեջ, 2000՝ Ռոնի հովտին մեջ, և գրեթե նույնքան՝ Քոթ ա Ազուու: Վերջապես, ավելի քան 18 տոկոսը երկրագործ՝ Լուառի, Սարթի, Լուառի, Վառի և Պաս Ալբի նահանգներուն մեջ:

Ֆրանսական հանրային և մտավորական կյանքին հայոց մասնակցությունը զարգացած է ԱՄԵՆ ՄԱՐՁԻ մեջ (արդեն հայկական տուն մը կա համալսարանական ուստանին մեջ): Երեսուների շափ հայ բժիշկներ կան, որոնց մեջ՝ Սվաճյան, Տերվիշյան (երկուքն ալ Բաստյորյան հաստատութենեն), իրավագետներ՝ Բ. Տուեյի վերաքննիչ ատյանին նախագահ և փաստաբաններ Բարսեղյանը, Եղիազարյանը, Մայմորյանը, Նաֆիլյանը, Սրապյանը և Իսթուճյանը, ճարտարապետներ՝ ինչպես Պշաբճյանը, Նաֆիլյանը և Թերզյանը, բրոֆեսորներ՝ ինչպես Շարլ Տետյանը բաղդատական գրականության մեջ, բյուզանդագետներ՝ Խաչատուրյանցը և մարդաբան Խելումյանը: Արտաքին առևտուրի վարչության մեջ՝ Մ. Տետյանը և Եղիազարյանը, ֆրանսացիներ իբր քաղաքապետ ընտրած են Զարիֆյանը՝ Սեն-է-Ուազի մեջ և Մանուկյանը Տյոլլի մեջ:

Բայց, մտնավանդ, գրական և գեղարվեստական մարդի մեջ է, որ ավելի ծանոթ է հայոց բերքը՝ ակադեմական մը՝ Անրի Թրուայա, թատերագիր Արթուր Ատամով, Քրիստիան Տետյան, արժանացած ֆրանսական մրցանակի, երկու նոր մրցանակավորներ՝ Արմեն Լուպեն և Վահե Փաշա, առանց խոսքի ընելու բազմաթիվ նկարիչներու, զաշնակահար Պետրոսյանի, թատերգու արվեստագետներու՝ Մագսուտյան և Մերգոյան¹:

Ֆրանսիայում գործում են տարբեր ուղղությունների պատկանող մեկ տասնյակի շափ հայկական կաղմակերպություններ ու միություններ:

1. Ֆրանսահայ Մշակութային Միություն. ունի ավելի քան 1200 անդամ: Միությունը միջոցառումներ է անցկացնում ոչ միայն Փարիզում, այլև Ֆրանսիայի մյուս քաղաքներում:

¹ «Պաշար», 20 ապրիլի, 1960 թ.:

Կազմակերպում է Սովետական Հայաստանի տարեգարձների տոնակատարություններ, տուրիստական ուղևորություններ դեպի Սովետական Միություն: Ֆրանսահայ Մշակութային միությունը շնորհակալ աշխատանք է կատարում Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի նվաճումների մասին ֆրանսահայ գաղութին ծանոթություն տալու ասպարեզում, կազմակերպում է գեղարվեստական երեկոներ, հանդեսներ, հայ գրողներին, կոմպոզիտորներին, նկարիչներին նվիրված հոբելյանական երեկոներ, հայ երգի ու պարի համերգներ, հայկական ֆիլմերի ցուցադրումներ, Հայաստանից ստացվող գրքերի, ամսագրերի ու թերթերի վաճառք և այլն: Վերջին տարիների ընթացքում ֆրանսահայ Մշակութային միության ղեկավարները մի քանի անգամ այցելել են Սովետական Հայաստան: Սովետական տուրիստները, այդ թվում և Հայաստանից Ֆրանսիա այցելող հայ տուրիստները ծանոթացել են միության կողմից ֆրանսահայ գաղութում տարվող կուլտուրական աշխատանքներին:

Ֆրանսահայ Մշակութային միության ղեկավարության ջանքերով 1957 թվականին Հայաստան ուղարկվեց Արշակ Զոպանյանի հարուստ արխիվը: Նույն կազմակերպության աջակցությամբ Հայաստանի պատկերասրահը ձեռք բերեց 2. Այվազովսկու 40 նկարները և տաղանդավոր քանդակագործ (այժմ մահացած) Գյուրջյանի 300-ից ավելի աշխատանքները, Սեմայի (Գեղամ Աթմաճյան), Վահան Մալեզյանի արխիվները, մի շարք նյութեր Զապել Եսայանի և Լ. Մեսրոպի արխիվից: Սփյուռքահայ մշակութային կազմակերպությունների գործունեությունը այս ուղղությամբ արժանի է մեծ խրախուսանքի: Պատմական զեպեքերի բերումով հայ ժողովրդի ստեղծած հարուստ հոգևոր արժեքների մի զգալի մասը դեռևս գտնվում է արտասահմանի տարբեր երկրներում: Հավաքել դրանք և ուղարկել հայրենիք, որտեղ այդ նյութերը կարող են գիտականորեն ուսումնասիրվել ու արժեքավորվել, մեծ և շնորհակալ աշխատանք է:

2. Գաղութի մեծ կազմակերպություններից է ԺԱՖ-ը. Գրանսահայ երիտասարդական Միությունը, որը գաղութում ա-

մենից ազդեցիկ երիտասարդական կազմակերպությունն է: 1958 թվականին կոնոմ կայացավ ԺԱՖ-ի կոնգրեսը, որը որոշում կայացրեց հետևողականորեն հանդես գալ հօգուտ ռեսպուբլիկական իրավունքների պաշտպանության և այդ ոգով ուղերձ հղեց Ֆրանսիայի այն ժամանակվա պրեզիդենտ Ռենե Կոտիին: Կոնգրեսի աշխատանքներն ավարտելուց հետո հայ երիտասարդների ջանքերով կազմակերպվեց ընդունելություն, որին ներկա էր 600 մարդ: 1958 թվականին Մոսկվայում տեղի ունեցած երիտասարդության համաշխարհային 6-րդ ֆեստիվալին ԺԱՖ-ից մասնակցում էր 28 մարդ: Ֆեստիվալն ավարտվելուց հետո նրանցից հինգ հոգի Ս. Սողոմոնյանի զբլխավորությամբ Հայաստանի ԿԿՄ Կենտկոմի հրավերով այցելեցին Հայաստան: Վերադառնալով Ֆրանսիա, այդ պատվիրակությունը կազմակերպեց մասսայական հավաք, որին ներկա էր ավելի քան 400 մարդ: Այս հավաքույթում Հայաստան այցելած ֆրանսահայ երիտասարդները պատմեցին իրենց տպավորությունները:

Դատելով ժամանակ առ ժամանակ մամուլում երևացող նյութերից, ֆրանսահայ գաղութում ԺԱՖ-ի գործունեությունը ոչ միայն ըստ արժանիության չի գնահատվում հայկական որոշ կազմակերպությունների կողմից, այլև հաճախ փորձեր են կատարվում սահմանափակել այդ երիտասարդական կազմակերպության ազդեցության ոլորտը:

Ինչի՞ մեջ պետք է փնտրել այս իրողության պատճառները: Անտարակույս այն բանի մեջ, որ գաղութահայ իրականության մեջ միշտ առկա են մի կողմից առաջադեմ, ռադիկալ կազմակերպություններն ու խմբավորումները, մյուս կողմից՝ չափավոր կամ հետադիմական ուժերը, որոնց միջև միշտ գոյություն ունեն հակասություններ ու տարաձայնություններ: Սոցիալական տարբեր տրամադրությունների և մտայնությունների պայքար է դա, որն ի դեպ տեղի է ունենում նաև մյուս գաղութներում՝ ԱՄՆ-ում ու Արգենտինայում, Լիբանանում և Սիրիայում, եգիպտոսում ու Իրաքում: Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը, օրինակ, ունի իր շրջապատը, իր մարդկանց, որոնք գիտեն թե ի՞նչ է պահանջվում իրենցից:

ԺԱՅ-ը և առաջադիմական մյուս կազմակերպություններն ունեն իրենց պլատֆորմը, իրենց սկզբունքները, իրենց ակտիվիստներն ու համակիրները, որոնք կապված են երկրի առաջադիմական շրջանների հետ, ակտիվորեն մասնակցում են քաղաքական կյանքին, հետևողականորեն պայքարում են հանուն խաղաղության ու ժողովուրդների բարեկամության: Նըրանք ավելի համարձակորեն են պրոպագանդում Սովետական Հայաստանի նվաճումները: Ամենօրյա գործնական աշխատանք են տանում Սովետական Միության կուլտուրական կապերն ամրապնդելու ուղղությամբ:

3. Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Ֆրանսիայի շրջանային վարչություն: Իր մասնաճյուղերն ունի Փարիզում և արվարձաններում, Մարսելում, Լիոնում, Գրենոբլում, Վալանսում և այլ քաղաքներում: ՀԲԸՄ Ֆրանսիայի շրջանային վարչությունը ենթարկվում են նաև Միլանի, Ժնևի, Բրյուսելի, Լոնդոնի, Մանչեստրի և Աթենքի մասնաճյուղերը: Անդամների թիվը կազմում է 1500 մարդ: Անդամակցելու համար պահանջվում է տարեկան 1000 ֆրանկ: ՀԲԸՄ Ֆրանսիայի շրջանային վարչությունը տնօրինում է մի քանի կտակներ: Տարեկան գործառնությունների ընդհանուր գումարը կազմում է մոտավորապես 8 միլիոն ֆրանկ: Գրասենյակը գտնվում է Նուպարյան Մատենադարանի շենքում: Ակտիվ գործիչներից են՝ Զարեհ պեյ Նուպարը, Նուրհան Ֆրենկյանը, Արամ Փոյիվըջյանը, Գրիգոր Պահրին և ուրիշներ:

4. Հայ նախկին ռազմիկների ընկերություն: Անդամակցում են առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում ֆրանսիական բանակում ծառայած նախկին զինվորականներ, այդ թվում թուրքական ճակատում ֆրանսիական հրամանատարության տակ պատերազմական գործողություններին մասնակցած «Հայկական լեգեոնի» մասնակիցները (լեգեոնը լուծարքի է ենթարկվել պատերազմն ավարտվելուց հետո, 1920 թվականին): Այս կազմակերպությունը իր ենթաճյուղն ունի Մարսել քաղաքում: Ընկերության ակտիվ անդամներից են՝ Վահրամ Պարկերճյանը, Ներսես Վարդանյանը, Հա-

րուժյուն Տատյանը, Պետրոս Պետիկյանը, Գևորգ Պաքրճյանը և ուրիշներ:

5. Հայ Կարմիր խաչի օգնության մարմին: Ստեղծվել է 1922 թվականին, ունի իր բուժարանը: Օժանդակում է չբավոր խավերին բժշկական օգնություն ցույց տալու գործին, ամառվա ամիսներին կազմակերպում է աղքատ ընտանիքների՝ թվով 50—60 երեխաների օդափոխությունը: Ունի մոտ 250 անդամներ, գլխավորապես Փարիզում: Վարչության ատենապետն է՝ Վահե Ֆրենկյանը:

6. Հայ Առաքելական եկեղեցու կրոնական ընկերություն: Դիտվում է որպես Ֆրանսիայի հայկական համայնքի «Ազգային կենտրոնական վարչություն»: Ղեկավար մարմինն է՝ 27 անդամներից բաղկացած ներկայացուցչական ժողովը, որն ընտրվում է 4 տարին մեկ անգամ: Նախագահն է՝ հայ եկեղեցու Եվրոպական թեմի առաջնորդը: Ներկայացուցչական ժողովը երկու տարվա ժամանակով ընտրում է 9 հոգուց բաղկացած վարչություն: Այս կազմակերպությանը կից գործում են կրթական և մշակութային հանձնաժողովներ:

7. Փարիզի հայ աղքատախնամ ընկերություն: Ստեղծվել է 1890 թվականին, զբաղվում է աղքատներին և ծերերին նյութական օժանդակություն ցույց տալու հարցերով: Ընկերության միջոցներով պահվում են Փարիզի արվարձաններում գտնվող երկու հայ ծերանոցները, որտեղ խնամվում են մոտ 120 ծերեր: Անդամների թիվը կազմում է 500 մարդ:

8. Հայ աբիների միություն: Միության անդամները մասնակցում են սկաուտական շարժմանը և Ֆրանսիայում այդ ուղղությամբ կազմակերպվող միջոցառումներին: Խիստ փոքրաթիվ է և գաղութում ազդեցություն չունի:

9. Ֆրանսահայ կապույտ խաչ: Դաշնակցական կազմակերպություն է: Հիմնվել է 1920 թվականին: Կենտրոնական վարչությունը գտնվում է Փարիզում: Մասնաճյուղեր ունի Մարսելում և մի քանի այլ քաղաքներում: Զբաղվում է գերազանցապես առողջապահական, մասամբ նաև կրթական բնույթի հարցերով:

1. Ազգային Տուն: Գտնվում է Փարիզում: Ունի 12 հոգուց բաղկացած վարչություն: Ազգային Տան շենքում են տեղավորված հայ մշակութային միության, ԺԱՖ-ի, հայ նախկին ռազմիկների ընկերակցության, Աղքատախնամ մարմնի և այլ կազմակերպությունների գրասենյակները:

2. Դպրոցասեր տիկնանց վարժարան: Հիմնվել է (Ստամբուլից փոխադրվել է) 1923 թվականին: Այստեղ սովորում են մոտ 60 աշակերտուհիներ՝ Փարիզից և գավառներից: Գիշերօթիկ դպրոց է: Մինչև 1959 թվականը տվել է 300 շրջանավարտ: Վարժարանի աշխատանքները ղեկավարում է Դպրոցասեր ընկերությունը: Ուսումնական ծրագրերը համապատասխանում է ֆրանսիական լիցեյների ծրագրերին: Հանրակրթական մի շարք առարկաների դասավանդումը կատարվում է ֆրանսերեն լեզվով: Այդ նպատակով հրավիրվում են ֆրանսիացի ուսուցիչներ: Աշակերտների մի մասը պահվում է հայրենակցական միությունների և զանազան բարեգործական կազմակերպությունների նշանակած թոշակներով: Այս վարժարանի մասին տեղեկություններ է տալիս «եթան» թերթը: «Ֆրանսիական կառավարությունը, — գրում է թերթը, — ճանշրցած է Դպրոցասերը իբր երկրորդական վարժարան և հոն կը գործադրե պետական վարժարաններու ծրագիրը, իր սանուհիները օժտելով հանդերձ հայագիտական ծանոթություններով՝ հայ լեզուի, գրականության, կրոնքի, պատմության և Հայաստանի աշխարհագրության մարզերուն մեջ:

Աշակերտությունը կը բաղկանա ոչ միայն Ֆրանսա հաստատված հայերու զավակներն, այլ նաև արտասահմանն զրկված սանուհիներն, որոնք վերադարձին՝ իրենց երկիրներուն մեջ սատար կը հանդիսանան ֆրանսիական մշակույթին և գիտության տարածման»¹:

3. Մուրադյան երկրորդական վարժարան: Հիմնվել է Վենետիկի Մխիթարյան միաբանության կողմից, Սամուել Մու-

րադի կտակով: Գործում է 1929 թվականից, Փարիզի Սևրարվարձանում: Գիշերօթիկ դպրոց է, մոտ 120 աշակերտներով: Սովորողների զգալի մասը պահվում է զանազան բարեբարների և հայրենակցական միությունների թոշակներով:

Ուսումնական ծրագրերը համապատասխանում են ֆրանսիական երկրորդ աստիճանի դպրոցի ծրագրերին (մեկ նախապատրաստական և 6 հիմնական դասարան): Դպրոցում ուսուցվում են հայերեն, ֆրանսերեն, իտալերեն և անգլերեն լեզուներ, ինչպես նաև հանրակրթական առարկաներ: Ծրագրերը սովորաբար բաժանվում են երկու մասի՝ ֆրանսիական և հայկական: Հայկական բաժնում դասավանդվում է հայոց լեզու (աշխարհաբար և գրաբար), հայոց պատմություն, աշխարհագրություն, գրականության պատմություն, մատենագրություն: Թեև դպրոցը, որի ծրագրերը կազմված են ֆրանսիական աշխարհիկ դպրոցների ծրագրերին համապատասխան, համարվում է աշխարհիկ, սակայն ուսուցման պրոցեսում և ընդհանրապես վարժարանի աշակերտության վրա զգալի է հայ կաթոլիկ հոգևորականության ազդեցությունը: Այստեղ դասավանդում են Մխիթարյան միաբանության 4 վարդապետներ: Մուրադյան վարժարանն ունի իր գրադարանը:

4. Մարի Նուպար ուսանողական տուն: Գտնվում է Փարիզի համալսարանական թաղամասում: Կառուցվել է 1930 թվականին Նուպար փառայի միջոցներով: Դա հանրակացարանի տիպի հաստատություն է, որտեղ վարձով ապրում են 40-ի մոտ հայ ուսանողներ, այդքան էլ Մերձավոր Արևելքի երկրներից ժամանած այլազգի ուսանողներ:

5. ՀԲԸՄ Նուպարյան մատենադարան: Հիմնադրվել է Պուսում 1929 թվականին փոխադրվել է Փարիզ: Փարիզի շենքի ծախսերը հիմնականում կատարվել են Նուպար փառայի միջոցներով: Մատենադարանը իր տրամադրության տակ ունի հայագիտության և ընդհանրապես արևելագիտության պատմության հարցերի վերաբերյալ 25 հազարի մոտ գրքեր՝ բազմաթիվ լեզուներով, ձեռագրեր, հիշատակարաններ, պատմական քարտեզներ: 1941 թվականին, գերմանացիների կողմից Փարիզը գրավելուց հետո, դաշնակցական պարագլուխներից

¹ «եթան», 9 դեկտեմբերի, 1961 թ.

մեկը՝ Արտաշես Արեղյանը գետապոլյականների թուլլովությամբ և աջակցությամբ կողոպտել է մատենադարանի գրքերի մի զգալի մասը: Ըստ մամուլում հրատարակված տվյալների, Ա. Արեղյանը հափշտակել է 18 սնդուկ գրքեր (1343 հատոր), հայ պարբերական մամուլի կոմպլեկտներ և ավելի քան 33 հայկական հին ձեռագրեր¹:

Մ ամ ու լ

Հայ մամուլը Ֆրանսիայում ավելի քան հարյուր տարվա պատմություն ունի և կարող է առանձին գիտական ուսումնասիրություն նյութ հանդիսանալ: Սկսած 1855 թվականից, երբ հիմք դրվեց «Մասեաց աղավնի» պարբերաթերթի հրատարակությունը, Ֆրանսիայում երկար կամ կարճ ժամանակով լույս են տեսել մի քանի տասնյակ թերթեր ու ամսագրեր: Հիշատակենք, օրինակ, «Արևելք»-ը, «Արևմուտք»-ը, «Փարիզ»-ը, «Անահիտ»-ը, «Բանասեր»-ը, «Ապագա»-ն, «Նոր երկիր»-ը, «Երևան»-ը, «Ժողովուրդ»-ը, «Զանգու»-ն և բազմաթիվ այլ պարբերականներ: Այժմ էլ Փարիզում լույս են տեսնում մի քանի թերթեր ու ամսագրեր, երբեմն հրատարակվում են գրական ժողովածուներ ու տարեգրքեր: Այդ ուղղությամբ օգտակար աշխատանք է կատարում ֆրանսահայ գրողների միությունը և մշակութային միության շուրջը համախմբված մտավորականությունը:

1. «Աշխարհ» գրական և հասարակական առաջադիմական շաբաթաթերթ: «Աշխարհ» շաբաթաթերթը շարունակում է «Լույս Փարիզի» թերթի ուղղությունը, որը ֆրանսիական իշխանությունների կողմից փակվել է 1958 թվականին: Խմբագրական անդրանիկ հոգվածում թերթը նշում է իր նպատակներն ու խնդիրները: «Մեծ ու համապարփակ անունով, — կարդում ենք այնտեղ, — բայց համեստ միջոցներով կենդանությանը ֆրանսահայ ընթերցասեր հասարակայնության: Լրագրական երկարամյա փորձառությունը գիտենք՝ թե դժվարանցանելի ճամփա մը ունինք մեր առջև, մանավանդ սկզբնա-

կան շրջանին: Կհավատանք սակայն, որ թերթ մը երբ հաջողի խոսիլ ժողովրդի սրտեն, կարենա հարազատորեն թարգման հանդիսանալ անոր զգացումներուն ու ցուլացնել անոր իղձերն ու տենչերը, անմիջապես կհաջողի նաև իր ձեռնարկին ու նպատակին մեջ: Պարզ ու հստակ են ուրեմն առաջադրանքները: «Աշխարհ»-ը դարձնել հայաշխարհ: Հետաքրքրվիլ ամեն ինչով, որ հեռվեն կամ մոտեն աղերս ունի մեր կյանքին, մեր ձգտումներուն հետ: Լայնորեն արձագանք հանդիսանալ բոլոր այն իրադրոժումներուն, որոնք տեղի կունենան հայ կյանքին մեջ, սփյուռքի և մանավանդ Մայր հայրենիքին հողին վրա, քանի որ հոն կգտնվին հայաշխարհի արմատները, լայնատարած ու հաստատուն:

Հայաշխարհի հետ այս սերտ հաղորդակցությունը զուգընթաց, մեր սյունակներուն մեջ տեղ պիտի գտնեն նաև ինչպես ֆրանսական, նույնպես միջազգային բոլոր այն մշակութային իրագործումները, որոնք կրնան սատար հանդիսանալ ժողովուրդներու բարեկամության և աշխարհի խաղաղության»¹:

Բնութագրելով ֆրանսահայ մամուլի ներկա վիճակը և բացահայտելով այդ առնչությամբ «Աշխարհ» թերթի նշանակությունը, բուլղարահայ «Երևան» թերթը գրել է.

«Փարիզը որպես հայ մամուլի կենտրոն իր հմայքեն շատ բան է կորսնցուցած: Վերջին տարիներուն գաղութը դժբախտավորականներ, որոնց անդարձ մեկնումը անշուշտ պիտի ազդե նաև մամուլին վրա:

Ուրախալի է որ «Աշխարհ» շաբաթաթերթը իր շուրջ հավաքած է անուն ու վաստակ ունեցող գրողներու խումբ մը, որոնք կրնան փնտրել տալ թերթը:

Նախ և առաջ ըսենք, որ թերթը գաղութին հայրենասիրության ձայնն է: Սովետական Հայաստանի ջերմ պաշտպանը:

Հոն կհանդիպինք ծերունազարդ գրող Ենուբ Արմենի հյուսիսային հոգվածներին մինչև Հրաչ Զարգարյանի հանդուգն վերլուծումներուն (օրինակ, Կամսարականի և Բաշալյանի մասին), Զարեհ Որբունիին մինչև երիտասարդ ու տաղանդավոր

¹ Տե՛ս «Լրարեր», 17 հունվարի, 1946 թ.:

¹ «Աշխարհ», 7 մայիսի, 1960 թ.:

արձակագիր Գեղամ Սևանի պատմվածքներուն, պատարայան
հաճառնն Հովսեփ Սվաճյանին ու տակաւին ուրիշներու՝ հայ-
րենական այնքան ծանոթ անուններու կողքին:

«Աշխարհ» միայն հայկական երևույթներու չէ որ տեղ կու-
տա: Որպէս ոչ միայն գրական, այլ նաև հասարակական շա-
բաթաթերթ, արձագանք կըլլա միջազգային կարևոր անցու-
ղարձներու:

«Աշխարհ» շաբաթաթերթը կշնչե ու կապրի տառապող
մարդոց համար. ահա թե ինչու անոր խմբագրականներուն
մեջ կհանդիպինք խանդավառ տողերու՝ ազատութեան ճամ-
փուն վրա բարձրացող որևէ ձայնի համար, ըլլա ատիկա Սան-
թա Մարիա նախուն թե քոնդոցի ազատարար ժողովրդին հա-
մար»:

2. «Բյուրակն». աղգային, գրական պարբերագիր: Լույս է
տեսնում ամիսը մեկ անգամ: Հրատարակիչ՝ Հրաչ Տարոնյան:
Այս ամսաթերթի հրատարակությունը սկսվել է 1962 թվականի
հունիսին: Բնական է, որ կյանքի ասպարեզ մտած յուրաքանչյուր
պարբերաթերթ պետք է որ սկզբից ճշտի իր նպատակներն ու
խնդիրները: Այդպէս են վարվել նաև «Բյուրակն»-ի հրատա-
րակիչները: Առաջին համարի խմբագրական հոդվածում կար-
դում ենք. «Մեր դերերին մեկը պիտի ըլլա մնայուն և համառ
ճիգը հայ մտավորականը հայ կյանքին լծելու, մտավորակա-
նության և բազմութուններուն միջև մերձեցում, մտերմու-
թյուն, վստահութիւն ստեղծելու... Այսօր մեր հայրենիքը
կիսակոտիս իր 42-րդ տարին, ցույց տալով խանդավառ, ջլուտ
և անզուսպ երիտասարդութեան մը կորովն ու եռանդը, իր
գործն ու աշխատանքը հստակորեն ճշտող ու կատարող մեկու
մը հաստատակամութիւնը, նոր կառուցումներու տենդովը
բռնկող և իր փայլուն ապագային խորապէս հավատացող հա-
վաքականութեան մը կամբը»¹:

Բյուրակն նոր պարբերաթերթի հրատարակությունը կապ-
ված է Ֆրանսահայ գրողների միության ներսում ծագած տա-
րաձայնությունների հետ: Թե ինչքանով է թերթը կանգնած

հայրենասիրական դիրքերի վրա, այդ կերևա նրա հետագա
գործունեությունից:

3. «Գրական ամսաթերթ»: Սկսել է լույս տեսնել 1962 թվա-
կանին: Լուսաբանում է գերազանցապէս սփյուռքահայ և
Ֆրանսահայ գրական կյանքը: Նյութեր է հրատարակում նաև
կերպարվեստի, երաժշտության և արվեստի մյուս բնագավառ-
ների մասին:

4. «Զվարեմք». հանդես գրականութեան և արվեստի: Լույս
է տեսնում Փարիզում, խմբագիրը, ինչպէս նաև ամսագրին աշ-
խատակցողների մի մասը հարում է դաշնակցութեանը:

5. «Անդաստան». գրականութեան և արվեստի տարեգիր:
«Անդաստան»-ին աշխատակցում են ամենատարբեր ուղղու-
թյունների պատկանող գրողներ, բանաստեղծներ, նկարիչներ,
կոմպոզիտորներ: Նշելով «Անդաստան»-ի գրական գործունեու-
թյունը, անհրաժեշտ է միաժամանակ ընդգծել, որ մինչև այժմ
հրատարակված համարներում տեղ են գտել նաև զգալի թվով
թույլ, զաղափարազուրկ, մոգեմանիպատական արվեստի գործը
կրող ստեղծագործություններ:

6. Յրանսահայ երիտասարդական Միությունը Ֆրանսերեն
լեզվով հրատարակում է «Notre voix» («Մեր ձայնը») ամսա-
թերթը: Բանն այն է, որ հայ երիտասարդների ու աղջիկների
մի զգալի մասը կապված լինելով հայ կյանքի հետ և Սովե-
տական Միության ու Սովետական Հայաստանի մասին աշ-
խույժ հետաքրքրություն ցուցաբերելով հանդերձ, հայերեն չի
կարդում: Այս հանգամանքը պահանջ է առաջադրել օտար լե-
զուներով թերթ հրատարակել: Այդ նպատակով է հրատարակ-
վում «Notre voix» ամսաթերթը, որը Յրանսիայի առաջադեմ
երիտասարդութեան սիրված թերթն է:

7. «Խթան». հայկական կյանքի լրատու պահանջողական
շաբաթաթերթ:

8. «Հառաջ». օրաթերթ: Լույս է տեսնում Փարիզում, հրա-
տարակում են դաշնակները:

¹ «Բյուրակն», № 1, հունվար 1962 թ.:

9. «Հայ բույժ». ամսաթիւթ: Հրատարակում են դաշնակները:

10. «Քանքեր». Ֆրանսահայ ավետարանականների միութեան պաշտոնական ամսագիրն է:

11. «Շինարար». ամսաթիւթ: Հրատարակում է ՀԲԸՄ եվրոպայի շրջանային կենտրոնական վարչութիւնը:

Կ Ր Թ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ժ Ը

Ֆրանսահայ գաղութում շափազանց անմխիթար վիճակում է գտնվում կրթական գործը: Արդեն հիշված Մուրադյան վարժարանից և Դպրոցասեր տիկնանց միութեան վարժարանից բացի այդ մեծ գաղութում ուրիշ դպրոցներ չկան: Փարիզում և գավառի մի քանի այլ քաղաքներում գործում են, այսպես կոչված, կիրականօրյա դպրոցներ, որտեղ ֆրանսիական դպրոցներում սովորող հայ երեխաները շաբաթական մեկ-երկու անգամ հայերեն են պարապում: Այդ «դպրոցների» պարամունքները, դպրոցական շենքերի բացակայութեան պատճառով, սովորաբար տեղի են ունենում եկեղեցիներին կից սրահներում. այստեղ սովորող երեխաների ընդհանուր թիվը կազմում է մոտ 1300 հոգի: Ահա թե ի՛նչպես է բնութագրում ֆրանսահայ դպրոցի արդի վիճակը Յնուլք Արմենը: «Մեր մեղադրական սրտցավութիւնը այն է, որ Փարիզի համեմատապես մխիթարական և ամերիկանման ցանցին դատ, Ֆրանսայի ուրիշ քաղաքներուն մեջ գործող հայ դպրոցները ծնունդ են տեղական պատահական ճիգերու, ապակեղորոնացած ինքնապահ անջատ երեքուն կյանքով, առանց հաստատուն հիմնարկները ըլլալու ազգային որևէ կեդրոնական իշխանութեան հավաքական ծրագիրով առաջնորդված կազմակերպութեան: Ուրեմն ճակատագրի խաղերուն թողված ճրագներ, որոնք կըրնան պլլալալ, աղոտ ճաճանչներ սփռելով, բայց որոնք կրնան նաև յեղակարծ հովերի մարիլ: Այդ ճրագները տեղ մը կան, ուրիշ տեղ չկան, բայց ամեն տեղ հայ նորահաս սերունդ կա: Ծրագններուն կյանքը կախում ունի այն ձեթեն, որուն ցամքելովը կը մարի լույսն ալ: Այս է ուզվածը: Այսչափով կապահով-

վի հայ լեզուն ուսուցանելու և կենդանի պահելու տենչալի դադարականը, որուն հուզիչ համերգը կը նվազվի անընդհատ անհամար երգեհոններով, աշխարհի ամեն բեմերն:

Վերջին զինադադարեն ետքը, հայ դպրոցներու բազմաբողոք սրտապնդիչ փթթում մը տեղի ունեցավ: Ոգևոր ու կուսակուց շարժումի վերածնունդ մը ստեղծվեցավ բոլոր տարազրավայրերու մեջ, որոնց կարգին նաև Ֆրանսայի, որով մասնավորաբար կը զբաղվին մեր վերլուծումները: Հայրենիք ներգաղթի շարժումն ալ հրահրիչ պատրույզը եղավ դպրոցական վերազարթնումին: Այդ հրահրումը վառ պահվելով և ծավալելով մասնավորաբար եվրոպայոս միջավայրերու մեջ (Արևելքը անջատ աշխարհ է), այսօր ամեն տեղ, և Ֆրանսայի մեջ ալ, հայ դպրոցական գործունեութիւնը փայլուն պատկերով կրնար ներկայանալ, խափանելով ամեն ողբ ու տըրտունջ: Բանկումը փոխանակ արծարծվելու, դեպի շիջում հակեցավ:

Միայն Հար. Ֆրանսայի մեջ Ազգ. Ճակատի ժառանգ թողած 28 դպրոցները հալեցան, 2—3 հատ միայն վերապրողներով, անքավելի պատասխանատուութիւնովը անհատներու, որոնք զբպանի հաշիվը գերադասեցին դպրոցական այգիի մշակութենին: Մեկ կամ մյուս պատճառով, նույն պատկերը ուրիշ ամեն տեղ»¹:

Հայերի ձուլման պրոցեսը Ֆրանսիայում տեղի է ունենում անհամեմատ ավելի արագ տեմպերով, քան եվրոպայի և Ասիայի մյուս հայ գաղութներում: Նոր սերունդը հայերեն գրեթե չի խոսում: Ընտանիքներում տիրապետող լեզուն ֆրանսերենն է: Ձուլման պրոցեսը ուժեղանում է երկրում ֆրանսիական ազգային կուլտուրայի բարձր մակարդակով, որն իր ազդեցութեան ոլորտի մեջ է առնում ազգային փոքրամասնութիւնների լեզուն և մշակույթը:

Ֆրանսիայի հայ մամուլում, ինչպես և մյուս երկրներում լույս տեսնող հայերեն թերթներում հաճախ կարելի է հանդիպել կարծիքների, որոնց համաձայն ֆրանսահայ գաղութն ար-

¹ «Աշխարհ», 3 սեպտեմբերի, 1960 թ.:

դեն «կորսված է» և ազգային կյանքով ապրելու հեռանկար-
ներ չունի: Այսպիսի հոռետեսական կարծիք ունի նաև մեր
կողմից արգեն հիշատակված գրող Ենոլք Արմենը, որը «Լույս
Փարիզի» թերթում գրում է. «Նահանջականության ախտավոր
հոգեբանությունը արմատացած վարչաձևի պես ֆրանսահայ
մեծահարուստներու մեկ ստվար մասին հոգիին մեջ, տիրող
աղանդ դարձած է, ջլատելով և ամլացնելով ազգային մեքե-
նային շարժիչ գործոններ սնուցանող և անոնց շողի տվող
աղբիտները: Վարակիչ աղանդը բարձունքներեն միջակորյար
խավիրու ալ հասած է, ազգային գործերի խրտշումի, խուսա-
փումի, շեղբացումի, ձեռնպահության և դասայրության «մի-
մոս» մը ստեղծելով»: Եվ միթե այս պայմանների մեջ,—
ասում է հեղինակը,— հնարավո՞ր է, որ «Նոր Ադամյաններ,
Նոր Զուհաճյաններ, նոր Մագուտյաններ, նոր Շահմուրադ-
յաններ հառնին արտասահմանի հայ գաղութներու ալ ծոցեն,
ինչպես մեր հայրենիքին գեղարվեստներու ու գիտություննե-
րու հսկաները»: Ո՞րն է ելքը: Ենոլք Արմենը այդպիսի ելք չի
տեսնում, քանի որ գաղութը տարրալուծումից փրկելու համար
նրա կարծիքով միայն երկու ազգակ կա՝ մամուլ և մշակութա-
յին կազմակերպություններ, բայց «երկու ազգակներն ալ ձա-
խողած են իրենց կոշումին մեջ»: Մասնավորապես մշակութա-
յին կազմակերպությունները «ոչ միայն քաղաքական ու գա-
ղափարական բազմաճյուղ ու բազմադիմազիծ հերձուճումով կո-
տորակված, այլ նաև իբր իմացական տհերկի մշակներ ալ
պառակտված, անվերափոխելի ցրումի մեջ զինաթափված
են, անզո՞ր համադրական ծրագիր կամ գաղափարական մշա-
կելու, հետապնդելու և գործադրելու»¹:

Քաղութի ընդհանուր վիճակի հետ ծանոթացող մեկը չի
կարող բաժանել Ե. Արմենի ծայր աստիճան հոռետեսական
կարծիքը ֆրանսահայ գաղութի մոտ ապագայի վերաբերյալ:
Քաղաքական կուսակցություններ ու խմբավորումներ.— Հայ
կոմունիստները անդամակցում են Ֆրանսիայի Կոմունիստա-
կան կուսակցությանը և աշխատում են նրա Կենտկոմի ղեկա-

վարությունը: Մեր հասարակայնությունը լայնորեն հայտնի է
հայ կոմունիստների և նրանց հարած առաջադիմական գործիչ-
ների հերոսական պայքարը ընդդեմ ֆաշիզմի և ռեակցիայի:
Նրանցից շատերը իրենց կյանքը զոհեցին Ֆրանսիայի ազա-
տագրության համար: Հերոսի մահով ընկան հայ ժողովրդի
անվեհեր զավակ Միսաք Մանուշյանը և իր մարտական ընկեր-
ները: 1944 թվականին, երբ Եվրոպայի վրա արդեն սկսում էր
բարձրանալ նոր կյանքի արշալույսը, երբ Սովետական Բա-
նակի հուժկու հարվածների տակ ֆաշիստական բանակը սկսել
էր իր նահանջը դեպի հիտլերյան Գերմանիայի սահմանները,
Մանուշյանը և նրա մարտական ընկերները ընկան գեստապո-
լականների ղեղակից: Ֆաշիստները զնդակահարեցին Արփեն
Դարբինյանին (Մանուկյանին), համակենտրոնացման ճամ-
բարում գաղով խեղդամահ արեցին Լուիզա Ասլանյանին (Լա-
սին): Թշնամու դեմ մղած պարտիզանական մարտերում հերո-
սի մահով ընկավ Նշան Տեր-Մարտիրոսյանը: Դիմազրության
շարժմանը ամենակտիվ մասնակցություն են ունեցել Շահե
Տատուրյանը, Դավիթ Դավթյանը, Վահրամ Մավյանը, Մես-
րոբ Ասատրյանը, Սիրաք Բաղդասարյանը և ուրիշներ: Գործե-
լով Փարիզի շրջանում, Կենտրոնական և Հարավային Ֆրան-
սիայում, նրանցից շատերը ընդհատակյա գործունեության
համար տառապել են բանտերում ու համակենտրոնացման
ճամբարներում: Պատերազմից հետո Փարիզի փողոցներից
մեկը կոչվեց Մանուշյանի և նրա խմբի անունով: «1944-ի
փետրվարին,— գրում է «Մեր նշանաբանն է Հառաջ» թեր-
թը,— Մոն Վալերիենի մեջ նացի համազարկին տակ ընկնող
Միսաք Մանուշյանը իր կյանքի և մահվան զնով տվավ ապա-
ցույցը թե ինք արժանի ժառանգորդն է այն բոլոր հերոսնե-
րուն, որոնք իմաստավորեցին մեր գոյությունը իբրև քաղաքա-
կիրթ ժողովուրդ և մեզի ընծայեցին պատիվն ու հպարտու-
թյունը՝ ըլլալու մարդկության առաջապահ զիրքերուն վրա՝
երեկ և այսօր, կոչվեն անոնք Վարդան Մամիկոնյան, Ստեփան
Շահումյան կամ Հունան Ավետիսյան: Իսկ Մանուշյանի դա-
հիճները, անոնք իրենց կարգին, եղան ժառանգորդները: այն
մյուս բարբարոսներուն, որոնք ապրիլյան եղեռնին որբացու-

¹ «Լույս Փարիզի», 3 հունվարի, 1959 թ.:

ցեր էին Միսաք Մանուշյանի սերունդը, փորձելով անճիտել մեր ժողովուրդը»¹:

Նույնիսկ այնպիսի շահավոր թերթ, որպիսին «Ժամանակ»-ն է, գրում է, որ «շատ զորեղ եղավ ընդհատակյա գործող հայ երիտասարդության անձնվիրությունը և զոհարերությունը ի նպաստ գաղիացիներու և ընդդեմ բռնազրավիչ հիթլերականներու: Այսպես բովանդակ Ֆրանսիայի մեջ չկա չճանչցող բանաստեղծ և լրագրող Միսաք Մանուշյանի անունը, որ մեծագույն դերակատարն եղավ այդ սարսափելի օրերուն: Իր անունը անմահացած է»²:

Մանուշյանի և իր մարտական ընկերների անձնազոհ պայքարը ֆաշիզմի դեմ բարձր են գնահատել Ֆրանսիայի Կոմունիստական կուսակցության ղեկավարները: «Հայ ժողովուրդը, — գրում է Ժակ Դյուկլոն, — իրավունք ունի պարծենալու Մանուշյանի խմբի հերոսներով, որոնք շարունակելով նույն պայքարը, որ Սովետական Միության պանծալի բանակը և ժողովուրդները մղում էին ֆաշիզմի դեմ, իրենց կյանքը տվին հանուն ժողովրդի ազատության»³:

1960 թվականին Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունը Փարիզ ուղարկեց մարմարե հուշատախտակ Մ. Մանուշյանի գերեզմանին դնելու համար:

Հայ կոմունիստները իրենց ֆրանսիացի եղբայրների հետ միասին այժմ պայքարում են հանուն ընդհանուր և լրիվ զինաթափման, հանուն Եվրոպայի և մյուս ժողովուրդների խաղաղության ու համադրժակցության, հանուն ֆրանսիական ժողովրդի դեմոկրատական իրավունքների:

Հնչակյաններն ու ռամկավարները ներկայումս Ֆրանսիայում մամուլ չունեն: Այս երկու պարտիաները զատ-զատ գործում են ղանազան մշակութային միությունների կազմում: Ռամկավարները համախմբված են գլխավորապես ՀԲԸՄ

Ֆրանսիայի շրջանային վարչության և եկեղեցական ընկերակցության շուրջը: Զգալի է այն մտավորականների թիվը, որոնք քաղաքական պայքարներին չեն խառնվում, բայց իրենց մասնակցությունն են բերում գաղութի մշակութային կյանքին Դրանք ընդհանրապես լոյալ վերաբերմունք ունեն դեպի Սովետական Հայաստանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած շրջանում ֆրանսահայ գաղութի կապերը Սովետական Հայաստանի հետ զգալիորեն ընդլայնվեցին: Դատկառելի թվով պատվիրակություններ, տուրիստներ և առանձին այցելուներ եղան Հայաստանում և սեփական աչքերով տեսան իրենց հայրենիքի առաջադիմությունը: Հենց դրա մեջ էլ պետք է փնտրել դաշնակցության պարտիայի ազդեցության զգալի թուլացման գլխավոր պատճառը:

1961 թվականի հունիսին տեղի ունեցավ ֆրանսահայ գրողների ընկերակցության ընդհանուր ժողով: Այստեղ Սովետական Հայաստանից ստացած իրենց տպավորություններով հանդես եկան Սովետական Հայաստանի 40-ամյակի տոնակատարությանը մասնակցած Ենուիք Արմենը, Ա. Ալեքսանյանը, Բյուզանդ Թոփալյանը:

«Ժողովականները, — գրում է «Աշխարհ» թերթը, — լարված ուշադրությամբ լսեցին հուսատու և լուսատու խաղրիկները, զորս հայրենիքեն եկող կուռնկները բերած էին:

Մայր հայրենիքին հոյակապ վերելքը մշակույթի բոլոր մարզերուն մեջ, մեր շքնաղ երկրին բոցավառ արևը, Հայաստանի երկնքին ջինջ ու պայծառ կապույտը, մեր հոյակապ մայրաքաղաքին հայկական ճարտարապետությամբ զմայլելի կառույցը, մեր առույգ և հերոսական աշխատավորությունը, մեր հույսն ու հավատքը կազմող բազմահազար երիտասարդությունը, մեր գիրին ու գրականության ծաղկումը, այս բոլորը իբրև հրապուրիչ տեսիլ պատկերացան ժողովականներու երևակայության սպիտակ պաստառին վրա, հրաշքի մը հանգույն»¹:

Ֆրանսահայ գաղութում են ապրում ու ստեղծագործում

¹ «Մեր նշանարանն է Հառաջ», 2 փետրվարի, 1959 թ.:

² «Ժամանակ», 9 հունվարի, 1960 թ.:

³ «Սովետական Հայաստան» ամսագիր, 1956 թ., № 10, էջ 22:

¹ «Աշխարհ», 10 հունիսի, 1961 թ.:

պատկառելի թվով գրողներ, բանաստեղծներ, երգիչ-երգչուհիներ և արվեստի այլ բնագավառների աշխատողներ: Գրողներից հիշատակենք Հրաչ Զարդարյանին, Վահան Մալեղյանին, Շահան Շահնուրին, Մարի Աթմաճյանին, երգչուհիներից՝ Հայկանուշ Քորոսյանին, Իրիս Պլպուլյանին, Աիդա Ազնաուրյանին, Լիդիա Կարինին, երաժշտագետներից՝ Օննիկ Պերպերյանին, Ավ. Մեսումենցին, դաշնակահարներից՝ Ռ. Պետրոսյանին, նկարիչներից՝ Գառուին (Գառնիկ Զուլումյան), Շարթ Արթինյանին, Ժանսեմին (Ժան Սեմերջյան), Ճերանյանին, Արմենակ Մխիթրյանին, քանդակագործներից՝ Տարիա Կամսարականին, ճարտարապետներից՝ էգուարդ Ութուջյանին:

Կան նաև այնպիսի ստեղծագործողներ, որոնք կա՛մ երբեք կապված չեն եղել, կա՛մ կորցրել են կապերը հայ իրականության հետ, ուրեմն և հայ գրականության ու արվեստի հետ: Այդ արվեստագետների ու գրողների ստեղծագործությունը կարող է արժեքավորվել ֆրանսիական գրականության ու արվեստի ասպարեզում ունեցած նրանց ծառայությունների իմաստով: Գրանցից են գրողներ Անրի Քրուսյան (Քորոսյանը), Վահե Քաչան (Խաչատրյան), դրամատուրգներ Գարրիել Հարութը, Արութ Ազամովը, կինոռեժիսոր Անրի Վեռնոլը (Աշոտ Մալաքյան), երգիչ Շարլ Ազնաուրյանը, դերասաններ Գոգո Ասլանը (Գրիգոր Ասլանյան), Ռոզի Վարդը, Մատլեն Եթիզյանը և ուրիշներ:



Մենք ընդհանուր գծերով բնութագրեցինք սփյուռքահայ մշակութային կյանքը: Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում ապրող հայերի մշակութային կյանքին մենք առանձին բաժիններ չենք նվիրում, որովհետև այդ երկրներում կազմակերպված հայկական կյանք չկա կամ գրեթե չկա: Հոլանդիայում, օրինակ, մի ժամանակ գոյություն է ունեցել հայկական մեծ գաղութ, բայց հետագայում զանազան պատճառներով հայերը անցել են մյուս երկրները՝ Անգլիա, Ֆրանսիա և այլն: Մի մասն էլ ձուլվել է տեղական բնակչությանը: Հայտնի է, որ XVI դարում հատկապես Ամստերդամ քաղաքում հայ մշակութային աշխույժ կյանք կար: Այստեղ է առաջին անգամ լույս տեսել (1695 թվականին) տպագիր «Հայաբարած Աշխարհացույց քարտեզը»: Այժմ Հոլանդիայում ապրում են հազիվ մի քանի տասնյակ հայեր:

Համեմատաբար ավելի մեծաթիվ է Բելգիայի հայ գաղութը, որն իր սկիզբն առնում է անցյալ դարի 90-ական թվականներից: Այժմ Բելգիայում ապրում են 1000—1500 հայեր, որոնցից մոտավորապես կեսը՝ Բրյուսելում, իսկ մնացածները Անվերս, Լիեժ և այլ քաղաքներում: Բրյուսելում կա հայկական ակումբ և Տիկնանց Միություն: Գաղութում երբեմն անց են կացվում կուլտուրական զանազան միջոցառումներ: Անվերսում կա երիտասարդական միություն փոքրաթիվ անգամներով: Անցյալում համալսարանական կրթություն ստանալու համար Բրյուսել են եկել որոշ թվով հայ երիտասարդներ, այդ թվում հայ ականավոր բանաստեղծ Գանիկ Վարուժանը: Բելգիահայ գաղութի ջանքերով 1958 թվականին Կանի համալսարանի մատենադարանի սրահի մեջ դրվեց Վարուժանին նվիրված բրոնզե հուշատախտակ:

Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում՝ Ալբանիայում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում, Եվեդիայում և այլ երկրներում ապրում է մոտ 12 հազար հայ:



ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ¹

1955 թվականին կիսարժեքով մահացավ հայ խոշորագույն կապիտալիստ Գալուստ Կյուլպենկյանը: Հանդիսանալով Իրաքի նավթային ընկերության բաժնետերերից մեկը, Գալուստ Կյուլպենկյանը, անգլիական և ամերիկյան նավթային «արքաների» հետ միասին առասպելական հարստություն էր դիզել: Իրաքի աշխատավոր ժողովրդին, նրա երկրի հարստությունները շահագործելու ու կողոպտելու միջոցով Գ. Կյուլպենկյանը մտել էր աշխարհի խոշորագույն կապիտալիստների շարքը: Արտասահմանի հայ մամուլում նրա հարստության չափի մասին մենք ստույգ տեղեկությունների չենք հանդիպել, սակայն որոշ ընդհանուր տվյալներով Գ. Կյուլպենկյանին պատկանող կապիտալի ընդհանուր գումարը մեկ միլիարդ գոլարից պակաս չէ: Ինքնին հասկանալի է, որ գրավելով տնտեսական այսպիսի բարձր դիրք, Գ. Կյուլպենկյանը մեծ ազդեցություն ուներ նաև հայկական շրջաններում: Որոշ ժամանակ նա վարել է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության նախագահի պաշտոնը: Գեռես կենդանի ժամանակ, Գ. Կյուլպենկյանը որպես տիպիկ բուրժուական ֆիլանտրոպ, իր հսկայական հարստությունից երբեմն որոշ գումարներ էր

¹ Անհրաժեշտ ենք համարում հակիրճ տեղեկություններ տալ այս հիմնարկության գործունեության վերաբերյալ, քանի որ այդ հաստատությունը որոշակի ազդեցություն ունի գաղութահայ կյանքի վրա:

հատկացնում հայկական դպրոցներին և մշակութային այլ հաստատություններին: Դա մի կողմից տարածում էր հայ կապիտալիստի անունը և բարձրացնում նրա ազդեցությունը, իսկ մյուս կողմից նրա համար ստեղծում «մեծ բարերարի», «մեծ հայի» համբավ:

Իր մահվանից երկու տարի առաջ, 1953 թվականին, Գ. Կյուլպենկյանը արդեն պատրաստել էր իր կտակը, որի բովանդակությունը հայտնի դարձավ միայն նրա մահվանից հետո: Այդ կտակով ստեղծվում էր «Գալուստ Կյուլպենկյան հիմնարկություն», որը հետապնդում է «բարեսիրական, մշակութային և գիտական նպատակներ»: Այդ հիմնարկությունը, այսպիսով, ստանձնեց Գ. Կյուլպենկյանի բոլոր հարստությունների տնօրինումը: 1956 թվականին Պորտուգալիայի կառավարությունը հաստատեց «Գ. Կյուլպենկյան հիմնարկության» տատուտը, որի լրիվ տեքստը հայկական մամուլում երբեք չի հրատարակվել: Հայտնի է, սակայն, որ այդ հիմնարկության վարչությունը բաղկացած է 7 հոգուց: Վարչության նախագահն է՝ Կոմս Ալզերեթ Պերտիկան, հանգուցյալի մոտ բարեկամներից մեկը: Վարչության կազմի մեջ է մտնում Գ. Կյուլպենկյանի փեսան՝ Գեորգ Եսայանը: Հիմնարկությունում ազդեցություն ունի նրա աշխատակից և Կյուլպենկյանի եղբորորդի Ռորերտ Կյուլպենկյանը: Իր կտակով Գ. Կյուլպենկյանը նշում էր նաև որոշ ֆիքս գումարներ իր ազգականներին ու բարեկամներին, այդ թվում նաև իր ժառանգ նուբար Կյուլպենկյանին: Ճշգրիտ գումար էր սահմանված նաև էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման համար (300—400 հազար դոլար), որ նա նվիրում էր իր ծնողների հիշատակին: Հիմնելով «Գ. Կյուլպենկյան հիմնարկությունը», նրա հեղինակը ցանկացել էր անմահացնել իր անունը, ավելի ամբաստանել «մեծ բարերարի» իր համբավը: Որոշ չափով նա պիտի նմանվեր ամենուրեք հայտնի «Նոբելյան հիմնարկին»: Դատելով արտասահմանի հայ մամուլի հաղորդագրություններից, Գ. Կյուլպենկյանը հիմնարկության կանոնագրի մեջ որևէ հիշատակություն չի արել այն մասին, որ միջոցների որոշակի մասը պետք է տրամադրվի հայ գաղութների կարիքների համար: 1959 թվա-

կանի ղեկտեմբերին Բեյրութում ավարտվեց «Գ. Կյուպենկյան» 650 տեղանոց սրահի կառուցումը: Այդ առթիվ կազմակերպված հանդեսում ելույթ ունեցավ ռամկավարների պարտիայի լիդերներից Բ. Փովմասյանը, որը ի միջի այլոց նշեց, թե «մեծ բարերարը իր կյանքին մեջ շնախատեսեց հայկական նպաստ-էներու մասնավոր տրամագրություն մը, թողնելով, որ կտակարարները իրենք կատարեն անհրաժեշտը՝ հայ ժողովրդի անհամար կարոտության օգնության փութալու համար»: Այս հանգամանքը Բ. Փովմասյանը բացատրում է նրանով, որ Գ. Կյուպենկյանը «կմտածեր ավելի համամարդկային շահանքներով»¹:

«Գ. Կյուպենկյան հիմնարկության» կողմից 1957 թվականին հրապարակված հաղորդագրության մեջ նշվում էր, որ «ընդհանուր քաղաքականության համար և փորձառության լույսին տակ, հիմնարկությունս նույնպես որոշած է, անհատական պարագաներու օգնություն տալն առաջ, իր զխավոր ուշադրությունը կենտրոնացնել հավաքական կազմակերպություններու և հաստատություններու նկատմամբ: Միայն բացառիկ պարագաներու տակ անհատական դիմումնագիրներ նկատողության պիտի առնվին»²: Այնուհետև նշվում է, որ որոշ թվով կրթաթոշակներ պիտի սահմանվին «կարոտյալ հայ ուսանողներու համար»: «Հիմնարկությանս ըրած ուրիշ շնորհումներու նկատմամբ, — ասվում է այնուհետև հաղորդագրության մեջ, — որոնք շատ լայնածավալ և զանազան գործունեություններ կը պարփակեն Բորթուկալի, Միջին Արևելքի, Անգլիո և Բրիտանական կայսրության մեջ, մասնովին կը հանձնվի վերոհիշյալ հայտարարության հետ միաժամանակ»³:

Հաղորդագրության մեջ նշվում են հայկական հաստատություններին հատկացված գումարները: Այսպիսի հաղորդագրություններ հիմնարկությունը հրապարակել է նաև հետագա ժամանակաշրջանում: Այսպես, 1959 թվականի հունիսին հրա-

¹ «Ձարթոնք», 12 դեկտեմբերի, 1959 թ.:

² «Նուշարար», 15 նոյեմբերի, 1957 թ.:

³ Նույն տեղում:

պարակված հաղորդագրությունից հետևում է, որ հիմնարկությունը որոշ հատկացումներ է կատարել Լիբանանի, Քուրդիստանի, Իտալիայի, Ֆրանսիայի զանազան կրթական, մշակութային, եկեղեցական հաստատությունների ծախսերը հոգալու համար: Նույն հաղորդագրության մեջ նշվում է, որ հիմնարկությունը 70 հազար դոլար է հատկացրել Հարվարդի համալսարանի հայագիտական բաժնի կարիքների համար:

Ըստ 1960 թվականի հունվարի 15-ի հաղորդագրության, մինչև 1959 թվականի դեկտեմբեր ամիսը հիմնարկության հայկական բաժնի գծով ծախս կատարվել է 2.047.695 դոլարի չափով, շնչված Կյուպենկյանի կտակում նշված 300—400 հազար ֆիքս գումարը, որ հատկացված է էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգմանը:

Անհրաժեշտ ենք համարում հիշատակել նաև Գ. Կյուպենկյանի հիմնարկության 1959 թվականի սեպտեմբերին հրապարակված զեկույցը, որտեղ հաղորդվում է, որ հիմնարկությունը «հաստատած է մատենաշար մը... Այս մատենաշարին մեջ լույս կը տեսնեն, ընդհանուր առմամբ, հայ մշակութային և հայ քաղաքակրթության վերաբերյալ ուսումնասիրություններ և մասնավորաբար հայերեն լեզվին, հայոց պատմության և հայ գրականության մասին երկասիրություններ, կարևոր համարված հայագիտական գործերու թարգմանություններին հայերենի օտար լեզուներու կամ օտար լեզուներ հայերենի Մատենաշարը կը հրապարակե նաև անտիպ հին բնագրեր կամ կվերհրատարակե սպառած և անվիճելի արժեք մը ներկայացնող գործերը»¹:

Այնուհետև հաղորդվում է, որ բացի իր սեփական մատենաշարի մեջ լույս տեսնող գործերից, հիմնարկությունը աջակցում է հայագիտության վերաբերյալ ուրիշ գործերի հրատարակությանը: Որպես օրինակ հիշատակվում է Լուի Մարիեի «Նոյնիկ»-ի բնագրի և ֆրանսերեն թարգմանության հրատարակության նախապատրաստությունը, ինչպես նաև «Հան-

¹ «Նոր աշխարհ», 26 սեպտեմբերի, 1959 թ.:

դիս ամսօրյա» ամսագրին հատկացված համեստ գումարը (500 ֆ. ստերլինգ):

Գ. Կյուլպենկյան հիմնարկության այս վերջին զեկուլցի հրապարակումը տեղի տվեց որոշ քննադատական դիտողությունների, որոնք հրապարակվեցին հայ մամուլի էջերում: Այդպիսի մի հոդված հրապարակվեց մասնավորապես «Լրագրեր» թերթում: Այդ զեկուլցը դիտվեց որպես ավելի շուտ հիմնարկության գիտական աշխատանքները ունկնդրող միտում, քան այդ ուղղությամբ լուրջ մշակված ծրագրի իրականացման փորձ: Նշվում էր, մասնավորապես, հրատարակության համար նախապատրաստվող աշխատությունների ընտրության ավելի կամ նվազ չափով պատահական բնույթը: «Սպուտնիկի ու լուսնիկների դարաշրջանում գրականությունն ու գիտությունը հայ ժողովրդի համար ևս դադարել են աղքատախնամության և ողորմածության գրադմունքները լինելուց, մի բան կորցելու սրճ է սնտուկից»¹: Նշելով, որ այդպիսի մի լուրջ գործի ձևնաձուխ կարելի է լինել խիստ գիտական ծրագրի մշակելուց հետո միայն, թերթը գրում է. «Հայ մշակութային ու հայ քաղաքակրթության կարելի է ծառայել նրանց ստեղծած տիրոջ՝ հայ պետական ժողովրդին նախագծած ուղիներով: Գաղթականական երեկվան ստրկական մտայնությունը՝ մեզ թելադրող մուրալ «ազգային բարերարից» մի երկու հատորի չափ հրատարակության ծայք, — ծիծաղելի չափ օտարոտի է մեր այսօրվան իրականություն: Կարիք կա՞ արդյոք այստեղ վերհիշելու թե արդեն որպիսի հսկա գրական ժառանգություն ունեն ստեղծած Պետհրատն ու մեր մյուս հրատարակչությունները նրանում»²: Այս հոդվածի հրապարակումն անշուշտ չի նշանակում, որ «Լրագրեր»-ը կամ գաղութահայ հասարակայնության մյուս շրջանները ընդհանրապես դեմ են, որ Գ. Կյուլպենկյան հիմնարկության միջոցները օգտագործվեն հայկական հաստատությունների ծախսերի մի շնչին մասը հոգալու համար: Ինչքան էլ այդ բարեգործական գումարները շնչին լի-

նեն և բուրժուական բարեգործության բնույթ կրեն, ողջամտություն չէր լինի գաղութահայ կյանքի սլայմաններում հրաժարվել դրանցից, մանավանդ, որ այդ գումարները ժողովրդից կորզված միջոցներ են:

Տարօրինակ է հնչում, օրինակ, Կիպրոսում հրատարակվող «Հենարան» թերթի այն կարծիքը թե՛ «ունենք հին ու նոր կադմակերպություններ, որոնք ժողովուրդին կանոն և ժողովուրդին կուտան: Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը անոնց չի նմանիր: Ժողովուրդին կուտայ առանց անկե բան մը առած լլլալու»³:

Ակնհայտ է, որ այս թերթը շեշտը դնում է ձեռի վրա, առանց հասկանալու, որ վերջին հաշվով Գ. Կյուլպենկյանը այնպիսի կապիտալիստ էր, ինչպես աշխարհի մյուս կապիտալիստները, և նրա շահույթներն էլ ուրիշին շահագործելու ու կողոպտելու արդյունք են:

Վերը արդեն նշեցինք, որ Գ. Կյուլպենկյանը 400 հազար դոլար առանձնացրել է էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման համար: Այդպիսի մի քայլը նպատակ ուներ սփյուռքահայությանը ցույց տալու, որ ինքը՝ Գ. Կյուլպենկյանը մտածում է ոչ միայն արտասահմանի հայ գաղութների մասին, այլև ուզում է, որ իր «բարերարությունները» կատարվեն նաև հօգուտ Ս. էջմիածնի, որ գտնվում է Սովետական Հայաստանում: Այդ կապակցությամբ 1957 թվականին 400 հազար կտաչային գումարի հարցը հրապարակ եկավ: Դա արդեն այն ժամանակն էր, երբ աչքի առաջ ունենալով էջմիածնի Մայր Տաճարի նշանակությունը, որպես պատմական հնազույն հուշարձաններից մեկի, Սովետական կառավարությունն արդեն առանձնացրել էր մոտ 4 միլիոն ուրլի և տաճարի վերականգնման ու վերանորոգման հիմնական աշխատանքներն արդեն ավարտված էին:

1957 թվականի օգոստոսին էջմիածին ժամանեցին այդ հիմնարկության երկու լիազորված ներկայացուցիչներ՝ Լոնդոնի համալսարանի քաղաքատնտեսության բաժանմունքի պետ.

¹ «Լրագրեր», 14 նոյեմբերի, 1959 թ.:

² Նույն տեղում:

³ «Հենարան», 10 նոյեմբերի, 1959 թ.:

հայտնի անտեսագետ Սիդնեյ Քեյնը և Ֆրանսիայի ճարտարագետների ասոցիացիայի անդամ ու ակտիվ աշխատակից Լորտարդ Ութուջյանը, որոնց հանձնարարված էր տեղում ծանոթանալ պայմաններին և համապատասխան գեկուցագիր ներկայացնել:

Վերոհիշյալ մարդկանց համար դժվար չէր համոզվել, որ Սովետական պետությունը խստորեն կիրառում է եկեղեցիին պետությունից անջատված լինելու օրենքը, որ էջմիածինը ազատ է տնօրինելու իր բոլոր ֆինանսական միջոցները, այդ թվում և կտակով հատկացված գումարը: Գրանից մոտ մեկ տարի անց Գ. Կյուլպենկյան հիմնարկությունը էջմիածնի կաթողիկոսության հաշվին փոխանցեց կտակով նախատեսված գումարի մի մասը, որպեսզի նրա իրացումից հետո հաջորդի մնացած գումարը:

Ընթերցողին բնականաբար կարող է հետաքրքրել, թե ի՞նչ փոխհարաբերությունների մեջ են դաշնակներն ու Գ. Կյուլպենկյան հիմնարկությունը: Հիմնարկության «Հայկական բաժինը» կապված է ռամկավար, ինչպես նաև շեղոք, բայց ազգեցիկ շրջանների հետ: Այսպիսով հիմնարկությունը դաշնակցության պարտիայի հետ կապեր չի ունեցել և միջոցներ չի տրամադրել: Երբ հրապարակվեցին հիմնարկության գեկուցաները, դաշնակցական մամուլում երևացին թեև զուսպ, բայց որոշակիորեն արտահայտված դժգոհություններ: Այդ մասին հոդվածներ հրապարակվեցին մասնավորապես «Հայրենիք» թերթում, որոնք արտատպվեցին դաշնակցական մյուս թերթերում: Դաշնակները փորձում են այդ հիմնարկությունից զուամաներ կորզել ժամանակավորապես իրենց վերահսկողության տակ գտնվող կլիիկյան կաթողիկոսության, մի քանի դպրոցների ու միությունների համար, օգտագործելով իրենց սովորական դեմագոգիան այն մասին, որ դրանք նույնպես «ազգային հաստատություններ» են: Գ. Կյուլպենկյան հիմնարկության վստահությունը շահելու համար դաշնակցական մամուլը մի առանձին ջերմհասնդությամբ ընդգծում է, որ Անթիլիասի կաթողիկոսությունը «կը վայելի ազատ աշխարհի վստահու-

թյունը»: Այս ոտնձգություններին պատասխանեց «Լրաբեր» թերթը:

«... ամեն մարդ գիտե, — գրում է թերթը, — թե դաշնակցությունը իր բոլոր կազմակերպություններով, թերթերով, մամուլով, կրթական հաստատություններով և «եկեղեցիներով» հայ ժողովրդին համար շարիք մը եղած է և վնաս պատճառելի գատ ոչինչ կընեն:

Փաստորեն օտար պետությանց ծախված այդ կազմակերպությունը, հայության գրկեն արտաքսված է և դադարած է հայ ըլլալն:

Եվ երբ իրողությունը այսպես է, հայանուն դաշնակները այլևս ի՞նչ իրավունք ունին Կյուլպենկյան հիմնարկութենեն կամ բարեգործականն դրամ մուրալու:

Թող իրենց օտար տերերուն դիմեն, եթե դրամի պետք ունին»¹:

Վերջում հարկ ենք համարում ավելացնել, որ Գ. Կյուլպենկյանը իր կենդանության ժամանակ ձեռք է բերել համաշխարհային կերպարվեստի լավագույն կտավներից բաղկացած մի շափազանց արժեքավոր կոլեկցիա և գեղարվեստական այլ առարկաներ: Թե ի՞նչ կտավներ են դրանք և ո՞ւմ գրչին են պատկանում, մեզ հայտնի չէ: Հայտնի է սակայն, որ Գ. Կյուլպենկյանը այդ նկարները և արվեստի մյուս գործերը ձեռք էր բերում շափազանց խիստ ընտրովյաժմբ և միայն օրիգինալները: Այդ հարստություններն այժմ գտնվում են Պորտուգալիայում և դարձել են այդ երկրի սեփականությունը: 1958 թվականին «Զարթոնք» թերթը հաղորդել է, որ կիսարժեքում կառուցվում է թանգարանի շենք, որտեղ պետք է ցուցադրվեն Գ. Կյուլպենկյանին պատկանած կտավները: Հիշատակված գործերի մասին գաղափար է տալիս հիմնարկության 1958 թվականի տեղեկագրությունը, որ թարգմանվել է և հրապարակվել «Պայքար» թերթում: «Հիմնարկության ունեցած հարստությանց շարքին այս առարկաները միայն հիշողության համար նշանակված են 100 սրուտոս արժեքով, բայց այս առարկաները

¹ «Լրաբեր», 30 հուլիսի, 1959 թ.:

իրենց բուն արժեքով շատ մեծ արժեք մը կներկայացնեն հիմնարկության համար, որովհետև երբ կարելիություններ ստեղծվին, որպեսզի այս արվեստի գլուխգործոց նկատված հավաքածուն որ կը բաղկանա յուզաների նկարներե, արձաններե, զանազան տեսակի զարդառարկաներե, որոնց ընդհանուր գումարը կը հասնի ավելի քան երեք հազար կտորների, պիտի հիմնվի Պորթուգալի մեջ տեական և մնացուն ցուցահանդեսի շենք մը, ուր ցուցադրության պիտի դրվին վերոհիշյալ արժեքավոր առարկաները և կարելի է ըսել թե տուրիստներու այցելության լավագույն մեկ վայրը պիտի կրնա ըլլալ»¹:

Պորտուգալիայի կառավարությունը անշուշտ զոհունակությամբ ընդունեց Ք. Կյուլպենկյանի որոշումը այն մասին, որ նրա կտակաբար հիմնարկությունը ստեղծվել է Պորտուգալիայում: Նույն այդ պաշտոնական հաղորդագրության մեջ նշվում է, որ «Ուրախությամբ միայն կարելի է արձանագրել: Գալուստ Կյուլպենկյանի նախաձեռնությունը և նույնիսկ կարելի է օրինակ ծառայել, որովհետև ինքը օտար մըն էր և մեր երկիրը սիրեց և մեր մեջ պետք է որ օրինակ ծառայե շատ մը պորտուգալացիներու, որոնք մեծամեծ հարստությանց տեր են: Մեր ազգը անշուշտ պիտի ծափահարե որեէ նմանօրինակ գործ...»²:



Մեր աշխատությունում սեղմ կերպով անդրադարձանք Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և այլ երկրներում ապրող հայության մոտավոր անցյալին և ժամանակակից կյանքին: Սովետահայ ընթերցողին այս մասին անհրաժեշտ ծանոթություն տալու նպատակով՝ առանձնապես կանգ առանք նրա մշակութային կյանքի տարրեր արտահայտությունների վրա:

¹ Պայքար, 4 դեմտեմբերի, 1959 թ.:

² «Պայքար», 2 դեկտեմբերի, 1959 թ.:

Ի՞նչ խոսք, որ սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքը, որ զարգանում է տնտեսական և քաղաքական շափազանց բազմազան պայմաններում, արժանի է հատուկ ուշադրության և ուսումնասիրման: Մեր նպատակն այդ շէր: Բայց հայրենի երկրի և սփյուռքահայության տարրեր հատվածների կապերի գնալով ամրապնդումն ու ընդլայնումը անհրաժեշտություն են դարձնում յուրաքանչյուր գաղութի կյանքի և նրա առանձնահատկությունների ուսումնասիրումը: Սփյուռքի յուրաքանչյուր հայ գաղութի պատմությունը, գրականությունը, արվեստը, մամուլը, նրա զավակների՝ գիտության և լուսավորության մարդու տարած աշխատանքը ուսումնասիրման և լուսաբանման կարիք են զգում: Դա մի կարևոր խնդիր է, որ չի կարող չզբաղեցնել սովետահայ մշակույթի տարրեր բնագավառների ներկայացուցիչներին՝ մեր պատմաբաններին, գրականագետներին, երաժշտագետներին, արվեստի տեսաբաններին և այլն:



ՀԱՅԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Ամերիկա

| | |
|--|-----------|
| 1. Ամերիկայի Միացյալ Նահանգներ | — 250.000 |
| 2. Արգենտինա | — 40.000 |
| 3. Բրազիլիա | — 12.000 |
| 4. Կանադա | — 4.000 |
| 5. Ուրուգվայ և Հարավային Ամերիկայի մյուս երկրներ | — 12.000 |
| <hr/> | |
| Ընդամենը | — 318.000 |

Ասիա

| | |
|---|-----------|
| 1. Քուրբիա | — 200.000 |
| 2. Իսրայել | — 2.000 |
| 3. Իրան | — 140.000 |
| 4. Իրաք | — 20.000 |
| 5. Լիբանան | — 120.000 |
| 6. Կիպրոս կղզի | — 4.000 |
| 7. Հնդկաստան | — 1.500 |
| 8. Հորդանան | — 8.000 |
| 9. Սիրիա | — 150.000 |
| 10. Հեռավոր Արևելք, Ավստրալիա և Խաղաղ օվկիանոսի երկրներ | — 2.300 |
| <hr/> | |
| Ընդամենը | — 647.800 |

Աֆրիկա

| | |
|---------------------------|----------|
| 1. Եթովպիա | — 1.000 |
| 2. Եգիպտոս | — 45.000 |
| 3. Սուդան | — 600 |
| 4. Աֆրիկայի մյուս երկրներ | — 2.000 |
| <hr/> | |
| Ընդամենը | — 48.600 |

Եվրոպա

| | |
|----------------------------------|-----------|
| 1. Անգլիա | — 3.000 |
| 2. Ավստրիա | — 200 |
| 3. Բուլղարիա | — 25.000 |
| 4. Իտալիա | — 1.000 |
| 5. Հունաստան | — 10.000 |
| 6. Ռումինիա | — 12.000 |
| 7. Ֆրանսիա | — 130.000 |
| 8. Արևմտյան Եվրոպ. մյուս երկրներ | — 12.000 |
| <hr/> | |
| Ընդամենը | — 193.200 |

Արտասահմանի բոլոր երկրներում
ամբողջությամբ վերցրած — 1.207.600 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | Էջ |
|--------------------------------------|-----|
| Ներածություն | 3 |
| 1 Ամերիկայի Միացյալ Նահանգներ | 11 |
| 2 Արգենտինա | 44 |
| 3 Բրազիլիա | 57 |
| 4 Կանադա | 62 |
| 5 Ուրուգվայ | 63 |
| 6 Քուրբիա | 67 |
| 7 Իսրայել | 85 |
| 8 Իրան | 86 |
| 9 Իրաք | 100 |
| 10 Լիբանան | 105 |
| 11 Կիպրոս կղզի | 133 |
| 12 Հնդկաստան | 138 |
| 13 Հորդանան | 142 |
| Հայ գաղութներն Հեռավոր Արևելքում | 146 |
| 14 Եթովպիա | 149 |
| 15 Եգիպտոս | 151 |
| 16 Սիրիա | 166 |
| 17 Սուդան | 176 |
| 18 Անգլիա | 177 |
| 19 Ավստրիա | 179 |
| 20 Բուլղարիա | 181 |
| 21 Իտալիա | 192 |
| 22 Հունաստան | 198 |
| 23 Ռումինիա | 203 |
| 24 Ֆրանսիա | 212 |
| Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը | 236 |
| Հայերի տարածումը արտասահմանում | 246 |

1 Այս թիվը մոտավոր է, քանի որ ստույգ վիճակագրական տեղեկությունները բացակայում են: Հայերի ընդհանուր թիվը արտասահմանում մեր կողմից բերված տվյալներից կարող է ավելի մեծ լինել:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՏԻԳՐԱՆԻ

Սփյուռքահայ դաղթօջախներն այսօր



Խմբագիր՝ Ս. Մ. Հովսեփյան
Նկարիչ՝ Գ. Ա. Խուզիկյան
Տեխ. խմբագիր՝ Ե. Ախիրյան
Վերատուգող սրբագրիչ՝ Ա. Երիցյան

ՎՅ 06627

Պատվեր 2610

Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 20/IX 1962 թ.:

Ստորագրված է ապագրության 20/XI 1962 թ.:

Քուղի՝ 84 × 108¹/₃₂, տպագր. 15,5 մամ. = 12,71 պայմ. մամ.,

հրատ. 10,1 մամ.:

Գինը 45 կոպ.:

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչություն-
ների և պոլիգրաֆ արդյունաբերության գիտավոր վարչության

№ 6 տպարան, Երևան, Թումանյան փող. № 51: